

18878

ՎՐԱՎԱՆՈՒՐԻ ԱՇԽԵՐՃՈՒՄ



ՏԵԶՔԱՐԵՆ ԳԵՈՐԴԵՆ

9/2

Արքակ Էլենի ու յանուարի:

Անգլիա, 1936. Անդրեաս:

01 JAN 2009

1/13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՈՐԳԻԵԱՆ

891.99

9-45

06 DEC 2011

ՎԻՇՎԱՊՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ՀԱՏՈՒՔ ԱՌԱՋՎԵ

ՏԱԿՔԱ



18848

ÉDITION DE «MES AMIS»
VIENNE 1934

18 MAR 2013

25388

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԵԽ ԸՆԴՈՐԻՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՄԷՆ
ԻՐԱՀՈՒԽՋ ՎԵՐԱՊԱՀԻԱԺ Է ՀԵՂԻՆԱԿԻՆ



Մահմադ Ֆադլիզադ, վիճակ

Տօրս

ԹԱՐԳՄԱՆ ԳԵՐԱԳՈՅՆԻՆ
ԱՄ ՆԻՒՐՈՒՄ
ԱՅՍ ԳԻՐՔԱ

347-2002

*Mes remerciements profonds aux amis fidèles qui par leur aide morale
et materielle m'ont facilité l'édition de ce livre:*

*JULIA PERRET
MARCELLE VODOZ*

*Le Rev. Père N. AKINIAN
NINA et AROUTIOUN ARABIAN
MARGIT CASSEL
MADAME FOURNIER
MATHILDE GAMPERT
IRMA DE MANZIARLY
GENIA MENNI
SIRARPIE TER-NERSESSIAN
SARA WATSON*

I.

Эти бедные селения
Эта скучная природа
Край родной долготерпения
Есенин.

կո չքաւոր դիւղերը
կո աղքատ բնութիւնը
իմ հարազատ, համբերատար երկիր:
Եսէնին:

Բարձր բլուրի վերայ կանգնած էր մեր դիւղը, մէկը Շիրակի անհամար դիւղերից : Իրար կպած տափակ երդիքներով ցած խրճիթներ, անտաշ քարերով շինուած մերկ պատերի մօտ աթարի երկար շղթաներ, միակ վառելանիւթը մեր երկրի : Երբեմն մի կարմիր կամ կանանչ դուռ : Նեղ, ծուռ փողոցներ, ոչ ծառ, ոչ պարտէզ դիւղի մէջ : Այստեղ, այնտեղ մի շղթայւած շուն եւ նրանից ոչ հեռու փոշու կամ ցեխի մէջ աղմկող երեխաներ, մեծ մասամբ ցնցոտիների մէջ պատած, սեւաչեայ, կարմրաթշիկ : Գիւղի մէջտեղը գտնուում էր եկեղեցին, մի պարզ չէնք, կառուցւած 1877 թւի պատերազմից յետոյ, երբ Շիրակը վերջնականապէս Ռուսներին անցաւ : Անընդհատ պատերազմները, թալանը, կրակը եւ բոցը աւերակի կոյտերի են վերածել հին հոյակապ չէնքերը, որոնք ցրւած Շիրակի դաշտում՝ միակ վկաներն են Հայոց հին արուեստի : Բայց եւ այն-

պէս Եկեղեցին մեր գիւղի ամենալաւ շնչքն էր, ինչպէս եւ դպրոցը մեծ լուսամուտներով եւ նոյն իսկ մի արեւի ժամացոյցով, որը հայրիկս էր շինել: Բլուրի ներքեւում, կանանչ մարդագետինների միջով հոսում էր Արփաչայը, հին Ախուրեանը: Արեւի լոյսի տակ նա մի պսպղուն օձի էր նմանուում, ոլորապտոյտ քամակով, նազելի շարժմունքով: Հաղար դոյներով ծաղիկներ ծածկում էին նրա ափերը, կարծես ուզում էին Արփաչայի հայելու մէջ իրենց սիրուն դէմքերը տեսնել: Շիրակեցու աշխատող ձեռքերը ամէն տեղ ծառեր էին տնկել, բոստանների մի շարան ծածկում էր դաշտը եւ արեւածալիկները նրան նորահարսի տեսք էին տալիս: Խաղաղ էր Արփաչայը, անաղմուկ, միայն բոստանջին էր բահը ձեռքին նրա հանգստութիւնը խանդարողը, իսկ կիսօրին նախին էր հովլի եւ հոտաղների հետ, շրջապատւած դիւղի երեխաներով ջուրը լեցում: Կենդանիները իրենց չորացած լեզուները թրջելու, իսկ մարդիկ արեւից այրւած մարմինները զովացնելու համար:

Գիւղին կից հոսում էր Ղարանղու փոքրիկ գետը. նա դառիս էր Արագածի ստորոտից եւ մեր արտերը ձեղքելով թափւում Արփաչայի մէջ. նրա կողքից անցնում էր Հարդը, ջրաղացի ջրանցքը: Հարդի երկարութեամբ կանգնած էին հպարտ բարտիններ. ուուիները կոանում էին գետի վերայ եւ ափերի երկու կողմից երկարելով, գրկախառնուում էին նրա ջրերի մէջ: Այնտեղ, այն ուուիների եւ բարտիների մօտ գտնուում էր Տեփոյի պարտէղը, որի վարդերի բուրմունքը հարբեցնում էր մօտից անցնողին. Տեփոն իր տունը պարտէղի մէջն էր շինել, կարծես ուզում էր ծածկել բարտիների, ուուիների եւ վարդերի յետեւը աշխարհի անհամեստ աչքերից: Բայց աշխարհը սիրում էր Տեփոյին, հանդիսատ չէր տալիս նրան. ուխտաւորները եւ մեր գիւղը զրօսանքի հկողները, մտնում էին Տեփոյի

պարտէղը, նստում վարդենիների մօտ, իրենց բերած մատաղը ուսում կամ քէֆ անում:

Մինչեւ Արագածի փեշերն է տարածւում Շիրակի դաշտը, հին Հայաստանի ցորենի ամբարանոցը: Ասում են, որ Շիրակը իր անունը Շարա անունով թագաւորից է ստացել, մի անկուշտ մարդից, որը այնքան շատակեր է եղել, որ ոչ մի երկիր նրան չի կարողացել կերակրել: Պատմում են, որ նա գիշեր ցերեկ ուտելիս է եղել, մինչեւ իր եւ հարեւան երկիրներում եօթը տարւայ սով է ընկնում: Յուսահատուած, թողնում է նա իր աշխարհը, գնում է գնում, անցնում է Արագածի մօտերքով, իջնում դաշտը, ընկնում ցորենի արտերի մէջ, ուտում է ուտում եւ կշտանում: Զարմացած, հիացած օրհնում է նա այդ բարի երկիրը, հաստատւում այնտեղ եւ իր անունը տալիս նրան: Այսօր Շիրակի դաշտը առատ չէ այլեւս, բայց ժողովուրդը գեռ յիշում է առաջւայ երջանկութիւնը եւ ասում ավասանքով. «Թէ քո Շարայի որկորն է, մեր Շիրակայ ամբարքն չեն»:

Միայն Արագածն է անփոփոխ մնացել. նրա ճակատը գեռ պայծառ է, ժպտում. նա ծիծաղում է ամառը իր երկար ստերները դեղին հասկերի վերայ զցելով. ծիծաղում է նոյնպէս ձմեռը երբ ձիւնը ծածկում է իր սպիտակ սաւանը լ գետը, մարդագետինը, բլուրը եւ գիւղը: Կախարդական մի լեռ է նա, որի ծոցում ո՞վ գիտէ ի՞նչ գաղտնիքներ կան պահւած չին, չատ հին դարերից: Ասում են, որ ամէն գիշեր Արագածի անբիծ կատարին մի կանթեղ է վառւում, լուսաւորչի կանթեղը. վառւում է նա այնտեղ դարեր շարունակ եւ լուսաւորում ներքեւի աշխարհը. դարեր շարունակ նայում է Շիրակի ժողովուրդը այդ փոքրիկ լոյսին, նայում է սուրբի բիւրեղեայ

արտասունքներին, որոնք իւղի տեղ վառւում են ճրագի մէջ. նայում է նա այդ լոյսին ու մխիթարուում, պայքարուում խաւարի դէմ եւ յոյսով լեցւած իր կեանքը ապրում:

Դրա՞ համար էր Շիրակեցին այնքան սիրում Արագածը, այնքան երդում նրա մասին: Շիրակի գիւղացին աւելի շատ երդում էր քան խօսում: Ցաւի, ուրախութեան, սիրոյ եւ աշխատանքի ժամերին նա երգելով էր հովացնում իր սիրու: Երգելով զնում էր նա իր փայտեայ չութի յետեւից, երգելով կալսում հունձքը, ցորենը ջրաղաց տանում: Ամառայ լուսնկայ գիշերներին աղջիկները տղաների հետ պար բռնած, երգելով էին յայտնում միմիանց իրենց սէրը: Ամէն երգի մէջ Արագածի անունը կար, նրա հիւանդին դարձան անող ջրի գովքը: Արագածի հպարտ, ալեխառն գլմին, նրա պայծառ ճակատին հազար անգամ մատաղ էին գալիս Շիրակի ջահէլները: Աղքատ էր Շիրակի գիւղացին, մեծ մասամբ հողագուրկ, հարկերի եւ աշխատանքի բեռի տակ վաղաժամ կռացած, աստուածալախ, բազմաթիւ երեխաներով շրջապատւած, իրեն ճակատագրին հնաղանդ: Քանի քանի անգամ դարերի ընթացքում ամայացել է Շիրակը, կոտորւել, ժողովրդից կենդանի մնացածները փախել, պահւել են օտար երկրներում, բայց փոթորիկը անցնելուց յետոյ, վերադարձել են իրենց հայրենիքը, քանդւած տները շինել եւ ապրել ինչպէս իրենց պապերն ու հայրերն են ապրել, աւանդութիւը սրբութեամբ պահելով եւ ճակատի դառն քրտինքով հայրենի հողը թրջելով: Հայաստանի բարձր լեռները ծածկում էին նրանից աշխարհը, իսկ նրան աշխարհից: Շատ խօսել չգիտէր Շիրակի գիւղացին, հեղ էր, համեստ, եւ միայն իր երգերի մէջ էր զնում իր սիրուն ու հոդին: Թափառական աշուղները անցնում էին տնից տուն, բերում ուրիշ տեղերից նոր եղանակներ եւ Շիրակի հին եր-

գերը հեռու տեղեր տանում: Այսպէս հին ժամանակներին, այսպէս եւ հիմայ:

Բացի երգելուց Շիրակեցին սիրում էր հէքեաթներ լսել: Զմեռայ ցուրտ, երկար երեկոներին, երբ Հայաստանի կատաղած քամին վորթորիում, ոռնում էր սարերում եւ ձորերում, երբ նոյն իսկ գազանները մի ծակ էին վնտուում պատսպարւելու, Շիրակեցին նատում էր ծալապատիկ իր հանգստաւէտ «օդայում», հայկական ծխացող օջախին կից եւ հէքեաթներ լսում: Անասունները բաժանւած էին նրանից միայն մի տախտակով եւ նրանց տաք չունչը խառնւում էր մտերմօրէն գիւղացու չնչին: Ամէն գիւղում մի քանի սիրուած «օդաներ» կային, ուր հաւաքում էին մարդիկ: Մեր գիւղում ամենից յայտնին տէրտէրի, տանուտէրի եւ մի երկու, երեք մեծատունների օդաներն էին: Հիւրերը տեղ էին բռնում այնտեղ՝ նայած իրենց գիրքին. պատւաւորները — գիւղի հարուստները — նստում էին վերեւը, օջախին կից խալիների վերայ, միջակները նրանցից ներքեւ խսիրների մասում, իսկ աղքատները եւ ծառաները երեկոն մեծ մասամբ ոտքի վերայ էին անցկացնում: Ամէն գիւղ իր հէքեաթ ասողները ունէր. պապերից եւ հայրերից էին սովորել նրանք այդ հէքեաթները, որոնք նոյնն էին Հայաստանում եւ հարեւան երկրներում: Կրակի չուրջը բոլորւած քիւրտ հովիւնները, ծուլօրէն իրենց չիբուխները ծխող թուրք գիւղացիները եւ Վրաստանի սիրուն անտառներում ու հովիւններում ապրող մարդիկը ոգեւորուում ու տիրում էին նոյն պատմւածքներից, սիրում կամ ատում նոյն հերոսներին: Բայց կային գիւցազնական զրոյցներ, հին ժամանակների հերոսական կոխմերի, յաղթութիւնների եւ պարտութիւնների առանպելներ, ուր ցեղի վաղուց չքացած անցեալը խառնւում էր նոր դէպքերի հետ, ուր հէքեաթը իրականութիւն, ճշմար-

տութիւն էր դառնում: Աշխոյժ, կենդանի լեզով պատմում էր հէքեաթ ասողը այդ իրականութիւնը, փառաբանում սիրած հէրոսներին, անիծում դաւաճաններին: Մինչեւ կէս գեշեր ականջ կտրած, բերանները բաց եւ փայլուն աչքերով լսում էին մարդիկ այդ զրոյցները, երգում էին սիրոյ եւ պայքարի երգեր ու գոհ սրտով ցրում տները: Աղքատ էր հայ գիւղացու սեղանը. մեծ բարիք էր ընտանիքի համար եթէ տան մայրը սեղանին պանիր եւ հաց էր զնում, ուրիշ կերպ ուտում էին հաց սոխի, զոխի կամ թթու կաղամքի հետ, շատ անդամ միայն չոր հաց եւ բոլորը միասին պառկում թոնիրի կամ օջախի շուրջը քնելու: Դարերից անփոփոխ մնացած ձէթի ճրագը մարտում էր, ամբողջը անհետանում խաւարի մէջ: Դրսում այստեղ այնտեղ հաչում էր մի չուն. եւ երբ պատահմամբ մի օտարական անցնում էր գիւղի միջով, թւում էր նրան, թէ տները քարերի կոյտեր են կամ գերեզմաններ:

* * *

Մեր գիւղը ուխտատեղի էր. սուրբ Ամենափրկիչը, մի հին աւետարան, նրա հոչակն էր, նրա հպարտութիւնը: Ոչ մի կիրակի, ոչ մի տօն չէր անցնում, որ մեր գիւղը ուխտաւորներ չը գային: Նրանք գալիս էին սայլերով, ոմանք ձիերով, շատերը ոտարբոքիկ քայլելով: Հեռու տեղերից էին գալիս նրանք, Լոռից, Փամփակից, Երեւանից եւ Ղարսից: Ամէն ուխտաւոր մատաղ էր բերում Սուրբին. մէկը մի ոչխար, միւսը մի գառ, աղքատները մի զոյգ աղաւնի: Մարդիկ գալիս էին հաւատով, ոգեւորութեամբ: 1877 թւի ոռւս-տաճկական պատերազմին, որին մեր գիւղացիք Լոռիս-Մելիքովի կոիւ էին անւանում, մի տաճկահայ քահանայ փրկել էր Ամենափրկիչը թուրքերի ձեռքից, երբ նրանք գիւղի եկեղեցին կրակի

էին տւել, եւ բերել մեզ մօտ: Երկար ժամանակ նա պահել էր աւետարանը իր տանը, բայց մեռնելիս կտակել էր նրան եկեղեցուն: Քահանայի տունը շարունակում էր ուխտատեղի մնալ: Աւանդութեան գերի ուխտաւորները առաջին հերթին այնտեղ էին գալիս, մանում մի փոքրիկ սենեակ, որը մատուռ էր կոչւում, սողում էին մինչեւ այն սեղանը ուր դրած է եղել աւետարանը, համբուրում էին սեղանի ծածկոցի ծայրերը եւ ծնկաչոք իրենց խնդրանքն անում: Ծանր հիւանդներին պառկեցնում էին յատակին, սեղանին կից, եւ գիշերը՝ մոմերի լոյսի տակ մենակ թողնում: Հաւատում էին, որ աւետարանի դորութիւնը գեռ ապրում է այդ սենեակում, այդ սեղանի, այդ յատակի վերայ: Հարուստ էր Ամենափրկիչնց տունը, բարիքներով լեցուն: Քահանայի հարսները եւ տղաները զիստէին խնամել հիւրերին, նրանց հաճելի դառնալ. եւ գրա համար մատաղների մեծ մասը ուխտաւորները նրանց էին նույիրում որպէս վարձատրութիւն: Մեր գիւղի տէրտէրը շատ անգամ գժողով էր այդ սովորութիւնից, քանի անդամ բողոքել էր... բայց ապարդիւն...: Ինքը աւետարանը գտնուում էր եկեղեցու խորանում, մի փոքրիկ ապակեայ պահարանում: Մի հին, շատ հին գիրք էր նա, ո՞վ գիտէ ո՞ր դարում եւ ո՞ւմ սուրբ ձեռքով գրած: Գոյնզգոյն նկարներ ունէր իր մէջ, կազմը ծանր արծաթից էր, վրան մի արծաթէ խաչ: Ոչ մէկի ձեռք չը պէտք է գիտէք աւետարանին, պահարանը միշտ փակ էր եւ ուխտաւորները ծնկաչոք համբուրում էին միայն պահարանի ապակին. նոյն իսկ քահանան կարկուտի կամ մեծ տօների օրերին, վերցնում էր Ամենափրկիչը ապրեցում կտորով: Միմիայն տօնի օրերին թոյլ էր տրւում ուխտաւորներին եւ գիւղի ժողովրդին համբուրել կազմի վերայ շինւած գեղեցիկ իսացը: «Ամենափրկիչը վկայ», «թող Ամենափրկիչը աչքիս լոյսը խա-

ւարեցնի», «թող Ամենափրկիչը արեւս մարէ», այս էր ամենա-
ազդեցիկ երդումը մեր գիւղում։ Վա՛յ նրան ով այս երդումը
ուղիղ սրտով չէր ասում, հաւատում էին որ հէնց խօսած տեղը
բերանն է ծուելու, կամ աչքը կուրանալու, կամ մի ուրիշ փոր-
ձանք է դալու, մարդուն մոլորեցնելու։ Յաւի, յուսահատու-
թեան դէպքերին գիւղացին նրա մօտն էր վաղում, նրա օդնու-
թիւնը աղերսում։ Եթէ Ամենափրկիչը անտարբեր էր մնում նրա
ինդրին, ապա գիւղացին դիմում էր ուրիշ սուրբերի — Գիւմրիի
Եօթը վէրքին, Կարմիր աւետարանին, Մուղնիի Սուրբ Գէոր-
գին, եւ Երբենն չը նայած այնքան վտանգների, անցնում էր
սահմանը, գնում քիւրտերով լցցուն ճանապարհներով մինչեւ
Մոյ Սուրբ Կարապետի վանքը։ Սուրբ Կարապետը, Սուրբ
Սարգսի եւ Սուրբ Գէորգի հետ ամենազօրաւոր սուրբերն էին
Հայաստանում։ Սուրբ Կարապետի տօնը տեւում էր քառասուն
օր. մեր գիւղի աղջիկները իրենց մուրազին հասնելու համար
օրական միայն մի անգամ էին ուտում եւ այն էլ ցամաք հաց։

Աղքատ էր Շիրակի գիւղացին, զրկանքների վարժւած, իր
սելիական պէտքերի համար խնայող, բայց սուրբերին տալիս
էր նա առատ ձեռքերով։ Ամենափրկչի հռչակը քաշում էր մեր
գիւղը ամէն տեսակ հիւանդներ, ցաւադարներ, ընկնաւորներ
փրփրած բերաններով եւ յոզնած, պղտոր աչքերով։ Սուրբի
խորանում յատակին կծկւած, կապւած թեւերով եւ ոտքերով
նրանք լալիս էին, խնդրում, հառաչում, լիզում յատակը,
գլխներին եւ կուրծքերին տալիս։ Երբ քահանան վերցնում էր
աւետարանը եւ բարձր ձայնով կարդում, հիւանդները առանց
նրան լսելու շարունակում էին աղմկել, բայց կամաց կամաց
սուրբ խօսքերը, քահանայի միապաղաղ հանգիստ ձայնը աղ-
դում էին նրանց վերայ. հիւանդները լուս էին եւ Երբ վեր-
ջապէս տէրտէրը «Հայր մերն» էր ասում ու աւետարանը եր-

կարացնում նրանց համբուրելու, ոմանք ընկնում էին խորը
քնի մէջ, որը նշան էր նրանց բժշկւելուն։

Բացի Ամենափրկչից կար մեր գիւղում մի անանուն Սուրբի
գերեզմանը. հեռու, ճանապարհին կից, մի արտի միջին մի
քանի խաչքարեր էին բոլորւած, ուր ամէն կիրակնամուտին
մէկը կամ միւսը գիւղի կանանցից խումկ էր ծխում այնտեղ։
Անցորդները երեսներին խաչ էին հանում, պոկում էին իրենց
չորերից մի կտոր եւ երկիւղածութեամբ կախում այդ քարե-
րերից. ոմանք մի կոճակ էին զնում այնտեղ, քչերը դրամ։
Նոյն իսկ հարեւան գիւղերի թուրքերը եւ քիւրտերը գալիս էին
այնտեղ ուխտի։ Մարդիկ ասում էին, որ այնտեղ մի ժամա-
նակ մի եկեղեցի է եղել եւ որ քարերը նրա մնացորդներն են.
ուրիշները պէնդում էին, որ մի զօրաւոր Սուրբի գերեզման է։
Մարդկանց մեծ մասը այս վերջին կարծիքին էր, մանաւանդ
որ տէրտէրի հոտաղ Արտօն մի քանի անգամ երազում տեսել
էր, որպէս թէ խաչքարերի մօտից մի ձիաւոր է անցել եւ բարձր
ձայնով կանչել. «ասա՛ տէրտէրին, թող ինձ մի գերեզման շինի,
մինչեւ ե՞րբ պէտք է տրորէք ոսկորներս»։ Տէրտէրը յաճախ
առաջարկում էր այնտեղ մի փոքրիկ մատուռ շինել, բայց
Աղամենց Սարդարը, որին պատկանում էր արտը, չէր ուզում
նրան գիւղին տալ։ Մատուռը այդպէս էլ չշինւած մնաց,
բայց եւ այնպէս քարերի փոքրիկ կոյտը մատուռ անունն էր
կրում եւ ուխտատեղի էր։

II.

Մեր տունը գտնւում էր գիւղից դուրս, դաշտերի մէջ։
Նա կոյր չէր ինչպէս գիւղի միւս տները. մեծ լուսամուտները
նրա աչքերն էին, որոնք նայում էին առանց քաշւելու արեւին,
աշխարհին։ Մեր տունը դեռ նոր էր, քաղաքից եկած վար-

պետներ էին շինել նրան կարմիր ու սեւ քարերով, եւ բոլոր գիւղացիք զարմանում ու հիանում էին նրա վերայ: Գիւղի քահանան, Օհաննէս վարժապետը եւ մի քանի ունեւորներ իրենց տներին կից նոր սենեակներ էին շինել, որ մեր տանը նմանեցնեն: Մենք գիւղից հեռու էինք, բայց իմ մեծ մայրը, մեր սիրելի տատիկը ամէն օր գիւղ էր գնում: Նա սիրում էր նստել գիւղացիների մօտ, նրանց թոնիրի կուշտը, որովհետեւ թոնիրի եւ քուրսու վարժւած, նա մեր երկաթէ վառարանի մօտ երեք չէր տաքանում: Տատիկս մեզ յաճախ տանում էր իր հետ. դրանից էր, որ մենք երեխաներս գիւղում բարեկամներ եւ թշնամիներ ունէինք. մեծ հածոցով մեր պարտէղից փախուստ էինք տալիս եւ նոյն իսկ անձրեւին եւ փոթորկին խաղում դիւղի երեխաների հետ: Հայրս մեծ մասամբ տանը չէր, մայրս զբաղւած էր տնային աշխատանքներով, ազատ ժամերին եւ մանաւանդ երեկոներին լրագիր, գիւղը էր կարդում, իսկ մենք նստում էինք թաղթին, տատիկիս մօտ եւ նրա հէքեաթները լսում կամ նրա խորշումած ձեռքերի հետ խաղում: Ես շատ էի կապւած տատիկիս, միշտ նրա հետ էի եւ երբ մարդիկ ինձ հարցնում էին, թէ ես ո՞ւմ աղջիկն եմ, պատասխանում էի հպարտութեամբ. «տատիկիս աղջիկը», իսկ եղայրներս եւ քոյրերս աւելի մօրս էին յարում:

Տատիկս մեծ, սեւ աչքեր ունէր, որոնք այնքան խիստ եւ ուղիղ էին նայում աշխարհին, որ ոչ ոք չէր կարողանում դիմանալ նրա հայեացքին եւ իր աչքերը ցած էր գցում: Զմեռ թէ գարուն նա սեւ էր հագնւած եւ միմիայն կարմիր գոգնոցը, հարուստ գոյներով բանւած, կենդանացնում էր նրա կերպարանքը: Ինչպէս Հայոց բոլոր որբեւայրի կանայք, նա էլ իր գլխի զարդարանքը իր աղջիկներին եւ մօրս էր տեև եւ նոյն իսկ ոսկի չէր դնում ճակատին: Մի սեւ շալ, գեղարւեստօրէն գլխին

դցած, ծածկում էր նորա մազերը, պարանոցը եւ ծնօտը: Նրա հազուստների ծալքերի մէջ խորը գրպաններ կային եւ ծառայում էին նրան որպէս պահարան: Այդ գրպանների մէջ ամէն տեսակ բաներ կային, ինչ որ մենք եւ շատ անդամ մեծերը ցանկանային: Վա՞յ յր էր ընկնում մէկը եւ անմիխիթար լաց լինում, տատիկս իսկոյն մի անուշեղէն, մի չիր, մի կտոր շաքար, մի հատ արմաւ էր հանում գրպանից եւ տալիս լաց լինողին: Արդէն այն եղանակը, թէ նա ինչպէս էր իր բարակ ձեռքը դանդաղօրէն գրպանը տանում, հանդստացնում էր տանջւողին: Յոյսով լիքը նայում էր նա այդ բարակ ձեռքին եւ լացը մոռանում: Եթէ մէկի գլուխն էր ցաւում, անմիջապէս հանում էր տատիկս մի որ եւ է բոյս եւ հրամայում նրանից թէյ պատրաստել, խմել: Բոյսերը հաւաքում էր նա գարնանը եւ աշխանը առուների ափերին, ջրաղացքի մօտերքը, մարգագետինների միջից, խնամքով չորացնում էր նրանց եւ գոյնզգոյն տոպրակներում պահում: Ամէն մի բոյս իր անունը ունէր եւ առանձին տոպրակը: Այդ բոյսերը լաւ գեղեր էին եւ երբեմն հրաշքներ էին գործում: Այսպէս տատիկս մեր տան բժշկուհին էր եւ նրա հոչակը քաշում էր նրա մօտ ամրող գիւղը: Իր արխալուսի մէջ տատիկս պահում էր մի գոյնզգոյն «ղարղութում», որի մէջ զնում էր կարի բոլոր պիտոյքները. ասեղ, թել, մատնոց, մկրատ միշտ պատրաստ էին նրա ձեռքի տակ: Զը նայած իր բարձր տարիքին, նա երբեք չէր հանդստանում աշխատելուց: Ամէն տեղ ուր կարիք կար՝ օգնութեան էր հասնում: Տատիկս իրեն երբեք ծեր չէր զգում. խօսակցութեան ժամանակ, մեզ բոլորիս զւարճութիւն պատճառելով, նա յաճախ ասում էր. «ի՞նչ կարող է անել ինձ նման ջահէլ հարսը». եւ մեր ազգականները կրան միշտ «Հարսիկ» էին անւանում: Բայց եւ այնպէս նա էր, որ ծերերին եւ երիտասարդներին

Խորհուրդներ էր տալիս եւ բոլորը լսում ու հալատակւում էին նրան ինչպէս մի իշխանի։ Տատիկս ոչ միայն տեսակ տեսակ ցաւերի բժշկուհի էր, նա ճանաչւած էր նոյնպէս որպէս լաւ դայեակ։ Քանի քանի երեխաների պորտ էր կտղել նա իր կեանքի ընթացքում։ Զը նայած իր խորշոմած ձեռքերին, նա երբեք չէր հրաժարում ծննդկաններին իրենց դժւար ժամին օդնութեան հասնելու։ Ամէն եղանակին, գիշեր թէ ցերեկ, նա կատարում էր իր պարտականութիւնը, բարեբախտաբար միշտ յաջողութեամբ։

Առաւոտը նա վեր էր կենում տեղից արեւի հետ, լւացւում, դուրս գալիս տանից, կանզնում դրսի դռան չէնքին, եւ երեսը աղօթարանին — արեւելք ուղղած բարձրաձայն աղօթում էր։ «առաւոտայ անուշ լոյս եւ արդար, մաքուր արեգակ։ մեղաւոր եմ, անարժան։ դուք բարեխօսէք լոյս Քրիստոսի, բարի Աստծու մօտ, որ նա աշխարհին խաղաղութիւն տայ, երես չղարձնի հայ քրիստոնեայից եւ եթէ մի աչք էլ աւելի ունի, թող իմ մեկուճար, ազիզ տղայի վերայ գցի։ ամէն»։ Աղօթքից յետոյ նա տուն էր մտնում, աշխատում էր մինչեւ եկեղեցու զանդակի կանչելը։ տարւայ բոլոր եղանակներին նա ժամերգութիւնից յետ չէր մնում։ Ամբողջ աւետարանը եւ պատարագի երգերը, չը նայած իր կարդալ եւ գրել չը գիտենալուն, բերանացի գիտէր։ Նա աղօթում էր բոլորի համար, բայց երբեք չէր խօսում այդ մասին։ Եկեղեցուց վերադառնում էր նա հանդիսաւոր, գեռ դրսից զւարթ ձայնով կանչում։ «Ողորմի Աստուած»։ Եւ մօրս պատասխանը «Ողորմի ծնողաց» լսելուց յետոյ, առանց նախաճաշի, օրւայ կէսը նա ծոմ էր պահում, անցնում էր իր առօրեայ աշխատանքներին։ Նա մանում էր, հաց թխում, կարում, գուլպայ գործում, կարկատում։ Նրա ճախարակը մինչեւ իր կեանքի վերջը չը

կանզնեց։ մեր բոլորի գուլպաների թելը մանողը տատիկս էր։ Երբեմն մեղ ծնկին դրած, նա զբաղեցնում էր մեղ, յաճախ շալակած ման ածում։ Երբ փոքրիկ եղբայրս Վահրամը չէր ուղում խելօք մնալ, տատիկս նրան թեւերին առած, ման էր գալիս պարտէզում եւ ցած ձայնով երգեր էր երգում կամ հէքեաթներ ասում։

Թոփի թոփի թոցնեմ,
Սեւ հաւի միս կերցնեմ,
Կարմիր գինի խմցնեմ,
Ծառի տակը քնցնեմ.
Քունդ կը գայ սուս արա,
Աչքդ խիի տազ արա.
Ճիւ, ճիւ, ճիւ...

կամ՝

Հէքեաթ հէքեաթ պապս է,
Ղաշղայ քուռակ տակս է.
Հեծնեմ երթամ երեւան,
Երեւանից չամիչ բերեմ.
Չամիչը տամ հաւերին,
Հաւերն ինձի հաւկիթ տան.
Հաւկիթը տամ չարչուն,
Չարչին ինձի դանակ տայ.
Դանակը տամ չոբնին,
Չոբանն ինձի գառ տայ.
Գառը տամ Աստծուն,
Աստուած ինձի աղբեր տայ.
Աղբեր ու աղբեր ջան աղբեր,
Ընկնիմ հետդ գամ աղբեր...

Եւ եղբայրս հանգստացած ու երջանիկ քնում էր նրա թեւերի մէջ, իսկ մենք Սիրանուշը, Արիկը եւ ես կպչում էինք տատիկից եւ խնդրում, որ մեղ հէքեաթներ պատմի: Երբ նա հէքեաթ էր ասում, ոչ միայն մենք էինք հաւաքում նրա դլիսին, այլ եւ մայրս եւ նոյն իսկ հարեւանները: Բացի հէքեաթներից տատիկս միշարք թուրք եւ պարսիկ առածներ պիտէր. ոչ մի նախադասութիւն չէր ասում առանց որ եւ է առածի եւ ամէն անգամ աւելացնում էր ներողամտութեամբ. «Թուրքը շուն է, համա լեզուն անուշ է», կարծես ուզում էր այլպիսով արդարացնել իր թուրքերէն լեզով ասած առածները:

Ջմեռւայ երեկոյ է: Մենք նստած ենք թաղթին. ինք նաեւը դեռ կամաց աղմկում է սեղանին: Տատիկս սիրելի մատները՝ յոզնած գուլզայ գործելուց, քաշում են թաղթէի շարերը: Նրա կենդանի, կնճիռներով լիքը դէմքը պայծառ է: Տատիկս հէքեաթ է ասում, երբեմն միայն լուռմ, քթախոտը քաշելու համար: Նրա ձայնը մէկ բարձր է, մէկ շնչող: «Լինում է չէ լինում մի թագաւորի տղայ է լինում», սկսում է տատիկս: Գումաւոր լեզով նկարագրում է երիտասարդ հերոսին, որը եօթը գլխանի վիշապին Հրեղէն թրով սպաննում եւ աղատում է նրանից թէ թագաւորի խեղճ աղջկան եւ թէ նրա երկիրը: Սոսկալի վիշապը նստել էր քաղաքի աղբիւրին եւ ոչ ոքի թոյլ չէր տալիս ջուր տանելու: Ամէն անգամ քաղաքի բնակիչները մի սիրուն աղջիկ էին տալիս նրան եւ այդ գնով ստանում ջուրը: Ամէն օր մի աղջիկ էր ուտում նա, այնպէս որ մէկը չը մնաց քաղաքում: Հերթը եկաւ թագաւորի աղջկան, բայց վերջին րոպէին, երբ վիշապը ուզում էր նրան կուլտալ, հասնում է թագաւորազնը բարի եւ քաջ, եւ վիշապին հազար կտոր անում ու աղատում աղջկան եւ քաղաքը: Լոյս

աշխարհից էր եկել թագաւորազնը այդ մութ երկիրը, որը լիքն էր վիշապներով եւ ուր մարդիկ նոյն իսկ ջուրը, որ Աստծու ընծան է բոլորի համար, չէին կարողանում ազատ խմել: Մութ աշխարհի թագաւորը ուզում է իր աղջիկը հերոսին տալ, բայց սա մերժում է, չի ուզում մութ աշխարհում մնալ. արեւին կարօտ նա խնդրում է Զումրութ թրչումին (որի ձագերը աղատում է մի ուրիշ վիշապից), իրեն լոյս աշխարհ տանել: Հրաշալի թրչումի մէջքին նստած թագաւորազնը քառասուն օր եւ քառասուն գիշեր ճամբայ է գնում եւ շատ արկածներից յետոյ հասնում է լոյս աշխարհ:

Տատիկիս վիշապները սոսկալի հրէշներ էին, ագահ եւ անգութ: Նրանք յարձակում էին քաղաքների եւ գիւղերի վերայ, թալանում, կրակում, աւերում ամէն ինչ եւ ամենէն գեղեցիկ աղջկան, որը սովորաբար թագաւորի աղջիկն էր լինում, գերի էին տանում: Տանում էին նրան իրենց հեռաւոր գղեակները, աշխարհի էն միւս ծայրում եւ եօթը երկաթէ դռան յետեւ պահում: Տատիկիս հէքեաթներում բարին եւ չարը միշտ կոիւ էին մղում իրար դէմ: Բարին լոյսն էր, արդար, անբիծ արեւը. չարը գիշերն էր, անարդար ութիւնը, մութը: Բարեբախտաբար բարին միշտ յաղթում էր չարին, անգութները պատժուում էին եւ արդարութիւնը վերականգնուում: Բայց միայն հէքեաթներում չէր այսպէս, տատիկս հաւատում էր, որ իրականութեան մէջ բարին նոյնպէս յաղթում է չարին: Երբ մի դժբախտութիւն էր անցնում մեր մօտից առանց մեղ վասաելու, տատիկս խաչակնքում էր երեսը եւ ասում. «Փառք քեզ Տէր, ո՞ւմ էի մի լաւութիւն արել, ո՞ր խեղճ ճամբորդին պատմել, ո՞ր աղքատին մի կտոր հաց տւել, ո՞ր դէմս եկաւ»:

Երեկոն կամաց անցնում է: Տատիկս վաղուց վերջացրել
կաւ

իր հէքեաթը, բայց մեզնից ոչ ոք տեղից չի շարժւում: «Գնացք քնելու», ասում է նա վճռական: Մենք չենք հնազանդուում եւ աղերսում ենք, որ նա մի հէքեաթ էլ պատմի: Եւ ահա տասու նայում է գուանը խորհրդաւոր կերպով եւ ցուցաձառը բերանին դնելով շշնչում: «սս... դուք պէտք է հնազանդէք, եթէ ոչ Դովլաթը կը լսի եւ մեր տնից կը հեռանայ»: Մենք գիտենք այդ. երբ Դովլաթը մեր տնից հեռանայ, մեր տան բախտն էլ հետը կը դնայ: Դովլաթը մի փոքրիկ մարդ է, երկար, սպիտակ մօրուքով. նա ապրում է մեր գոմում: Ամէն բարի տուն մի Դովլաթ ունի. նա միայն լաւ, հաւատացող մարդկանց է երեւում: Տատիկս մի անդամ հեռից տեսել է նրան. Դովլաթը նստած է եղել մեր ամենասիրելի կովի նոյեմի մսուրում եւ այնքան բարի ժպտացել է նրան: Մենք չենք ուզում որ Դովլաթը մեր տանից հեռանայ, դրա համար էլ վեր ենք կենում եւ մէկս միւսի յետելից մօրս հետ, համբուրում ենք տատիկիս ձեռքը եւ գնում քնելու:

Այսպէս անցնում էին ձմեռայ երկար երեկոները եւ գալիս էր դարունը:

III.

Գալիս էր նա եւ կախարդական ձեռներով սար ու ձոր կա-
նանչով եւ ծաղիկով ծածկում։ Ճամբաները բացւում էին, եր-
կինքը ծիծաղում էր պայծառ, պանդուխտ դարձած կոռուկ-
ները վերադառնում էին իրենց հին տեղերը, ծիծեռնակը եր-
գում ու նորոգում էր քանդամած բոյնը, դաշտերը լեցւում էին
աշխատող գիւղացիներով եւ հոսաղների հոսովիւլ արձագան-
գում էր լեռներում։ Խրճիթների գոները եւ երդիքները բաց-
ւում էին, լոյսը ներս էր չողում, ցոլում մարդկանց երեսնե-

բին, խաղում նրանց աչքերի մէջ: Հայոց աշխարհը սիրտը բաց արած ժպտում էր երկնքին, ցնծում արելին:

Դեռ մթնչաղին, աքաղաղի երրորդ կանչից յետոյ, մարդիկ վեր էին կենում անկողիններից, գէմքերը ազօթարանին ուղղած առաւտւայ առաջին լցոսից եւ Արագածի յետեւց բարձրացող արդար արեւից իրենց գործին աջողութիւն եւ աշխարհին խաղաղութիւն էին խնդրում, յետոյ աշխատանքի գործիքներն ուսերին, առանց նախաճաշի, արտ կամ բոստան շտապում։ Կանայք վառում էին թոնիքները, թանով ապուր կամ կորկոտից խաշիլ եփում եւ աղջիկների ու ջահէլ հարսների շալակը տևած արտաւորներին ուղարկում։ Նրանք էին հոգում տան ամբողջ գործերը. աղբիւրից եւ գետից ջուր բերում, երեխաններին կերակրում, հաց թխում, կարում, կարկատում, լւանում եւ այդ բոլորի հետ դաշտի աշխատանքն էլ տղամարդի հետ բաժանում։ Նոյն իսկ ճամբին քայլելիս կամ ցորենի խուրձերի վերայ նստած, երբ սայլը դանդաղ տուն էր գնում, նրանք գուլպայ էին գործում կամ թեշիկ մանում։ Աշխատանքն էր իշխում բոլորի վերայ. գիւղը դատարկ էր լի օրերին։ Նա պահ էր տրւած անձար ծերերին, մանուկներին եւ չներին։ Ծերերը նստում էին գետնի վերայ պատերից ընկնող ստւերների մէջ եւ կիսախուփ աչքերով թաղբէհի հատերը քաշում։ մանուկները թոչկոտում էին դես ու դեն, ով ծծկեր եղբայր կամ քոյլ ունէր, դատապարտւած էր տունը մնալու, երեխային օրօրելու կամ թեւերին առած նրան մանածելու։

Օրբայ ամէն ժամանակին անցնում էին գիւղով ցնցոտի-ների մէջ պատած մուրացկաններ, կանգնում տների առաջ եւ իրենց ալբուստը մուրում։ Երկիրը հսկուած էր մուրաց-



կաններով եւ տուն չէր գտնւում որ նրանց համար մի կտոր հաց , մի պնակ ալիւր չ'ունենար :

Մենք էլ առաւօտից գուրսն էինք : Հասակալիցներիս հետ շրջում էինք դաշտերում , վազում թիթեռնիկների յետեւից , թուչուններ բռնում , ծառեր բարձրանում , անթիւ անհամար շերեփուկների հետ խաղում , որոնցով լիքն էր մեր տան յետեւից վազող առուն : Երբ պայծառ արեւը շատ էր նեղում մարդկանց , մեր գիւղի երիտասարդութիւնը գնում էր Արփա չայը լողանալու . աղջիկները ծածուկ տեղեր ունէին այնտեղ , ուր ոչ մի աչք նրանց չէր կարող տեսնել : Ազմուկով հետեւում էինք նրանց , տղաները գնում էին իրենց սեռակիցների մօտ , մենք մեր : Այրող արեւի տակ պառկում էինք աւազի մէջ , կուրծքերս եւ ոտքերս նրանով ծածկում , անսպառ զւարձանում , երբ աղջիկները կէս հաղնւած ու ոտարորիկ , գետի եղերքին պար էին բռնում եւ ջրի հոսանքի հետ շորուրալով էլէներ կանչում : Իի օրերին , ցերեկը ամօթ էր պար դալը մեր գիւղում . դաշտերի , բռստաների , տան աշխատանքը սպասում էին ձեռքերի . բայց Տեփոյենց Նաղալը դայթակղեցնում էր բոլորին իր հրաշալի ձայնով , երբ յանկարծ ջրից գուրս էր թուչում թաց եւ մերկ , երկար , սեւ մաղերը ուսերին փուած , ձեռքերը կողքերին էր դնում եւ իր սպիտակ մարդարտեայ ատամները բանալով , զիւ ձայնով երգում էր ու պարում , պարում էր ու երգում .

Բարակ ես , բարտի ծառ ես ,
Կրակ ես , մարդ կը վառես ,
Օսան ջան , արի տեսնեմ
Քեզ ծառայ , արի տանեմ :

Կէս խուփ աչքերով Նաղալը ժպտում էր բոլորին , ինքն էլ մի բարտի , ինքն էլ մի կրակ : Նաղալը ինձ համար տատիս հէքեաթների փերիներից մէկն էր , ինձ թւում էր , որ նա հեռու աշխարհում մի դղեակ ունի շրջապատւած ամենէն գեղեցիկ պարտէզով , ուր անմահական ջուրն էլ հոսում եւ անմահական խնձորն էր բռւմնում : Աշխարհը հէքեաթ էր , այնքան լուսաւոր որ հաղիւ կարելի էր դիմանալ այդ լոյսին : Աշխարհը հէքեաթ էր . Հայոց սարերը փեշ փեշ բռնած համում էին մինչեւ նրա ծայրը , պաղպում Արփաչայը հետեւում էր սարերին , եւ բոլորի վերայ բարձրանում էր Արագածի պայծառ , վեհ ճակատը : Նա էլ էր ժպտում Նաղալին , նա էլ էր ուրախանում մեղ հետ : «Եաման , ուշացայ , մայրս ի՞նչ կ'ասի» , կանչում էր յանկարծ Նաղալը , շտապ-շտապ հազնեում , գլխին մի կարմիր լաշակ կապում եւ միւսների հետ գիւղ շտապում : Ահա նա իր նաղելի հասարկով անցնում է Ղարանղուի վերայով , կանցնում մի վայրկեան Հարդի կամուրջին եւ անհետանում բարտիների եւ ուռիների յետեւը : Աշխարհը կարծես մթնում է , շուք է գալիս նրա եւ իմ երազուն հոգու վերայ , բայց ընկերներս քաշում են ինձ եւ մենք շարունակում ենք մեր խաղերը :

Խաղում էինք դաշտերում , առուների , գետերի մօտ , բայց խուսափում էինք հեռանալ գիւղից , մարդկանցից : Գիտէինք , աշխարհը հէքեաթ է , բայց լիքն է չարքերով , գեւերով : Մութոյժերը իշխում են մեր վրայ եւ Աստծու աչքը չի տեսնում ամէն տեղ : Փոսերում , կամուրջների տակին , ամէն մի մութ անկիւնում սատանաները դարան մտած , քրիստոնեայ ճամբորդին են սպասում , որ նրա հոգին կորցնեն . փէրիները ջրերի միջին , ոսկէ մաղերը ուսերին փուած , անուշ անուշ երգ են սուս , որ մենաւոր ձկնորսին իրենց մօտը քաշեն , խեղդեն .

ջատու պառաւները կամուրջի տակից ուշացող շինականի փեշից քաշում, սպառնում են, հաղար փորձանք բերում գլխին: Ամէն տեղ վտանգ կայ, ոչ խունկն է օդնում շատ անգամ եւ ոչ աղօթքը: Դրա համար էլ Շիրակեցին ամէն մարտ ամսին ակիչ, թաթակիչ ձեռքին, տան ու շւաքի դոները լայն բաց արած, անկիւնից անկիւն էր գնում եւ երկաթը թափահարելով կանչում. «Շուտը դուրս, մարտը ներս»: Զարքերը վախենում էին երկաթից եւ դուրս փախչում:

Խաղում էինք դաշտերում, կանանչ մարգագետինների վերայ, Արագածի ժպտացող երեսի դիմաց: Նա մեր երազների եւ ցնորդների կենդրոնն էր: Հոն էին ապրում տատիկիս հէքեաթների բոլոր փէրիները, դեւերը, չարքերը. հոն էին գտնում թագաւորագնները միշտ քաջ ու բարի. Նրա գագաթից էր կախւած Լուսաւորչի անմար կանթեղը: Բայց ահա մօտենում էր երեկոն. լեռնային շղթաները կարմրում էին մարմտնող արեւի ճառագայթներից, Արագածի հովերը իջնում, իջնում եւ դրկում էին հողը, կարօտի համբոյր դրոշմելով նրա այրւած շրթներին: Վերջին նախիրը դիւդ էր շտապում. եկեղեցու զանգակն էլ անուշ հնչեց ու լոեց. ուշացած շինականը տուն է գնում եղներին ծուլօրէն խարազանելով. հօ՛, հօ՛... սայլը օրօրւում է թմրած նազանքով, անիւները խուլ ճոռում են: Ահա Արագածի կարմիր գլուխը գումատւեց, մի կապոյտ մշուշ պատեց նրան, մոխրագոյն ամպերը եկան եւ ծածկեցին բոլորը մեր աշքերից: Մթնեց: Զարքերի եւ դեւերի ժամն է հիմայ. փէրիները բարձրանում են դետի յատակից, փոսերում, կամուրջների տակին, բլուրների յետեւը սատանաները իրենց հարսնիքն են անում: Մենք կծկում ենք տեղերս, հազիւ շունչ քաշում: Պէտք է տուն գնալ:

IV.

Сбились мы. Что делать нам?
В поле бес нас водит, видно,
Да кружит по сторонам.

Пушкин.

Մոլորւել ենք: Ի՞նչ անենք:
Դեւն է ման ածում մեղ դաշտում,
Այս կողմ, այն կողմ պտտում:
Պուշկին:

Աշխարհը հէքեաթ էր, դիւթիչ եւ խորհրդաւոր, բայց չարքերի եւ դեւերի վախը քանի քանի գիշերներ են խլել ինձնից, քանի անգամ խոցոտել հոգիս:

Գարո՞ւն է, ամառ թէ աշուն. ըստ դիտեմ. բայց տօն օր է: Աղջիկների եւ տղաների մի խումբ, զուգւած, զարդարւած պար է բոնել եւ երգում է.

Արի, եարօ ջան, արի մեր օթեւանը
Վարդերով զարդարեմ քո մարմար ջանը:
Արի, եար ջան, արի, մալուլ մի մնայ
Աշխարհ մեռնել կայ, մեզի չի մնայ:

Նադալն է պարբաշին. կարմիր աղլուխը ձեռքին, փայլուն աչքերով նա քաշում է պարը իր յետեւից, երգում է բարձր եւ սրտանց բոլորից սիրւած երգերը.

Կայնել ես աղբերակին,
Շող կը տաս արեգակին,
Քո շող երեսին մեռնեմ,
Ունքերիդ աղեղնակին:

Հեռւում կանգնած են զիւղի տղամարդիկ եւ կանայք, նայում են պարողներին եւ հիացած բացազանչում. «Աստուած քո բերած մօրը օրհնի, բերանիդ մատաղ. կանչէ է՛հ, աղջիկ չես, կոռնկ ես»: Լսո՞ւմ է նաղալը նրանց խօսքերը, չը գիտեմ. բայց նրա այտերը իր ձեռքին բռնած աղլուխից էլ կարմիր են, եւ ժամանես նա ցած է դցում աչքերը: Ես կարող եմ անվերջ նայել նադալին, աշխարհի չափ եմ սիրում նրան, բայց ընկերներս դադար չեն տալիս, քաշում են ինձ իրենց հետ եւ մենք գնում ենք կալերից հեռու, կանանչների մէջ սունկ որոնելու: Որոնում եմ ընկերներիս հետ, բայց ոչ մի սունկ չեմ դաշտում: Ականջներիս նադալի ճայնն է, աչքերիս առաջ նրա հասակը: Միշտ դես ու դեն եմ վագում եւ ինդրում մէծերից, որ ինձ սունկերի տեղը ցոյց տան. բայց բոլորը ծիծաղում են իմ վերայ, դրկում են ինձ, համբուրում եւ ծաղրելով բղաւում. «տես, այնտեղ է, ահա այստեղ, կոյր ես, կոյր, չե՞ս տեսնում»: Յուսահատւած կանդնում եմ մի տեղ եւ ուղիղ ու սուր իմ առաջը նայում եւ յանկարծ տեսնում եմ նրանց, փոքրիկ սունկերին, իրենց գեղեցիկ սպիտակ գլխարկներով, այնքան քնքոյշ, կանանչների մէջ կանգնած: Ուրախացած, ես կուանում եմ նրանց վերայ, ուղում եմ բոլորին քաղել, երբ Աշխէնը սոսկալի ճայնով բղաւում է. «չո՞ւս, սատանան եկաւ, փախէք»: Սարսափւած, նայում եմ նրա կողմը, բայց նա արդէն հեռու է եւ բոլորը սոսկումով փախչում են նրա հետ: Ես շտապում եմ նրանց յետեւից, ընկնում ձեռքերիս վերայ, նորից բարձրանում, նորից ընկնում եւ այսպէս անվերջ: Ինձ թւում է որ ես յափառեան այնտեղ եմ եւ էլ երբեք չեմ դուրս դալու մարդագետնից: Ես այնքան փոքր եմ, ոտքերս դանդաղկոտ, անոյժ: Շունչս կտրում է, աչքերս մթնում: Հիմայ ամէն սունկի յետեւում սատանին եմ տեսնում կանգնած. նա

մեծ եղջիւրներ ունի ճակատին, նրա ոտքերը երկար են եւ ծուռ, կրունկները թարս, աչքերը կրակի բոց: Նա ինձ իր կարմիր լեզուն է ցոյց տալիս, նա ծիծաղում է, թռչկոտում եւ քանի գնում մօտենում ինձ: Մենակ եմ եւ անզօր: Ծնկնում եմ գետնի վերայ, թաղում երեսս կանանչների մէջ եւ յանկարծ կայծակի նման մի միտք ծագում է ուղեղս. ես գտայ սատանից աղտուելու միջոցը: Դա այնքան պարզ է: Քանդում եմ գողնոցս ու ծածկում նրանով գլուխս եւ երեսս: Գիշերը պատում է ինձ եւ նրա հետ էլ խաղաղութիւնը: Հիմայ ես ոչ ոքի չեմ տեսնում, ուրեմն ոչ ոքէլ ինձ չի կարող տեսնել: Այդպէս անում էի ես գիշերները, երբ տատիկիս հէքեաթների գեւերը ինձ հանգիստ չէին տալիս. ես քաշում էի վերմակը գլխիս խեղդուելու աստիճան եւ նրանք ինձ իմ թաքատոցի մէջ չէին գտնում: «Հէյ, վեր կաց, բալիկ, եկ»: լսում եմ ես մօտիկից: Երեւի սատանան է, մտածում եմ ես, նա ուղում է միայն գիտնալ իմ ուր լինելը, եւ ես աւելի եմ կծկում տեղումս: «Բալիկ, վեր կաց, չե՞ս լսում» — բղաւում է նոյն ճայնը վախեցած: Կամացուկ, մի աչքով նայում եմ այն կողմը: Աշխէնն է: Նա ինձ ուժով վեր է բարձրացնում, զօռով յետ քաշում գողնոցը երեսիցս եւ սրտանց ծիծաղում: «Փլսիդ մատաղ, վախեցա՞ր, հա՞»: Հաւատացի՞ր թէ սատանէն եկաւ. դէ՛հ, հանաք ենք անում, ջա՞ն, խաղում ենք. սատանան լոյսից վախենում է եւ ցերեկով երբեք չի դալիս. գնանք տուն»: Վտանդը անցած է, սատանան չը կայ, արեւը ժպտում է վերեւից, հեռուից լսում է դեռ նադալի կախարդիչ ճայնը, բայց հիմայ, երբ ամէն ինչ վերջացել է, ես անմիխիթար լաց եմ լինում: Աշխէնը չի կարողանում հանդստացնել ինձ: Ես գողում եմ ամբողջ մարմնով: «Ամա՞ն, երեխի լեզին պատուել է վախից, քօռանամ ես, ի՞նչ արեցի» — գոչում է Աշխէնը, ինձ ուսերի է

դնում եւ դէպի տուն վազում : «Ա՛խ , ինչ յիմար ես Հայ , ի՞նչ վախկոտ ես . տե՛ս , որքան սունկեր եմ հաւաքել քեզ համար , դե՛հ , մի՛ լաց լինիր , քեզ մատաղ» : Ճամբին , կանդ է առնում եւ մատը չարաճճիօրէն թափահարելով ասում . «տատիդ բան չը պատմես , մատաղ , ձեռքիցը չեմ պրծնի» : Ես խոստանում եմ այդ , բայց նա ուզում է , որ երդւում : Ես երդւում եմ հայրիկիս կեանքով . մատս հանդիսաւոր բարձրացնում եւ երկնքին նայում . «Հայրիկիս արեւը վկայ , ոչինչ չեմ ասի տանը» :

Երեկոյին , երբ տատիկս քնելուց առաջ վերջին անդամ խաչ է հանում երեսիս , հարցնում եմ դողալով . «Տատիկ , սատանան գալի՞ս է նոյնպէս , երբ երեխաները անկողնում են լինում» : Սարսափած , տատիկս խաչակնքում է երեսը . «Մատանէ՞ն . Աստուած'ծ , դու չարը խափանես , բարին կատարես . Էս լաւ , հանդիստ ժամին ի՞նչ ես չարի մասին մտածում» : Ես ոչինչ չեմ պատասխանում : Տատս փայփայում է մաղերս , յօրանջում մի քանի անդամ եւ ասում . «Հա՛ , ի հարկ է , սատանէն կարող է գալ երեխաների անկողնու մօս , երբ նրանք չար են եւ իրենց աղօթքները լաւ չեն ասում : Զարի աչքը խաւարի , նրան ի՞նչ պէտք ունինք , երբ մարդիկ սատանից էլ վատ են . քնիր , քնիր , թող Աստծու աչքը վրադ լինի» : Եւ տատս խոշոր քայլերով , ուղիղ եւ բարակ ինչպէս մի երիտասարդ աղջիկ անհետանում է դռան մէջ : Բայց ես չեմ կարող քնել : Լայն բաց արած աչքերով նայում եմ չորս կողմս : Գիշերայ կանթեղի կապոյտ լոյսը , որը գալիս է նրա կապոյտ ապակուց , խորհրդաւոր ստւերներ է գցում անկողնուա վերայ եւ անկիւններում : Վախը ինձ տանջում է : Հազար ու մի մտքեր են անցնում գլխովս : Գիտեմ , որ ես շատ անդամ չար եմ եղել , աղօթքներս լաւ չեմ ասել քնելուց առաջ . . . ուրեմն

սատանէն կարող է ամէն րոպէ մտնել սենեակը եւ գալինձ մօտ : Յիշողութեանս մէջ կանգնում են սոսկալի պատկերներ — իմ լսածներից : Դեռ երեկ պատմում էր Ռուբէնը , թէ ինչպէս մեր գիւղացի Վարդանը սատանաների հարսնիք է տեսել : Խեղճը հարեւան գիւղից տուն էր գալիս : Լուսնեակ գիշեր էր , սարերից հազար ձայներ , շշուկներ եւ շնրտոց էր լաւում : Երկաթուղու կամուրջի տակից անցնելիս , Վարդանը մի շարք մարդկանց է հանդիպում , որոնք թմբուկ ու զուռնայով , քէֆու հարսնիքով դէպի ինքն են գալիս : Հարա հրցոցով նրանք հարակրում են Վարդանին հետները պարելու : Խեղճ մարդը քաղցած եւ տիսուր է եղել , շատ է ուրախանում այդ հրաւէրից , ձեռքը երկարացնում է որ իրեն պարզած բաժակը վերցնի եւ հարս ու փեսի կենացը խմի , երբ յանկարծ նկատում է , որ բոլոր հիւրերը թարս կրունկներ ունին : Իսկոյն խաչակնքում է երեսը , Քրիստոսի եւ Մարիամ Աստուածածնայ անունը տալիս , առանց նրանց նայելու բարձր ձայնով «Հայր մերը» կրկնում : Զարերը անմիջապէս հեռանում են տնքալով եւ ատամները կրմտացնելով : Այն օրւանից Վարդանը իրեն լաւ չի զգում , նա մռայլ է , գիշերները լաւ չէ քնում : Նա մի օր խեղճ Պետրոսի նման է լինելու : Պետրոսն էլ մի գիշեր սատանաների հարսնիք է տեսնում , բայց չի նկատում նրանց ո՛վ լինելը , արադ է խմում հետները ու պարում նրանց հետ : Միայն շատ յետոյ տեսնում է նա , որ իր նոր բարեկամները թարս ոտքեր ունին , ձեռքը տանում է ճակատին որ խաչ հանի , բայց ձեռքը նրան չի հնազանդւում , լեզուն էլ կարծես պապանձւել է , «չ մի խօսք չի կարողանում արտասանել , որ սուրբերի անունը տայ , Զար երից աղատուի : Սատանաների արազը նրան թուլացրել էր : Լեղապատառ թողնում է խեղճ մարդը սայլն եւ

եղները եւ հոգին բերանը առած վաղում է, հա վաղում։ Սանդարձմետի ծնունդները բղաւում, սուլում են յետեւից, իսկ մէկը նրա մէջքին ամուր նստած մազերն է քաշում, բաց չի թողնում նրան։ Շնչասպառ, տանջւած դէմքով, յուսահատ Պետրոսը, սարսափից չուած աչքերով տուն է մտնում, հատ ու կտոր պատմում գլխին եկածը, աղաչում, պաղատում, որ նրան աղատեն։ Եւ ուշաթափ վայր է ընկնում։ Ոչ մի սուրբ չօգնեց նրան։ Նրա վերմակին, շապիկին, բարձին ասեղներ շարեցին, ակիչ, թաթակիչ դրեցին կողքը, մէջքը շատ անդամ ասեղով ծակեցին, որ սատանին դիպչի, հեռանայ։ ի զո՞ւր։ Յուսահատւած, նրա եղբայրը թուրք Մօլլին բերել տւեց։ Մօլլէքը լոյս հաւատ չունեն մեզ նման, բայց նրանք թլսում գրել գիտեն, կախարդ են եւ սատանաները վախենում են նրանցից։ Մօլլէն շղթաներով կապել տւեց Պետրոսին, եւ մի լաւ ծեծեց նրան։ Պետրոսը տնքում էր հարւածների տակ, հայհոյում, թքում։ Յետոյ ուժասպառ ընկաւ մէջքի վերայ եւ արիւնոտ աչքերը անշարժ մի կէտի ուղղած լրեց։ Զը նայած բոլոր ծեծերին որ Մօլլէն ամէն օր տալիս էր նրան, սատանէն չը հեռացաւ Պետրոսից եւ նրա դրութիւնը օրից օր վատացաւ։ Հիւանդը կատաղում էր մարդ տեսնելիս, հայհոյում էր Սուրբերին եւ Աստծուն, ամենալաւ ապացոյցը, որ սատանէն էր խօսում նրա բերանով։ Բայց գիշերը Պետրոսը կամացուկ լաց էր լինում եւ խնդրում, որ իրեն աղատեն շղթաներից։ Մի քանի ժամանակից յետոյ ուժասպառ եւ հիւանդ նա հանգստացաւ։ Մօլլէն ուրախ ուրախ շփեց ձեռքերը եւ յայտնեց, որ իր բժշկութիւնը վերջացաւ, որ ինքը դուրս վոնտեց սատանին Պետրոսի միջից։ Տարիներ անցան. Պետրոսը դեռ միշտ պառկած է թոնրի շրթին, խորը տնքում է, հառաչում եւ նայում է

աշխարհին այնպիսի պղտոր եւ դժբախտ աչքերով, որ նրան տեսնելիս մարդու սիրտը կտոր կտոր է լինում։

Իսկ նազի՞կը. նոյնպէս դիւահար, նա թռչկոտում է ամէն տեղ եւ պարում մերկ երդիքների ծայրերին։ Նրամօտ էլ Մօլլան շատ օրեր մնաց, կախարդեց նրան գիշեր եւ ցերեկ մինչեւ նա խելօքացաւ։ Մօլլէն նազիկի վզից մի թլսում կապեց եւ գնաց տուն։ Ասում էին, որ նազիկը աւելի էր խելօքացել, այն օրից այնքան մեղմ եւ հանդիսաւ էր։ Բայց երբ նա մի անգամ Արփաչայում լողանում է, թլսումը թրջում է եւ իր ոյժը կորցնում, նազիկը նորից կատաղում է։ Հիմայ ձորերը եւ սարերը նրա տունն են։ Գիշերները նա պարում է սատանաների հետ, ցերեկը մարդկանց եւ մանաւանդ երեխաների յետեւից է ընկնում իր սոսկալի ծիծաղով, որը աւելի հեկեկոցի է նման։ Դեռ երէկ չէ՞ր որ նա իր գունատ գէմքը գիծ աչքերով, կպցրել էր մեր լուսամուտին, ծիծաղում էր եւ ինչ որ խօսում։ Ի՞նչպէս մենք բոլորս վախեցանք, երբ տեսանք նրան։

Ակարմայ լուսամուտին եմ նայում։ Բարակ ծածկոցի յետեւից երեւում է լուսինը. դուրսը ոչ մի ձայն։ Քամին մեղմիւ օրօրում է պարտէղի ծառերը, որոնք ստերներ են ձգել լուսնեակից փայլող պատերի վերայ։ Արդեօք նազիկի գէմքը չէ՞ր լուսամուտի յետեւը։ Ո՞վ էր յանկարծ տնքաց, Պետրոսը։ Ես ճշում եմ սարսափած, շարժում անկողնում։ Ո՞ւր պահւել։ Հիմայ բոլորը լցւեցին սենեակը. սատանաները, Պետրոսը, նազիկը եւ ուրիշ շատ շատերը։ Օգնութիւն։ Մէկը գնում է ձեռքը ճակատիս, ես ցնցուում եմ, գոռում։ «Ի՞նչ կայ, փոքրիկ, ի՞նչ է պատահեղ»։ «Մայրիկ, վախենում եմ, սատանէն սունկերի յետեւը, Պետրոսը, նազիկը, վա՛յ»։ «Առ'ւս... ձայնդ կտրիր. ոչ ոք չը կայ, տե՛ս։ Սատանայ չը կայ աշխար-

Հում, սուտ է, յիմար բան. խեղճ Պետրոսը հիւանդ է. լոկր, մի՛ վախեցնիր քրոջդ եւ եղբայրներիդ»: Մայրս գրկում է ինձ կամացուկ, տանում իր անկողինը, օրօրում է ինձ թեւերի մէջ: Ի՞նչ անուշ է նրա մօտ լինել, որքան ապահով:

Սատանէն հեռացաւ, չարքերը եւ դեւերը նրա հետ: Երկու մեծ, խոչոր աչքեր աւելի պայծառ քան լուսինը, աւելի ջերմ քան արեւը, լուսաւորում են հոդիս, վոնտում այնտեղից վախը, մութը: Մօրս անո՞ւշ աչքերը:

Մայրի՛կ...

V.

Ամէն ամառ հիւր էինք գնում պապոնցս տունը, որը դտնում էր Ղօշաւանք գիւղում, Անիից կէս ժամ հեռաւորութեան վերայ: Դեռ արեւից առաջ, քնաթաթախ մեզ վեր էին բարձրանցնում անկողիններից: «Արեւի հետ ճամբայ ենողը, շուտ ամուսնացողը եւ ճամբի կիսից վերադարձողը չի փոշմանի» բացադանչում էր հայրս զւարթ: Տեղ էինք բոնում կառքի մէջ կէս քուն կէս արթուն եւ ճանապարհ ընկնում: Այն ժամին երկինքը ծիրանի էր հագած, օդի մէջ լսում էին հագարաւոր թուչունների երդը եւ կանչը, արտերը դեռ թաց էին առաւօտևայ շաղից: Անցնում էինք Շիրակի Հայոց գիւղերով, ուր խաղաղ աշխատանքն էր սկսում, ամէն ճամբորդի հետ «բարի լոյս, բարի աջողում, Աստծու բարին» խօսքերը փոխանակում: Գնում էինք քարուտ դաշտերով, բլուրներով, երբեմն Արփաչայի եղերքով, շատ անդամ ձորերի եւ խորչերի միջից: Կառքը օրօրուում էր, առաւօտևայ մեղմիկ քամին շոյում էր մաղերս եւ դէմքս, աչքերս փակում էի երջանիկ եւ քնիս մէջ ականջիս էր հասնում հօրս ուժեղ եւ անուշ ձայնը.

Առաւօտ լուսոյ
Արեղակն արդար
Առ իս լոյս ծագեա.
Բղխումն ի հօրէ
Բղխեա ի հոգւոյս
Բան քեզ ի հաճոյս:

Փոքը էի, չէի հասկանում Ներսէս Շնորհալու այդ հրաշալի երդի իմաստը, բայց սիրում էի նրա եղանակը, հօրս սիրելի ձայնը: Սիրում էի արդար, անբիծ արեւը, որը այնքան առատօրէն լուսաւորում է մեր աշխարհը:

Երբ անցնում էինք Տայլարը եւ մօտենում Ղօշաւանքի դաշտերին, մեր զմայլւած աչքերի առաջ բացւում էր մի հրաշալի տեսարան, որը յաւիտենականօրէն դրոշմւած է հոգուս մէջ: Հեռում երեւում էր հսկայ Մասիսը, Հայոց աշխարհի սիրու, իր վեհափառ, ձիւնապատ գաղաթով, մի ծեր աժդակ հայ, որը ունքերը կիտած չը գիտես ինչի՞ վերայ է մտածում, ինքը այնքան բարձր ու հզօր, կարծես երկնքի հետ է մրցում: Նրանից ոչ հեռու երեւում էին Բարդողեան լեռները, Գեղարքունիք, Կողբայ սարերը եւ մեղ մօտ, մեր կողքին, մեր ետեւը, մեր առաջ, միշտ մեղ հետ, ժպտացող կախարդիչ Արագածը, Արայ լեռան հետ: Արգեօք Արայ լեռը իր անունը Հայոց թագաւոր Արայի՞ց է ստացել, որը այնքան գեղեցիկ է եղել, որ հսկայ Բարելոնի Շամիրամ թագուհին, նրա սիրունութիւնից դայթակղւելով, խնդրում է Արային իր երկիրը գալ, տիրանալ Բարելոնի գահին եւ իր հետ ապրել: Բայց գեղեցիկ Արան, հաւատարիմ իր կնոջը՝ Նւարդին, մերժում է սքանչելի Շամիրամին եւ իր երկրում մնում: Վիրաւորած, կատաղած խանդից, Շամիրամը զօրք է հաւաքում եւ կոիւ գալիս Հայոց թա-

գաւորի վերայ, որ նրան բռնութեամբ իր հետ ամուսնացնի : Բայց կուի մէջ ընկնում է Արան եւ ցաւից դժւած Շամիրամը հրամայում է Արայի հրաշալի մարմինը բարձր տեղում զնել, որ աստուածները նրա վէրքերը լիզեն եւ կենդանացնեն նրան : Այն օրից ամէն ամառ, կարօտը սրտին, Բարելոնի թագուհին դալիս էր Հայոց սարերը ամառանոց, քաղաքներ եւ գիւղեր էր շինում այնտեղ, կարծես երկիրը շենցնելով, ուղում էր իր մեղքը քաւել այն մէկի յառաջ, որին ինքը դժի նման սիրեց եւ որը այդ սէրը մէրժեց . որովհետեւ հայ տղամարդի առաքի նութիւններից ամենէն գեղեցիկը նրա հաւատարմութիւնն է դէպի իր օջախը, իսկ օջախի կրակը միշտ վառ պահում է :

Փոքր էի, զգացմունքներիս չէի կարող անուն տալ եւ ոչ էլ հասկանալ լսածներս, բայց սիրում էի Հայոց վեհափառ սարերը, հիանում մեր երկրի զրոյցներով, հազարտ էի այդ հողի, այդ սարերի զաւակը լինելու :

Զէ՞ որ հազար տարիներ առաջ, դանդուր մազերով, հսկայ եւ յաղթանդամ Հայկի առաջնորդութեամբ, իմ պատերը այս լեռները իրենց հայրենիք ընտրեցին : Էլլ աշխարհակալ Բարելոնի մի աժդակ այ թագաւոր Բելլ չէ՞ր, որ զարմացաւ ու բարկացաւ երբ լսեց, որ Հայկը վտիսնակ հարաւում իր հպատակութեան տակ բնակւելու, ուր արեւը աւելի ջերմ է եւ կեանքը աւելի հեշտ, գերադասեց այդ լեռները : «Ինչո՞ւ գնացիր եւ բնակւեցիր հիւսիսի սառնամանիքների մէջ», Հարցրեց Բելլ Հայկին : Կարո՞ղ էր նա հասկանալ, որ իմ նախահայրերը գեղեցկութեան եւ վեհի երկրագու, գերադասեցին չարքաշ, բայց ազատ ապրել այս դժւարահաս լեռներում, իրենց երազուն աչքերը միշտ նրանց գաղաթներին յառած, քան նստել

Բելի հովանակ առ ուր ող թեւերի տակ, Բարելոնի պտղաբեր հարթավայրերում :

Բայց ահա Ղօշաւանքի երկու յաղթական աշտարակները : Մէնք ըրջապատռում ենք պապիս տանեցիներով, որոնք մեզ ընդառաջ են եկել : Գրկախառնութիւն, համբոյր, ուրախ բացագանչութիւններ, հարց ու փորձ, ծիծաղ : Ահա եւ հինաւուրց, հոյակապ վանքը, կարմիր քարերով շինւած, գերեզմանոցը եւ նրանց կից պապոնցս տունը : Դրան չքնքին կանդնած է Արփի մամիկոս : Բոլորից առաջ ընկնել նրա թեւերի մէջ, նայել նրա անուշ դէմքին, որը գեռ միշտ հրապուրիչ է եւ երիտասարդ :

Վազում եմ եւ կարօտով նրա ծնկներին փաթաթւում :

* * *

Ղօշաւանքում ամէն ինչ հէքեաթ էր ինձ համար : Անդնդախոր ձորերը, անմատչելի սեպ քարափները, անհամբոյր, կարմիր ժայռերը, մէկը միւսի վերայ կուտակւած խոժոռ եւ սպառնացող : Ինձ ծանօթ սիրելի Արփաչայը ճեղքում էր գիւղը ըրջապատող ձորը, խփւում կատաղաբար ժայռերին, փրփրում աղմկում : Նա մէր գիւղի մօտերքի հեղ գետը չէր այլեւս, այստեղ նա խորն էր, բարկացու, վտանդաւոր եւ առանց նաւակի չէր կարելի անցնել նրա դրմբացող ջրերի վերայից : Դժւար էր նեղ, ոլրապտոյտ ճամբաներով ձորը իջնել . պէտք էր ճարպիկ լինել, գանդաղ շարժւել եւ այն էլ մացառներից եւ քարերից բռնած : Մի անզգոյց քայլ եւ մարդ կարող էր գլորւել անդունդը, փրփրուն ալիքների մէջ :

Կարմիր, մեծ քարերով շինւած վանքը, կանդնած ձորի եղերքին, ամենէն սեպ քարափի վերայ մի հին, շատ հին շինու-

թիւն էր, բարձր հոյակապ գմբեթներով, որոնք իմ աչքում
մինչեւ երկինք էին բարձրանում: Հաստ, սիրուն սիւները,
խորը խորանները, կամարակապ գաւիթը, ծանր աստիճան-
ները, յատակի լսյն սալերը, վանքին կից դանւող մեծ սրահը,
նոյն բարձր սիւներով, գահանման քարը այդ սրահի մէջ, ուր,
պապիս եղբայր Տէր Յուսիկի ասելով, հին ժամանակները
Հայոց թագաւորները խորհուրդի էին նստում, լեզնում էին
ինձ զարմանքով եւ պատկառանքով: Վանքի զանդակատան
վերայ քանդակւած էր Մարիամ Աստուածածնի պատկերը:
Մի առիւծ եւ մի ցուլ կանդած էին նրա երկու կողմը եւ դա-
ինձ համար մի առանցք էր, անթիւ հարցերի աղբիւր: Ինչո՞ւ
էր Աստուածածինը քանդակւած առիւծի եւ ցուլի մէջտեղը,
այդ վայրենի կենդանիները ի՞նչ կապ ունին նրա հետ: Մեր
գիւղի Զարոյենց ցուլը մի կատաղի եւ ուժեղ կենդանի, երե-
խաներիս սարսափին էր, երբ գլուխը կախ, արիւնոտ աչքերով
վաղում էր կովերի յետեւից: Վա՛յ, թէ մէկը նրա ճամբուն
կանդած լինէր, կը զարկէր, կը սպանիէր: Իսկ առիւծը...

Երբ մօրս վեշերից բոնած ես բարձրանում էի զանդակա-
տունը, մայրս ասում էր Հիսուս: «տե՛ս, էս եկեղեցու հսկոյ
քարերը. ի՞նչ վարպետներ, ի՞նչ մարդիկ են եղել հին Հայաս-
տանում, որ կարողացել են այս աժդահայ քարերը վերցնել
եւ նրանցից այսքան բարձր պատեր շինել. արդեօք ինչո՞վ են
նրանք վերցրել այս ծանրութիւնը»: Եւ այդ հարցը ինձ մտա-
ծել էր առաջիս, թէ հին Հայաստանի մարդիկ իրենք էլ էս քա-
րափների, էս քարերի նման աժդահայ են եղել: Եւ որ
այդ աժդահայ երը զարմանալի հնարք են ունեցել ամէն
քարի վերայ գլուխ քանդակելու: Հին արձանագրութիւններ
պատում էին վանքի պատերը... ինձ համար խորհրդաւոր
նշաններ... արդեօք այդ գլուխը նրանց, հին աժդահայ

մարդկանց պատմութիւնը չէի՞ն: Ա՛հ, եթէ ես մեծ լինէի եւ
կարդալ գիտենայի...

Պապոնցս տան առաջից մի լայն ճանապարհ տանում էր
ձորի միւս կողմը, ուր շինութիւններ եւ մի ահագին, բաց տա-
րածութիւն կային: Այդ ճանապարհով մենք ձորն էինք իջնում
էշերի վերայ նստած, որոնց մէջքից կախւած էին ջուրի փայ-
տեայ կուժեր: Աղբւոր չկար գիւղում եւ մարդիկ Արփաչայի
ջուրն էին խմում: Արեւից առաջ, երբ գետը դեռ մաքուր էր,
կամ ուշ երեկոյեան իջնում էինք ձորը եւ օրւայ պաշար ջուրը
պապոնցս հոտաղների հետ, վերեւ բարձրացնում: Ամէն տուն
քարէ զտիչներ ունէր, ուր ջուրը սառն էր մնում եւ մաքրում
էր: Չորսում գտնուում էին պապոնցս ջրաղացը եւ ջերմուկը:
Ջերմուկի ջուրը հանքային էր եւ ամէն տեսակ ցաւի ու չոռի
դարման: Մեծ հայրս պատեր էր շինել ջերմուկի ջուրջը, խո-
րացրել նրան, որ մարդիկ կարողանան լողանալ նրա մէջ.
անակ էր կառուցել նրան կից հանւելու եւ հաղնւելու համար:
Ջուրը հոչակ ունէր մօտակայ գիւղերում եւ կիւրակի օրերը
շատերն էին գալիս նրան խմելու կամ մէջը լողանալու: Հայրս
երբեմն ծիծաղելով ասում էր պապիս: «Եթէ այս ջուրը Եւրո-
պացու ձեռքը լինէր, նա կը հարստանար, ջուրը ծախելով եւ
բոլոր լողացողներից դրամ վերցնելով»: Սարիբեկ պապս
ժողովում էր իր բարի ժպիտով. «Եւրոպացին Եւրոպացի է, էն
ուրիշ է. ևս հայ եմ. ջուրը Աստուած է տեել, մարդու
ձեռքով չի ստեղծւել, նրա ճակատի քրտինքի արդիւնքը չէ.
Աստծու նւէրը կը ծախւի. մեղք չէ՞ ջուրն էլ առեւտուրի ա-
ռարկայ գարձնել»:

Ամէն օր իջնում էինք ձորը ջերմուկից ջուր բերելու: Անց-
նում էինք «Պտտան գեօլի» մօտից, որը էն օրերիս սարսափ-
ներից մէկն էր. ճանապարհին կից, մի մեծ ժայռի մօտ Ար-

փաշայը յանկարծ դանդաղեցնում էր իր վագրը, պլոտուում ժայռի շուրջը եւ խոռվ, խեղղւած դրմբում։ Քանի՛ անզգոյշ լրողորդներ էին իրենց մահը գտել այնտեղ. մէջը ընկնողը երբեք չէր աղատուում։ Ասում էին, որ ջրի տակ մի խորը հոր կայ, ուր «ջոջի պառաւը» նստած բոլորին ներս է քաշում, խեղդում։ Յիշում եմ. մի օր ես նստած էի Արփաշայի եղերքին «Պտտան գեօլից» ոչ հեռու եւ նայում էի, թէ ինչպէս պապոնց տղեքը հօրս նաւակ նստեցրած, նրան ալիքների վերայ դես ու դեն էին քաշքում, սպառնում կատակելով, որ նաւակը «Պտտան գեօլից» կը դցեն։ Ես երեւի շատ փոքր էի այն ժամանակ. նայում էի եւ վախենում հօրս համար, զայրանում էի էն մերկ տղաների վերայ, որ այդպիսի չար մտադրութիւններ ունեն։ Պապս լողանում էր ինձնից մօտիկ եւ հանգըստացնում էր ինձ. երբ նաւակը յանկարծ մօտեցաւ «Պտտան գեօլին», նոյն րոպէին ինձ թւաց որ մի կանանչ ճեռք խոտեղով պատած, պարզեց ջրի տակից եւ նաւակը դէպի իրեն քաշեց. աղիողորմ ճշացի եւ յուսահատ գլուխս գետին խիեցի։ Ու երբ պապս ջրից դուրս թռաւ ու ինձ թեւերին առած համոզում էր լուել, չը հանգստացայ մինչեւ հայրս նաւակով յետեկաւ «Պտտան գեօլից» ու մեղ միացաւ։ Ահա այդ գեօլի կողմից էինք անցնում ամէն օր ջերմուկը գնալիս։ Ատամներս սեղմում էի միմեանց, աչքերս ցած գցում, որ չը տեսնեմ, կպչում էի մօրաքոյրներիս եւ ուրախ էի երբ անլտանդ տուն էինք գալիս։ Մի օր, ճաշի ժամանակ, երբ ոչխարները ծուլօրէն պառկած էին «աղլում», երբ բոլոր տանեցիք մեծ թէ փոքր, հոտաղ թէ հովիւ շարքով հաւաքւած էին սեղանի շուրջը, հայրս նայեց ինձ զւարձացած եւ կանչեց. «Իմ աչիկը, քաջ աչիկ է. չո՞ւ կը վազի եւ ինձ համար ջերմուկից ջուր կը բերի»։ «Էս շոգին երեխին մի չարչարի» ասեց Արփի մամու,

որ միշտ հոդ էր տանում մեր բոլորի երջանկութեան համար. բայց հայրս չլսեց նրան։ Պէտք էր գնալ։ ին օրերին, հայրս ինձ մի գոյնզգոյն գաւ էր ընծայել, որը ինձ շատ էր ուրախացնում, մի սիրուն գաւ, որը բոլորի հիացմունքն էր։ ին փոքրիկ գաւը ուսիս ես ճամբայ ընկայ։ Տաք էր, ճամբան փոշոտ, բոյսի եւ ծառի ոչ մի նշոյլ. հեռւից երեւում էին մերկ քարափները, ջրաղացը մի հատիկ ծուռ ծառով, ջերմուկը եւ «Պտտան գեօլից»։ Արեւը նեղում էր ինձ, բայց նրանից շատ վախը «Ջոջի պառաւից»։ Եւ յանկարծ մի միտք ծագեց գլուխս. ձորից սիրուն գաւս ներքեւ գլորել, համ կ'ազատւիմ ջուր բերելուց, համ էլ... ի՞նչ հրաշալի պատկեր էս քարերի միջից գլորւղ գոյնդոյն գաւը։ Զրիսկ... ու գաւը գլորւեց, գլորւեց եւ ես տեսայ ինչպէս նա հազար կտոր եղաւ։ Սկզբում միայն զարմանք ինձ մօտ, ափսոսանքի ոչ մի նշոյլ. հետաքրքիր էր եւ իրապէս դեղեցիկ քարերի ու մացառների միջով գլորւղ գաւը, բայց յետոյ... իմ սիրուն գաւը կոտրւեց, կորաւ էն փոքրիկ գաւը, որի նմանը ոչ ոք չունէր եւ որ ը հօրս ընծան էր։ Տուն եկայ։ «Հը, բայիկ, որքա՞ն շուտ եկար, չասեցի որ իմ աչիկը լաւ աչիկ է, ուե՞հ բեր ջուրը, տեսնեմ» բացազանչեց հայրս ուրախ։ «Ջուր չկայ. հապա... գաւը ճեռքիցս փախաւ, ձորը իջաւ եւ... կոտրւեց» լացեցի ես։

Բոլորը ծիծաղեցին. «գաւը ոտքեր է ունեցել, հա՛, փախչել գիտէ»։

«Խեղճ գա՛ւ, տեսնես ինչո՞ւ յանկարծ գժւեց, ոտք առաւ փախչեց ու... կոտրւեց, ասեց հայրս լրջօրէն. «չե՞ս ամաչում որ չկարողացար բռնել նրան ու ինձ առանց ջուրի թողեցիր, գնա թասով բեր, բայց բերես, հա՛»։

Կպայ Արփի մամիցս. ժպտաց, հասկացաւ. «Դիտմամբ կոտրեցիր, հա՞» շշնչաց նա։

Ամաչում էի . կամացուկ հեռացայ սեղանից եւ մի թաս ձեռքումս վագելով ձորը իջայ . անցայ սրտատրովի «Պտտան դեօլի» մօտից . կանգնեցի մի րոպէ . թող քաշի տանի «Ձոջի պառաւը» ինձ նման աղջկան . բայց նա չը տարաւ ինձ . գետր հանդիստ իր շրջանն էր անում եւ խուլ աղմուկով իր ճամբան շարունակում : Զերմուկից ջուրը վերցրի եւ տուն եկայ :

Ավտո՞ս իմ սիրուն, լա՞ւ գաւը :

Զերմուկի ճանապարհին կից գտնուում էին սուրբ Մինասի եւ սուրբ Գէորգի հինաւուրց կէս աւերակ մատուռները : Նրանց գմբեթները ընկած էին, պատերի կէսը փլած . բայց կանգուն մնացածը նոյն հարազատ քարերով էր շինւած ինչպէս վերեւ յիշւած հոյակապ վանքը : Այդ մատուռներից մէկին կից մի գերեզման կար, մի հին, անշուք գերեզման : Երկու աստիճանով մի քարէ պատուանդանի վերայ դրւած էր մի գագաղաձեւ մեծ քար եւ վրան խոշոր տառերով գրւած էր . ԱՃՈՏ ՈՂՈՐՄԱԾ : Հին հին դարերի մի շատ բարի, աստուածավախ թագաւորի գերեզմանն է դա, պատմում էին մարդիկ : Այդ թագաւորը այնքան է սիրել Ղօշաւանքը, որը այն ժամանակ Հոռոմոսի վանք է կոչւել, այս ձորերը, Արփաչայը եւ գեղեցիկ մատուռները, որոնք նրա օրով կանգուն են եղել, որ մեռնելիս կտակել է, իրեն էս ձորում թաղել : Էն օրւանից շատ բաներ են փոխւել աշխարհում, թագաւորի մեծ քաղաքը Անին աւերւել է, նրա ժողովուրդը փախել է հեռու հեռու երկիրներ, բայց գերեզմանը դեռ կայ, դեռ մնում է : «Տես, ասում է պապս, ջրաղացքի յետեւում, Արփաչայի երկու ափերին քանդւած պատերի մնացորդները ցոյց տալով, հին ժամանակ այդ պատերը մի մեծ կամուրջի պատեր էին . այդ կամուրջի վերայով էր անցնում էս թագաւորը, երբ նա Անիից մեր գիւղն էր գալիս . հիմայ կամուրջը քանդւած է,

ամէն ինչ աւերակ դարձած, թաղաւորի ոսկորներն էլ փտել են հողի տակ, է՛հ, աշխարհի բան է» :

Իմ աչքում կամուրջի վարպետները նոյն աժդահան երն են եղել, որոնք էն հսկայ ժայռերը պոկելով, տաշել, տաշտշել էին եւ նրանցից վանքեր ու մատուռներ շինել, ջրերի վերայ կամուրջներ կառուցել առանց փրփրուն ալիքներից վախենալու : Տեսնես ո՞ւր են էն աժդահաները, ինչո՞ւ ոչ մի տեղ չեն երեւում նրանց ապրած տները :

Արփաչայի միւս եղերքում, մատուռների դիմացի քարափաների, հսկայ ժայռերի մէջ քարայրներ կային փորւած, որոնք իրենց լայն խոռոչներով սարսուռ էին աղդում ինձ : Այնտեղ, հին ժամանակ ճզնաւորներ էին ապրում, ասում էին մարդիկ : Նրանք չէին սիրում արեւը եւ աշխարհը, քաշւում էին բոլորից եւ այս ժայռերի մէջ միայն ցամաք հաց ուտում եւ օր ու գեշեր Աստծուն աղօթք անում : Նրանք ոտարբորիկ էին, տարիներով չէին լւացւում ու սանրւում, միջաները ուտում էին նրանց մերկ, անխնամ մարմինները, նիհար եւ գունատ, նրանց միակ բարեկամները ժայռերի միջի օձերն եւ խլեզներն էին : Մի տարօրինակ ատելութիւն վախի հետ միասին պատում էր հոգուս, երբ մտածում էի այդ ճզնաւորների մասին . գուցէ նրանցից զայրացած ու նրանցից զգլած, նրանց պատճառով անհետացան էն խելացի, վարպետ աժդահան երը էս երկրում . գուցէ նրանց կմախքացած, գունատ երեսների վերայ վառւող աչքերի վատ հայեացքն էր, որ քանդ ու աւեր արեց ամէն ինչ : Ո՞վ գիտէ : Աչքերս խփում էի որ այդ խոռոչները չը տեսնեմ . եւ ես ուրախ էի որ պապիս քիւրդ հովիւները հասօն եւ Մատօն մօտակայ քարափներին նստած որինդ էին նւազում, ուր նրանց շուրջը հարիւրաւոր ոչխարներ

Ժայռերն էին մագլցում եւ մացառների մէջ իրենց կերակուրը վիստուում։ Նրանց երգերը անծանօթ էին ինձ, օտար, բայց այնքան հաճելի, այնքան սրտին խօսող։ Ի՞նչ փոյթ որ Մստօն ու Հասօն աղտոտ ձեռքեր եւ երեսներ ունէին, որ նրանց կոպիտ գուլպաները եւ չարուիները ծակծկւած էին, որ նրանց սուր «քոլոզների» եւ մաղէ եափունջիների մէջ տասնեակներով ողջիններ էին ապրում, ի՞նչ փոյթ այդ բոլորը։ Նրանց երգերը եւ կանչը կենդանացնում էին քարափները եւ սպառնում ունե խոռոչներին, ուր մարդիկ արեւից եւ լոյսից վախեցած, չոր կրծքերին խփելով, իրենց հառաչանքներով եւ ողքերով փախցիքել, հեռացրել էին Հայոց աժդակ այս այս, խելացի վարպետներին։ Ուրախ էի, որ նոյն ձորերում, Արփաչայը ճեղքելով, գեղեցիկ մօրաքյրներս, առողջ, երիտասարդ եւ աշխոյժ, խաղում էին ալիքների հետ, լողալով հասնում մինչեւ ճգնաւորների քարափների տակը եւ իրենց ծիծաղը կարկաչիւն աղբիւրի աղմուկին էր նմանում։

Ուրախ էի, երբ վարդավառին աղջիկների եւ տղաների խումբեր զուգւած, զարդարւած էս սոյն ձորում ծիծաղի քրքիջներով միմեանց վերայ ջուր էին ցանում եւ թրջւած մազերով, բայց երջանիկ, աւերակների եւ Աշոտ Ռողորմածի գերեզմանի չուրջը, ճիշտ էն սոսկալի խոռոչների դիմաց, պար էին բռնում եւ հնչիւն երգերով ձորը թնդացնում։

Եւ երբ հեռանում էի Ղօշաւանքից, Արփի մամիս փաղաքող աչքերից, դեռ աշտարակների յետեւը մոռանում էի ճգնաւորների քարաքյրները. մնում էր սրտիս մէջ մի գեղեցիկ երկիր, մի ուրախ եւ երջանիկ ընտանիք, որը խաղաղ աշխատում եւ խաղաղ ապրում էր ձորից բարձր, մի սքանչելի երկնքի եւ պայծառ արեւի տակ։

VI.

Այսպէս անցնում էին օրերը, հէքեաթ, երազ օրերը, երբ յանկարծ մի կոպիտ ձեռք կտրեց նրանց ոսկէ թելը եւ երազը մեռաւ։ Ամառ էր. դաշտումն էինք նորից, մեր խաղերի յետեւից, երբ եկեղեցու զանգերը կանչեցին երկա՛ր, հրամայող։ Ա. հազանգ էր։ Մարդիկ իրար անցան. լի օր էր, երկնքում կարկուտի ամպեր չէին երեւում, գիւղում դժբախտութիւն չէր պատահել. ինչո՞ւ էին կանչում աշխատանքի ժամին զանդերը։ Հրդե՞հ։ Մենք վազեցինք դէպի եկեղեցին։ Մարդիկ հաւաքւում էին չնչասպառ. նրանք գալիս էին դաշտերից, ամէն կողմից։ Վախեցած դէմքերով կանդնեցին բակում, սպասում են։ Տէրտէրը եկաւ։ Պարիսպների մօտ մի կառք է կանդնած. ուխտաւորնե՞ր են, հիւանդնե՞ր։ Մէկը օգնեց ինձ պատը բարձրանալ. կպչեցի քարերից, նայում եմ։ Հա՛յր։

«Հայրիկ, սիրելի հայրիկ» — բղաւում եմ ես ուրախութիւնից հարբած եւ հազիւ եմ կարողանում տեղս մնալ. «Սս. սս. ճայնէ կտրի»։ սաստում են ինձ մարդիկ։

Եւ հայրս խօսում է. նրա խօսքերը ես չեմ հասկանում, բառերը կարկուտի նման թափում են նրա բերանից, նա թափահարում է իր ձեռքերը, նա խոռված է։

«Ամբողջ Հայաստանը ոտքի վերայ է. դուք էլ պէտք է շարժէւք։ Լսեցի՞ք խայտառակ լուրը. Ծուսաց թագաւորը, միքրիստոնեայ, փակեց մեր դալրոցները — լուցինք. նա ոտնակու արեց մեր պատիւը — չբողոքեցինք. Հիմայ նա տրորում է մեր հաւատը։ Դարերի ընթացքում ձեռք բերած մեր եկեղեցական կալւածքները թալանում է մեղանից։ Հայե՛ր. Պարսիկները, Արաբները, Յոյները, սոսկալի Զինդիսխանը, Լէնկ Թեմուրը, Տաճիկ արիւուտ սուլթանները եւ գազան քիւրտերը սրի եւ կրակի դարերում, չկարողացան մեռժնել մեր կրօնը,

մեր լեզուն։ Մենք հայ մնացինք, հայ-լուս աւորչական, պէտք է հիմա՞յ կործանւենք։ Ոտքի՛ ։ Մեր կաթողիկոսը մեր պաշտելի Խրիմեան Հայրիկը հիմայ մեր քաղաքումն է։ Նա դնացել էր Ռուսաց թագաւորից խնդրելու, որ նա Հայոց եկեղեցիներին չդիպչի, բայց ցարը մերժել է նրա խնդիրը եւ ծերումի Հայրիկը դատարկ ձեռքերով, յուսահատ վերապառնում է Սուրբ Էջմիածին։ Ոտքի՛ ։ գնանք նրա մօտ, յայտնենք նրան մեր բողոքը, ցոյց տանք, որ մենք մեր եկեղեցին թոյլ չենք տայ թալանելու։ ցոյց տանք որ մենք քաջ Վարդանի յաջորդներն ենք, որ մենք Հայեր ենք մնալու, ինչպէս մեր հին պապերն ու Հայրերն էին»։

Մարդիկ լսում էին լարւած։ նրանք բարկացած էին, վշտացած։

«Այսօր ժամանակն է, շարունակեց Հայրս, ամէն մի րոպէ թանկ։ Ոտքի՛, ասում եմ ձեզ, եթէ չէք ուզում ոռումներ դառնալ, չէք ուզում դաւաճանել ձեր կրօնին, ձեր հաւատին, ինչպէս այն միւսները, մեր զզելի հարեւանները։ Միթէ դուք հայ-լուս աւորչական չէք։ ձեր հայրերի հոգին միթէ մեռած է ձեր մէջ»։

Մարդիկ լցուած էին։

«Մենք ուրանե՞ր դառնանք. ի՞նչ ես խօսում վարժապետ։ մեր լոյս հաւա՞տը ծախել ինչպէս միւսները. թո՛ւ. նա-լա՞թ սատանին»։

«Ոտքի՛, ասում եմ ձեզ, գնանք քաղաք, Հայոց Հայրիկի մօտ, թող նա տեսնի, որ ինքը մենակ չէ»։

«Հայրիկի՛ մօտ, Հայրիկի՛ մօտ...»

Եւ յանկարծ ամէնքը իրար անցան, վագեցին։ Ես ընկայ պատից, գլուխիս մի քարի դիպաւ, ճակատս արիւնեց։ Բայց ես ճեղքեցի ամբոխը։ «Հայրի՛կ, Հայրի՛կ» բղաւում էի ես ցաւից

եւ յուսահատութիւնից, որ նա կարող է ինձ չտեսնել։ Բայց հայրս նկատեց ինձ, գրկեց, թաշկինակով սրբեց արիւնս եւ բարձրացաւ կառքի մէջ։ Յանկարծ տատիկս եւ մայրիկս էլ եկան։

«Դու հիմայ տուն կը գնաս, Հայ'յ» ասեց մայրս խստօքէն։ «Հայրիկ, Հայրիկ ջան, ինձ հետդ տար» — լացեցի ես։

«Նա այս վիճակում չի կարող մեղ հետ գալ, այսպէս թափթփւած» շարունակեց մայրիկս։ Տասոս համաձայն էր նրա հետ։

«Հայրիկ» ճշացի ես եւ փաթաթւեցի նրա պարանոցով, սեղմւեցի նրա կուրծքին։ «Հայ'յ, դու պէտք է տուն գնաս, ես ժամանակ չունեմ»։ Եւ Հայրս ուզեց ազատւել ինձնից, բայց ես աւելի ուժեղօքէն փարւեցի նրան։ «Հետդ տար, ինձ հետդ տար, Հայրիկ ջան»։

«Դե՛հ, եկ, գնանք», հրամայեց Հայրս կառապանին։

Կառքը սլանում էր փոշոտ ճանապարհով, քրտինքի մէջ լողացող մարդկանց միջից, որոնք տղամարդ, կին թէ երեխայ, չնչակտուր քաղաք էին վազում։

«Հէյ, ճանապարհ տէէք, խաբարդա՛ր», բղաւում էր կառապանը եւ մտրակում աջ ու ձախ։ Ո՛րքան մարդիկ։ Նրանք գալիս էին ամէն կողմից, նրանք վազում էին, հառաչում։ Մի շարժւող սեւ պատ։ Յուզւած դէմքեր։ Իսկ վերեւում կապոյտ, ծիծաղկոտ երկինք, այրող արեւ. շուրջը՝ հասած, կէս մասով քաղած արտեր։

Մենք քաղաքումն էինք։ Բոլոր իսանութիւները փակ էին։ Տենդօքէն կանչում էին եկեղեցու զանգերը. այստեղ էլ ամէն անկիւնից վազող մարդիկ։ Անհնար էր առաջ գնալ։ Մեւ պատը շարժւում էր մեղ հետ, աղմկող, հրող, սարսափելի։ Եւ բուլորը նոյն ուղղութեամբ։

«Դէսլի առաջնորդարան, Հայոց Հայրիկի մօտ, նրա արեւին մատաղ, մեր Հայրիկը», բղաւում էին մարդիկ:

Շատերը լավիս էին:

Մի մեծ տուն: Մի պատշգամբ: Նրա վերայ մի ծեր, շատ ծեր մարդ սեւեր հազնւած: Հրաշալի դէմք, մեծ փայլուն աչքեր գութով եւ բարութեամբ լիքը, երկար, սպիտակ մօրուք: Նրան շրջապատած են մի շարք տղամարդիկ, նոյնպէս սեւ հազնւած, եպիսկոպոսներ եւ վարդապետներ, բարձր վեղարները գլուխներին, որոնք ծածկում են նրանց պարանոցները եւ երեսների կէսը:

Ես ճանաչեցի նրան, այն դեղեցիկ ծերունուն: Հայոց Հայրիկն էր. նրա մեծ նկարը կախւած էր մեր տանը:

«Հայրիկ, բղաւում էին մարդիկ, Վեհափառ, մերժիր, չվախենաս, մի՛ թոյլ տայ որ մեր սուրբ եկեղեցին թալանւի, մեր դպրոցները փակւին, մեր լեզուն հալածւի»:

«Հա՛յրիկ, մենք քեզ հետ ենք»:

Հայերի կաթողիկոսը, նրանց Հայրիկը խաչակնքում էր ամբոխը, մի ինչ որ բան էր խօսում, որ ես չէի հասկանում: Բայց տեսայ ի՞նչպէս նրա շրթունքները դողում էին խօսելիս: Ժանտարմներն էլ այնտեղ էին: Երկար շարքերով, նրանք անցնում էին մարդկանց միջից, սրան նրան մտրակում, ջանում ցրել նրանց, բայց ժողովուրդը քարեր էր վերցնում եւ նրանց վերայ շպրտում:

«Շնե՛ր, բղաւեց յանկարծ մէկը, չնե՛ր, չնե՛ր: Վոնտեցէք դրանց, հա՛յ քրիստոնեաներ, նրանք չը պէտք է մեր եկեղուն դիպչեն»:

«Քո լրւսաւոր աչքերին մեռնեմ», հառաչում էր մի կին Հայրիկի հասցէին:

«Տե՛ս, Հայրիկը լալիս է, նրա աչքերը լիքն են արտասունքով» հաղորդում էր մի ուրիշը:

Ինչո՞ւ էր լավիս Հայոց Հայրիկը:

«Հայրիկ, չը զիջես, մենք քեզ հետ ենք» լսում է յետեւի շարքերից:

Հայրիկը օրհնեց ժողովրդին եւ յանկարծ կարծես ցնցւեց ներքուստ, ուղղեց բարձր հասակը, բարձրագլուխ ու հպարտ, աչքերից կրակ էր թափիւում, կանչեց իրոխտ. «Ոչ, իմ ժողովուրդ, ես չեմ զիջի, ի՞նչ որ կարող եմ անել, կ'անեմ, դուք Հայրիկին ճանաչում էք, չէ՞»:

«Կե՛ցցէ Հայրիկը, կե՛ցցէ Վասպուրականի Արծիւը, մի անգամ էլ թափահարիր յաղթ թեւերդ, Հայրիկ ջան» բղաւեց ամբոխը հիացած:

Մի մեծ կառք շարժւում էր դանդաղ մարդկանց միջից: Հայրիկը դնում էր:

«Մնաս բարով, Հայրիկ, գնա՛ խաղաղութեամբ: Մեզ չմոռանաս, մենք քեզ հետ ենք»:

Շատերը լաց էին լինում, կպչում կառքին: Հայրիկը ժպտում էր տխուր. Արծւի աչքերը նորից մարած էին. նրանք փայլում էին մեղմ: Ծեր եղնիկի աչքեր: Արտաստո՞ւմ էր նա:

Մի բան սեղմում էր կուրծքս, ծանրանում սրտիս վերայ: Մոլորած, ես կամացուկ հեկեկացի: Ինչո՞ւ էր լալիս Հայոց Հայրիկը:

Մի երգ մեծանում էր, բարձրանում, սպառնում, արձագանքում ամէն տեղ: Մի երգ ինչպէս մի ճիչ: Երգում էին խումբ կառքի յետեւից, նրա կողքից, նրա առաջից: Ահա կառքը անհետացաւ հեռուում: Բայց մի ինչ որ տեղից լսում էր մի ուրիշ երգ.

«Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիք
Վասպուրական մեր աշխարհ,
Վարդի փոխան քեզ փուշ բերաւ
Ցաւերդ դառան բիւր հաղար» :

Ժանտարմների մտրակները սուլում էին օդի մէջ, աղա-
ղակ, ճիչ : Մարդիկ նորից քարեր էին գցում, պաշտպանում :
Քիչ քիչ փողոցները դատարկեցին : Բայց խանութները փակ
էին . սուգի եւ բողոքի նշան : Նորէն մենք կառքի մէջ էինք,
ճանապարհի վերայ : Անցնում էինք զիւղացիների միջից, որոնք
յոդնած եւ դանդաղ, տխուր եւ յուսահատ տուն էին դառնում :
Ո՞ւր էին նրանք : Արդե՞օք նրանք էլ էին բղաւում եւ երգում
կառքի յետեւից :

«Տատիկ, ինչո՞ւ էր լավիս Հայոց Հայրիկը», հարցնում եմ
ես կամցուկ :

«Ապա ի՞նչ անի չը լայ : Էդքան ցաւ տեսնողը չը լայ, ո՞վ
լայ : Արծւի թեւերը թուլացել են . նա կռացել է իր ժողովրդի
գլուխն եկած դժբախտութիւնների եւ իր ծերութեան բեռի
տակ» :

Մի արծիւ : Իսկ հիմայ մի եղնիկ : Խեղճ, վիրաւո՞ր
եղնիկ :

Մենք մօտենում էինք «դ աւ ած անն երի», ոռւս դար-
ձած հայերի գիւղին : Իրենց դաւաճանութեան համար նրանք
թագաւորից հարուստ մարգարետիններ էին ստացել, մի նոր
գիւղ եւ մի նոր եկեղեցի : Նրանց գիւղը գտնւում էր մեր գիւղի
դիմաց Ղարանղուի ափին, մեր փոքրիկ մատուռի մօ-
տերքը : «Ռուսի գիւղ» էին անւանում նրան :

«Եղայրներ, բղաւեց յանկարծ հայրս, գնանք նրանց եկե-
ղեցու մօտ, ցոյց տանք նրանց, որ բոլոր հայերը իրենց նման

տմարդ չեն որ հայրերի սուրբ հաւատը ծախեն» : Բոլորը վա-
ղեցին դէալի «դաւաճանների» եկեղեցին : Նա մեծ էր, հոյակապ
ոսկէ մեծ խաչ ունէր գմբեթի վերայ : Երկար մազերով մի
պօպ, սարսափած՝ եկաւ վաղելով : Մարդը հայերէն չէր հաս-
կանում : «Ռուսի» գիւղացիների դոները փակ էին, «ոք չէր
երեւում : «Դաւաճանները պահևել են, ասեց հայրս, էս խեղճ
պօպը մեղք չունի, նրան ցարն է ուղարկել, նրան չդիպչէք» :

«Պապիկը նոյն իսկ հայերէն չը գիտէ խօսել, ի՞նչպէս է
հաղորդակցում իր հօտի հետ», հարցնում էր մէկը :

«Ես երկար մազաւորին տես . հէյ, Բ ր ա տ (եղբայր) ի՞նչ
ես ուզում Հայերից, տես Արքիաչայի էն կողմը թուրքերի եւ
Քիւրտերի գիւղեր կան, ինչո՞ւ նրանց վերայ չես փորձում
հունարդ . ինչո՞ւ նրանց քրիստոնեայ չես դարձնում, ինչո՞ւ
ես եկել կպել մեղ, երբ մենք ձեզնից շատ առաջ ենք քրիստո-
նեայ եղել», կանչում է մի հասակաւոր գիւղացի :

«Բրատ, չէ՞ք ամմաչում . ի՞նչ քաջագործութիւն է քրիս-
տոնեայ մարդկանց սպառնարլով, փողով, խարբէութեամբ դա-
ւաճափոխ անել», խօսում էր մի երրորդը : Պօպը անհամար-
ձակ նայում էր մարդկանց եւ զգիտեմ ինչո՞ւ ժպտում էր :

«Թո՛ւ, նալլաթ սատանին» բղաւում էր մի հալեւոր :
«Յարձակւեցէք տների վերայ, թողէք պօպին», հրամայում էր
հայրս :

Քարէ կարկուտ տեղաց փակ դոների եւ մի քանի լուսա-
մուտների վերայ : Ալակիները գետին թափիւեցին չըխկալով :
Ոչ ոք չէր երեւում :

«Դաւաճանները ամմաչում են», ասեց տատիկս : Եւ յան-
կարծ մի ճիչ : Ո՞ւմ են ծեծում : Կպչեցի տատիկիս սարսա-
փած : «Զը սպաննէք . արիմնեղութիւն պէտք չէ . տուն գնանք,
եղբայրներ, նրանք իրանցը ստացան», կանչում էր հայրս :

ինչ որ մարդկակ էին վաղում շնչառապո, նրանք տնքում էին, հայհոյում։ Մէկի ճակատից արիւն էր հոսում։

«Տուն, եղբայրներ», հրամայում էր հայրս։

«Վարժապետ ջան, թող սպաննենք, որ միւսներին խրատ լինի»։

«Տուն, ասում եմ ձեզ»։

Ամբոխը հետում էր. մի րոպէ սպասեց լարւած. յետոյ շարժւեց, մի սեւ պատ, սպառնացող, սարսափելի։

Մենք տանն էինք։ Աչքերս փակւեցին յոգնածութիւնից։ Ամէն ինչ տակն ու վերայ էր իմ փոքրիկ գլխում։ Յա՞րը. ի՞նչ էր ուզում նա հայերից։ Ինչո՞ւ անգթօրէն ծեծւեցին այն «դաւաճանները»։ Դաւաճանը ի՞նչ է։

Ինչո՞ւ էր լալիս Հայոց Հայրիկը։

VII.

Այս դէպքը պատահեց 1903 թւի ամառը։ «Քրիստոնեայ» Ցարի հրամանով թալանւում էին Հայոց եկեղեցական կալւածքները, որոնք դարերի ընթացքում հաւատացեալների մասնաւոր նւիրատութիւններից էին հաւաքւած։ Դրանից առաջ ուռւրոնապետները փակել էին Հայոց դպրոցները, ցենզուրի ճանկերում խեղդել ազգային մտքի որ եւ է նշոյլ, հալածանքի, աքսորի ենթարկել ազգի ամենէն առաջաւոր դէմքերը եւ հայ ժողովուրդը լոել էր հնազանդ։ Հային յատուկ համբերութեամբ տարել էր իր գլխին տեղացող բոլոր հարւածները, արհամարանքը, որպէս Աստծուց եկած պատիժ։ Բայց Նիկոլա Բ. փոքրիկ ազգերի ձուլման եւ ոչնչացման քաղաքականութեան մէջ իր հայրերից մի քայլ առաջ գնաց. նա որոշեց աղքատացնել Հայոց եկեղեցին, կազմալուծել նրան, քանդել այդպիսով մի հիմնարկութիւն, որը դարերի ընթացքում իր անկախու-

թիւնը կորցրած հայի համար ազգային գոյութեան միակ սիմբոլն էր։ Հարւածը սոսկալի էր. նա ուղիղ ժողովրդի սրտին էր դիաչում, նրա ողնաշարը կոտրում։ Եւ ստրուկը ըմբոստացաւ։ Գիւղերում ու քաղաքներում անզէն ու խաղաղ մարդիկ դուրս էին գալիս փողոց իրենց վիրաւորւած հոգու ցասումը ցոյց տալու. եւ երբ ուղում էին փակել նրանց բերանները, նրանք քարէ կարկուտ էին տեղում ուսւ ժանտարմների եւ կողակների գլուխներին։ Շատ տեղերում արիւն էր հոսում, գանջայում, թիֆլիսում, Երեւանում։ Եւ Հայոց ծերունի հայրապետը, ժողովրդից պաշտած մի դէմք, նրա ութևունը երեք տարեկան Հայրիկը յուսահատում էր։ Հաստատ իր կամքի մէջ չէր ուզում զիջել ցարին, բայց անճար, Վասպուրականի արծիւը լաց էր լինում անզօր։

Նրա այն բիւրեղեայ արցունքները, «ոսի գիւղի» ծեծւած մարդկանց արիւնուտ ճակատները վրդովեցին իմ մանուկ հոգին եւ վերջ տւին կեանքին գարունքի լուսեղէն, անփոյթ եւ երջանիկ մասին։ Մինչ այն, օրերը միապաղաղ էին, այսօրը երեկին նման։ Մուրացկանները, ուխտաւորները, աշուղները, պատոնց տանը հիւր գնալը միակ երեւոյթներն էին որ կենդանացնում էին օրերի միատեսակութիւնը։

Մինչ այն՝ աշխարհը սկսաւում էր մեր տամնը, տարածւում գիւղի եւ զաշախ վերայ, նրա վերջին ծայրը Արագածի սպիտակ գագաթն էր եւ հսկայ Մասիսը։ Բայց այն օրւանից ամէն ինչ փոխւեց։ Ես ս կսեցի մտածել ու դիտել։

Մի ահազին բեմ էր բացւում իմ առաջ, մի տարօրինակ, սոսկալի դրամա էր խաղացւում այդ բեմի վերայ, եւ դերասանները իմ շրջապատի մարդիկ էին, իմ հարազատները։ Մեծերը չը գիտեն, մոռնանում են, թէ որքան զգայուն եւ տպաւորւող է մի մանուկ հոգի, որքան բաներ կարող է նա ըն-

դունել իր մէջ, խնամքով մթերել իր յետագայ կեսանքի համար։ Անջնջելի են մանկութեան տարիներում ստացւած խորը տպաւորութիւնները։ Նրանք կունում են մարդու ոչ միայն բնաւորութիւնը, այլ եւ աշխարհահայցքը։ Այն օրից աշխարհը սկսեց լայնանալ ինձ համար։ Տատիկիս հէքեաթների թագաւորազները եւ վիշապները, դեւերը եւ մեռեները, սատանաները եւ չարքերը դունատւեցին եւ հետղհետէ անհետացան հոգոււս հորիզոնից առանց հետք թողնելու այնտեղ։ Մի դիւցազնական առասպել, երկրիս առասպելը, որը իր ականութեան մէջ, իմ աչքերի առաջ էր խաղացւում, լիցնում էր ինձ զարգանդով։

Ահա մի սենեակ մեր տան մէջ, ամենալաւ սենեակը։ Մենք այնտեղ շատ քիչ էինք մտնում, հիւրերի համար էր նա եւ սկտք է միշտ մաքուր մնար։ Բայց Հայր ի կ ի դէմքից յետոյ ես ժամերով չեմ ուզում հեռանալ այնտեղից։ Պատերին կախւած, յատակին փուած, դոյնդոյն պարսկական մօթիվսերով դարդարուն, գեղեցիկ կարպետները եւ գորգերը չեն որ զբաղեցնում են ինձ։ ոչ էլ մեծ հայելին, որի դիմաց ես առաջ ծածածութիւններ էի անում։ Ինձ գրաւում են սենեակում դըտնող նկարները։ Նրանք են զմայլեցնում ինձ եւ հօրս ծնկներին նստած, դէմքս նրա դէմքին, ես խնդրում, աղաջում եմ նորից եւ նորից պատմել ինձ նրանց մասին։ Ես գիտեմ որ այդ նկարները շատ թանկագին են հօրս համար եւ ես էլ սկսում եմ սիրել նրանց։

Ահա «Մայր Հայաստան»ի մեծ նկարը։ Մի գեղեցիկ, երիտասարդ կին նստած է քարերի մէջ։ ծնօտը ձեռքին յենած նա տխուր հեռուն է նայում։ Նա լալիս է մեր երկրի, Հայկի երկրի կործանումը։ Քարերը, արձանագրութիւններով պատած, մեր հայրենիքի աւերակներն են։ Մի ժամանակ, այդ

աւերակների տեղ չքեղ, մեծ եւ հարուստ քաղաքներ էին կանգնած, անառիկ բերդերով, որ տեղ մի ազատ եւ հպարտ ժողովուրդ էր ապրում։ Բայց վայրենի ցեղերը, ազահ ժողովուրդները յարձակւեցին նրանց վերայ, քանդեցին ու աւերեցին նրան ինչ, այրեցին, սպանեցին եւ գեղեցիկ աղջիկներին ու երիտասարդներին գերի տարան։ Հիմայ էլ նրանք շարունակում են իրենց կործանիչ գործը։ Դրա համար էլ «Մայր Հայաստանը» այնքան տիխուր է։ Իր երկիրը օտարների լուծի տակ, իր զաւակները ցան ու ցիր եղած աշխարհի բոլոր կողմերը, իր քաղաքները եւ եկեղեցիները աւերակ։

Երբ տատիկիս հետ եմ խօսում «Մայր Հայաստան»ի մասին, նա հոգոց է հանում եւ ասում։ «Կողքուկների նման նստել են օտարները իւեղճի սրտի վերայ, ծծում են նրա արիւնը։ նա քանի գնում աղքատանում է, թուլանում, եւ ինեղճ Հայաստանը ծերանում է ու տգեղանում»։ Ես վախենում եմ «Մայր Հայաստան»ի նկարից, երբ տգրուկների մասին եմ մտածում։ Ես տեսնում եմ այդ զգելիի, սեւ կենդանիները Արփաչայի ափերին կպած։ Մեր գիւղի սափիրիչը նրանց հաւաքում է եւ շշերի մէջ պահում։ Զղելի կենդանիներ, լսկիրծ, կպչող։ Երբ ես երեւակայում եմ, որ տղը ուկները տանջում են սիրուն «Մայր Հայաստանին», յուսահատւում եմ։ Գիշերը պատում է հոգոււս վերայ։ «Տատիկ, հարցնում եմ ես խորշանքով, ինչո՞ւ են նրանք ծծում խեղճ կնոջ արիւնը, որտեղից եկան նրանք։

«Զահանամիցը եկան, բալիկ, վաղուցւայ բան է։ Եկան նստան մեր երկիրը եւ տանջում են հայ-քրիստոնեային։ ապա ուրիշ ի՞նչ անեն, տղը ուկ են, արիւն շատ են սիրում, ուրիշ ի՞նչ անեն» պատասխանում է տատս հանդարտ։ Յուսահատւում եմ։ «Տատիկ, ասում եմ ես մարածածայնով,

տամիկ, տղրուկները ի՞նձ էլ են ծծելու, և ու էլ մի տղրուկ ունեմ իմ կուրծքի վերայ»:

Տատիկս անխնայ է, նա չի նկատում իմ հոգեկան դրութիւնը: «Ի հարիէ, քո արիւնն էլ կը ծծն, բոլոր հայերի կուրծքերին կպած են տղը ու կները. բոլոր ժողովուրդները, որոնք թոյլ են եւ փոքր, տղրուկներ ունեն, բոլոր թոյլերը»:

«Տատիկ, բղաւում եմ ես, ինչո՞ւ չեն սպաննում աղը ու կներին, ինչո՞ւ զեն չեն շղրտում այդ զղելիներին»:

«Ի՞նչպէս սպաննեն, ոյժ չունեն, բալիկ, ու աշխարհ է աղը ու կները շա՞տ»:

«Տատիկ...» եւ կոկորդս սեղմւում է վշտից:

«Սուս, բալիկ, քո հասկանալու բանը չէ» ասում է տատս, յանկարծ նկատելով եմ խոռվութիւնը:

Եւ յանկարծ յիշում եմ Ղօշաւանքի քարայրները: Ես գիտեմ. ճգնաւորները եւ աշխարհի տղրուկներն են մեղաւոր, «որ էն հին հրաշալի քաղաքները կործանւեցին եւ Հայաստանը նստած աւերակների վերայ սուգ է անում: Հայրս ծիծաղում է, երբ ես խօսում եմ նրան այդ մասին. «Իրաւունք ունես փոքրիկ, ասում է նա. Եթէ ճգնաւորները փոխանակ ազօթելու կուէին տղը ու կների դէմ, այսօր մեր երկիրը աւերակ էքը լինի եւ քո աժդահան երը աւելի շքեղ տներ կը շինէին քան առաջ»:

Մի ուրիշ նկար մեր դահլիճում. նա միսիթարում է ինձ եւ ցրում մոայլ մտքերս: Մօրաքոյրս, Աստղիկն է շինել նրան գոյնզգոյն թելերով: «Իտալացու օրիորդը»: Մի ջահէլ աղջիկ, սեւ աչքերով, աղուաւի նման սեւ մագերով, ձեռքում մի դրօշակ, որի վերայ ոսկէ տառերով գրւած են նոյն խօսքերը, ինչ որ մենք յաճախ երգում ենք հօրս հետ.

Ամենայն տեղ մահը մի է Մարդ մի անդամ կը մեռնի Բայց երանի որ իւր ազգի Աղատութեան կը զոհւի:

Մեր գիւղը բոլորը գիտեն այդ երդը, մեծ թէ փոքր:

Մի քաջ աղջիկ է եղել «իտալացի օրիորդը». նա իր եղբօրը իրենց երկրի թշնամիների դէմ կուի է ուղարկել, ընծայելով նրան իր ձեռքով գործած մի դրօշակ:

«Գնա մեռիր գու քաջի պէս» ու եղայրը գնում է:

«Տատիկ ջան, բացադանչում եմ ես ուրախացած, եղայրը յաղթէց թշնամուն»:

«Հա, բալիկ, իտալի երկրում, հեռու ծովերի յետեւում յաղթէց, հօրդ հարցրու, նա գիտէ, ուսումով է. բայց մե՞զ մօտ...»

«Մե՞զ մօտ, տատիկ»:

«Մեզ մօտ բալիկ, նա զեռ կուի մէջ է, եւ նրա հետ շատ ջահէլ-ջիվաններ. նրանց արեւին մատաղ: Մեր թշնամին զօրել է, աչքը դուրս դայ, էնքա՞ն թշնամիներ ունենք, ո՞ր մէջ կին յաղթեն»:

Ահա եւ նրիմեան Հայրիկը: Բարի, գեղեցիկ դէմք: Այդքան գեղեցիկ դէմք ես չեմ տեսել: Հիմայ ես գիտեմ թէ ինչո՞ւ էր նա լալիս: Նրա կեանքը մի կատարեալ հէքեաթ է: Շատ բան չեմ հասկանում այդ կեանքից, բայց որոշ կէտեր դրս-մւում են հոգուս մէջ: Բարի եւ արդար, ճշմարտութիւն սիրող եւ նրան վնասող, միամիտ եւ հաւատացող, միշտ խարսող եւ միշտ հիասթափւող Հայրիկը, մեր ցեղի, Հայոց բոմանտիզմի ամենէն հարազատ տիսպարն է. եւ զարմանալի՞ որ նոյն յատկութիւններով օժտւած մի ժողովուրդ պաշտում

Էր նրան, նրա անունով երդում։ Ու այդ պաշտամունքը անցնում էր ինձ, փոքրիկ Հային...։

Ուրիշ նկարներ էլ կային մեր հիւրասենեակում։ Նրանք էլ շատ հետաքրքիր էին, եւ ես բոլորին ճանաչում էի։ Ահա ակնոցաւոր Գամառ-Քաթիպան, խիստ աչքերով։ Նա զրել է «Մայր Արաքսի» եւ «Հիմի՛ էլ լունք» ու «Հիմի՛ էլ խօսենք» երգեր։ Մայրիկո միշտ երգում է նրա երգերը եւ մեղ էլ սովորեցնում։ Ահա Նալբանդեանը «Խտալացի օրիորդ» երգի հեղինակը։ Հայրս ասում է, որ Ռուսաց ցարը նրան այդ երգի համար Սիրիրի սառնամանիքներն էր քել, եւ նա այնուեղ մեռել էր։ Նրա կողքին գտնվում է Խաչատուր Աբովեանը, որի քաջ Աղասին, մեր գիւղի մօտերքը, խլի Ղարաքիլսայում եւ Արփաչայի եղերքներում կուել է Թուրքերի եւ Պարսիկների դէմ։ այդ Քանաքեռցի քաջ Աղասին եղել է նոյնպէս պապոնց գիւղում՝ Ղօշաւանքում, անցել է Անի եւ շատ թուրքեր կոտորել։ Ահա Բաֆֆին, որի «Սամուէլը» եւ «Դաւիթ Բէկը» մայրս ամէն կիւրակի կարդում է մեր հարեւան կանանց եւ որոնցից ևս ոչինչ չեմ հասկանում, բայց լսում եմ, որ Սամուէլը իրա հօրը եւ մօրը սպաննել է, որովհետեւ նրանք «Բիսի գիւղի» մարդկանց նման դաւաճաններ են եղել։ Այն խօսքերը, որոնք նա ասել է մօրը սպաննելիս։ «Ահա այն սուրը, որը սպաննեց դաւաճան հօրը, կը սպաննի եւ ուրացող մօրը» ընդ միշտ դրոշմւել են յիշողութեանս մէջ։

Դուան մօտ կախւած էին Վաղոյի եւ Վարդանի նկարները։ Վաղօն լազի հագուստով, գլուխը բաշլուխով կապած մօտ 25—30 տարեկան տղամարդ էր։ Նա հայ հայդուկների համար, որոնք սահմանի էն կողմում կուում են Թուրքերի եւ Քրդերի դէմ, շա՞տ շա՞տ փամփուշտ էր տարել մեր քաղաքի դինուրական պահեստից եւ փախցրել էր Տաճկաստան։ սահմանը ան-

ցնելիս, մի մութ գիշեր, թուրքերը պահ էին մտել քարերի յետեւը եւ երբ Վաղօն անցնում է նրանց մօտից, նամարդները յարձակում են նրա վերայ եւ սպաննում։ «Վաղօն սուրբ նահատակ է, մօր լոյսը քուանայ, ափսո՛ս ջիվանին» ասում էր տատս եւ ծունկին խփում։

Քաջ Վարդանի մասին ես շատ բաներ գետէի։ Ո՞վ չէր ճանաչում նրան Հայաստանում։ Ամէն տարի վետրւար ամսին տօնւում էր նրա նահատակութեան օրը։ Նա էր, որ հինգերորդ դարի կիսում մի փոքրիկ զօրքով ամենակարող Պարսիկների դէմը կուի ելաւ։ Թշնամին զօրեղ էր, բայց հայերը կուում էին ոգեւորութեամբ։ Կոփւը տեւեց առաւոտից մինչեւ երեկոյ։ Վարդանը կը յաղթէր, եթէ պարսիկները չարձակէին իրենց փղերը հայերի վերայ եւ այդ կենդանիներից մէկը չտրուի էր եւ չմեռցնէր Վարդանին։ Վարդանը ընկաւ եւ նրա հետ շա՞տ շա՞տերը։ Երկիրը կործանւեց, մարդիկ փախան եւ պատսպարւեցին քարայրներում, նախարարները գերի տարւեցին։ Պարսիկները ուզում էին սրով ու հրով արմատախիլ անել քրիստոնէութիւնը Հայաստանում, բայց Վարդանի հոգին ապրում էր հայերի մէջ։ Նա յաղթել էր բարոյապէս։ Վահան Մամիկոնեանը, Վարդանի եղբօր որդին շարունակեց կոփւը Պարսիկների դէմ, ամբողջ ժողովուրդը մի անգամ էլ ոտքի կանգնեց։ Եւ շատ արիւնհեղութիւնից յետոյ, պարսիկները հանգիստ թողին հայերին։ Հայաստանը մնաց ազատ եւ քրիստոնեայ։

Մի նկար էլ կար մեր դահլիճում... Ռուսաց թագաւորի մեծ նկարը։ Նա դունաւոր էր։ Թագաւորը կապոյտ աչքեր ունէր, չեկ մաղերու կարմիր այտեր եւ շատ կարմիր շրթունքներ...։

Տատս երբեք չէր նայում նրա կողմը։

Ասի աշուղ, առ չունկուրբդ,
Մեղ բան տամ' սրտալի,
Կարօտ ենք քու անուշ ձէնին,
Մի բան տամ' սրտալի:
Յովհաննիսեան:

Կարո՞ղ է աշուղը միայն ուրախ երգեր երգել: Միթէ
կեանքը ուրա՞խ է: Կարո՞ղ է նա միայն ցաւից խօսել: Միթէ
կեանքը ցա՞ւ է: Կեանքը ցաւ է եւ ուրախութիւն, երկուսը
ձեռք ձեռքի բոնած, երկու հարազատ քոյլեր, որո՞ք երգեք
չեն բաժանւում միմեանցից: Դրա համար էլ աշուղի երգերը
մարդկանց սրտերի նման են, կեանքի նման են նրանք: Ստեր
եւ լոյս, գիշեր եւ ցերեկ:

Երգե՞ր, աշուղ, երգե՞ր: Եւ կանայք օրօրւում էին նրա եր-
գերի տակալի հետ, տղամարդիկ լսում էին նրան մտածկոս,
երեխաները լսում եւ խաղում էին միաժամանակ: Աշուղը եր-
գում էր, իր սեւ, խորշոմած վիզը դես ու դեն դարձնելով, նա
ջանք էր թափում իր ձերմակ աչքերը շարժելու: այնտեղ ուր
պէտք էր, նա խփում էր ուժեղ սազի լարերին: Երգում էր,
մէկ ձայնը կոկորդի մէջ խաղացնելով, մէկ բարձր, մէկ ցած.
չըխկացնում էր մատներով սազի փայտին, ոգեւորւում էր,
զայրանում, կանչում.

«Մենք պէտք է կուենք եւ ոչ լաց լինենք,
Ազգի կորուսար զէնքով յետ խըլենք,
Այսքան դար լացինք, ո՞վ է լսողը
Մեղ ի՞նչ շահ բերեց արցոնքի ծովը:
Այլ եւս չանք եւ ոչ լաց լինենք,
Կրակուած սրտով մեր գործը վարենք.
Անվեհեր քաջին այս է պատկանում,
Միշտ ազատ մեռնել կոուի լայն դաշտում»:

Քրտինքը կաթում է նրա ճակատից, կաթիները մտնում
են չեչերի մէջ, ամբողջ գէմքը փայլում է երջանկօրէն. վզի
կապոյտ ջղերը ուռչել են, մէծ բերանը դեղին ատամներով լայ-
կապոյտ ջղերը ուռչել են,

նորէն բաց է : Վերջին խօսքերը նա կրկնում է մի քանի անգամ , նրա ոգեւորութիւնը անցնում է մարդկանց .

«Ամօթ այն հային եւ բիւր նախատինք ,
Որ ազգի սիրուն չի գործում բարիք» :

Կանչում են նրանք աշուղի հետ : Կանայք հոգոց են հանում :

Երգիր , աշուղ , երգիր : Մի՛ գնա խրճիթից խրճիթ , գիւղից գիւղ . միշտ այստեղ մնա , երգի՛ր : Բայց նա զնում է : Աշուղը չի կարող մի տեղ նստած մնալ : Աստուած նրան չնորհք է տւել , որ նա մարդկանց համար երգի , նրանց սրտի կարօտը դուշացնի , վիշտը փարատի : Երբ կանայք լեզնում էին նրա պարկը ալիւրով , հացով եւ փոքրիկ աշկերտը դնում էր նրան իր շարակը , աշուղը բոնում էր նրա թեւից եւ բարձրագլուխ , սպիտակ աչքերը անշարժ ու սոսկալի , ուրիշ տուն գնում : Ամէն տեղ նա տարբեր երգեր էր երգում : Նրա երգի պաշարը մեծ էր եւ լսողների ցանկութիւնները շա՞տ :

Մօտ է գարունը շուտով կը բացւի .
Մեր հայ եղբայրներ մեղ են սպասում .
Անդրանիկը քաջ , քաջ լմկերներով
կ'ուզէ պատերազմ , կը սպասէ գարնան :

Երգիր , աշուղ , երգիր : Ու մենք ճանապարհ էինք գցում նրան մինչեւ գաշտերը , մինչեւ փոշոտ եւ քարոտ ճամբեքը , որոնք տանում էին նրան Հայոց երկրի ուրիշ գիւղեր եւ քաղաքներ , միշտ լեռների ստորոտներով , ժպտացող Արտածի հսկող աչքերի տակ :

* * *

Բայց աշուղներից աւելի սիրում էի հօրս աշակերտներին երբ նրանք մեր գիւղը զրօսանքի էին դալիս : Նրանք վերջին գասարանի առողջ , ջղոտ , արեւից սեւացած , լայն թիկունքներով տասնեւեցտասնեօթը տարեկան տղաներ էին : Հանդարա քայլերով , գլուխները բարձր պահած , փայտեայ հրացանները ուսերին , հպարտ զինուորական կեցւածքով նրանք անցնում էին մեր առջեւից , օդը իրենց երգերով թնդացնելով .

Խաղաղ գաշտի որդիք , լեռները ելնենք Արօր , գութան մոռնանք , հրացան բռնենք .
Եեղդւած մեր բողոքը յայտնենք շաշիւնով ,
եւ մեր արդար գատը վարենք արիւնով ,
Մեր մահ , մեր կեանք թող լինի աղատ
ձնշւած հայի որդիք հարազատ :

Նրանց հրացանները չէին կրակում , միայն ձեւի համար էին , բայց նրանց կեցւածքը ուազմական էր եւ երգերը յեղափոխական , չը նայած որ նրանք Ռուսաց դպրոցի աշակերտներ էին : Ասում էին , որ հօրս շատ անգամ մատնել էին սցդ հրացանների եւ երգերի համար , բայց երբ Ռուսաց կառավարութիւնից քննիչ է եկել , հայրս հաւաքել է աշակերտներին եւ հրամայել քայլել հրացաններով եւ Ռուսաց աղքային հիմնը երգել : Երբ քննիչը լսել է «Աստուած պահէ թագաւորին» , խոկոյն հանգստացել է եւ նոյն իսկ գովել է հօրս , որ նրա հսկողութեան տակ գրւած դպրոցում , աշակերտները այնքան եռանգուն դաստիարակւում են կառավարութեան ոգւով . այն օրից հօրս հպատակ երկու ոռւս ուսուցիչները լսել են եւ աւելի զերադասել նրա հետ բարեկամական յարաբերութիւնների մէջ մնալ :

Հօրս աշակերտների գալը մեծ ուրախութիւն էր եւ մեր դիւղի ջահելների համար . նրանցից շատերը հրացաններ էին շինել տեղ եւ հօրս թոյլտութեամբ խառնուամ էին նրանց , քայլուամ նրանց հետ . արտերուամ տղաները դիտքեր էին շինուամ , կուուամ միմեանց դէմ եւ հայրս կրթուամ ու ղեկավարուամ էր նրանց բոլորին :

Իրենց հերթին աշուղները եւ աշակերտները գունատուում էին իմ աչքուամ , երբ մեզ մօտ Հայդուկներ էին գալիս , իսկական հրացաններով : Պատրօնտաշերը խաչաձեւ կրծքերին կապած , մօսինները թիկունքներին , նրանք մեծ մասմբ ձիով էին գալիս եւ բարձրաձայն որոտուամ .

«Դարձեալ փայլեց Սասմայ դլիսին
Ազատութեան դրօշակ .
Կեցցէ՛ հայրենիք գոչելով
Բարձրացրին աղաղակ .
Գուրգէն , Հրաչ , Սերոր , Դժոխք
Քաջ Անդրանիկ ղեկավար
Տալորիկի լեռներումը
Կուում էին քաջաբար» :

Ամէն անդամ , երբ զինորները հեռանուամ էին մեր տանից , տատիկս խաչ էր քաշուամ նրանց ճակատներին եւ արտասունքը աչքերին ասուամ . «գնացէք բալէկ ջան , Աստուած ձեր սրտի մուրազը կատարի , ձեր ճամբեքը օրհնւած լինեն» եւ երբ զինուորները չքանուամ էին նրա աչքերից , կանչուամ էր յուսահատ . «ո՞վ գիտէ , որ քարի տակ էք դնելու ձեր դլուխները , հողը մօրերիդ դլիսին , որ ձեզ աշխարհ չը բերէին» :

Բոլոր անցնողների միջից ամէնքից սիրելի ինձ համար մի

բարձրահասակ , ալեխառն մօրուքով , գունատ գէմքով , խորը ընկած աչքերով մի մարդ էր : Նա միշտ սեւ վերարկու էր հագնւած , ոչխարի մորթուց մի սեւ գտակ դլիսին : Բիծա էին ասուամ նրան : Նա մի քանի անդամ եկել էր մեր տունը եւ ես շատ էի ընտելացել նրա հետ : Սպիտակ ձին նստած , նա մտրակով ծեծուամ էր լուսամուտը եւ իսկոյն բոլորս գուրս էինք թափւում : Նախ քան ձիուց իջնելը , նա կուսնուամ էր մինչեւ գետին եւ ինձ ձեռքերի վերայ բարձրացնելով , ձին մտրակուամ , իջնուամ էր միջնէւ Արփաչայը եւ յետ գալիս : Ամէն անդամ շունչս կտրուամ էր ուրախութիւնից եւ վախից եւ ես կպչուամ էի ձիու պարանոցին : Տատս դժգոհ էր եւ միշտ փնթինթուամ էր . «օղուլ , փորձանքը մի անդամ է գալիս , երեխիս կը դցես , կը սպաննես , կամ ինքդ վար կ'ընկնես» : «Է՛հ , մայրիկ ջան , հայդուկի ձին վարժւած է , մի վախենա , գլուխս քեզ մատաղ , եթէ թոռիդ մի բան պատահի» , պատասխանուամ էր Բիծան անհոգ ծիծաղելով : Հասկանալի է , որ ես Բիծայից մի քայլ անդամ չէի հեռանուամ նրա մեր տունը եղած ժամանակ : «Հայդուկը կին չունի , նրա նշանածը իր հրացանն է , իսկ տունը — Հայոց լեռները , բայց փոքրիկ աչիկ , քեզ իմ հարսնացուն եմ անելու , հենց որ մի քիչ մեծանաս» , ասուամ էր նա հիւսերու փայփայելով եւ դառնալով հօրս աւելացնուամ . «Միհրան , աղջկադ շատ եմ կարօտուամ , հետո Սասուն եմ տանելու , թող զինուոր լինի» : Ես ի հարկ է լուրջ էի ընդունուամ նրա խօսքերը եւ ժամերով ականջ կտրած պատմել էի տալիս նրան Աղրիւր Սերորի , Խանի խմբի , Խանասորի արշաւանքի եւ Անդրանիկի մասին , մանաւանդ Անդրանիկի , որին բոլորը պաշտուամ էին եւ նրա անունով երգւուամ :

Երբ Բիծան հեռանուամ էր մեր տանից , ես օրերով հաց չէի ուտուամ եւ կէս հիւսնդ , մոլորւած ու տխուր , ոչնչով չէի

միկթարւում : Բայց մի օր նա կորցրեց իր հմայքը ինձ մօտ, նրա կախարդիչ կերպարանքը գումառուեց, չքացաւ եւ Հայրիկի արտասունքներից յետոյ դա երկրորդ մեծ վիշտն էր իմ փոքրիկ կեանքում :

Մեր գիւղի «հւզբաշի» Բակօն մի պատկառելի ծեր մարդ էր : 1877 թիւ ոռուս-տաճկական պատերազմին, երբ Հայազգի Լոռիս-Մելիքովը եկել, անցել էր մեր գիւղով, Բակօն կամաւոր էր մտել Ռուսաց բանակը, մասնակցել էր Ղարսի եւ Էրդորումի կոփիներին, մի շարք քաջադրութիւններ կատարել եւ գեներալ Լոռիս Մելիքովից երկու պատույ չքանչան ստացել : Ռուսաց կառավարութիւնը նրան թոշակ էր տալիս եւ նա յարդւած ու ճանաչւած էր բոլորի կողմից : Ահա այդ Բակօն իր տղի հարսանիքն էր տօնում : Մի խուռն բազմութիւն եկեղեցուց դուրս դալով, անցնում էր դաւուլ զուռնայով փողոցով, Երբ Բիհան ձիու վերայ նստած ուղեց ճեղքել հարսանքաւորների շարքերը ու անցնել : Բակօն նրան տեսնելով շատ ուրախացաւ, եւ արազի շվար ձեռքին, բռնեց ձիու սանձից ու Բիհային արագ հրամցրեց : Բիհան խմեց մէկ, երկու, երեք բաժակ, բայց Բակօն բաց չէր թողնում նրան եւ թեւից քաշելով շարունակ խնդրում էր . «Քեզ մատաղ, ցած եկ ձիուցդ, մի լաւքէֆ անենք, մեր աղդի կենացը խմենք» : Ջը գիտեմ ինչի՞ս, բայց քաշելիս, Բիհի վերարկուի թեւը ճոռաց ու պատուեց : Բիհան կատաղեց, ձին դարձրեց եւ Բակոյին համարեայ կենդանու տակը առած մտրակով տուր թէ կը տաս, ոչ երեսի, ոչ դիմի նայեց : Երաժշտութիւնը իսկոյն լոեց, մարդիկ շւարած նայում էին առանց համարձակւելու մի բան անել : Բակօն լուր կանգնած էր հարւածների տակ եւ չէր փորձում պաշտպանել . «Շան որդի, բղաւում էր Բիհան իրանից դուրս, դու էլքո հարսնիքն էլ, ես քեզ իրատ կը տամ, թէ մարդկանց հետ

ինչպէս են վարւում» եւ ձին մտրակելով Բիհան թռաւ ամբոխի միջից առանց մէկին նայելու : Կարծես գետնին մեխւած Բակօն դեռ կանգնած էր տեղում . հարւածը անսպասելի էր եւ ծանր : «Հէ՛յ գիտի աշխարհ, ասաց նա դառնալով հանդիսականներին, Լոռիս-Մելիքովը գեներալ էր, ես նրանից մի օր ծեծ չը տեսայ, ոռուսների սպաները ձեռք չը բարձրացրին իմ վերայ, իսկ էն ժամանակ ես ջահէլ տղայ էի . հիմայ էս ծերութեանս ժամանակ, մի հասարակ մարդ խայտառակեց ինձ բոլորի առաջ, պատիւս ոտքի տակ առած տրորեց, գնաց . էլ իմ ապրելլ ի՞նչ գին ունի . չէ, հայը արժանի չէ ազատութեան, թող թուրքի եւ ոսի ձեռքի տակը էնքան մնայ, որ հոգին դրւրս գայ, գուցէ մի օր խելքը գլուխը ժողովի» : «Լաւ, լաւ Բակօ, այդպէս մի խօսի, մի տմարդի արարքի համար, ի՞նչ ես ամբողջ ազգը ջուրը գցում» առարկեցին հանդիսականները : Բակօն ոչինչ չը պատասխանեց եւ գլուխը կախ տուն գնաց : Հարսանիքը խանգարւեց, մարդիկ տժգոհ էին եւ տիխուր :

Ես տուն եկայ . Բիհան քնած էր մեր թաղթին, իր վերարկուով ծածկւած : Ես երկար նայեցի նրան . նա նոյնը չէր . նրա ամբողջ հմայքը անհետացել էր . ես վախ ենում էի նրանից . եւ երբնա արթնացաւ ոչ մի փաղաքչանք, ոչ մի անուշ խօսք չը կարողացան ինձ նրա մօտ գրաւել : Նա նկատեց այդ, բայց ոչինչ չասեց : Այդ դէպքից յետոյ ես այլ եւս չը տեսայ նրան մեր տանը, ի՞նչ եղաւ նա, չը գիտեմ : Տատա չէր ուզում խօսել նրա մասին, հայրս ասում էր, որ Բիհան հարբած է եղել եւ նրանից չը պէտք է նեղանալ : Բակօն այն չար օրից կորցրեց իր գւարձութիւնը, շատ քիչ էր երեւում մարդկանց մէջ եւ կամաց կամաց հակում էր : Յառաջ երբ հայրս տանն էր լինում, նա դալիս էր մեղ մօտ, զւարթ պատժում հին օրերից, նորերի մասին լսում . բայց հիմայ նա կտրեց ոտքը մեր տա-

նից : Տատոս , որը Բակոյին շատ էր սիրում եւ բարեկամ էր նրա հետ , այցելում էր նրան : «Մեր ժամանակը անցաւ , Նունիկ ջան , ասում էր Բարկօն խորը հառաչելով , էս նոր երը ուրիշ են , ոչ օրէնք են յարգում , ոչ ծերութիւն . եթէ սրանց հասարակ զինորը այսպէս է , ապա ի՞նչ են սրանց խմբապետները» : «Ե՞ս , Բակօն ջան , սիրտդ լայն պահիր , սխալմունք էր , անցաւ . մոռացի : Նրանք ազգի լաւն են ուղում , թուրքի եւ քրտի մէջ մեծացած , էդ են տեսել , ի՞նչ կարելի է սպասել նրանցից» : Ի որուր . տատիս ոչ մի խօսք չէր մխիթարում Բակոյին :

Մի օր տասը-տասնուճինդ զինորներ եկան մեր տունը : Երեքին Հայրս պահեց մեղ մօտ , միւսներին բաժանեց գիւղի ունեւորների վերայ : Միայն Հաջին մերժեց իր տունը ուղարկւած զինորին ընդունել : Նա մի անզաւակ ծերունի էր , Արկած-Համբերի ջարդերից հրաշքով ազատւել , իննառևական թւականներից մեր գիւղն էր հաստատւել . ապրում էր գիւղի ծայրում , ոչ ոքի հետ հարեւանութիւն չէր անում , միշտ իր մէջ քաշւած լուր էր ու գառնացած . մարդիկ ասում էին , որ նա իր երկրի կարօտով է տանջում : Երբ Հաջու մօտ ուղարկւած զինորը վերադառնաւ մեր տունը եւ պատմեց եղելութիւնը , Հայրս իսկոյն Հաջուն իր մօտ կանչեց : Իրիկնադէմ էր , մենք հաւաքւած էինք թէյի սեղանի շուրջը : Հաջին ներս եկաւ եւ գլուխ տալով կանգնեց դռան յետեւ : «Հաջի , ասեց Հայրս տեղից բարձրանալով , ինչո՞ւ հայ զինուորին քո տանը չես ընդունում , չը գիտե՞ս , որ նա տուն , տեղ , կարողութիւն , սիրելին երին թողած , գնում է քեզ , ինձ , ամբողջ ազգի համար զոհւելու» :

«Ես դրանց զոհւելուն ի՞նչ ասեմ , պատասխանեց սրտանց Հաջին , տներս քանդեցին . դրանց պատճառով չէ՞ր , որ թուրքը մեղ հետ թշնամացաւ , կոտորեց , թալանեց , երկրից դուրս

հանում : Աղդին զոհւել : Գնում , մի քարի տակ պահ են դալիս , երկու քուրդ սպաննում , իսկ թուրքերը երկու քուրդի համար ամբողջ Հայ գիւղեր սրի են անցկացնում , այրում , հաղարներով անմեղ Հայեր մեղոցնում . այնքան են անելու , մինչեւ մի Հայ չը մնայ մեր երկրում . թուրքը աւելի ուժեղ է քան մենք , նա բռնապետ է , անխիղձ , կարելի՞ է կուել նրա հետ :

«Լաւ , Հաջի , դուրս գանք , կը խօսենք» , ընդհատեց նրան Հայրս եւ Հաջու թեւից բռնած դուրս զնաց նրա հետ : Մենք թուանք նրանց յետեւից . մայրս ծածկեց երեսը ձեռքերով : Տատոս բղաւեց . «Ամա՞ն , Միհրան ջան , մի սպաննիր խեղձին , նրա արունքի տակը մի մտնի» :

Դուրսը Հայրս կանդնեց Հաջու դիմաց եւ ուղիղ նրա աչքերին նայելով , ասեց . «Հաջի , զինորին ընդունո՞ւմ ես տունդ թէ ոչ» :

«Զեմ ընդունում վարժապետ ջան , ես դրանց հերն եմ անիծել , վառեցին մեզի , թուրք զապտիէյի նման , հենց ո՞ր ներս են մանում , ձուածեղ եւ տապակած հաւ են ուղում , ով որ չի տալիս , հոգին հանում են ծեծելով» :

«Ստախօս , ուրեմն փորիդ ցաւը ձուածեղը եւ հաւե՞րն են» եւ Հայրս գունատ , շնչապառ , ամբողջ ոյժով ապտակեց նրան մէկ , երկու անդամ : Հաջին օրօրեւց եւ վայր ընկաւ , Հայրս նրան ոտքով մի աղացի տւեց եւ Հաջին գլորեց մեր դռան դարից ներքեւ ու մի քանի բոպէ պառկած մնաց : Քիչ յետոյ , ծեծւած շան նման . կոացած վեր կացաւ եւ լո՞ւու հեռացաւ : «Բալամ , ծեր մարդ էր , մեղք էր , ջահանտամբ չէր ուզում , ուրիշ տեղ չը կա՞ր Հայ զինորի համար» հառաչեց տատոս : Հայրս զայրացած էր «չէ , մայրիկ , բանը նրանում չէ . ի հարկ է տեղեր շատ կան Հայ Հայդուկի համար , բայց ինձ դժբախտացնողը այն հանդամանքն է , որ այդ նոյն Հաջիները վկերը

ծուած ծառայում էն օտարներին, նրանց ամէն կամքը կատարում, իսկ հայ զինւորին զրպարտում են եւ ատում. նրանց սպաններն էլ քիչ է, այս ի՞նչ մարդիկ են»: Եւ յուզմունքից չը կարողանալով շարունակել հայրս մտաւ իր սենեակը:

Զինւորը ի հարկէ տեղաւորւեց Հաջու մօտ:

IX.

Զինւորները ամէն օր մարզանք էին կատարում. ամբողջ գիւղը հաւաքում էր նայելու: Ամէնքից գրաւիչը մի սիրուն երիտասարդ էր, Ղարաբաղցի Կարօն, բարձրահասակ, ուժեղ, փայլուն աչքերով: Նրա հրացանը երբեք չէր վրիպում նշան բոնելիս, մարդկանց գլխից խնձոր էր կրակում առանց աչքը թերթելու: Երիտասարդութիւնը պաշտում էր նրան եւ նա բոլորին դէնք բանեցնել էր սովորեցնում: Երբեմն հօրս թախանձանքով մայրս էլ էր մասնակցում զէնքի մարզանքին. գիւղացիք սկզբում ծիծաղում էին մօրս փորձերի վերայ, բայց կամաց կամաց վարժւեցին եւ միայն զարմանում էին, երբ մօրս բոնած նշանը յաջող էր անցնում: Տասս տժգոհ էր. «Կինը ի՞նչ, հրացանը ի՞նչ», բայց հայրս ծիծաղելով ասում էր. «Մայրիկ, կանանց չե՞ն սպաննում, նրանք չը պէ՞տք է իրենց պաշտպանել սովորեն. առաջ Լուսիկին օր չէիր տալիս, որովհետեւ գլխին քող չէր քաշում եւ ոսկի չէր զնում ճակատին. խեղճ աղջիկը ամէն ինչում լսեց քեզ, մինչեւ ես միջամտեցի. հիմայ էլ տժգոհ ես զէնքեր բանեցնելու համար. Հայաստանում ոչ միայն կանացք պէտք է կրակել սովորեն, այլ եւ երեխաները, մեր ժողովուրդը գարերի ընթացքում մոռացել է զէնք կրելու հունարը. թշնամիները մեղ թոյլացին, որ աւելի լաւ տիրապետեն մեզ: Հիմայ մէնք որոշել ենք Հայոց հին քաջութիւնը նորէն կեանքի կանչել. մենք

ու ուշել ենք կամ ապրել ու պահէ մի ազատ եւ հպարտ ժողովուրդը ու պահանձն մէն ել»:

Շուտով տասս էլ վարժւեց եւ այլեւս ոչ մի առարկութիւն չէր անում, մանաւանդ որ մայրս այնպիսի աջողութեամք էր նշան բոնում, որ նա բոլորի հիացմունքի առարկան էր: Զինւորները սիրում էին մօրս քրոջ նման:

Ամէնքից շատ սիրում էի երբ Կարօն իր ձին էր խաղանում. ինչե՛ր ասես չէր անում նա. թամքի վերայից ձիու վազած ժամանակ նրա փորի տակից անցնել եւ նորից թամքին նստել, ձին մեր պարտէզի բարձր պատից թոցնել, ձիու վերայ ուղիղ կանդնած ջիրիթ տալ, եւ երեք խանչալի ծայրերը բերանը առած պարել, ամենախենթ փորձերը կատարել, որոնք հանդիսականներին սարսափով եւ հիացմունքով էին լցնում: Դաշտի ժողովուրդը հիանում էր իր հայրենիքի լեռների զաւակով. չէ՞ որ Ղարաբաղը կովկասի ամենագեղեցիկ ձիերը ունէր եւ այնտեղի հայերը մէկն էին կովկասի լաւ ձիաւորներից: Զարմանալի՞ է որ մեր ամբողջ գիւղը երդում էր Կարոյի անունով եւ աղջիկները նրա համար երգեր էին յօրինում ու երգում: Ամէնքից ոգեւորւածը նաղալն էր. նա էր որ իր հօր վարդիների մօտ նստած, ուորիների եւ բարտիների յետեւը պահ մտած, ցած ձայնով գովում էր Կարոյի հասակը, նրա փայլուն աչքերը, նրա ոյժը եւ երիտասարդութիւնը:

Բայց մի օր Կարապետի աստղն էլ ընկաւ: Գիւղում սկսեցին ինչ որ մութ բաներ շնչել նրա մասին: Պատմում էին, որ Կարօն գիշերները անցկացնում է որբեւայրի Սօնայի տանը, որ սիրուն եւ մենակ կինը խելքից գուրս է հանել նրան: Լուրը հաստ հօրս ականջին եւ զինւորը գատի տրւեց: Կարօն երդուում էր, որ նա Սօնայենց դոնից մի անգամ ացնելիս, մի բաժակ ջուր է ուղել նրանից եւ այդ առթիւ մի քանի խօսքեր

իոխանակել կնոջ հետ, բայց որ բանը դրանով էլ վերջացել է : Բայց հայրս չը հաւատաց նրան եւ քաղաքի, կենդրոնական թիւրոյից Զալաթին կանչեց գործը պարզելու : Զալաթը մի միջահասակ մարդ էր, աննշան կերպարանքով, գոռնէ այդպէս թւաց նա ինձ : Ասում էին որ նա քաջ է եւ խիստ բարոյական մարդ : Զալաթը կանչել տւեց գիւղի մեծերին, նոյնպէս Տէրտէրին եւ վարժապետ Յովկաննէսին : Զինորդներն էլ այնտեղ էին : Յետագայում ես լսեցի նրա ճառի բովանդակութիւնը, որը մօտաւորապէս այս է . «Չը նայած, որ Կարոյի գործը լուծւելու է կուսակցութեան կողմից, ես հրաւիրել եմ ձեղ, որպէս զի դուք լսէք, թէ ի՞նչ սկզբունքների տէր ենք մենք քաշնակցականներս, ի՞նչ ենք պահանջում մենք մեր հայդուկներից : Հայդուկ անունը սուրբ անուն է, նրան կրողը միայն մի նպատակ ունի իր կեանքում, դա — զոհւել մեր տանջաւծ հայրենիքի ազատութեան համար սահման մանի էն կողմը : Դարեր շարունակ ապրում ենք ստրկութեան մէջ : Բաժանաւծ Տաճկաստանի (ուր գտնւում է մեր երկրի մեծ մասը), Ռուսաստանի եւ Պարսկաստանի մէջ, մենք կորցրել ենք մեր աղդային պատիւը եւ արժանիքը : Բայց մեծ Հայկի հոգին, որը յաղթեց Բաբելոնի Բելին եւ մեզ իր անունը տւեց, մեծ Արամի եւ Տիգրանի հոգիները, որոնց առաջ յարդանքով խոնարհւում էր աշխարհը, դեռ չեն մեռել : Մի խումբ քաջ երիտասարդ մարդիկ տասնեակ տարիներ է, աշխատում են կենդանի պահել այդ հոգին Հայաստանում, արթնեցնել նրան : Մենք որոշել ենք պատմութեան անիւը դարձնել, աղատ ապրել, որ մեր ժողովուրդը մաքրուի իր արատներից, որոնց նրան հանգամանքներն են տւել, դառնայ նորից այն հպարտ, վեհանձն, քաջ եւ բարի ժողովուրդը, որը նա եղել է անցեալում : Հայդուկը ոչ միայն երդում է, իր կեանքը ապատ հպարտ Հայաստանի

համար զոհել, նա երդուում է նոյնպէս մաքուր լինել իր անձնական կեանքի, իր վարքի եւ բարքի մէջ, կենդանի օրինակ դառնալ իր հայրենակիցներին : Եթէ Կարօն, որը մինչեւ հիմայ մեր հպարտութիւն էր, նոյն իսկ անմեղ է, ապա նա մեղաւոր է նրանով, որ տեղիք է տւել բամբասանքի եւ դրանով արատաւորել հայդուկի անունը : Նա կը պատժւի, եւ նրա պատիւթը թող ձեզ համոզի, որ հայդուկը եկել է հայ ընտանիքի պատիւը պահելու, նրան փրկելու եթէ նա վտանգի մէջ է, նա եկել է անմեղութիւնը մղահպանելու, նա խօսք է տւել կուսակցութեան չամուսնանալ եւ նրա համար բոլոր հայ կանայք քոյրեր են եւ անձեռնմխելի» : Այսպէս մօտաւորապէս խօսեց Զալաթը :

«Ապրիս, մեր սրտովը ասեցիր» պատասխանեցին բոլորը : Կարօյին բանտարկեցին մեր մարդագում, երկու զինւոր սլարան գցեցին նրա մէջքին եւ առաստաղից կախեցին . այդ դրութեան մէջ նա պէտք է մնար մինչեւ հետեւեալ օրը, յետոյ Զալաթը պէտք է նրան քաղաք տանէր, ուր նա յեղափոխական բիւրոյից դատի պէտք է ենթարկւէր : Կարօն երեխի նման լաց եղաւ, երբ նրանից զէնքերը խլեցին : Երեխաներս հերթով մարդիկ երդիքն էինք բարձրանում եւ ծակից ներս նայում . Կարօն կախւած էր առաստաղից ամբողջ մարմնով եւ ամէն անդամ երբ նա փորձում էր շարժւել, ոտքերը օրորւում էին օդի մէջ : Մենք կամացուկ լաց էինք լինում նրան նայելիս :

Սօնային ծեծեցին հենց իրա տան մէջ, առաջուց հեռացնելով նրա երեխաներին . պատմում էին, որ նա մտրակի հարւածների տակ հպարտ եւ ուղիղ կանգնած է եղել եւ ոչ մի զղջում չի ցոյց տւել . խօսում էին, որ գիւղի ծերերը ուղեցել են նրան իշումնատեցնել, երեսին ալիւր քսել, իշու պոչը ձեռքը տալ եւ դիւղի միջով ման ածել, որ ամէն մէկը տեսնի

նրան եւ երեսին թքի, որ առանց պսակի ուրիշ տղամարդի հետ չը ընկնի, բայց Զալաթը եւ հայրս թոյլ չեն տւել այդ:

Նոյն օրը, օգտւելով Զալաթի ներկայութիմից, դատի տւեցին եւ մեր գիւղացի Մարտիրոսին, որը ոչ միայն ամէն անգամ հակառակում էր իր տանը զինւորներ ընդունել, այլ եւ սպառնում էր բոլորին ոռւս կառավարութեանը մատնել: Մարտիրոսին ներս տարան մեր դահլիճը եւ երկար քննելուց յետոյ մտրակել տւեցին: Հարածների տարափի տակ Մարտիրոսը պոռաց վիրաւոր կենդանու նման: «Անաստուածներ, մեռայ, ինձ ազատ թողէք, ծեծելով բան կը լինի. գիւղի կէսը ձեզի թշնամի է, վախից սուս է արել, ինձնից ի՞նչ էք ուղում»:

Եթէ տատս չը լինէր, ո՞վ գիտէ ինչո՞վ էր վերջանալու գործը: «Դուռը բացէք, շան տղերք, գոռաց նա յանկարծ, կնոջ, երեխայի տէր է. չի ուզում մեղքը իր զդին, զոռով բա՞ն կը լինի», եւ տատս ընկաւ Մարտիրոսի վերայ եւ ծածկեց նրան իր մարմնով. «Դեհ, խփէք, ինձ խփէք նրա տեղ»: Բոլորը շփոթեցին: Զալաթը հրամայեց հայդուկներին ուշաթափ Մարտիրոսին տուն տանել եւ տատս գնաց նրանց հետ:

Այդ բոպէին երեւաց մայրիկս: Ես նրան դեռ երբեք այդպէս չէի տեսել: Մեռելի դոյն ստացած, բայց համարձակ, վճռական եւ բարկացկոտ՝ նա կանգնեց հօրս եւ Զալաթի առաջ. «Ես չեմ ուզում, որ մեր տանը այսպիսի բաներ կատարւեն. ինայեցէք երեխաներին. աչքերը սարսափից չուած, նրանք տեսնում եւ լսում են ամէն ինչ. եւ յետոյ մեր տունը դատարան չի, թէպէտ դուք դատաւորներ էք: Եղայր Զալաթ, աղաչում եմ, ազատեցէք այն խեղճ զինւորին, նա միայն թոյլ է գտնւել. կինն է միակ մեղաւորը այն գործում, եթէ կինը մաքուր լի-

նէր, կարօն երբեք չէր համարձակւի նրան մօտենալու. կինը պէտք է ընտանիքի պատիւը բարձր պահէ»: Եւ իր հրաշալի աչքերը Զալաթին յառած, մայրիկս այնպիսի խնդրանքով նայեց նրան, որ Զալաթը յուզւած եւ ամաչելով իր աչքերը ցած գցեց: Հայրս զարմացած էր. մայրս միշտ մեղմ էր, լուռ, համեստ եւ լսող, ի՞նչն էր փոխել նրան:

«Թող քո կամքը լինի, քոյրիկ», ասեց վերջապէս Զալաթը: Մի քանի բոպէից յետոյ կարոյին ներս բերին դեռ միշտ կապւած թեւերով:

«Համբուրիր այս քրոջ ձեռքը, որ քեզ աղատեց, դու գիտես, թէ դու ի՞նչ մեղք ես գործել»: Կարօն լուռ համբուրեց մօրս ձեռքերը, որը թոյլ ժպտում էր եւ յանկարծ կարմրելով, դուրս եկաւ սենեակից:

Նոյն օրը Զալաթը քաղաք ուղեւորւեց հօրս հետ. նրանց կառքի յետեւից, առանց զէնքի, առանց ձիու քայլում էր կարօն:

Իսկ ուրիների յետեւը, թոշնած վարդերի մօտ լաց էր լինում գիւղի ամենէն գեղեցիկ եւ ուրախ աղջիկը. լաց էր լինում նաղալը եւ ոչ ոք չէր կարող նրան միիթարել:

X.

Անդրանիկին ոչ ոք չէր տեսել, բայց նրա հոչակը ապրում էր բոլորի սրտերում, մարդիկ երդւում էին նրա անունով: Կոյր աշուղները տանից տուն էին անցնում, գովում էին նրան իրենց երգերում կամ նրա քաջագործութիւններից պատմում.

«Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու դաշտ Հակայ լեռինք քեզ ապաստան, Անդրանիկ. Քիւրդ ու տաճիկ երբ լսեն քո անունը, Օձերի պէս պիտի սողան իրանց բունը»:

Աշուղները պահանջում էին Հայոց աղջիկներից ծաղկեայ սլսակներ հիւսել եւ նրանցով հերոսի ճակատը զարդարել, երիտասարդները պէտք է նրան օգնութեան հասնէին.

«Կովկասի քաջեր, խմբեր կաղմեցէք
Քաջ Անդրանիկին օգնութեան հասէք»:

Ողովհետեւ՝

«Անդրանիկը քաջ, քաջ ընկերներով
Կ'ուղէ պատերազմ, կը սպասէ դարնան»:

Սուրբ Սարդիսը, Սուրբ կարապետը, Քաջ Վարդանը, Խրիմեան Հայրիկը, բոլորը, բոլորը մոռացւել էին այլ եւս. ծեր ու մանուկ միայն նրա մասին էր խօսում։

Սասունի լեռները նրա ապաստանն էին, այն երկիրը, ուր ժայռերը մինչեւ երկինք են հասնում, Դաւիթի ու Մհերի երկիրը։ Մի վայրենի, հպարտ, հինաւուց երկիր, որտեղ ապրում է մի քաջ, յանդուղն եւ խիզախ ժողովուրդ։ Ազատութեան սիրահար նա այսպէս է երգում իր մասին։

«Ճաւորիկի դաւակն եմ քաջ
Զեմ խոնարհի թուրքին առաջ...
Այծեամի պէս կը ցատկուեմ,
Առիւծի պէս կը մռնչեմ,
Ցորենի տեղ կ'ուտեմ կորեկ
Երկաթ ծեծեմ գիշեր ցերեկ
Շինեմ վիետատ, փոխ խաչերկաթ,
Ծանր է դատումս, բայց եմ աղատ»։

Հին, շատ հին են Սասմայ սարերը, հին, շատ հին էր նոյնպէս այնուեղ ապրող ժողովուրդը։ Դաւիթը, Սասմայ Աժդահան, յաղթել էր Մսրայ Մելիքին շա՛տ ու շա՛տ զարեր առաջ ու մեռել էր դաւաճանւած։ Նրա տղեն Մհերը, Աստծու հրամանով վակւած է մի ժայռի մէջ, որովհետեւ նա այնքան ուժեղ էր, որ երկիրը չէր կարողանում տանել նրան։ եթէ աշխարհը մի օր փոխի եւ «աղաւնիները կարողանան ապահով ապրել աղւեսների, իսկ գառները գայլերի հետ, առանց վախի ու սարսափի»։ ա՛յն ժամանակ կ'ազատւի Մհերը իր շղթաներից, դուրս կը գայ աշխարհ։ Այն հինաւուրց լեռներում, ուր Դաւիթն ու Մհերն են ապրել ու գործել, նստած էր Անդրանիկը, Հայոց հին պատիւր բարձր պահած։ Մայր չէր ծնել նրան, այլ մի Ասլան։ Գիշերը նա դնում էր իր գլուխը չոր քարերին, ցերեկը այրող արեւի տակ անցնում էր նա մի տեղից միայն, տեսնում բոլոր անիրաւութիւնները եւ Դաւիթի նման, օգնութեան հասնում։ Ամիսներով նա սոսկալի կոխւ էր մզում Սուլթանի զօրքի եւ քիւրդ աշխրեթների դէմ, որոնք ուզում էին ոչնչացնել հպարտ, անառիկ Սասունը, կարծես բաւական չէր, որ ամբողջ Հայաստանը տնքում էր նրանց ուների տակ։ Ոչ թնդանօթ եւ ոչ էլ զօրքերի գերազանցող ոյժը կարող էին վախեցնել հերոսին։ Զէ՞ որ նա Դաւիթի նման արդարութեան համար էր կուտամ։ Հազար ու հազար ոսկի էր խոստացել Սուլթանը այն մարդուն, որը նրան Անդրանիկի գլուխը կը բերէր, բայց ոչ չէր համարձակուում մօտենալ հերոսին եւ արիւնոտ Սուլթանը ծեռնումայն էր մնում։ Սուլթանը մոլորւել էր։ առաջին անգամը չէր որ նա Սասունի վերայ էր գնում։ 1894 թւին չէ՞ր որ նա խորամանկօրէն եւ դաւաճանների օգնութեամբ աւերեց Սասունը։ Տմարդի մի գործ։ Այն ժամանակ էլ կոխւ էր եւ սասունցիները շատ օրերի ընթաց-

քում հերոսաբար պաշտպանեցին իրենց գոյքը եւ կեանքը, բայց
յուսահատւած Սուլթանը նրանց մօտ ուղարկեց «Ք ի ս տ ո-
ն ե ա յ» հիւպատոսներին։ Եկան անդլիացիները ու նրանց հետ
ուրիշները, համոզեցին սասունցիներին անձնատուր լինել,
դէնքերը ցած գնել. խոստացան թէ Սուլթանը ժողովրդին ա-
զատութիւն կը տայ, հարկերը կը թեթեւացնի, էլ նրանց չի
ճնշի։ Հաւատացին սասունցիները, չէ՞ որ անդլիացիները
քը ի ս տ ո ն ե ա յ էին, եղբայրներ, ց ե ղ ա կ ի ց ն ե ր։ —
Եւ երբ սասունցիք անդէն մնացին, թուրքերը յարձակւեցին
նրանց վերայ եւ կէսից աւելին կոտորեցին։ Ու Ք ր ի ս տ ո-
ն ե ա ն չ'օ գ ն ե ց ս ա ս ո ւ ն ց ի ն ե ր ի ն։ Այդ գիտէր Անդրա-
նիկը. գիտէր, որ նա միայն իր զինուրների եւ Սասմայ բարձր
սարերի վերայ կարող էր վստահել. նրանք հաւատարիմ են։
Եւ ոչ մի խոստում չի կարող խարել նրան։ Նա կը կուի մինչեւ
մերջին չունչը։ Այդ, նա այդ կ'անի։

Ականջներս լայն բաց արած եւ լուռմ էի այդ պատմութիւնները : Ես երազում էի Անդրանիկի մասին , երգում էի նրա երգերը քոյրերիս եւ եղայրներիս հետ : Նա հետզհետէ մի դիւցազնական դէմք էր դառնում : Միթէ նա թագաւորազնը չէ՞ր , որ մութ աշխարհը իջաւ , սպաննեց վիշապին , որը ժողովրդին ապրեյու ջուր չէր տալիս :

Ես շատ էի խօսում տատիկիս հետ այդ մասին. նրա ասած՝
ները ինձ համար աւելի հասկանալի էին եւ յետոյ ։ յետոյ ։
տատիկս էլ էր սիրում Անդրանիկին եւ երազում նրա մասին։
«Նրա արեւին մատաղ, ասում էր տատիկս, ա՛խ, կը գա՞յ է ին
օրը որ այս մեղաւոր աչքերս նրան տեսնեն ու կարօտ առնեմ։
ապան է, ասլան»։ Եւ տատս ամէն անդամ նոր ծնւած երեխի
պորտը կտրելիս, խնդրում էր ծնողներից, որ նորածնի անունը
Անդրանիկ դնեն։ Գիւղացիները ուրախութեամբ հետեւում էին

Նրա խորհուրդին, եթէ չէին գերազասում իրենց տղաներին՝
վը բէժ, Զարդանդ, Կայծակը:

Աշխարհը հէքեաթ էր : Ժամերով մեր պարտէզում կամ Հարդի եղերքին մի ծառի տակ նստած , ես երազում էի Անդրանիկի մասին : Ես սպասում էի նրան , իմ թագաւորազնին : Ես ուզում էի նրա հարսնացուն լինել : Բայց նա չէր գալիս — ես թագաւորի աղջկէ չէի եւ մեզ մօտ Վիշապ չը կար , որին նա պէտք է սպաննէր : Դրա համար ես որոշեցի զինւոր լինել : Միթէ դա անկարելի՞ էր : Հայրս մեզ փայտեայ փոքրիկ հրացաններ էր ընծայել , որոնցով մենք սկսեցինք զինւոր խաղալ : Մի օր երկու հարեւան տղաներ մեր պարտէզի մօտից անցնելիս տեսան , թէ ի՞նչչէս ես , որ մեծն էի , հրամ աններ էի արձակում քրոջս եւ եղայրներիս իմ «զինւորներին» , եւ սկսեցին ծաղել ինձ : Վիրաւորւած , յարձակւեցի նրանց վերայ , կարմըրաթշիկ , ինձ հասակակից Սուրէնին տակս առայ եւ «Հրացանովս» տուր թէ կը տաս : Երեւի նա իմ անսպասելի յարձակումից շփոթւած էր , յեռոյ ես տեսայ , որ նա աւելի ուժեղ էր քան ես : Նրա ընկերը , Երւանդը աշխատում էր «Հրացանը» ձեռքից խլել . բայց չը յաջողւեց . ես ուժեղ էի , բարկացած , վիրաւորւած . . . եւ ես մեր պարտէզումն էի : Տղաները նահանջեցին ամօթահար : Հետեւեալ օրը նրանք նորից կանգնած էին մեր պարտէզի պատի մօտ , այս անդամ որպէս բարեկամներ : Մեր «Հրացանները» մեծ տպաւորութիւն էին թողնում նրանց վերայ : Նրանք փայտեր էին բերել իրենց հետ եւ մենք սկսեցին զինւորական մարզանքներ կատարել , այնպէս ինչպէս մենք տեսնում էինք մեծերի մօտ : Մենք ոչ մի առաջնորդ չէինք ընտրում , բոլորս Անդրանիկի զինւորներն էինք եւ շուտով նրա մօտ պէտք է գնայինք : Մեծամ տութիւն չը լինի իմ կողմից , իթէ ասեմ , որ ընկերներս ամէն ինչում հնագանդում էին ինձ :

Օրը օրի վերայ մեր խումբը մեծացաւ, մենք ուրիշ խաղեր չունէինք այլեւս։ Ամէնքից շատ սիրում էինք «Ռախ արա» խաղալ։ Այդ խաղին մենք նւիրում էինք այնպիսի խանդաւառութեամբ, ինչպիսին վայել էր Անդրանիկի կամաւորներին։ Գետնի վերայ մի ուղիղ գիծ էինք քաշում։ Գծի մի կողմում կանգնում էին Ռուսները Հայերի հետ, միւս կողմում «Թուրքերը» եւ «Քիւրդերը»։ Ես միշտ հայ էի։ Մենք նստում էինք զետնին, մեր երկրում եւ մեզ քնած էինք ճեւացնում։ Յանկարծ, իբր թէ մթութեան մէջ, կամացուկ, վախենալով մեզ զարթնեցնել, «թշնամին» անցնում էր սահմանը, ընկնում էր մեր վերայ եւ ուղում էր մեզ գերի վերցնել։ Բայց մենք զարթնում էինք եւ ուռաներով պատերազմը սկսւում էր։ Երկու խումբն էլ, «Թուրքերը» ինչպէս եւ «Հայերը» կուտում էին հերոսաբար, բայց մեծ մասամբ «Հայերն» էին յաղթութիւնը տանողը։ Դա շատ սլարդ էր։ Ոչ ոք չէր ուղում թուրք եւ քիւրդ լինել։ մենք ստիպում էինք թոյլերին տալ այդ ժողովուրդների գերը։ Ինչպիսի՛ կրքով էինք մենք «Թուրքերն» գերի վերցնում։ ճանկուտած, արիւնլւայ երեսներով, թակիթփաւած մազերով, վայրենացած տուն էինք զալիս եւ մայրս մեզ միշտ խիստ պատժի էր ենթարկում։ Նա մեր սուրբ կորիւների համար ոչ մի հասկացողութիւն չունէր։ Եթադայում ես պահում էի մեր պարտէզում մաքուր դուլպաներ եւ չորեր, եւ երբ մեր խաղը վերջանում էր, լւանում էի խնամքով երեսս եւ ձեռքերս առւի մէջ, սարքում եւ այդպէս համարձակում տուն մտնել։ Միայն հիւսերս, որ հաստ ու երկար կախւած էին մէջքիս չէի կարողանում կարգաւորել։ Նրանք մօրս եւ տատիս հպարտութիւնն էին, իսկ ես ատում էի նրանց։ Քանի՛ անգամ այդ երկար, խիտ մազերը իմ արտասունքների պատճառն են եղել։ Գլխուս թափթփաւած լինելու

պատճառով վորքրիկ քոյրս Սիրանոյշը ինձ «բորբջ» էր անւանում եւ վիրաւորում։

Բայց շուտով մեր խաղերը արգելւեցին։ Մեր գիւղի հոտաղները իրենց անասունները արածեցնելիս, նոյնպէս հայի եւ թուրքի սահման են խաղում հարեւան գիւղի հոտաղների հետ։ «Կուի» ժամանակ մի օր այնքան են տաքանում, որ աղեղ են զցում միմեանց։ «Թուրքերի» աղեղը կալչում է Թորիկ անունով մի տղի քունքին եւ նա վայրկենապէս մեռնում է։ Մի սոսկալի վայնասուն ընկալա գիւղը։ Թորիկի ծնողները սայլով տուն բերեցին տղի արիւնլւայ գիւակը։ Հայրս, որպէս շրջանի դատաւոր — այն ժամանակ ամբողջ դատաւորութիւնը դաշնակցութեան ձեռքն էր — հրամայեց Թորիկին եկեղեցի չը դնել, այլ այնպէս, ինչպէս որ նրան գտել էին, եկեղեցու ամբարում պահել, մինչեւ գործի պարզեցը։ Քննութիւնը «Թուրքերին» մեղաւոր գտաւ, հայրս տուգանք նշանակեց եւ Թորիկի հայրը քարտաշ Գիգոն ստացաւ տուրքը որպէս արունքի գին։ Երկու գիւղում էլ խիստ կերպով արգելւեցին «պատերազմական» խաղերը, բայց դա միայն մի առ ժամանակ, քանի մեռածի յիշատակը թարմ էր։ Հետոհետէ մարդիկ մոռացան նրան եւ մենք վերսկսեցինք մեր խաղերը, բայց առանց աղեղ նետելու։

Մի արեւոս օր էր։ Սիրանոյշը խաղում էր ծառերի շւարքում իր տիկնիկների հետ, եղբայրներս տատիկիս հետ գիւղումն էին։ Հրացանս ուսիս, թոչկոտում էի գես ու գեն, ինձ զինուր երեւակայելով եւ երգում էի բարձր։

«Մենք պէտք է կուենք եւ ոչ լաց լինենք
Ազգի կորուստը դէնքով յետ խլենք»...

Հենց էն վայրկեանին երբ ես պատրաստում էի կրակել աներեւոյթ թշնամու վերայ, իրիցկինը անցաւ մօտիցս։ Մի պահ նա նայեց ինձ ծալլանքով, յետոյ ծիծաղեց անախորժ, զգւելի ծիծաղով։ «Աղջի, մազդ կտրւի, էղ ի՞նչ ես անում, չե՞ս առաջում։ Քրոջդ նայիր, տես ինչ լաւ է խաղում տիկ նիկների հետ. դու ուղո՞ւմ ես զինուր լինել. աղջիկը ի՞նչ, զի՞նորը ի՞նչ. աղջի, դգօղլան ես, ի՞նչ ես»։

Դգօղլան! Այդ խօսքը յաճախ էի լսել, առանց նրան հասկանալու։ Յաճախ Սիրանոյշին ինձ օրինակ էին դրել որպէս իսկական աղջկայ. բայց չէի ըմբռնում։ Հիմայ էլ չը գիտէի, թէ ինձ համար ինչո՞ւ էր ամօթ, Անդրանիկի զինորը լինել, բայց «Ղզողլան» բառը վիրաւորում էր ինձ։ Այդ կնոջ բերնում նա մի տարօրինակ թոյն ունէր։ Մի բթամիտ աւանդութիւն էր խօսում այդ բերանով, ես յանկարծ զգացի այդ աւանդութեան ծանրութիւնը ուսերիս վերայ։ «Աղջիկը ի՞նչ, զինուրը ի՞նչ»։ Ինչո՞ւ չէ. ինչո՞ւ չէ։

Տուն վագեցի եւ մտայ մահճակալիս տակ որ մենակ մտածել կարողանամ։ Ոչ ոք չը պէտք է տեսնէր ինձ եւ իմ անդօր հեկեկոց լսէր։

«Ղզողլան»։ Ես այնքան դժբախտ էի աղջիկ լինելուս համար, այնքան մենակ։ Անդրանիկը յանկարծ այնքան հեռու էր, անհասնելի։

Իմ երազնե՞ր, իմ լուսեղէ՞ն երազներ, ինչո՞ւ էք այդպէս հեռու, այդպէս հեռու։

XI.

Դուրսը ձիւն էր դալիս։ Խոշոր փաթիլները աստղիկների աման խաղալով եւ պարելով ցած էին գլորւում, ծածկում սարու ձոր սպիտակ սաւանով։ Ոչ մի սեւ կէտ, ոչ մի շարժում

չորս կողմը. ձիւն, ձիւն ամէն տեղ։ Հայոց աշխարհը կախարդական քուն էր մտել կարծես եւ միայն երդիքներից գուրս եկող սեւ ծուխը երկար սիւներով դէպի երկինք էր բարձրանում, եւ վկայում որ խրճիթներում եւ գոմերում մարդիկ ու կենդանիներ են նստած ու նրանք արթուն են։ Կամաց կամաց սպիտակ դաշտերը կապտեցին։ Սենեակում մթնեց։ Եկեղեցու զանդակները մի անգամ էլ կանչեցին...

Նորից ինքնաեռի շուրջն ենք բոլորած։ Նորից տատիկիս խորշումած ձեռքերը քաշում են թազբեհի շարերը։ Նորից նահէքեաթ է պատմում եւ նորից մեր քնելուց առաջ խաչակնքում է նա երեսս եւ գուրս գնում ուղիղ եւ բարակ ինչպէս մի ջահէլ աղջիկ. . . եւ յանկարծ մէկը խփում է վայրենօրէն մեր գուռը, այնքան ուժեղ է խփում, որ լուսամուտների ապակիները համարեա ցած են թափուում։ Անկողնիցս վեր եմ թռչում, բայց հետեւեալ բոպէին սարսափած ճշում եւ վերմակը պինդ պինդ գլխուս քաշում։ Քոյրերս եւ եղբայրներս էլ արթնացան։ Մենք բարձր խօսակցութիւն ենք լսում, յետոյ ծանր քայլեր եւ աղմուկ դռան յետեւը։ Մենք հիմայ բոլորս լեղապատառ բղաւում ենք։ Բարեբախտաբար դուռը բացում է եւ շեմքի վերայ երեւում է մօրս գունատ կերպարանքը։ Նա էլ շտապ վեր է թռել անկողնից։ մազերը թափթփուած են, չորերը անփոյթ հաղնւած։ «Սս. սս, երեխաներ, չը վախենաք. ոռւս ժանտարմներ են. նրանք զէնք են խուզարկում եւ ձեր հօրը վինտուում, իսկ հայրիկը տանը չէ, դուք եւ ես չը գիտենք նրա ուր լինելը, լսո՞ւմ էք, հայդուկներ էլ երբեք չեն գալիս մեր տունը. ոչ մի ծպտուն չը հանէք»։ Հարեւան սենեակում ծանր քայլերը մօտենում են. մենք լսում ենք թղթի խշոց, հայրիկիս թղթերին են նայում։ Տատս ներս է մտնում երեք ժանտարմների եւ նրանց սպայի հետ։ Տատիկիս դէմքը խիստ է եւ սառն,

կլուխս հպարտ, ճակատը բաց, բայց ձեռքերը դողդողում են: Կոպիտ ժանտարմները վերցնում են իրերը, ամէն ինչ մէկ մէկ գննում, խառնում են պահարանների մէջ, նայում մահճակալների տակ: Մեզ հրամայում են դուրս դալ անկողիներից, նրանք քանդում են մեր դոշակները, ծակում սւիններով բարձերը, թափթփում մեր հագուստները, ճերմակեղէնը: Ոչ ոք չի խօսում, միայն տատիկս տեսնելով մեր դունատ եւ վախեցած դէմքերը, յանկարծ բղաւում է: «Աստուած խնայէ մեղ, էս ի՞նչ դրութիւն է: եսի՞ր ենք թէ աւա՞ղակ. անիծւի ձեր թագաւորը, թաղթը գլխին փլչի, արեւը մարի, քօքը կտրւի, Հա՞»: «Ի՞նչ ես ասում Բարուշկա», հարցնում է ժանտարմների գլխաւորը, նա եւ իր մարդիկ միայն ոռուսերէն են խօսում եւ տատիկիս լեզուն չեն հասկանում: «Հողը գլխիդ, ի՞նչ դիտեմ ի՞նչ ես ասում», պատասխանում է տատս ատելութեամբ: «Ի՞նչ, ի՞նչ Բաբուշկա»: «Ախ, մայրիկը իր աղօթքն է ասում», միջամտում է մայրս դողացող ձայնով եւ նայում է տատիս աղաչանքով: Սա լրում է: «Ինձ համար էլ աղօթիր, Բարուշկա», ասում է ժանտարմների սպան եւ թողնում է սենեակը. ժանտարմները հետեւում են նրան եւ ոչ ոք չի կարող խանգարել տատիկիս նրանց յետեւից, չուծ ձեռքերով «գրող չափել» եւ շշնչալ. «Գետինը մտնէք, անօրէններ»: Յետոյ դառնալով մայրիկիս ասում է. «Խեղճ երեխեքը, սատանից են վախենում իրիկոմները, սրանցից էլ լա՛ւ սատանայ. մնա՛յստեղ, հարս, այդ անիծւածները բաւական դիտեցին մագերդ, պառկի քնի, ես նրանց ճանապարհ կը գցեմ». Եւ շտապ շտապ դուրս է գալիս սենեակից: Մայրս աշխատում է երկար, որ մեր իրերը մի քիչ կարդի բերէ: Մենք դողում ենք յատակի վերայ, ոտարորիկ: Յետոյ նա լրու մարում է մեծ լամազը, վառում գիշերայ կանթեղը, ամէնքիս համբուրում եւ

դուրս գնում: Բայց մենք այլեւս չենք կարողանում քնել. մենք լսում ենք աղմուկ, վաղվզոց: Յետոյ մէկը տնքում է երկար, ցաւազին: «Ծուրենին են ծեծում» շշնչում է Սիրանոյշը և արտասունքները խեղդում են նրան:

«Երբ ես մեծանամ, ասում եմ ես յանկարծ, չեմ թոյլ տայ որ նրանք գիշերը մեր տունը մտնեն եւ մեր բարի Ծուրենին ծեծեն»:

«Դու այդ չես կարող, նրանք հրացան ունեն, թաղաւորից են գալիս, յետոյ դու աղջիկ ես» առարկում է Սիրանոյշը:

«Վնաս չունի, պատասխանում եմ ես, ես էլիսկական հրացան կը գնեմ եւ բոլորին լուսամուտից մէկ մէկ կը սպաննեմ. թաղաւորին էլ կը սպաննեմ, դու կը տեսնես» բղաւում եմ ես բարկացած: Իմ եղբայրներս Արիկը եւ Վահրամը դեռ փոքր են եւ շատ բան չեն հասկանում անց ու դարձից: Այդ բոսէին մենք լսում ենք շան հաջոց, ձիերի վազք. դռները ամուր խիւում են: Արդեօք նրանք գնացին: Մայրս կամաց ներս է մտնում, յոզնած, բայց պայծառ դէմքով. «Նրանք գնացին, նրանք գնացին երեխաներ, հիմայ մենք կարող ենք հանդիստ քնել»: Մօրս բարի խոչոր աչքերը փայլում են տենդուտ, նա ժպտում է մեղ, ձեռքով հրաժեշտ տալիս, ուզում է դուրս գնալ:

«Մայրիկ, ի՞նչո՞ւ են նրանք մեղ մօտ զէնքեր փնտուում, ի՞նչ են ուզում հայրիկից»:

«Լոիր, քո բանը չէ» եւ մայրս վճռական քայլերով թողնում է սենեակը: Քունը գժւարութեամբ է վերադառնում մեզ մօտ: Մենք դեռ երկար խօսում ենք: Ես գիտեմ, թէ նրանք ինչո՞ւ են վիճակուսական է, նա սիրում է Հայաստանը. նա կուում է թուրքի Սուլթանի դէմ, բայց Ծուրսաց թաղաւորը չի ուզում այդ: Ինչո՞ւ: Միթէ մենք

ոռուսներին դէ՞մ ենք: Հայրս թագաւորի թշնամի՞ն է: Գլուխս տենդօրէն աշխատում է. այո, Հայրիկս թշնամի է Ռուսաց թագաւորին, որովհետեւ Յարը բռնաւոր է. նրա ժանտարմները ծեծում են եւ սպաննում: Սիրանոյշը եւ եղբայրներս վաղուց քնած են: Ամբողջ տունը խաղաղ է. ես քաշում եմ վերմակը գլխիս. ես համարեա խեղդւում եմ:

Սիրտս տիուր է. մի սքանչելի երկիր, բարձր սարեր, ուր միայն արծիւներն են թռչում... եւ տղը ուկներ... Խրիմեան Հայրիկը եւ նրա արտասունքները: Անդրանիկը եւ Սասունը: Կարօտի մի տաք ալիք լեցնում է հոգիս...

Հայրիկ ջան, սիրելի Հայրիկ: Ո՞ւր ես: Արդեօք նրանք քեզ կը գտնե՞ն:

Կամաց կամաց սկսում է լուսանալ:

XII.

Եապոնն ոսին դցել ա ծովը
Մանջուրէն եկաւ, Պօրտ Արթուրն առաւ:
Ժողովրդական երգ:

Օրերը անցնում են. մի սեւ լուր կայծակի արագութեամբ ճեղքում է օղը, մտնում խրճիթների մէջ, թառում ծխացող օջախների մօտ, ապշութիւն եւ վախ տարածելով ամէն տեղ: Ռուսաստանը պատերազմի մէջ է. մի կռապաշտ ժողովուրդ, ծուռ աչքերով, դեղին մորթով, կռւում է Ռուսաց կայսրի դէմ եւ չար լեզուների ասելով յաղթում: Ռուսաց զէնքը կտրիճ մինչեւ հիմայ, կորցրել է իր ոյժը: Մարդիկ չեն հասկանում դա, չեն հաւատում: Աշխարհը լայնանում է նրանց համար, մտքերը թռչում են սարերից էն կողմը, հեռու երկինքների տակ, ուր ինչ, ինչ անծանօթ չը տեսնած ժողովուրդներ կան:

Մինչ այն, Ռուսաստանը, Թուրքիան, Պարսկաստանը, Եւրոպան էին աշխարհը: Հիմայ Պօրտ Արթուր: Մի ծարք անուն, բայց ո՞րքան զարհուրանք կայ նրա մէջ. այնտեղ ճարտնները, դեղին մարդիկ, ոռուսին ջուրն են գցել: Անյաղթ ոռուսին: Ուրախանա՞լ թէ տիրել:

Գիւղացին տիսուր է. պատերազմը նրանցից շատերի զաւակներն է խլում. հարկերը ծանրանում են նրա ուսերին: օր չի անցնում, որ ժանտարմները այս կամ այն աղքատին, որը հարկերը չի կարողանում վճարել, չը ծեծեն: Ծեծով ի՞նչ կը լինի: Ծեծում են մարդիկ, որոնց գոմում մի կով անկամ չը կայ, որոնք բացի մի քանի չուլերից եւ կաւէ ամաններից ոչինչ չունեն այս աշխարհում:

Ծեծում են եւ ուրիշներին, որոնք մէկ կամ երկու կով ունին գոմում: Ծեծում են եւ խլում նրանցից անասունները: Ինչպէս երէկ կանգ գալուստի կովը: Որքան լաց եղաւ Գալուստի կինը իր հինգ երեխաների հետ, որքան աղաչեց, պաշտեց: Ի զո՞ւր:

Քաղաքումն էլ կեանքը սղում է. գիւղացին աւելի քիչ բան կարող է գնել այնտեղ քան յառաջ: Աղքատութիւնը ներս է սողում ամէն տեղ, կորացնում մէջքերը, աչքերի փայլը մարեցնում:

Ռուսնե՞րը յաղթւում են, անյա՞ղթ ոռուսները: Ծուռ աչքերով մարդիկ նրանցից քաջ եւ խելացի են: Զար հէքեաթ չէ՞ միթէ: Անյաղթ ոռուսները: Որտեղի՞ց են գալիս դեղին ժողովուրդները, նրանք ի՞նչ են ուզում: Երեկոներին մեր տունը լեցւում է գիւղացիներով: Նրանք նստում են թաղթին, աթոռների վերայ, յատակին, մի քանիսը կանգնում դռան մօտ, լուռ չիրսւիները ծխում: Մայրս՝ երեխաներին քնացնելուց յետոյ,

բերում է լրագիրը, ցած ձայնով կարդում։ Ռուսաց զօրքերը
նահանջում են. ի՞նչ ամօթ։

«Են մեր սուրբ Հաղեւորի, մեր Հայրիկի անէծքն է, որ կա-
տարում է, թէ չէ կռապաշտ ճարոնը ո՞վ, ոռւսաց թա-
գաւորը ո՞վ» ասում են գիւղացիք, բարի Աստուածը չէր կա-
րող նրա արցունքները կուլ տալ եւ պատժեց «Ռուսին» Հայոց
վիրաւորանքների համար»։

«Գուցէ ցարը զգում է Հայրիկի անէծքը իր դիմին, դրա
համար է նրա օրհնութիւնը ուղում»։

«Օրհնութիւն է ուղում, բայց շարունակում է մեղ նե-
ղացնել»։

«Յարին չի կարելի հաւատալ, այսօր այսպէս է, վաղը
այնպէս»։

«Եւ աղ ու հաց մոռացող»։

«Բաւական չէ որ մեղ օր ու արեւ չի տալիս, արդելում է
մեղ օգնել մեր եղբայրներին սահմանի էն կողմը։ Հալածում է
«Ընկերութեան» մարդկանց, ձերբակալում»։

«Իմ ատելութիւնը «Ռուսի» դէմ սկսեց այն օրից, երբ
Միհրանը, որին ես այնքան զոհողութիւններով դպրոց էի
տւել, լաց լինելով տուն եկաւ եւ ասեց. «Ղաղախները դուրս
արեցին մեղ, Հայոց դպրոց էլ չը պէտք է լինի, դոները փա-
կեցին»։

«Ահա մի դար է, ասում է Հայրիկս, մենք կապել ենք մեր
բախտը ոռւսի հետ, երազելով, որ ոռւս ցարերի ձեռքի տակ
մենք աւելի ազատ եւ ապահով կ'ապրինք քան սուլթանների
երկրում։ Մարկութիւնից, բնաջնջումից ազատելու համար
մենք պարզեցինք մեր ձեռքերը Տաճկաստան յառաջացող ոռւս
զինուրին, նրան ճանապարհներ ցոյց տւինք, չէ՞ որ երկիրը
Հայի երկիրն է եւ մենք ճանաչում ենք մեր լեռների ծակ ու

ծուղակները։ Ռուսի հետ հաւասար կուեցին հայերը ողեւո-
րւած իրենց դահիճների՝ թուրքերի դէմ։ Հայ դեներալները
կաղարեւ, թերութով, կոսիս-Մելքոնվ եւ քանի՛ ուրիշները
վերցրին անառիկ բերդերը, աւելի եւս բարձրացրին Ռուսաց
սրի հոչակը, հայ քահանաները խաչով, խաչվառվ առաջնոր-
դեցին ոռւսին՝ հաւատալով, որ նա իւաչակի ր է, քը ի ս-
տոն եան երի պաշտպան։ Եւ ահա այդ ոռւսը դա-
ւաճանում է հայ ին։ Էլ ի՞նչ տարբերութիւն Ռուսուց
ցարի եւ կարմիր Սուլթանի Արդուլ-Համիդի մէջ։
Մահմանի էն կողմում, Հայոց հինաւուրց երկրում, սուլթանը
անխնայ կոտորել է տալիս հայերին, նրանց իսպառ բնաջնջելու
համար, իսկ է՞ստեղ։ Ի՞նչ տարբերութիւն ուրեմն քը ի ս-
տոն եայ ի եւ անհաւատի մէջ»։

«Թուրքը սիրու ու խիղճ չունի, նա սարուկ պահեց մեղ,
չարչարեց։ Նա մեր երկրի մարտին է, որը ուտում է մեղ,
ոչնչացնում։ Այնքան դարեր նրա բոռնցքի տակ կոտորւե-
ցինք, բայց էլի կարողացանք պահել մեր ազգային տիպը, մեր
լեզուն, մեր կրօնը։ Հիմայ քը ի ստոն եայ տէրերի՞ եր-
կրում պէտք է ոչնչանանք, ձուլման ենթարկւենք, ամաշենք
մեր հայ լինելուց, մեծ փառք համարենք որ կուլ ենք դալիս
«ոսի» աղահ ստամոքսում։ Թուրքը սպաննում է մեր մարմինը,
ոռւսը մեր հոգին. ո՞չ. տարբերութիւն չը կայ քը ի ստո-
ն եայ ի եւ մահ մեղականի մէջ։ Յարն ու սուլթանը
իրար ձեռք են տւել մեղ ոչնչացնելու համար։ Երկու կրածի ի-
մէջ ենք մնաց ել»։

Լսում են մարդիկ, իրենք էլ խօսում, խորը հառաչում,
ծխում իրենց ծխամորձները։

«Բախտի բան է, ասում են նրանք, մի լաւ օր չը տեսանք».

երեւի անիծւած ենք . տեսնես Աստուած մեր ո՞ր մեղքերի համար է մեղ պատժում» :

«Ի՞նչ անէծք , ի՞նչ մեղք . եթէ այդպէս լինէր , աշխարհում էլ մարդ չէր մնայ , ասում է հայրս . տեսէք մեր Հայրիկին , նրանից էլ արդա՞ր մարդ , բայց ինչո՞ւ է այսօր ծերութեան հասակում տանջւում մեղ հետ» : Ու հայրս պատմում է Խրիմեան Հայրիկի կեանքից . «Թող ամաչեն մեղ դաւանափոխ անողները , անցեալ գարում երբ Վանում եւ Տարօնում սովէ է ընկնում , Հայրիկը Վարագայ վանքի առաջնորդն էր . իսկոյն օգնութիւն է կաղմակերպում քաղցածների համար , զրամ է հաւաքում Պոլսոյ եւ ուրիշ քաղցածների հարուստ հայերից եւ ան խտիր բաժանում բոլոր աղքատներին , լինէին նրանք հայ , թուրք թէ քուրտ : Մահմեղականները զարմացել էին : Մի օր մի քանի երախտապարտ քիւրտեր գալիս են Հայրիկի մօտ եւ խնդրում նրան , որ իրենց մկրտի , իրենց էլ Հայրիկի լոյս հաւատի դարձնի : Հայրիկը մի պահ մտածում է եւ յետոյ ասում . «Որդիք , Աստուած ձեղ հետ , քաղցն է ստիպում ձեղ այդ քայլը անել . քրիստոնեայ դարձէք երբ կուշտ էք եւ ինձ պէտք չունէք» :

«Է՞հ , էն մեր Հայրիկն է , նրա նմանը կա՞յ աշխարհում» կանչում են մարդիկ հիացած :

«Լա՛ւ . էլ ինչո՞ւ է պատժում նրան Աստուածը : Ո՞չ , Աստծու պատիժ չէ այս եւ ոչ էլ մեր ճակատագիրը . մենք ենք մեղաւոր մեր դժբախտութիւնների համար , պէտք է դիմադրել չարութեան , պէտք է կուել բոնաւորների դէմ : Հասկացա՞ք : Այնտեղ սահմանի էն կողմում մեր տղերքը կուում են քաջարար սուլթանի դէմ . պէտք է այստեղ էլ կուենք» :

«Կուենք . կեցցէ Դաշնակցութիւնը» :

Զայները հետզհետէ ցածանում են . սենեակը անհետանում աչքերիցս . ես քնում եմ :

XIII.

Կուում էր Ռուսաց ցարը ճարոնի դէմ հեռաւոր Մանջուրիայում , անթիւ անհամար զոհ էր տալիս եւ պարտում ամօթահար : Սասունը զզրդում էր Անդրանիկի գնդակներից , արիւն էր հոսում այնտեղ եւ մեր տանից անցնում էին շարքերով Հայդուկները ու գնում նրան օգնութեան : Հայրս միշտ եռ ու գեռի մէջ էր , նա անհետանում էր շաբաթներով եւ նրա ո՛ւր լինելը ոչ ոք չիտէր : Ոստիկանները վիտուում էին նրան , հիմայ նրանք յաճախ , շատ յաճախ էին գալիս մեր տունը : Մենք դողում էինք վախից եւ զզւանքից : Նրանք քանի զնում վատանում էին . հայհոյում էին , հարւածում մարդկանց , հրում էին մօրս եւ տատիկիս մեր աչքերի առաջ , երբ նրանք փորձում էին որ եւ է մէկին պաշտպանել , եւ միշտ ծեծում էին խեղճ Ռուբենին : «Թուրքերի զավտիեների նման , քիւրտերի կէսը լինեն կարծես» շնչում էր Մարանը սարսափած : Մենք ոչ մի գիրք չունէինք այլեւս պահարաններում , ոչ մի նկար պատերին , բացի թագաւորի մեծ գունաւոր պատկերից : Բոլորը մայրս թաղել էր մեր մարագում : Նա յաճախ պատկրում էր մեղ որ կտուր բարձրանանք , լլտեսենք . եւ երբ ժանտարմերին տեսնենք , շտապով ցած իջնենք եւ իրեն իմաց տանք : Բայց նրանք միշտ գիշերով էին գալիս , կարծես ամաչում էին լոյսից :

Մի երեկոյ ոստիկանների սպան երկար բղաւեց եւ աղմկեց : Տասոս իսկոյն ձուածեղ պատրաստեց , օղի գրեց սեղանին , տանը ինչ լաւ ուտելու բաներ կային՝ հաւաքեց , գրեց նրա առաջ , եւ խնդրեց նրան վերարկուն հանել եւ ուտել : Սպան ազահ , ազահ ուտում էր , իսկ մենք երեխաներս չը համարձակւելով անկողին մտնել , լուռ կանգնած նայում էինք : Նա մի տգեղ մարդ էր , չեչոտ երեսով , սուր փոքրիկ աչքերով եւ կէս թա-

փած քթով : Այս թափած քիթը ամենասոսկալին էր նրա դէմքի վերայ : Նա խօսում էր կոտրտւած հայերէն : Յանկարծ վեր կացաւ, մօտեցաւ ինձ, գրկեց, վերեւ բարձրացրեց եւ նորից նստելով՝ ինձ ամուլ սխմած դրեց ծնկներին : Զարմանքից եւ վախից ես ոչ մի ծալտուն չը հանեցի : Նա փաղաքշում էր ինձ : «Հը՛, փոքրիկ, չե՞ս ուղղում ինձ հետ ուտել, դեհ խմիր եղնիկ» . եւ նա օղիի բաժակը մօտեցրեց շրթունքներիս : Ես մերժեցի զգւանքով : «Լաւ չէ՞ , հը՛ , իսկ սրան ի՞նչ ես ասում», եւ գրպանից քաղցրեղէն հանելով ձեռքիս մէջ դրեց : Դա արդէն չափազանց էր . ես չէի կարող մերժել գոյնգոյն թղթերով եւ նկարներով կոնֆետները : Ես կակլեցի եւ սկսեցի ախորժակով ուտել նրանց : Սպան մի պահ նայում էր զւարճացած . յանկարծ կոացաւ ականջիս, շնչեց . «Եթէ դու ինձ ասես հայրիկիդ տեղը եւ ցոյց տաս գրքերի եւ հրացանների պահեստանոցը, քեզ աւելի շատ կոնֆետ կը տամ» : Անգիտակցաբար մօրս նայեցի . նա մեռելի գոյն ստացած, զղայնօրէն կրծում էր շրթունքները : «Ես, ես չը գիտեմ հօրս տեղը» բղաւեցի ես եւ լաց եղայ : «Դեհ մի լաց լինի, յիմար, ես քեզ ոչինչ չեմ անի . դու խօմ գիտես, որ ես քո «հօրեղբայրն» եմ, հօրդ շատ լաւ եմ ճանաչում եւ միայն կ'ուղեմ իմանալ նրա ո՞ւր լինելը» : Նորից մօրս նայեցի անհար : «Ես չը գիտեմ» բղաւեցի ես ինձնից դուրս եկած : Յանկարծ նա կատաղութեամբ կղմտեց ստքս, քաշեց ականջս եւ գոռաց . «Սատանի՛ պտուղ . ցեղիդ նման խորամանկ, հիմայ ինձ կ'ասես թէ հայրդ ո՞ւր է թափառում» : Վախից, վիրաւորանքից եւ ցաւից ես կորցրի գլուխս եւ բոլորի համար անսպասելի, կոացայ եւ ամբողջ ուժով կծեցի ինձ տանջողի ձեռքը : Զը նայած հարւածներին՝ ես նրա ձեռքը բաց չէի թողնում, մինչեւ տատսու, որ չնչասպառ ներս էր վազել հարեւան սենեակից, ուր նա պատուում էր ոստիկան-

ներին, յարձակւեց վրաս եւ բռնօրէն կորզեց ինձ նրա ծնկից : Սպան կատաղել էր, նա բղաւում էր, որ մեզ բոլորիս շանսատակ կ'անի եւ նորից բռնեց ինձ ու ապտակելով պահանջում էր, որ ես անսպայման ասեմ հօրս ո՞ւր լինելլ : Ես խփում էի նրան ոտքերով, մի կերպ աղատւել էի ուղում նրանից, գոռում դոչում էի, եւ միւս երեխաները ձայնակցում էին ինձ : Մայրս եւ տատս համոզում էին անխղճին, որ նա ինձ բաց թողնի, ոչինչ չէր օգնում : Կատարելապէս հարբած եւ գաղազած՝ նա իմ պատախանն էր պահանջում : Յանկարծ ես հանդարտեցի, մտածեցի մի քանի վայրկեան եւ համարեա յաղթական, ուղիղ սպայի հարբած աչքերի մէջ նայելով ասեցի . «Ես հայր չունեմ, ոչ մի հայր երբեք չեմ տեսել, երբեք մէկին այդ անունով չեմ ճանաչել» : Ապշած նա նայեց ինձ մի բոպէ եւ յետոյ որոտաց . «Անիծւած երկիր, որ այսպիսի սրիկաներ է ծնում», ոտքով ինձ պատին շպրտեց, թքեց յատակին եւ դուրս թուաւ, դուռը յետեւից խփելով : Մենք գեռ երկար լսում էինք նրան վայրագորէն դես ու դեն վաղելիս : Մայրս դրել էր գլուխս ծնկներին : Ես ցաւ էի զգում, բայց չէի լաց լինում : Ես այնքան դժբախտ էի : Վերջապէս ներս մտաւ տատիկս, յարձակւեց ինձ վրայ, համբուրեց աչքերս, ինձ թեւերի վերայ վերցրեց, սեղմեց կուրծքին . «Ո՞րքան ծանր ես, բալիկ ջան, արեւիդ մատաղ, բերանիդ մեռնեմ» եւ լացեց ու ծիծալեց միաժամանակ :

* * *

Ես հիւանդ եմ . դլուխս ցաւում է, մարմինս կարծես ջախչախւած է : Մարանը, մեր հայթուխը, «չափում է վախս», աղօթում որ անցնի : «Թո՛ղ բալամ, թո՛ղ, լեղիդ ճաքել է, թո՛ղ չափեմ, եթէ ոչ ամբողջ կեանքումդ ուրախ օր չես տեսնի . թող վախտ բռնեմ, որ հեռանայ քեզանից», ասում է նա, վերց-

նում է իր գօտին եւ ձեռքի թղով չափում է նրան։ Մի կտոր աւելորդ է մնում, թիզը չի տեղաւորում նրա վերայ եւ Մարանը այդ մնացորդից մի ամուր հանգոյց է կապում։ «Հիմայ բոնեցինք վախը», ասում է նա եւ անհասկանալի խօսքեր մրմնջում։ Նա ենթադրում է որ ինձ նոյնպէս «չար աչք է» դիպել, վերցնում է մի ասեղ, աղ եւ հաց եւ ասեղը անընդհատ բերանին մօտեցնելով, աղօթում է։

Չար աչքը չար վշին,
Չար փուշը չար կրակին.
Չար աչքը դռնից ներս եկաւ,
Աչքը խաւրի, արեւը մարի,
Չեռքը անդամալոյց լինի.
Բիբարը լեզւին ցանենք,
Թող էլ չը դայ մեր դուռը։

Աղօթքի ժամանակ նա շարունակ յօրանջում է, աչքերը լեցում են արտասունքներով։ «Տես, ո՞րքան ուժեղ է չար աչքը, ի՞նչ դժւար է դուրս դալիս», ասում է նա, խրում է ասեղը բարձիս, հայը եւ աղը տալիս է չներին ուտելու։ Մայրս ժպտում է յոռեակես։ Նա երեւի չի հաւատում Մարանի կախարդաններին։ Սա վիրաւորւած պատմում է։ — «Ես էլ մի օր վախեցել եմ, ին մեծ սպանութեան ժամանակ։ Անօրէնները սպաննեցին աչքերիս առաջ մօրս եւ հօրս»։ «Ո՞վ, Մարան, ո՞վ սպաննեց նրանց»։ «Թուրքերը, բալիկ, նրանց սուլթան Արդուլ-Համիդը, գլուխ տանի նրան, այդպէս էր հրամայել։ Ամբողջ Մուշը, իմ վաթանը աւերեցին։ Եղայրս եւ ես փոքր էինք այն ժամանակ, մտանք թոնիրի մէջ։ Երբ կոտորածը վերջացաւ, դուրս եկանք թոնիրից, մեծ դժւարութիւններով քաշեցինք մեր ծնողների դիակները տնից դուրս եւ

թողինք փողոցում։ Մաքրեցինք խրճիթը եւ մի անկիւնում կծկւեցինք։ Ահից դուրս չինք դալիս։ Քաղցը մեղ տանջում էր։ Մի երեկոյ մէկը ճանկուում էր մեր դուռը։ Մենք ունոց էինք լսում։ Գայլն էր։ Մեր խրճիթը գետնափոր էր։ Գայլը կտուր բարձրացաւ, ուղում էր երդիքից ներս ընկնել։ Գայլը կերել էին բոլոր դիակները։ Ցուրտ ձմեռ էր, նրանք քաղցած էին, մեր հոտն առել եկել էին։ Ա՛խ, ի՞նչպէս էինք վախւնում։ Անկիւնում կծկւած ձայն ու ծպտուն չինք հանում։ Գիշերը ա՛յնպէս երկար էր։

«Բարեբախտաբար հողը սառած էր եւ գայլը չէր կարող իր թաթերով լայնացնել երդիքի ծակը։ Յետոյ բարի մարդիկ գտան մեղ կիսամեռ, ինամեցին մեղ։ Նրանց հետ էլ փախանք գարնան բացւելուն, եկանք ձեղ մօտ մուսահայաստան։ Բարի Տատիկ ինձ իր տանը ընդունեց եւ իր աղջկայ նման պահեց։ Բայց դեռ այսօր սարսափով եմ յիշում այն սոսկալի գիշերը։ Մութ գիշերներին դեռ տեսնում եմ ծնողներիս դիակները եւ դայլերի արիւնածարաւ աչքերը»։

«Մարան, թուրքերը ձեզ ինչո՞ւ էին կոտորում»։

«Ես ինչ գիտեմ, բալիկ, մեր ճակատին էզ է գրւած։ Պէտք է համբերենք, գուցէ մի օր Աստուած ողորմի եւ ազատէ մեղ»։ «Մարան, ասում է խստօքէն մայրս, երեխային ուրախ բաներ պատմիր, ի՞նչ ես հին դարմանները էրնում»։

«Ա՛խ, քոյրիկ ջան, ուրախ օրեր տեսե՞լ եմ, որ նրանցից պատմեմ», ու Մարանը հեռանում է ինձանից։

Նորէն գլուխս տենդօրէն աշխատում է։ բայց շատ բան անլուծելի է մնում, անհասկանալի։ Ինչո՞ւ է մեր դժբախտութիւնը մեր ճակատին դրւած։ Տատիկս ասում է։ «մենք դժբախտ ժողովուրդ ենք», ինչո՞ւ։ Ինչո՞ւ Աստուած, լոյսի Աստուածը, որը բարի է, մեղ տանջւելու համար է ստեղծել։

ի՞նչ ենք արել նրան : Հայրիկս ասում է , որ բոլոր ժողովուրդ-ները արեւի տակ տեղ պէտք է ունենան , պէտք է ազատ եւ խար-դադ ապրեն իրենց հայրենիքում . ինչո՞ւ հայերը չեն կարող այդ : Գուցէ մենք վատ ենք : Ո՞չ , մենք վատ չենք : Մա-րանը վատ չէ : Հայոց Հայրիկի խոչոր աչքերը միքը բարու-թեամբ եւ կարեկցութեամբ առաջս են : Մենք վատ չենք , մենք վատ չենք , բարի Աստուածը չի կարող պատժել մեզ , նա չը պէտք է անի այդ — եւ ես անմիտիթար լաց եմ լինում :

Տաքութեանս մէջ մի անճոռնի , զգւելի դէմք , մանր սեւ չեշերով պատած , առանց քիթի , պսպղուն , ծակող աչքերով , գալիս կռանում է դէմքիս , ես զգում եմ նրա հաստ շրթունք-ների տաքութիւնը , շունչս կտրում է եւ ես ճչալով վեր եմ թռնում անկողնից : Այդ սոսկալի դէմքի մէջ է աշխարհի ամ-րողջ չարութիւնը : Ես այնքան եմ ատում նրան , որ սիրու ցաւում է զգացմունքիս խորութիւնից : Աշխարհը բոլորովին փոխում է ինձ համար : Տատիկիս հէքեաթների դեւերը եւ չարքերը հիմայ սուլթանն է սահմանի էն կողմը , եւ ոստիկան-ները մեզ մօտ : Սուլթանին ես չեմ տեսել , նա հեռու է , բայց ոստիկաննե՞րը : Տատիկիս ատելութիւնը դէպի «սոլիսերը» — այդպէս է անւանում նա ոստիկաններին — փոխադրում է ինձ : Ես հասկանում եմ հիմայ , թէ ինչո՞ւ տատիկս երբեք չի նայում թագաւորի պատկերին : Նա ատում է նրան :

Ես մտածում եմ . սուլթանը եւ ցարը Հայոց երկրի վիշապ-ներն են : Նրանք նստել են մեր երկրի աղբիւրին եւ ամէն օր ոստիկաններ են ուղարկում մեզ մօտ , որոնք ծեծում են մարդ-կանց , հրում , Սիրիրի սառնամանիքները աքսորում , որ այն-տեղ ցրտից մեռնին : Սուլթանը սպաննում է մարդկանց եւ գայլերը ուտում են նրանց դիակները : Երկու կրակի

մէջ ենք եւ այլու ու ում ենք : Երկու վիշապներ խեղդում են մեզ :

Արդեօք մէկը չէ՞ կարող գալ եւ մեզ աղատել այդ սոսկալի հրէշներից : Անդրանիկը . բայց նա այնքան հեռու է : Հայդուկ-նե՞րը : Ո՞ւր է հայրս :

Տասս եւ մայրս հերթով նստում են մօտս , ձեռքս ձեռքերի մէջ : Որովհեաւեւ ես վախիենում եմ , մայրիկս ինձ իր մօտ է քնացնում եւ իր ձեռքը , ամբողջ գիշերը գլխիս վերայ է : Ցերեկը ես նրան հանգիստ չեմ տալիս իմ հարցումներով : Եւ մայրս պատմում է ինձ Հայերի պատմութիւնը կարճ , պարզ խօսքերով ինչպէս մի հէքեաթ : Բայց ի՞նչ սոսկալի պատմու-թիւն է Հայոց պատմութիւնը : Միշտ երկու կրակի մէջ , միշտ տղոււկներից ծծւած , վիշտապների թունաւոր չնչից աւերակ եւ արիւնլայ :

Ես հասկանում եմ . ես շատ բան եմ հասկանում եւ հե-ռանում եմ իմ հասակակիցներից : Մայրս խօսում է ինձ հետ ինչպէս մի հաւասարի հետ : Ես մտերմանում եմ նրա հետ . պատկառում նրանից . զարմանում եմ թէ ո՞րքան բաներ գիտէ նա : Նրա պարզութիւնը , նրա խօսքերի կարճութիւնը թափան-ցում են ուղեղիս մէջ : Ինչ որ ես դլխով չեմ հասկանում , դդում եմ սրտով :

Ես մօրս եւ տատիս հաւասար եմ սիրում :

XIV.

Այդ ժամանակներն էր որ մեր գիւղը մի տարօրինակ հիւր էր գալիս , խորը տպաւորութիւն թողնելով բոլորի վերայ , իր վերայ քաշելով իմ ամբողջ ուշադրութիւնը : Նորաշէնցի Մաքոն էր , հասակն առած մի կին , կատաղած աչքերով , գունատ դէմ-քով , գղղղւած մազերով , կիսամերկ , ոտարոբիկ : Իր ասելով

Ամենափրկիչը նրա եղբայրն էր, իրեն պահպանող սուրբը : Նա գիւղ էր մտնում վազելով, բարձր խօսելով, գնում էր ուղղեղ եկեղեցու բակը եւ սկսում զանդերը քաշել : Ամէն անդամ դա մի ահազանդ էր մեր գիւղի համար : Մարդիկ դուրս էին թափւում տներից, լեղապատառ վազում դաշտերից, հաւաքում էին Մաքոյի շուրջը եւ հետալով սպասում էին գլխիկորուու : Երբ բաւական ժողովուրդ էր հաւաքւում, Մաքոն դադարեցնում էր զանդը, ժպտում ցնորւած եւ ամէն մի խօսք ժուրճով խփելով ասում էր . «Մշու սուլթան սուրբ Կարապետը, սուրբ աղբերս Ամենափրկիչը գիշերն եկան, խարբար բերին . Կարկուտ կու գայ, սնկ կ'ընկնի, կոիւ կ'ելնի, արոն կը թափւի, շա՛տ արուն, ա՛խ . Հողը գլխներիդ, չոքէք, չոքէք, սրբերին կանչէք, մատաղ տւէք, Աստծուն յիշէք, փրկւէք» : Ասում էին, որ նրա գուշակութիւնները երբեք սուս չէին դուրս եկել, դրա համար կանայք սարսափահար լաց էին լինում, երեխանները ճշում, իսկ տղամարդիկ յուսահատ խաչ էին հանում : Ամբողջ գիւղը բացի իմ ծնողներից եւ Յովհաննէս վարժապետից հաւատում էր, որ սուրբերը խօսում էին Մաքոյի բերանով, որ նա մի տեսակ մարդարէուհի է, գիւղացիք վախենում էին նրա անհծքից եւ ամէն ինչ գործ ածում նրա սէրը շահելու համար : Հայրս համոզում էր նրանց, որ Մաքոյին չը հաւատան, որ նա խելազարի մէկն է, հիւանդ է . ի զո՞ւր : Գիւղացիք յարգում էին հօրս նրա ուսման համար, բայց դատապարտում էին նրան, որովհետեւ նա եկեղեցի չէր զնում եւ երեսը խաչ չէր հանում, նրան գիւղացիք «Փարմասոն» էին ասում : Բայց հայրս ստիպւած եղաւ բոլորովին լուելու . եւ այլեւս չը խառնւեց գիւղի կրօնական գործերին :

Ամառայ մի տօթ օր էր, յուլիս ամսին, հասկերի ամենալտանգաւոր ժամանակը, երբ գիւղացու սիրտը թրթուում է

կարկուտի վախից : Ամէն օր իր աղօթքներում նա երկնքից լաւ եղանակ է խնդրում, աղաջում, պաղատում Աստծուն, «որ իր արտը, իր աշխատանքը խնայի : Քանի օր էր, որ անձրեւ չէր եկել եւ մարդիկ անձրեւ էին պաղատում : Գիւղի մանուկները մի ցախաւելի շորեր հազցրած նուրի էին խաղացնում . նուրին ձեռքերին շրջում էին տանից տուն եւ երգում .

Նուրի նուրին եկել է,
Շալէ շապիկ հաղել է,
Ոսկէ գօտիկ կատել է .
Երկնքից ցող է ուղում,
Գեանից պտուղ է ուղում
Եղ բերէք, պորտին քսենք
Զու բերէք, թաթին դնենք :

Բոլոր տներում լինելուց յետոյ, երբ բաւական մատաղացու իւղ եւ հաւկիթ էր հաւաքւել աղքատներին բաժանելու համար, նուրիին ջուրը գցեցին, բոլորը շորերով գետում լուզացան անձրեւ կախարդելու համար : Ի զո՞ւր : Անձրեւ չեկատ : Ահա այդ տօթ օրին, երբ ամենը անձրեւ էին աղաղակում, յայտնեց Մաքոն եւ նորից մի խելազար ճառ արտասանեց : Պատահմամբ հայրս անցնում էր եկեղեցու մօտից : Նա կանգնեց, մի վայրկեան նայեց ժողովրդին, Մաքոյին, եւ յանկարծ շոտակ, բայց հաստատ քայլերով մօտեցաւ խելազարին, բռնեց նրա ձեռքից եւ մի կողմ շպրտելով ասեց . «Կոռիր խելառ, այլ եւս չերեւաս աչքերիս . ի՞նչ ես վախեցնում անմեղ մարդկանց քո յիմար խօսքերով» : Մաքոն կատաղեց, յարձակեց հօրս վերայ եւ նրա մօրուքից բռնելով ճաց . «Մատանայ է, ստոանայ . կործանուի սանդարապետը» եւ նա հե-

կեկաց ու հոհոաց : Հայրս հրեց նրան եւ յուղւած դարձաւ ժողովրդին . «ամօթ է, գնացէք ձեր գործին . ի՞նչ էք կանդնել մի խելարար կնոջ ցնորքները լսում» : Մարդիկ լուռ էին , շիոթւած : Յանկարծ Մաքոն ձեռքերը երկինք բարձրացրեց եւ գոռաց . «Թող կարկուտ դայ, տունը քանդւի, աշխարհը քանդւի, սատանաց է» . եւ մազերը փետելով, փախաւ գնաց :

Սպիտակ ամպերը, որ առաւօտից վախեցնում էին գիւղացիներին, մթնեցին, քամին բարձրացաւ, օդը սառչեց : Կարս կուտի ամպեր էին : Շնչառապու մարդիկ եկեղեցի վաղեցին, դանդերը ահազանդեցին : Տէրտէրը դուրս հանեց Ամենափրկիչը եւ ժողովուրդը յետեւից դցած անցաւ յորդառաստ անձրեւի տակ դաշտից դաշտ . բայց անձրեւը կարկուտի փոխւեց, երկինքը անողորմ էր, Ամենափրկիչը չօգնեց : Կարկուտը ոչնչացրեց մի տարայ աշխատանքը, յոյսերը, ապրուստը : Դիւղը թշնամացաւ հօրս հետ : Ասում էին, որ մեր արտերը ամենից շատ էին վաստել : Հայրս տխուր ժպտում էր : Նա լուռ էր :

* * *

Բայց դիւղը չուտով մոռացաւ կարկուտը : Դէպէրը արագ արագ կուտակում էին մէկը միւսի վերայ : Անդրանիկը՝ երկար եւ հերոսական կոխներից յետոյ, թողել էր Սասունը եւ գնացել անյայտ ուղղութեամբ : Նրա հեռանալուց յետոյ տաճիկ կառավարութիւնը հազարներով կոսորել էր տել Սասունցիներին : Զարհուրելի բաներ էին պատմում : Ցարը եւ սուլթանը բարեկամացել էին : Օլթիի մօտ, սահմանը անցնելիս խմբավետ թումանը գերի էր ընկել իր զինուրների հետ եւ ոչխարի նման մորթւել կողակների եւ թուրք սահմանապահների ձեռքով, որոնք եղբայրօրէն բաժանել էին հայդուկներից թալանած իրերը : Շշուկով խօսում էին, որ կողակները

թուրքերից վայրագ եւ անխիղմ էին դանւել : Պատմում էին, որ երբ թումանը իր խմբի տէրտէրին խաչով եւ աւետարանով ուղարկել էր կողակների մօտ, որ նրանց բացատրէ, թէ խումբը դնում է Տաճկաստանի դէմ եւ ոչ մի թշնամութիւն չունի ուռաների հետ, կողակները խլել էին խաչը քահանայի ձեռքից եւ նրան թուրք զինւորների աչքերի յառաջ դանակ-ներով մորթել : Խուսացման քաղաքականութիւնը շարու-նակւում էր նոյն թափով . Հայոց եկեղեցական կալւածքները զեռ գրաւուած էին, ժողովուրդը մոլորւած էր սահմանի եր-կու կողմերում եւ սուգի մէջ էր : Բայց ուսւ թագաւորը պար-տում էր, հա, պարտում ճարոնից . քաղաք քաղաքի յետեւից զիջում նրան : Ամբողջ երկրում գժողոհութիւն էր տիրում, սկսում էին բանորական գործադուլները : Մի սոսկալի փո-թորիկ էր պայթում Խուսաստանի վերայ : 1905 թ . յունաւրի 9ին ցարը հրացանների կրակով լնդունեց Պետերբուրգի բա-նորների խաղաղ ցոյցը : Նրա այդ վարժունքը ազգանշան-դառաւ ուռասական առաջին յեղափոխութեան : Ճնշւած ժողո-վուրդները ըմբռաստացան իրենց զահիճների դէմ : Խուս ժո-ղովրդի գարերով հաւաքւած ատելութիւնը եւ զայրոյթը չվթացազերծ եղաւ . մարդիկ այլեւս չէին կարող զսպեւել : Նրանց նորից հլու հպատակ անելու համար կառավարութիւնը ամէն տեսակ միջոցի դիմեց, որոնք յայտնի են աշխարհին : Բայց կովկասում նա սատանայական միտքը յդացաւ ազգը ազգի դէմ հանելու եւ ազգայնական մութ ատելութեան մէջ խեղել յե-զափիսութիւնը : Հողը գարերով պարարտ էր : Դա մի փոր-ձւած մեթոդ էր, որ բոլոր մեծ պետութիւնները գործածում են մարդկային պատմութեան սկզբներից : Այդ մէթոդը լաւ պատզներ էր տալու ազգերով հարուստ կովկասում : Փե-տրուար ամսին մոլեռանդ, խաւարամիտ թաթարները յար-

ձակւեցին Բաղրամ անմեղ Հայերի վերայ եւ կոտորեցին նրանց ոռւս ոստիկանութեան աչքերի առաջ, որը այդ օրերին յանկարծ «անճար» էր, խաղաղութիւնը վերականդնելու համար: Նոյնը կրկնեց Երեւանում եւ Ելիսաւետօպոլում: Վրացիները չեզոք մնացին եւ չարախնդօրէն գիտում էին տեսարանը: Յետազայում քննութիւնները ցոյց տւին, որ Թաթարներին ինքը ոռւս ոստիկանութիւնն էր զինել: Երբ Հայերը տեսան, որ Թուսաստանը նրանց չի օգնում, որ նոյնպէս կովկասում մի «հայկական հարց» էր ծագում, զինք վերցրին եւ պաշտպանեցին որքան որ կարող էին: Դաշնակցութիւնը եղաւ նախաձեռնողը: Արիւնալի կոփաներ տեղի ունեցան, որոնք տեւեցին ամբողջ երկու տարի: Անդրկովկասը խեղդուում էր արիւնի մէջ: Մուս յեղափոխութիւնը մոռացեց աղքայնական կրքերի չորհիւ, ցարիզմը հասաւ իր նպատակին: Եւ ահա կառավարութիւնը պատժող արշաւախումբեր ուղարկեց գիւղերը եւ քաղաքները, որոնք աւելի մեծ դժբախտութիւն առաջ բերին քան արդէն եղել էր: Կողակները ծեծեցին, թալանեցին, բոնարեցին Թաթարների նման եւ այդ ամէնը յանուն «կարգ ու կանոնի»:

Մեր գիւղին շատ կից, Արփաչայի միւս ափում գտնուում էին երեք թաթարական գիւղեր: Հայերի եւ Թաթարների յարաբերութիւնները մինչ այն խաղաղ էին, կարելի է ասել եղբայրական էին: Թաթարները յաճախ մեր ջրաղացն էին գալիս, միս եւ ուրիշ մթերքներ վաճառքի բերում: Նրանք հօրս մօտ էլ էին անցնում, երբ կառավարութեանը որ եւ է ինդրագիր տալ էին ուղում, եւ հայրս առանց վարձատրութեան գրում էր նրանց խնդիրները ուղարկեն լեզուվ: Մենք մի արտ ունէինք, որ Արփաչայի եղերքին, ուղիղ թաթար գիւղի՝ Թուրքի Ղարաքիլսայի մօտն էր գտնուում. ամառը հետ մենք

յաճախ այնտեղ զրօսանքի էինք գնում: Դա մի տօն էր ամբողջ ընտանիքի համար: Վերցնում էինք մեղ հետ ինքնաեռը եւ ուտելու պաշարը. կանանչի վերայ սեղանի ծածկոց էինք վրում, ինքնաեռը ուրախ երգում էր, Արփաչայի ջուրը ձայնակցում էր նրան: Թուրքի Ղարաքիլսայում մենք մի լաւ ծանօթ ունէինք, Արաս աղան, որը պաշտպանում էր մեր արտը իր ազգակիցներից, որպէս զի նրանք հոմանքի ժամանակ՝ իրենց վատ սովորութեան համեմատ՝ մեր ցորենը չը գողանային: Արաս աղան մի բարեծեւ գեղեցիկ տղամարդ էր, կողակի կապոյտ հազուստով, գոտում մի մեծ արձաթի խանչալ: Հենց որ նա մեղ իր տանից նկատում էր, իսկոյն գալիս էր մեղ մօտ իր երեք կնիկների հետ: Հրաշալի պղնձէ ամանները գլուխներին դրած նրանք բերում էին թարմ մածուն, եփած հաւկիթ, պանիր, ինչ որ տանը գտնուում էր եւ պատում էին մեղ: Կանայք չէին ուղում նստել տղամարդկանց հետ. մի կողմ էին քաշում եւ մենք միանում էինք նրանց: Արաս աղայի երկու կանայք իրենից աւելի տարիքով էին, մէկը միականի էր եւ տղեղ, եւ միեւնոյն ժամանակ նրա հօրաքոյրն էր: Բայց փոքր կինը, Թաթման, մի թարմ գեղեցիկ արարած էր: Նա փոսիկներ ունէր այտերի վերայ, լաւ երգել եւ սրտանց ծիծաղել գիտէր: Մենք չէինք հասկանում նրա լեզուն, բայց սիրում էինք նրան եւ ամէն անգամ նրա ներկայութիւնը մեղ համար տօն էր: Մենք յաճախ նրան մեղ հիւր էինք հրաւիրում, բայց նա միշտ ցոյց էր տալիս տղեղին եւ ծիծաղելի շարժմունքներով հասկացնում էր մեղ, թէ այդ միւսը թոյլ չէ տալիս նրան գալ մեղ մօտ:

Եւ ահա այդ յարաբերութիւնները պէտք է կտրւէին. Երկու գիւղերը սկսեցին վախենալ միմեանցից: Ամէն մէկը զինուում

էր եւ գիշերները յարձակումի սպասում։ Նոյն իսկ Մահմատը, մի կէս խելադար երիտասարդ, եւ Ալաբեկարը՝ կարմիր մօրուքով, երկուսն էլ մուրացկաններ, որոնք ամէն օր մեր գիւղն էին դալիս, անհետացան։ Մահմատի համար մենք նոյն իսկ քնքոյց գդացմունքներ ունէինք։ Նա հասարակ մուրացկան էր, նա մի լաւ գերասան էր։ Երբ մենք առում էինք նրան. «ցոյց տուր, ի՞նչպէս են ոռուսները», նա իսկոյն ձեռքի փայտը ուսին էր դնում, դէմքին խիստ արտայայտութիւն տալիս եւ զինուրական մի քայլերդ սուլելով ուղղաձիդ եւ աշխոյժ անցնում էր մեր առաջից։ Նա նոյն իսկ ոռուսներէն մի քանի խօսքեր գիտէր։ Դա մեզ շատ էր զուարձացնում, մանաւանդ երբ նա սկսում էր «կրակել» իր փայտով։ Մենք նրան միշտ առատորէն հաց եւ ալիւր էինք տալիս եւ երբեք չէինք մտածում, որ նա թաթար է։

Գիւղը ընկճւել էր, աւելի եւս աղքատացել. նա կծկեց, լոեց։ Լոեցին աղջիկների երգերը, դէմքերը խստացան, ժպիտները մեռան։

Ու էն ձմեռ հարսանիքները անշուք էին. կարկուտը կոտրել էր գիւղացու մէջքը, անհամար գործադուների պատճառով յառաջ եկած ապրանքների սղութիւնը աւելի եւս խեղճացրեց բոլորին։ Ու զարմանալի՞ էր, որ ոչ ոք առանձնապէս չը դարձաւ, երբ Տեփոն մեր գիւղի ծաղիկ նարալին հարուստ բաշլուղի համար հեռաւոր տեղերից եկած մի որբեւայրուտեց։ Նաղալն էլ չը բողոքեց. հայի համեստ աղջիկը պէտք է հնապանդւի ծնողներին։ Եւ յետոյ, նաղալի սիրտը վաղուց կոտրւած էր. Ղարաբաղցի Կարօն տարել էր իր հետնրա սէրը, աշխուժութիւնն եւ բաղդաւոր լինելու կամքը։ Պատկեցին նաղալին մի որբեւայրուտ հետ, ամուսնու պատճառով առանց

երաժշտութեան ու երդի տարան նրան, այնպէս էր օրէնքը. եւ նա որ թնդացնում էր օդը իր աշխոյժ եւ անուշ ձայնով, լոեց հնազանդ։ Տարան նաղալին մեր գիւղից եւ աշխարհը աւելի եւս մթնեց ինձ համար։ Օտար, անհասկանալի աշխարհ։

Զմեռը անցաւ վախի եւ թշուառութեան մէջ։ Գարունը ևկաւ։ Մի օր հայրս վերադարձաւ քաղաքից. իր մօտ կանչեց թեմանին եւ բոլոր Ընկերութեան մարդկանց եւ մինչեւ կէս գիշեր ժողովի նստեց նրանց հետ։ Թէ ի՞նչ խօսւեց եւ ի՞նչ պատմեց այդ ժողովում, չը գիտեմ. միայն առաւօտք՝ դեռ լոյսը չը բացւած՝ նա եկաւ մեղ մօտ, բարձրացրեց մեր քնաթաթախ երեսները եւ կարօտով համբուրեց. «Երեխաններ, խելօք կացէք, հնապանդւէք մայրիկինն. ես շուտով կը գամ»։ Եւ դառնալով մօրս՝ «Ուրեմն հիմայ դու իմ աջ ձեռքն ես լինելու. ինչ որ ես էի անելու դու պէտք է կատարես, ես տղերքին ամէն ինչ ասել եմ, նրանք քեզ կը պաշտպանեն»։ Յետոյ անցաւ տատիս մօտ. «Ա՛խ, բալա ջան, ուրիշ մարդ չը կար, դո՞ւ պէտք է անէիր այդ գործը. ախր մէկ ու ճար ես, երեխի տէր»։ «Մայրիկ ջան, ուրիշն էլ ինձ նման մէկն է եւ քեզ նման մայր ունի. հաշիւր նոյնն է, այսօր ես, վաղը նա, սիրտը լայն պահէիր, կնոջս եւ երեխաններին նայիր։ Լուսիկը ջահէլ է, բայց խելօք է եւ քաջ, ես նրան աւելի շատ եմ հաւատում, քան ինձ»։ Տատս լացեց. «Գնա՛, բալա ջան, կամքը ինձ համար սուրբ լինի. հարսի եւ երեխանների մասին մի մտածի, ինչ որ գալու է կը դայ, Աստւած քեզ պահապան»։ «Տեսա՞ր, մերիկ ջան, ես գիտէի, որ դու քաջ ես» եւ հայրս գուլս եկաւ, նստեց ձի, մտրակեց նրան եւ առանց յետ նայելու հեռացաւ։ Տատս լալիս էր անձար. «Լոյսս քուանա, բալա ջան, ոտքերիդ տակի հողը լինեմ»։ Մայրս լուռ էր եւ գունատ։

Մի օր, կիրակնամուտին, տասոս խնդրեց մօրիցս որ զարդարւի եւ եկեղեցի գնայ: Մայրս զարդ չէր սիրում, նոյն իսկ մատանի չէր գնում մատը եւ տասոս շատ անգամ նեղանում էր նրա վերայ այդ պատճառով: «Օդուլ, ջահէլ ես, դեռ սիրուն ես, ինչո՞ւ չը զարդարւես. աշխարհի օրէնք է, կինը առանց զարդի նոյնն է ինչ հացը առանց աղի. տեսնողն էլ կը մտածի, թէ պատի տակից ես դուրս եկել, կամ բոշայ ես: Ոսկիներդ կապիր, օղերը անցրու ականջներդ, մարդարիտները շարիր վիզդ, որ տեսնողը հմայէի, կանդնի սէյրան անի, ասի. Երանի քո տիրոջը»: Մայրս որ ամէն բանում հնազանդւում էր տատիս, բացեց զարդերի արկղը եւ սառած մնաց. արկղը զատարկ էր: «Լուսս քուանա, ասաց տատոս, տեսա՞ր, էնքան ուշք չը տարար որ գողացնել տւեցիր. դե՞հ, հիմայ գնա, գողին գտի»: Եւ իրապէս հեշտ բան չէր գողին գտնելը. հօրս պատճառով չինք կարող ոստիկանութեան դիմել, իսկ սրա նրա վրայ կարծիք տանելը չէր օգնում: Շատ դես ու դեն ընկանք, հարցրեցինք, ոչինչ չօգնեց: Նոյն իսկ մէնք, Սիրանուշը, Արիկը, Վահրամը եւ ես փնտում էինք մեծերի հետ. մեր երկրի սովորութեամբ թքում էինք ձեռքերիս մէջ, խիում էինք միւս ձեռքով թուրքի վերայ եւ կանչում.

Սատանայ, սատանայ
Պոչիդ տակը բանմ կայ,
Գտի. կէսը ընձի, կէսը քեղի:

Որ ուղղութեամբ որ թուքը թոնէր, այնտեղ պէտք էր որոնել կորած իրերը:
Կարծիքը ընկաւ մեր հոտաղ Դանէլի վերայ, որը Թուբէնի

Հիւանդութեան պատճառով մի քանի շաբաթ մեղ մօտ էր եղել: Դանէլը ուրացաւ եւ նրա հայրը նոյն իսկ երդւեց որդու համար: Տատիկս ուղեց գրբացի գնալ, ամէն օր համոզում էր մօրս որ նա քաղաք գնար, ուր մի նոր գրբաց էր եկել, որը «Սոլոմոն» ունէր:

Պատմում էին նրա մասին, որ նա ամէն ինչ գլուխ եւ արդէն շատերին է օգնել: Մայրս, որպէս հօրս լաւ աշակերտուհին՝ մերժում էր, նա չէր հաւատում գրբացներին: Բայց վերջ ի վերջոյ տեղի տևեց տատիկիս թախանձանքներին եւ ինձ հետը վերցնելով քաղաք գնաց: Մեր կառքը կանդնեց մի ցածլիկ, պարզ տան յառաջ: Երբ ներս մտանք, մի փոքրիկ սենեակլ լիքն էր բազմութեամբ, մեծ մասսամբ կանանցով: Սենեակի վերեւի մասում, թախսի վերայ բազմած էր մի ծերունի, լայն դէմքով, կնճռոտ ճակատով եւ երկար, սպիտակ մօրուքով: Նրա մօտ նստած էր մի տարիքաւոր կին, վշտու դէմքով, սեւ հագուստներով. նրա աչքերը կարմրել էին շատ լաց լինելուց եւ նա յուսահատ խիստմ էր ծնկներին եւ կոտրատում ձեռքերի մատոները: Ծերունին իր մօտ կանչեց մի փոքրիկ տղայի եւ նրա աջ ձեռքի թթամատին թանաք քսելով, հրամայեց մէջը նայել: Երեխան կը լինէր մօտ տասը, տասնումէկ տարեկան:

«Ի՞նչ ես տեսնում եղունկիդ մէջ» հարցրեց նրան ծերունին:

«Ոչինչ»:

«Դու լուսին կամ մարդու գլուխ չե՞ս տեսնում. լաւ նոյիր»:

Երեխան անընդհատ նայում էր մատին եւ յանկարծ ճշաց.

«Ճա, լուսինը եկաւ, հետն էլ մի կտրած գլուխ»:

Գրբացը գոհ ժպտաց. «Լաւ, միշտ նայիր» ու ինքը մի գիրք վերցնելով սկսեց կարդալ, ժամանակ առ ժամանակ բացադան-

չելով՝ «կարմիր միրուքաւոր արի, սեւ միրուքաւոր արի, ձեր-
մակ միրուքաւոր արի»:

«Ի՞նչ ես տեսնում», հարցրեց նա նորից տղային, որի աշ-
քերը անընդհատ մի կէտի նայելուց արտասւում էին:

«Հիմայ եկան, ասեց տղան ցած ձայնով. մէկը կարմիր
միւսը սեւ, երբորդը սպիտակ միրուք ունի»:

«Լաւ, ասա բարի են եկել, սուրճ հրամցրու, թող նստին
խմեն»:

Տղան կրկնեց զրբացի պահանջը, անթարթ եղունկին
նայելով:

«Նստեցի՞ն»:

«Այս, նստեցին, սուրճ են խմում»:

«Հիմայ հարցրու նրանց, թէ էս խեղձ մօր տղեն, որ Ան-
դրանիկի մօտ զինուոր էր, որտե՞ղ է այժմ»:

Երեխան կրկնեց հարցը եւ յանկարծ մէռելի գոյն ստացած՝
լաց եղաւ:

«Ի՞նչ ես տեսնում»:

«Չեմ ասի»:

«Ասա, մի վախենա»:

«Ես ես... տեսնում եմ Սանդրոյին. բայց նա չի ապրում,
մեռած է. պառկած է մի բարձր սարի լանջին, Արագածի նման
բարձր. Սանդրոյի մօտ աղբիւր է հոսում, ինքը արիւնլաց է»:

Սեւ հազուստներով կինը անձայն նւաղեց. Երբ նրան ուշքի
բերեցին, սիրտ կտրատող ձայնով կանչեց. «Վայ, ջլրան ջան,
հողը գլխիս բերեցիր. կարօտով մեռար, բալա ջան. Էլ էս
արեւը ի՞նչ եմ անում, օրս սեւացաւ, հոգի ջան», եւ նա խփում
էր ձեռքերով իր երեխն եւ գլխին, փետառում մազերը: Բոլորս
լաց էինք լինում նրա հետ:

«Լացը չի օդնի, քոյրիկ ջան, ասաց զրբացը, հիմայ զիտես

աղիդ ուր լինելը, զնա տուն, սուզը աւելորդ է. զնացէք քոյ-
րիկներ, զնացէք, հերթը ուրիշներինն է»: Երկու կին անցան
խեղձ մօր թեւերի տակ եւ լացով դուրս տարան նրան:

Մայրս առաջ անցաւ եւ պատմեց գրբացին իր կորուստի
մասին: Գրբացը քննեց բթամատս, հարցրեց թէ հինայ դրե՞ւ
եմ ձեռքիս. բացասական պատասխան ստանալով, քսեց թա-
նաքը մատիս եւ նոյն ձեւով ինչպէս արել էր տղայի հետ՝ խօ-
սեց ինձ հետ: Երբ որ նա սկսեց կարմիր եւ սեւ միրուքաւոր-
ներին կանչել, ես յանկարծ չը կարողացայ զաղել ծիծաղը եւ
մօրս նայելով փնթկացի: Նա էլ ծիծաղեց: Ես ինքս էլ չի
կարող բացատրել ծիծաղիս պատճառը, բայց ծերունին բար-
կացած վեր կացաւ. «Դուրս զնացէք. հոգիները վիրաւորւեցին
ձեր վարմունքից, այլեւս ոչ մի պատասխան չեն տայ. ասեցի,
որ ոչ ոք չը պէտք է ծիծաղի, ով չի հաւատում թող չը գայ»:
Մայրս շփոթւած էր: Ծիծաղը դէմքերիս դուրս եկանք: Մայրս
հարցրեց ինձ իմ վարմունքի պատճառը. բայց ես ոչինչ չէի կա-
րող պատասխանել: Մի ջղաձգական քրքիջ խեղդում էր ինձ:
Դատարկ ձեռքերով վերաղարձանք տուն: Տատա շատ վրդով-
ւեց. բայց ի՞նչ կարելի էր անել: Նոյն օրը մօրս մօտ եկաւ
ևէշանենց հոտաղը եւ պատմեց, որ գարնանը կովերը արա-
ծացնելիս նա Դանէլի մօտ մի սոկի ժամացոյց է տեսել, երկար
սոկի շղթայով, թանկաղին քարերով զարդարւած: Մայրս
իսկոյն կանչել տեսց Դանէլին եւ իր հօրը. նորէն երկուսն էլ
ուրացան: Բայց Սօսին, մի խելացի երիտասարդ, հօրս կող-
մակիցներից, ասեց. «Քոյրիկ ջան, թոյլ տուր քո անունով
զիւղի հոտաղներին կանչեմ Դանէլի հետ, ես գողը իսկոյն կը
բռնեմ, ոչ զրբացի պէտք ունենք, ոչ էլ սատանի»: Մի ժամ
յետոյ զիւղի հոտաղները հաւաքւեցին մեր տանը: Սօսին
զրպանից դուրս հանեց մի քանի կորուած թղթեր եւ ասեց.

«այս թղթերը թլում են եւ թոյն ունեն իրանց մէջ . թող ամէն մէկը մի հատ կուլ տայ սրանցից . ով որ արդար է թլումը նրան թոյնից կ'ազատի , իսկ գողը անմիջապէս կը մեռնի» : Բոլոր տղաները վերցրին թղթերը եւ գւարճացած , կուլ տւեցին . միայն Դանէլը տատանւում էր : «Դանէլ , ինչո՞ւ չես վերցնում» : Ամբողջ մարմնով գողալով նա կմկմաց . «Ես . . . ես չեմ ուղում մեռնել , արէք ինչ ուղում էք , ես եմ գողացել . . . մեղաւոր եմ» : «Տեսա՞ր , քոյրիկ ջան , գողը այդպէս կը բռնեն» ասեց Սօսին ծիծաղելով եւ մի ապտակ կպցրեց Դանէլին :

Դանէլը ամէն ինչ խոստովանւեց . բայց նրա հայրը ծախել էր իրերի կէս մասը : Նա պէտք է այդ պակասի համար գրամ վճարէր , բայց յուսահատ , նա ընկաւ մօրս ոտքերը աղաչեց , որ ների , աղքատութիւնն է նրան գող շինել , սատանէն է նրան փորձութեան մէջ գցել : Եւ որովհետեւ մայրս միշտ բարի էր , հրաժարւեց գրամից եւ գատից :

XVI.

Ին օրերին մեր միակ մխիթարութիւնը Սարիբեկ պապս էր : Նա մօրս շատ նման էր . բարձրահասակ , բարակ , խորը կապոյտ աչքերով եւ խարտեաշ մազերով : Նա միշտ հայկական տարագով էր — սեւ արխալուղ , լայն շալւար , վրայից սեւ մահուր չուխա , մէջքին ոսկէ գոտի , գլխին աստրախանի գտակ : Դեռ հեռւից տեսնում էինք նրան եւ ուրախացած բոլորս միաւին ընդառաջ վազում : Մեղ նկատելիս , նա իսկայն ձիուց ցած էր իջնում , փաթաթւում , համբուրում մեղ եւ հերթով իր հրաշալի կարմիր ձիուն — Զոհրաբին նստեցնելով , քաշում էր նրան իր յետեւից եւ աշխոյդ հարց ու փորձով տուն էինք դաւիս : Նրա գոյնդգոյն խուրջնի մէջ ինչե՛ր առես չը կային մեղ

համար . դաթա , հալւա , տեսակ-տեսակ անուշեղէններ , պատրաստած մեծ մօրս — Արփի Խթունի ձեռքերով : Բայց իմ ամբողջ ուշադրութիւնը գրաւում էր պապիս ձին : Այդ ձին դեռ այսօր յիշողութեանս մէջ անրաժան է իմ պապից : Մարդը եւ կենդանին այնպէս էին ներդաշնակում միմեանց որ ես մէկին առանց միւսին չեմ կարող երեւակայել : Զոհրաբը մի հպարտ կենդանի , աշխատ , բարձր վզով եւ մեծ , խելացի աչքերով : Այդ աչքերը այնքա՞ն հասկացով էին : Զոհրաբը շատ էր կապւած պապիս եւ բացի նրանից ոչ ոքի չէր հնաղանդում : Երբ պապս բարակ եւ ուղիղ նրա վրայ նստած անցնում էր դիւղի միջով , բոլորի աչքերը հետեւում էին նրանց հիացմունքով եւ զարմանքով : Հպարտ Զոհրաբը անհամբեր օտարների հանդէպ , թոյլ էր տալիս մեղ ժամերով խաղալ իրա հիտ : Ես բարձրանում էի նրա մսուրը , ցած քաշում կենդանու հպարտ գլուխը եւ փորձում պարանոցի վրայով նրա մէջքին նստել : Մեծ պապս շատ անգամ զարմանում էր , որ Զոհրաբը երբեք չէր փորձում ազատւելու . բայց խելացի կենդանին կարծես հասկանում էր , որ երեխաների հետ գործ ունի : Եւ երբ պապս մեղ նրա մէջքին էր նստեցնում , ձին գանդաղ եւ զդոյշ քայլերով էր շարժւում , կարծես վախենում էր մեղ ցած գցել :

Ամենամեծ երջանկութիւնը ինձ համար նրան ջրելու տանելն էր : Սանձից ամուր բռնած , ես քաշում էի կենդանուն իմ յետեւից , իջնում բլուրից ներքեւ , հասնում ջրաղացի առուն : Ես աշխատում էի պապիս նման շւացնել եւ զւարճացած նայում էի , թէ որպիսի՝ ագահութեամբ Զոհրաբը ջուր էր խմում : Բայց մի օր նա գլխիս մի խաղ խաղաց : Երբ հպարտ հպարտ մեր տան դարն էի բարձրանում , յանկարծ նա պոկեց ինձանից եւ թուչկոտելով ու ուրախ սրբախ խրխնջալով վաղեց դէպի դաշտերը : Մարսափած , իսկոյն հարայ հրոց դցեցի , մարդիկ

օղնութեան վաղեցին, ընկան նրա յետեւից, բայց Զոհրաբը սլանում էր քամու նման եւ չուտով անհետացաւ բլուրի յետեւը։ Շնչառապատ վազեցի պատիս մօտ, բայց նա միայն ծիծաղեց։ «Մի վախենա, քէֆ է անում, յետ կը դայ» ասեց նա։ «Սարօ ջան, ձին քամի է առել պնչները, կը գնայ, կը կորչի, էլ նրան որտեղից էս դանելու», միջամտեց տառու։ Պապս դուրս եկաւ մեղ հետ, չորս կողմը նայեց։ Զոհրաբը չը կար։ Պապս շարունակեց գնալ, մի քանի րոպէից յետոյ սկսեց բարձր շւացնել։ Զոհրաբը չերեւաց։ Պապս սկսեց վաղել. մի արտա-չափ անցնելուց յետոյ կանդնեց եւ երգեց հնչուն ու սրտանց։ Հեռուից լւեց ուրախ խրխնջոց եւ մի վայրկենում Զոհրաբը կանդնեց նրա առաջ, քրտնած, կրակոտ աչքերով։ Գլուխը դէպի պապս թեքեց, սպասեց։ «Խելառ ձիս, էդ ի՞նչ խաղեր ես անում» ասեց պապս, փաղաքչելով կենդանու վիզը եւ աչքերը։ «Իր մօր տիպարն է, իր մայրն էլ խենթ էր, բայց մի օր նրա խենթութիւնը փրկեց կեանքիս երջանկութիւնը, իմ ամենաթանկադին գանձը, ասեց պապս մեղմօրէն։ Ես ականջներս սրեցի. «Ե՞րբ պապի ջան»։ «Ախ, արանից շատ տարիներ առաջ, երբ մեծանաս, քեզ ամբողջը կը պատմեմ, հիմայ չես հասկանայ»։ «Պապիկ, հիմայ պատմիր», պահանջեցի ես. այնքան ասում էի մեծերից յաճախ կրկնած նախադասութիւնը. «Երբ մեծանաս»։ «Ոչ սիրելիս» ասեց պապս վճռական եւ տուն գնաց։ Տատիկս էր, որ մի լուսնեակ երեկոյ, մեր պարտէզում, մեղ հետ քարի վերայ նստած, պատմեց մեղ պապիս եւ Զոհրաբի մօր մասին։ Եւ նրա պատմածը հէքիաթի նման էր։

«Հարուստ էր պապիդ ընտանիքը, սկսեց տառու, բայց Զարփաստ ներսէսը իր սիրուն քրոջը Արփիին, որի վերայ պապիդ աչք ունէր, չէր ուզում նրան կնութեան տալ։ Ոչ մի

լուրջ պատճառ չունէր մերժելու, ինքը աղքատ էր եւ դրա համար էլ մեծ պատիւ էր, որ Սարփեկը ուզում էր իր քրոջը. բայց հակառակուում էր, պարզապէս կամակորութիւնից։ Ար-պէս զի քոյրը ծածուկ յարաբերութիւն չանի պապիդ հետ, օրերով փակում էր նրան տանը եւ նոյն խոկ չէր թողնում որ աղբիւրից ջուր բերէ։ Խոկ պապիդ հալւում, մաշում էր սիրուց։ Մի օր էլ, ամօթը մի տեղ նետած, գալիս կանգնում է իր մօր առաջ եւ ասում. «Մերիկ ջան, ճար արա, վառայ, անցայ ներսի կրակից. կամ Արփին իմ կինն է լինելու, կամ գլուխս կ'առնեմ, կը կորչեմ, կը գնամ սար ու ձոր, չու ու գուրան, էլ ինձ չես տեսնի»։ Մայրը շատ էր սիրում պապիդ, է՛հ, ո՞ր մայրը չէ սիրում իր որդուն. տղի խօսքերը վրդովեցնում են նրան, մի պահ միտք է անում ու կանչում. «Բալամ, կորչելու ի՞նչ կարիք կայ, քեզ նման ջիւանը ուրիշ ճամբայ չունի՞։ աղջիկը կամքով քեզ չեն տալիս, վերցրու գոռով, կարօտդ առ. ես քեզ կ'օգնեմ ինչով որ կարող եմ, իմ էլ աչք կպէլ է աղջկան»։ Խորհուրդ են անում մայր եւ որդի, պայմանաւորում։ Ու մի օր, արեւամուտին, Սարփեկ պապիդ մայրը գնում է Զարփաստ ներսէսի տան մօտերքը, որը գերեզմանոցին կից էր գտնուում եւ սկսում է բարձր խօսել. «Ամա՞ն, հորթերս չը կան. մէկն էլ չի երեւում որ ինձ օգնի, աչքերս լաւ չեն տեսնում»։ Արփին լսում է այդ խօսքերը, գլուխը գոնից գուրս է հանում. «Ի՞նչ կայ, Նանի ջան, ի՞նչ ես փնտում»։ «Ա՛խ, արեւելու մեռնեմ, հորթերս վախել են, ասեցին էս կողմերն են եկել, վախենամ էս ձորն են ընկել, ու մէկը չը կայ որ ինձ հետ փնտոի, գտնեմ»։ Հա՛յ, աղջիկը կարո՞ղ է մի ծեր կնոջ չօգնել։ Արփին խոկոյն գուրս է գալիս տանից եւ սկսում է գերեզմանոցում հորթերը փնտոել. երբ մօտենում են Արփաչայի ձորին, պապիդ որ կազմ ու պատրաստ

քարափի յետեւը սպասում էր, խսկոյն վրայ է պլրծնում, գրկում ապշած աղջկան, գցում ձիու վերայ եւ ինքն էլ թռչում թամքին, Արփիի երկար չէկ հիւսերը ձեռքին է փաթաթում եւ սաստում՝ »որ ծպտուն հանես, ծամերդ կը պոկեմ». եւ դառնալով մօրը՝ «մնաս բարով, Նանի ջան» ասում եւ մտրակում է ձին, էն է որ տեսար: Խսկ մայրը յետեւից խաչ է հանում, օրհնում է նրանց ճանապարհը: Այն ժամանակ Ծուսները կուի մէջ էին թուրքերի հետ եւ Ղօշաւանքը զեռ թուրքերի երկիր էր: Հազիւ էր մի քանի բոպէ անցել, երր Զարփաստ Ներսէսը գլխի է ընկում, գիւղը իրար է անցնում եւ մի քանի մարդկանց հետը վերցնելով, հարայ հրոցով, զէնք ու զրահով ընկում է փախստականների յետեւից: Բայց Զոհրաբի մայրը, արագաւազ եւ հաւատարիմ, գնդակների տարափի տակ — Ներսօն վճռել էր սպաննել պապիդ — լողալով ճեղքում է Արփաչայը անանցաննելի եւ ամենավտանգաւոր տեղից, եւ դուրս է հանում ձիաւորին իր թանկագին որսի հետ գետի միւս ափը: Այն ժամանակ Արփաչայը սահմանն էր: Հիմայ պապդ ոսի հողի վերայ էր: Այնտեղ մի գիւղում պապդ պսակւեց Արփիի հետ. եւ երբ մի տարուց յետոյ մայրդ ծնւեց, նա վերադարձաւ հայրենի տունը: Ներսէսը էլ ոչինչ չէր կարող անել նրան: Երեխան հաշտեցրեց թշնամիներին: Բայց Զարփաստ Ներսօն ներքուստ երբեք չը հաշտեց պապիդ հետ. քանդեց իր տունը, որպէս զի նրա հետ բարեկամութիւն եւ հարեւանութիւն չանի եւ գնաց հաստատեց գիւղից դուրս, դաշտերի մէջ: Այնտեղ էլ ապրում է մենակ եւ բոլորից հեռու: Բնաւորութիւնը այդպէս է:

Իմ առաջ պատկերանում է Արփի մամիս անոյշը գէմքը: Ես էլ կը փախցնէի նրան: Եւ պապս ու մամս աւելի փարելի, աւելի սիրելի են դառնում ինձ:

XVII.

Մի շատ մութ երեկոյ, երբ բոլորս պատրաստում էինք քնելու, հայրս տուն եկաւ բեռնաւորած կառքերով: Մէկի մէջ նստած էր մի մարդ, որի գէմքը մենք հազիւ էինք տեսնում մթութեան մէջ: Անսահման ուրախութիւն: Տատիկս ընկաւ հօրս կրծքին. «Եկա՞ր, բալա ջան, եկածդ ճամբեքին մատաղ, առո՞ղջ ես, եկա՞ր վերջապէս:

«Հա՞յրիկ, սիրելի հայրիկ» բղաւեցինք մենք երեխաներս, իրար խառնելով մեր ձայները: Հայրս մեզ կարօտով կրծքին սեղմեց, ժպտաց երջանկօրէն: Ցետոյ մօտեցաւ մօրս. «Իմ սիրելի Լուսիկ», ասաց նա յուղւած եւ թափահարեց մօրս ձեռքը: Մարդիկ եկան եւ լցւեցին սենեակը: Հայրս ուրախ ուրախ հարց ու փորձ էր անում:

«Վարժապէտ ջան, աչքերս ճամբուլ մնացին, մայրդ եւ կինդ քաջաբար համբերեցին, բայց գէւար էր. մեզ ի՞նչ ես բերել»: «Շատ բան» ասեց հայրս եւ փակեց բոլոր դռները, հրամայեց Ռուբենին եւ թեմանին դռան առաջ պահապան կանգնել, Մացոյին եւ մի քանի գիւղացիներին ուղարկեց գիւղը եւ ճանապարհների վերայ: Նրանք պէտք է իրեն իմաց տային, եթէ մի կասկածաւոր բան նկատէին:

«Կատակ չէ, ասեց նա լրջութեամբ, մենք բոլորս կորած ենք, եթէ ոստիկանութիւնը այս զէնքերի հոտը առնի, ամբողջ զոհաբերութիւններս ջուրը կ'ընկնին. ուրեմն զգոյշ եղէք»: Եւ դառնալով հաւաքւածներին ասեց. «Գնացէք հանգստացէք. ուշ գիշեր է, առաւօտը ես ամէն ինչ կը պատմեմ ձեզ»:

Մարդիկ հեռացան:

«Երեխաներ, դուք էլ գնացէք քնելու, թողէք հօրդ հանդիստ մի կտոր հաց ուտի, ասեց տասու. խեղճ Միհրան ջան, որքան ես լղարել. թշնամուդ աչքը կուրանայ, քննի՛ անդամ

վատ լուրեր բերեցին քեզնից : Աչքերիս լոյսը մարւեց շատ լաց
լինելուց , Աստծու զահէն տարայ իմ աղօթքներով» :

Հայրս յուղւած , ոչինչ չէր խօսում :

Գիշերը այս անդամ կարձ էր : Եւ առաւտեան արեւը տաք
էր ու աշխարհը լուսաւոր : Սարերը ծիծաղում էին :

Ցերեկը գիւղացիք հաւաքւեցին մեր տանը : Հայրս բացեց
անդուկները , ուր հրացաններ եւ փամփուշտներ էին պահւած :
Անծանօթը՝ Սերգօն եւ հայրս դրում էին ամէնքի անունները եւ
մի հրացան վերցնելով փամփուշտների հետ միասին , տալիս
էին նրանց : Ամէն անդամ Սերգօն ժպտում էր եւ ասում . «Հը ,
հրացանը ծալքի տակը չը պահես , բանեցնես , հա՛ » : «Բա՛ ,
ծալքի համար եմ առնում , դլսիդ դուրբան , Աստուած մեղ
փորձանքից աղատի , բայց մենք չենք թոյլ տայ որ թուրքերը
մեղ եզի նման մորթեն . հազիւ զէնք է ընկել ձեռքերս . բայց
վճարե՞լը . . .» զւարթ պատասխանում էին գիւղացիք : «Միք
վախենայ , կտրեց նրանց խօսքերը հայրս , այս օրերս ձեզ հա-
մար մի ժողովրդական բանկ կը բանամ , դուք փոխ դրամ կը
վերցնէք եւ կը վճարէք՝ Ընկերութեանը , ձեր պարտքերը» : Եւ
հայրս ինչ որ երկար բացատրում էր նրանց , բայց այս անդամ
ես ոչինչ չը հասկացայ : Գիւղացիք սեղմեցին հրացանները
կրծքերին եւ տուն գնացին : Մօտակայ գիւղերի բնակիչներն էլ
եկան եւ մինչեւ երեկոյ զէնք բաժանեցին . դատարկ սնդուկ-
ները թաղեցին մարդառում դարմանի եւ խոտի տակ :

Երեկոյեան հայրս պատմեց ժողովականներին իր արկած-
ները : Շատ բան մոռացել եմ արդէն , շատ բան էլ չեմ հաս-
կացել . ինչ որ մնացել է դլսիս մէջ այսպէս եմ բովանդակում .

«Շատ դժւարութիւններով , սկսեց հայրս , կարողացայ այս
զէնքերը Թոստովից Վլատիկաւկասի վրայով այստեղ բերել :
երկաթուղով Բաղւի վրայով չէի կարող գնալ Թաթարների

պատճառով : Կուսակցութիւնը մի հասցէ էր տւել Վլատիկաւ-
կաս , բայց երբ այնտեղ զնացի , լսեցի որ մի երեկոյ յառաջ
խուզարկութիւն է տեղի ունեցել , երկու ընկերներ բանտար-
կել էին : Լսեցի , որ քաղաքը լիքն է լրտեսներով եւ ես պէտք
է աճապարեմ հեռանալ այնտեղից : Բայց կառքեր չը դտայ ,
որոնք կարող էին ինձ մինչեւ Թիֆլիս բերել . իսկ պոստով էլ
չէի կարող զնալ ծանր բեռիս պատճառով : Պէտք էր շուտա-
փոյթ դործել : Եւ ահա մի խելացի միտք ծաղեց գլուխս :
Գնացի քաղաքի ամենալաւ հիւրանոցը , որի տէրը հայ էր եւ
մառզերս քաշելով ասեցի . «Եթէ դու ինձ չօգնես մնդուկները
քեզ մօտ բերելու եւ պահելու մինչեւ ես կառքեր դտնեմ , կը
սպաննեմ քեզ առանց աչքս թերթելու , իսկ եթէ ինձ ոստիկա-
նութեամբ մատնես , «Ընկերութիւնը» քեզնից իմ վրէժը կը
հանէ» . զե՞հ , նա դիտէր , որ մեր զնդակները երբեք չեն
խնայում դաւաճաններին , չոքեց իմ առաջ եւ աղաչեց , պաղա-
տեց , որ իրան խնայեմ , հեռանամ , երեխանների տէր է : Ես էլ
երեխայի եւ կնոջ տէր եմ , պատասխանեցի ես : «Հիւրանոցս
լիքն է ոռւս սպաններով , եթէ մէկը կասկածի՞» : «Լաւ , պա-
տասխանեցի ես , էղ սպանները ի՞նչ են անում» : «Ոռւս սպան
ի՞նչ պէտք է անի , վարժապետ ջան , երբ պարապ է . բացի
հարբելուց եւ կարտ խաղալուց ուրիշ դործ ունի՞» : «Լաւ ,
նրանց հարբած ժամանակ տեղափոխիր սնդուկները նրանց սե-
նեակները , պահիր զանազան անկիւններում , ոստիկանները
երբեք չեն մտածի ոռւս սպանների մօտ զէնքեր փնտոել , իսկ
այդ հարբեցողների խելք եւ միտքը ուրիշ տեղ է , երբեք չեն
նայելու թէ սենեակում ի՞նչ կայ : Նրանց ծառաններին կը կա-
շուենք եւ ոռւսական օրհնւած օղին այստեղ էլ մեզ կ'օգնի :
Միայն մենք պէտք է շատ դդոյշ եւ խորամանկ լինենք» :

Ծրագիրս համարձակ էր , բայց ես ամէն ինչ աչքի առաջ

ունէի . չէ՞ որ անվեհերին թէ եղ ու մեղը եւ թէ շղթաներ են սպասում : Ճարը կտրւած համաճյնւեց հիւրանոցի տէրը . ինչպէս որ մտածել էի այնպէս էլ եղաւ : Սպաները ամբողջ դիշերը հիւրանոցի դահլիճում թուղթ խաղացին եւ խմեցին , նրանց բացակայութեան ժամանակ ներս տարանք սնդուկները եւ լաւ պահեցինք : Բեռիցս ազատւած , ընկայ քաղաքը եւ մի օրից յետոյ կառքեր ճարեցի : Հետեւեալ երեկոյ , երբ սպաները , ցերեկը քնելուց յետոյ , էլի քեֆ էին անում , նրանց ծառաների օգնութեամբ դուրս հանեցինք գէնքերը եւ բարձեցինք կառքերի վերայ : Գնալուս , հիւրանոցի տէրը ուրախութիւնից համբուրեց ձեռքերս , որ փորձանքից այդքան էժան ազատւեց : Առանց միջադէպի թիֆլիս հասայ , գնացի «Բիւրօն» եւ ընկերներ ստացայ ինձ օգնելու : Ամէն ինչ լաւ էր գնում , բայց երկաթուղու կայարանում մի վրացի բեռնակիր կասկածեց իմ սնդուկի վերայ եւ մատնեց ինձ : Բարեբախտաբար միւս սնդուկները ընկերներս արդէն տեղաւորել էին գնացքի զանազան վաղոններում եւ այնպէս էին անում , որպէս թէ ինձ չէին ճանաչում : Այդպէս այդ սնդուկները ազատւած էին : Ոստիկանը նայեց է պօլեան երիս , գլխարկիս կոկարդին . լեցւեց յարդանքով : Դուք գիտէք , թէ ինչ դեր են խաղում փայլուն էպօլեաները եւ կոկարդը Ռուսաստանում : Ես նրան անձնագիրս ցոյց տեցի . նա կարդաց . «Ռուսաց դպրոցի տեսուչ» : «Այս սնդուկը իմը չէ , ասեցի ես , նա մի ծանօթ տիկնոջ է պատկանում , որը ամէն ըռպէ կարող է գալ . սպասեցէք մինչեւ նա գայ» : Եւ սնդուկը ոստիկանին «պահ» տալով , կառք նստեցի եւ նետեցի «Բիւրօն» : Սնդուկից ձե՞ռք քաշէի եւ ինձ փրկէի , թէ մինչեւ վերջը ըիսկ անէի : Բարեբախտաբար Սեւաքացի Սաքօն , որը փորձւած է այդպիսի բաների մէջ , այնտեղ էր . «Սաքօ ջան , գլխիդ մեռնիմ , ճար արա» : Նա ժամա-

նակ չը կորցրեց , այնտեղ եղած օրիորդներից մէկին հետև տւեց , եկանք կայարան : Օրիորդը լաւ հազնւած , բարձրագլուխ եւ հպարտ մօտեցաւ ոստիկանին . «Հը՞ , ի՞նչ կայ , գնացքը հիմայ գնալու է , ի՞նչ իրաւունքով էք պահում իրերս . բայց քանի որ կասկածում էք , ժամանակները վատ են , բացէք նայեցէք» եւ նա սկսեց իր ըիդիկիւլի մէջ բանալի փնտոել : Ոստիկանը շփոթւած օրիորդի հրամայական տոնից լուռ սպասում էր : «Ա՞մ , բանալինե՞րս . արդեօք որտե՞ղ եմ պահել նրանց , ասեց աղջիկը յուսահատ , ինձ դառնալով , էս ի՞նչ դժբախտութիւն է , չորս հինգ օր Պետական բանապարհ կտրել , եւ հիմայ , երբ մի քանի ժամ է միայն ինձ բաժանում հարազատներիցս , մի լոկ , անտեղի եւ վիրաւորական կասկածի համար , գնացքը կորցնել եւ այստեղ մնալ» : Օրիորդի աչքերը լեցւեցին արտասունքով , նա այնպիսի անկեղծ տանձանք էր ցոյց տալիս , որ նոյն իսկ ես զգացւեցի : «Յարգելի օրիորդ , նեղութիւն միք քաշի» ասեց ոստիկանը եւ շարած վերցրեց սնդուկը եւ իր ձեռքով դրեց գնացքին : «Միայն թէ շատ մեծ եւ շատ ծանր է ձեր սնդուկը , օրիորդ» : «Այո , ծանր է , դրքերով լիքը» եւ օրիորդը մի տասը ուռւրի սեղմեց ոստիկանի ձեռքը եւ թռաւ գնացքը : Ես էլ , կաշառքը չը նկատելու տալով , իմ կողմից տասը ըռուբի տռեցի ոստիկանին եւ միացայ ընկերուհուս : Գնացքը շարժւեց . մենք ազատ էինք : Թէ ի՞նչ ապրեցինք մենք այդ մի քանի վայրկեաններին , կարող էք երեւակայել . աղերքը , որոնք լուսամուտներից տեսել եւ լսել էին ամէն բան , յոյսերը կտրել էին արդէն թէ մեղնից եւ թէ իրենցից : Եթէ սնդուկը ոստիկանը բանար , անպայման կը խուզարկէր ամբողջ գնացքը եւ մենք բոլորս կը կորչէինք : Բայց յարգանքը դէպի էպօլետները , լաւ հագուստները եւ դրամը , այս անզամ էլ օգնեցին մեղ :

Օրիորդը մեղ հետ մինչեւ մեր քաղաքը եկաւ : Բաժանւելիս համբուրեցի երախտապարտ նրա փոքրիկ ձեռքերը : Մեր քաղաքում բոլոր բեռնակիրները եւ կառապանները մեր «Ընկերութեան» մարդիկ են : Գնացքը կայարան հասնելուն պէս , սրան նրան աչքով արեցի եւ ոստիկանների քթերի տակ սնդուկ-ները կառքերին դրեցինք եւ տղերանց հետ գնացինք մեր ընկերներից մէկի պանդոկը , ուր քէֆ արեցինք մինչեւ իրիկուն . եւ երբ մթնեց ու փողոցները դատարկւեցին , Սերդոյի հետ եկանք այստեղ , իսկ միւսները թիֆլիս վերադարձան : Հիմայ , սիրելի հայրենակիցներ , ես այսքան դժւարութիւններով եւ կեանքս վտանգելով ձեղ այս զէնքերը ճարեցի : Ընկեր Սերդօն , մի շաբաթ այստեղ կը մնայ , ձեղ զէնք բանեցնել կը սովորեցնի . առաջին անդամ զարերի ստրկութիւնից յետոյ , երբ մեր թշնամիները մեղ զինուոր լինելը եւ զէնք կրելը արգելելով , ուզում էին մեր գլուխներին կնկայ լաշակ կապել , ահա մէնք նորից տղամարդ ենք , զէնքունենք մեր ձեռքերը : Եւ դա չնորհիւ մեր քաջ յեղափոխական դաշնակցութեան , որը հին Հայոց խիզախութիւնը կեանքի է կանչում : Կեցցէ՛ կուսակցութիւնը , կեցցէ Հայաստանը , կեցցէ՛ » : «Կեցցէ , կեցցէ , ապրի Հայաստանը » :

Հայրս եւ ընկեր Սերդօն զիւղացիներին զէնք բանեցնել էին սովորեցնում : Բոլորը գոհ էին . «Թող թուրքերը հիմայ դան . հաւի նման չենք մորթւի . մենք մեր միւս եղբայրների նման , որոնք ապրում են սուլթանի լծի տակ , անձար չենք . արիւնի տեղ արիւն կը թափենք » : Հայրս համաձայնութեան նշան էր անում : Նա օրերով խօսում էր , քարոզում , համոզում : Ճիշտ է , բոլորը զէնքեր դնեցին , բայց միայն գիւղի մի մասն էր նրա հետ : Գիւղացիք բաժանւած էին թայֆաների եւ կուսակցութիւնների , որոնք կուսում էին իրար դէմ , իրար սպառնում : Վարժապետ Յովհաննէսը , տէրտէրը եւ տիրացուն ոչ մի կու-

սակցութեան չէին պատկանում , բայց լարում էին գիւղի Հնչակեաններին հօրս դէմ : Ամէն անդամ ժողովներին այդ Հնչակեանները աղմուկ էին բարձրացնում , հայհոյում , սպառնում էին հօրս մատնել եւ ամէն անդամ գործը ծեծով էր վերջանում : Ի՞նչն էր բաժանում Դաշնակցականներից , ոչ ոք գիտէր . սովորութիւն էր : Գիւղի երիտասարդութիւնը ամբողջապէս հօրս կողմն էր . դաշնակցականները աւելի եռանդուն էին , թարմ , սրտի մօտ : Մարդիկ վախենում էին դաշնակցութիւնից , բայց սիրում էին նրան , հաւատում էին հայի վերածնունդին : Հայրս պաշտած էր երիտասարդութիւնից , էն օրերին գիւղի ջահէնները կրակի բոցերից կ'անցնէին նրա համար :

Գիւղի աղքամները քաղաքականութիւնով չէին գրադւում . նրանք ձայն չունէին եւ ոչ ոք չէր յարգում նրանց : Հայրս երեկոյթներ էր սարքում սազով , սազանդարով , թատրոն էր խաղացնել տալիս , երգեցիկ խումբ էր կազմել երիտասարդուներից :

«Մենք հնչակեան եղբայր
Դուք դաշնակցական
Մենք երքուքս էլ կու լանք
Վիշար հայկական :
Արփք , եղբարք , միանանք
Բաւ համարենք մեր տանջանք
Ի սէր ճնշւած հայ ազգին
Գործ դնենք ճիգ ու ջանք» :

Այսպէս էին երգում աշուղները եւ երիտասարդները ողեւորւած : Բայց պատահեց մի օր , որ երգի ամենէն թունդ ըուղէին հնչակեան Ալեքսանը բարձրացրեց ձեռքի գաւաղանը եւ

ամբողջ ոյժով խիեց դաշնակցական Սեղրակի գլխին. սա վերադարձրեց հարւածը: Շուտով մի ահագին փոթորիկ բարձրացաւ դահլիճում, գաւազանները թռչում էին օդի մէջ եւ միայն մեծ գժւարութիւններով յաջողւեց բաժանել հակառակորդներին եւ արիւնահեղութիւնը կանխել:

Հայրս մի փոքրիկ վաշտ էր կազմակերպել. նրա պարտականութիւնն էր հսկել կարգ ու կանոնի վերայ, ապահովել դիւղը, զէնքի վարժեցնել եւ կուսակցութեան համար պրոպագանդ անել: Վաշտի առաջնորդ թեմանը, մի ջղուտ, ուժեղ տղամարդ, ահ եւ պատկառանք էր ներշնչում ամէնքին, մանաւանդ որ մի օր հարբած ժամանակ կոտրել էր տէրտէրի եւ վարժապետ Յովհաննէսի լուսամուտները եւ սպառնացել մաուզերով, հաւատացնելով, թէ ով որ «Ընկերութեան» դէմ գնայ, իրա, թեմանի ձեռքով «շան սատակ» կը լինի: Այնքան արեց որ գիւղի մեծ մասը դաշնակցական դառաւ: Նոյն իսկ տիրացու Օվոն հնազանդւեց նրան, նա որ տէրտէրի խօսքից դուրս չէր գալիս, այնքան հեռու գնաց, որ մեզ երեխաններիս իր օդան էր հաւաքում եւ շարքի կանգնեցնելով ազդային երդեր սովորեցնում: Պէտք էր տեսնել թէ ինչպիսի եռանդով տիրացուի ղեկավարութեամբ եւ նրա մեթողի համաձայն մենք խաղացնում էինք մեր ձայնները կոկորդներիս մէջ եւ երգում.

«Տուր ձեռքդ, եղբայր, ժամ է շարժւելու
Ժամ է ժամ յառաջ ոտքի կանգնելու
Մօտ է վախճանը, հայերուս օրհաս
Լինել չը լինել մեզնից է կախւած»:

Տիրացուն յայտնի էր որպէս վախկոտ եւ խառնակիչ մի մարդ, բայց մեղ, իր աշակերտների հետ եւ իր սենեակում նա համարձակ էր, խիղախ եւ բաց ճակատ:

Հայրիկս գիւղացիններին զէնք սովորեցնելուց եւ խմբեր կազմելուց յետոյ մի անդամ էլ ճանապարհւեց: Նա յեղափոխական էր մարմնով եւ հոգւով. ոչ տատիս արտասունքները, ոչ մօրս տիսուր, աղաչող աչքերը կարողացան նրան մեղ մօտ պահել: «Իմ կեանքս ամենէն յառաջ ժողովրդիս է պատկանում» ասեց նա, համբուրեց մեղ ու գնաց: «Հայրիկ», ու ես վաղեցի նրա յետեւից, եւ յուսահատ գրկեցի նրա ծնկերը, «մի գնա, հայրիկ ջան, նրա առն ք քեզ կը սպաննեն»: «Ի՞նչ, ես կարծում էի թէ դու իմ քաջ աչիկն ես, դու իմ փոքրիկ զինւորն ես. ամօթ քեզ, ոչ ոք ինձ չի սպաննի. սպասիր, ես քեզ չերքեսի չորեր կը բերեմ, դու կը հազնես եւ իմ զինւորը կը դառնաս, լա՞ւ»: «Ես աղջիկ եմ»: «Վնաս չունի. միեւնոյնն է, դու կարող ես զինւոր խաղալ»: Եւ նա թռաւ ձիու վերայ: Կախարդւած նայեցի նրա յետեւից: Ես կարո՞ղ եմ զինւոր լինել:

XVIII.

Նորից սկսւեցին անտանելի, տխուր օրերը: Մայրս գունատ եւ լուռ, շարունակում էր լրագիրներ եւ գրքեր կարդալ գիւղացիններին, երիտասարդների հետ զէնք բանեցնել: Ռուսաստանը դեռ միշտ յեղափոխութեան մէջ, գիւղացինների ապատամբութիւն, թալան, գնդակահարումներ, բանւորական գործադումներ, կարիք, սարսափ, աղքատութիւն: Նորից նստում էին մարդիկ մեր դրան առաջ մինչեւ կէս գիշեր եւ նորից խօսում էին անցած, ներկայ եւ գալիք անցքերի մասին: Հայ-թաթարական կոտորածները երկրորդական էին դարձնում Ռուսաստանի եւ նոյն իսկ Տաճկահայաստանի դէպքերը: Անդրանիկի եւ բոլոր հայդուկների քաջութիւնները պատկանում էին անցեալին. նրա ամենքն լաւ զինւորները կուտում էին հիմայ

Կովկասեան լեռներում թաթարների դէմ, պաշտպանում էին իրենց ցեղակիցների կայքը, գոյքը, պատիւը եւ կեանքը: Ռուս կառավարութիւնը չէր կարող այլեւս մարել այն կրակը, որը ինքն էր վառել. հայերը զինւում էին ամէն տեղ եւ ոստիկանութիւնը անձար՝ չէր կարողանում խանդարել այդ:

«Բայրախտարում, պատմում էր մէկը, կողակները խուզարկութեան են գնում. հենց որ գիւղացիք հեռւից տեսնում են նրանց, հաւաքում են դիւլում եղած զէնքերը հրապարակի վերայ, դէղով խոտ բերում եւ նրանց ծածկում. յետոյ բաց են թողնում ոչխարներին խոտի վրայ: Կողակները տնից տուն են մտնում, մարագից մարագ, ծակում են սուիններով անկողինները, բարձերը, պանրի եւ իւղի կարասները, ալիւրի ամբարները, տակն ու վրայ են անում ամէն ինչ, ծեծում են գիւղացիներին, անարգում կանանց եւ ոչ մէկը նրանցից կարծիք չի տանում, որ խոտի դէղի տակ, որից ոչխարները այնքան ախորժակով ուտում են, զէնքեր կան: Մարդիկ միշտ նոր խոտ էին բերում հրապարակ, գցում էին հնի վրայ եւ ոչխարները շարունակում էին ուտել»:

«Մեր քաղաքում, մի տան մէջ զէնք են բաժանում, ասում է մի երկրորդը. ոստիկանութիւնը հոտ է առնում եւ խուզարկութեան է գալիս: Տղերքը զբաղեցնում են նրանց, մինչեւ միւսները պահում են զէնքերը գորգերի տակ: Կանայք եւ աղջիկներ զուգւած զարդարւած առօք փառօք բազմում են նրանց վրայ. տղամարդիկ սազ ու քեամանչով երգ են ասում, ուրախանում. հարսնիք է: Ոստիկանները ներս են գալիս եւ տեսնում են «Հարս ու փեսին». տէրտէրն էլ այնտեղ է: «Հարսնքաւորները» խնդրում են ոստիկաններին իրենց հետ քէֆ անել: Ոստիկանները ուտում եւ խմում են մինչեւ կէս գիշեր եւ բոլորովին հարբած դատարկ ձեռքերով տուն են վերադառնում»:

«Յեղափոխականներին օգնում են աղջիկները եւ կանայք, ասում է մայրս. իրենց շրջադեմստների մէջ, վերարկունների դրապաններում նրանք զէնքեր եւ թուղթեր են տեղափոխում: Մայրերը, որոնց որդիները կուի մէջ են, ամէնքից եռանդուններն են: Բայց ո՞րքան մայրեր պէտք է սեւ կապեն այսօր, ո՞րքան մայրեր չը գիտեն նոյն իսկ, թէ ո՞ւր են ընկել իրենց զաւակները»:

Ամէն առաւօտ մայրս կանգնում էր մեր տան առաջ եւ հրացանով նշան էր բոնում մեր մարագի դռանը եւ ամէն անդամ կացնում էր նոյն տեղը եւ հիացմունք ու զարմանք յարուցանում գիւղի երիտասարդների մէջ: Մայրս հօրս փոխանորդն էր գիւղում եւ «Ընկերութեան» մարդիկ լսում ու հնազանդւում: Էինք նրան: Մենք, երեխաններս էլ մեծ եռ ու զեռի մէջ էինք: Մենք սոսկումով էինք մտածում թաթարների մասին, վախենում էինք նոյն իսկ մեր ստուերից. կոտորածների ժամանակ տեղի ունեցած դազանութիւնների պատմութիւնները խլում էին մեզնից մեր հանգստութիւնը եւ քունը: Բայց ցերեկը մենք նորից «Ռոսի աբա» էինք խաղում եւ նորից թաքուն մտածում էի զինւոր լինել: Նստում էի ժամերով մի անկիւնում եւ երազում. ես Զոհրաբի նման մի ձի ունեմ, բայց իմ ձին սպիտակ է եւ տատիկիս հէքեաթների բարի թագաւորազնի հրեղէն ձին: Հրեղէն ձիով մէկին հարկաւոր է նաեւ մի հրեղէն սուր: Զինւած վառ եւ կուռ, ոչ անկիւնում նստած փոքրիկ Հայը, այլ մի մեծ եւ հրաշալի աղջիկ, տատիս հէքեաթների Արեգնադանի նման, մեծահոգի եւ քաջ թռչում եմ ես Արագածի եւ Արարատի վրայով, գնում եմ, գնում մինչեւ աշխարհի միւս նորութիւնները» խնդրում են ոստիկաններին իրենց հետ քէֆ անել: Ոստիկանները ուտում եւ խմում են մինչեւ կէս գիշեր եւ բոլորովին հարբած դատարկ ձեռքերով տուն են վերադառնում են, որ վարձատրեն, ես անհետանում եմ ձիուց հետ, ինչպէս

անում է մի իսկական հերոս. միայն տատիկիս, դուցէ եւ փոքրիկ Վահրամին, որին ես վերջերս առանձնապէս եմ սիրում, պատմում եմ իմ քաջագործութիւններից :

Նոյն նժոյգով ես թոշում եմ, թոշում, հասնում Նեմրութ սարը, ուր խարտեաշ, գանգրահեր Հայկը սպաննեց Բարելոնի Բելին, ուր դեռ կանգնած են սարսափից քար դարձած Բել զինւրդները. գալիս եմ ճիշտ այն տեղ, ուր Հայկը Բելի գլուխութիւնը : Հայկը եմ ճիշտ այն տեղ, ուր Հայկը Բելի գլուխութիւնը : Հայկը բեւեռեց եւ բարձր ժայռի վերայ հաստատելով ցուցադրեց աշխարհին, որպէս զի նա վախենար եւ յարգեր իրեն : Հասնում եմ Նեմրութիւն, չուր եմ գալիս այն վայրերը ուր ծնունդ է առել Հայոց պատմութիւնը, Նեմրութ սարի վրայ եմ կանգնում ես, են սուրբ սարի գագաթին, եւ այնտեղից յարձակում Հայաստանի թշնամիների վրայ եւ բոլորին դուրս վտարում մեր երկրից : Տատիկս ասում էր . «Ամէն մէկը պէտք է մի տեղ ունենայ արեւի տակ» . Եւ Հայկը մեղ տւել է այդ տեղը մի վառ արեւի եւ սքանչելի երկնքի տակ, ինչո՞ւ եկան օտար ժողովուրդները եւ խլեցին մեզնից մեր երկիրը . . . : Ես նրանց դուրս կը վոնտեմ . բոլոր տղրուկներին, վիշապներին : Եւ այն ժամանակ մեր երկիրը էլ մութ չի լինի, նա նորից Հայկի երկիրը կը դառնայ, մի լոյս երկիր :

Երազներս ոչ ոքի չեմ պատմում : Զը նայած որ հայրս ինձ հաւաստած էր, թէ ես կարող եմ զինւոր լինել, ես վախենում եմ որ մարդիկ ինձնից կը խեն հրեղէն ձիս եւ հրեղէն թուրս : Ես լաւ եմ համարում լոել, մինչեւ գայ օրը, մինչեւ գայ օրը . . . :

* * *

«Կուտուզ» Մացօն չի ուզում գիշերները գիւղը մենակ պահել, իրեն ընկերներ է ուզում : «Ձահէները անպէտք են, նրանք միշտ քնում են, խեր չը կայ նրանցից», գանգատում է

նա : Նա տղարմարդիկ է ուզում, որոնք կարող են արթուն մնալ : Մացօն յայտնի է որպէս վախկոտ նապաստակ, նրան գիւղի պահապան են նշանակել խղճալով նրա աղքատ գրութեան վերայ : Գիւղի տանուտէրը, մի հնչակեան, յարմար պահապան չի գտնում : Եւ ահա մայրս է խառնւում գործին, կանչում է լայնաթիկունք, բարձրահասակ թեմանին եւ կարգադրում, որ ամէն գիշեր վաշտի տղաներից հասակաւորները Մացօյի հետ պահապան կանգնին :

Մի գիշեր զարթնեցի մի տարօրինակ աղմուկից . մէկը կատաղօրէն խիում էր սենեակի լուսամուտը, ուր քնած էինք մայրս եւ ես . «Քոյրիկ ջան, վեր կաց . փոշտի տակիցը կարմիր ‘գիւլէն, եկաւ’ : Ես ճշացի — թաթարները : Մայրս շտապով ծածկեց բերանս . «Մս . . . մի զարթնեցնի տատիկիդ եւ երեխաներին . հանգիստ» : Ես սուս կացայ : Մայրս շտապ-ջտապ հազնւեց, ես էլ հետը, յետոյ նա վերցրեց ատրճանակը, որը միշտ նրա բարձի տակ էր եւ ձեռքս ամուր բռնած, կամմացուկ տանից դուրս եկաւ : Դուրսը կանգնած էին Մացօն եւ թեմանը մի քանի ուրիշների հետ, հեռում երեւում էին մարդկանց ստուերներ . լուսնի շղոկերի տակ այդ ստուերները տարօրինակ կերպարանքներ էին ստանում : «Որտեղից են գալիս» հարցրեց մայրս զսպւած : «Փոշտի տակից, քոյրիկ ջան, ամբողջ Արալը պոկւել գալիս է», պատասխանեց Մացօն դողացող ճայնով : «Փոշտը» մի բլուր էր Արփաչայի եզերքում, մեր գիւղից ոչ հեռու, որը 1877 թւի պատերազմին կողակների զինւրական պոստն էր եղել, այն ժամանակ երբ Արփաչայը սահման էր Տաճկաստանի եւ Ռուսաստանի մէջ : Մայրս մի պահ լուս մնաց . «Ով զէնք ունի, թող պատրաստուի, գնանք . ն ը անց չը պէտք է թողնել գիւղը մտնել . հարկաւոր է մի պէղ պահւել

Եւ կրակել, կը վախենան, կը փախչեն. թաթարները քաջ են
միայն անզէնների գիմաց» ասաց նա: «Վայ, բոյրիկ ջան,
ջահէլ ջանիդ մեռնիմ, ի՞նչ վախ, ինչ բան. բոլոր թուրքի
գիւղերը պոկւել գալիս են, ինչու պէտք է վախենան մեղա-
նից», կանչեց Մացօն յուսահատ. «Ապա ի՞նչ անենք, ձեռքերս
ծալած սպասե՞նք, որ նրանք գան եւ մեղ բոլորիս մորթեն.
պէտք է գործել. թաթարներն էլ միայն մարդիկ են»: Եւ մայրս
վճռական, շտապ շտապ յառաջ քայլեց: «Լաւ է ասում, եկէք»,
կանչեց թեմանը եւ հետեւեց նրան:

Տղամարդիկ վաղեցին նրանց յետեւից: Ես կպած էի մօրս
փեշից, սարսափից ոչ մի ծպտուն չէի հանում, բայց նա նոյն
խոկ չէր նկատում իմ ներկայութիւնը: Լուսնի լոյսին տակ
հասանք գիւղի միւս ծայրը, բայց ամէն ինչ խաղաղ էր: Իրենց
կոյր տների մէջ քնած էին օրւայ աշխատանքից յոդնած մար-
դիկ: Այստեղ այնտեղ հաչում էր մի շուն: Մացօն ինչ որ լոյս
էր տեսել «Փոշտի» կողմերում, գուցէ եւ ամբողջը նրա երեւա-
կայութիւնն էր, եւ խոկոյն ահազանդել թեմանին եւ ուրիշ-
ներին: Երկար մնացինք կանդնած, նայում էինք հեռուն,
փնտում թշնամու ստուերը, աշխատում էինք որսալ մի ձայն:
Ոչ ոք: Վերեւում լուսինը իր ճանապարհն էր գնում հան-
դարտ եւ հաստատ, իսկ ներքեւում Արփաչայը վէտ վէտ խփե-
լով իր ջրերը ափերին հոսում էր մեղմիկ յառաջ:

Լուս էին տղամարդիկ. մայրս դնաց նրանց հետ մինչեւ
«Փոշտը», ըլջեց գիւղի չորս կողմը, եւ հանդստացած ցանկա-
ցաւ բոլորին «բարի գիւղեր» եւ տուն վերադարձանք:

Ես այլեւս չէի կարող քնել: Լուսաբաց էր: Եւ ես տեսայ,
թէ ինչպէս մայրս ամբողջ մարմնով գողալով, լուս ար-
տաստում էր:

XIX.

Նոյեմբ տնքում էր գոմում, ցաւազին բառաչում: «Յաւե-
րով է բոնւած, հորթէ բերելու», ասում էր Ռուբէնը: Միմեանց
սեղմաւծ, կանդնած էինք մենք նրա մօտ եւ ամէն մի տնքոց
հետը ապրում: Խելառ Նունուֆարը, մի երիտասարդ կով,
շարժում էր անհանդիսա գլուխը, ոտքերը սալերին տրոփում:
Նա կորցրէլ էր իր հորթը մի քանի օր յառաջ եւ վշտից չէր
կարողանում հանդստանալ: Նա չէր ուտում, պոռում էր ա-
ղեկոսւր, թոյլ չէր տալիս իրեն կթելու:

Երէկ, երը Մարանը նրան կթել էր ուղում, այնպիսի մի
աքացի տւեց նրան, որ խեղճի քիթը համարեա կոտրւեց:
Ռուբէնը գարման է լցրել նրա հորթի կաշւի մէջ, կարել, աղ-
ցանել վրեն եւ դրել Նունուֆարի առաջը. բայց խելացի կեն-
դանին լիզում է աղը, հոտոտում կաշին եւ չի խարւում. մայրը
գիտէ, որ իր հորթը մեռած է, անշունչ: Երբ նա լիզում է
աղը, փոքրիկ վաշրամը կարծում է, թէ Նունուֆարը լաց է
լինում: Նոյեմբ նայում է մեզ հեղօրէն, բայց քանի գնում ան-
հանդիսա է դառնում: Ռուբէնը ասում է. «Երեխաներ, խեղճ
կովը ամաչում է ձեզնից, դրա համար հորթը չի գալիս. Հայ-
ւանը, մեղք է, դուրս գնացէք, թող ապատի», Մենք գուրս
ենք գնում, կանդնում ենք շւագում: Նոյեմբ յանկարծ սոս-
կալիօրէն ոռնում է, յետոյ ծանր տնքում: Մենք վախենում
ենք: Մի պահ յետոյ Ռուբէնը գալիս է մեղ մօտ արիւնոտ ձեռ-
քերով. «ազատւեց, նոր հորթիկ ծնւեց. եկէք, տեսէք»:

Նոյեմի առաջ պառկած է մի բարակ, տղեղ հորթիկ, եր-
կար ոտքերով: Նա թաց է եւ գողում է: կենդանին պառկած
է թարմ խոտի վերայ եւ լիզում է փոքրիկին. «Լւանում է
նրան», ասում է Ռուբէնը: «Հորթը մըսում է», բղաւում ենք
մենք եւ Ռուբէնը մի կտոր է բերում ու ծածկում նրան: Հորթը

շարունակում է դողալ, չի տաքանում: Ռուբէնը վերցնում է նրան եւ տանում պառկեցնում տաք թոնրի կուշտը: Մենք չենք հեռանում նրանից մինչեւ երեկոյ: Երեկոյեան նա արդէն քայլում է: Ի՞նչ չուտ են մեծանում կենդանիները: Եւ մի քանի օրից յետոյ մեզ թոյլ է տրում հորթիկին պարտէղ տանել, արեւին արածացնել կալերում: Տէրտէրի աղջիկը, Սիմիկը ասում է զւարձացած. «Հա՛, ինչ ագեղն է ձեր հորթը. մերը ուժեղ է, սիրուն. ես նրան Սիրունիկ եմ անւանում»: Ես վերաւորւած եմ:

«Մեր հորթն էլ է սիրուն, մերի անունն էլ՝ ‘Սիրունիկ, է»: Սիմիկը ծիծաղում է հեղնօրէն. «այդ չոռոս, տղեղ հորթը ի՞նչ, Սիրունիկը ի՞նչ»: Ես հորթը գոմ եմ քաշում եւ գրդուած հարցնում Ռուբէնին. «Մեր հորթը սիրուն է, հա՞, ագեղ չէ՞»: «Ոչ, նա ագեղ է եւ չոռոս, հազիւ կարողանայ ապրել. է՞ս, քեաֆթառ մօրից էդքան անջաղ դուրս դայ»: Եւ Ռուբէնը ծիծաղում է ինձ նեղացնելու համար: Ես շա՛տ տժդո՞ն եմ: Ես էլ եմ ուզում Սիմիկի հորթի նման մի հորթ ունենալ: Մայրս միխթարում է ինձ. «Նոյեմը չի կարող ագեղ հորթ ծնել. տե՛ս, ինքը ո՞րքան սիրուն է. լաւ ինամիր հորթին, ջուր տուր, կերակրիր, արեւին ման ածիր եւ կը տեսնես, որ նա մի քանի ժամանակից յետոյ կը լաւանայ, սիրուն կենդանի կը դառնայ»:

Եւ ահա ես ամբողջ օրերով զբաղւում եմ «Սիրունիկով»: Ես նրան սանրում եմ, զբօսանքի եմ տանում, իմ ձեռքով նրան կերակրում: Իմ սիրելի վահրամը օգնում է ինձ: «Սիրունիկը» փրկում է ինձ տիրութիւնից եւ հօրս համար մտահոգւելուց: Ու կենդանին փոխուում է իմ աչքերի առաջ: Նրա կաշին նոյեմի կաշու նման կարմիր է դառնում, մարմինը վայելուէ, ինքը չարաձձի: Հիմայ նա իրապէս սիրուն է: «Տեսա՞ր բալիկ,

Ես ասեցի որ լաւ ինսամքը նրան կը սիրունացնի. գեղեցիկ մօրից երբեք տղեղ զաւակներ չեն կարող ծնւել», ծիծաղում է Մայրիկս: Ռուբէնը ասում է. «Ես իրապէս յայս չունէի, որ այնպիսի մի չուռա հորթ կարող է ապրել. Եւ ա՞յսքան նեղութիւն մի հորթի համար», աւելացնում է նա արհամարանքով: Ես շատ հպարտ եմ. Վահրամը նոյնպէս: Սիրանուշը եւ Արիկը ուրախանում են մեզ հետ: Սիրանուշը մի փոքրիկ կատու ունի, որին նա սիրում է, ինչպէս ես սիրում եմ «Սիրունիկին»: Կատուն նոյն իսկ քնում է նրա անկողնում. ամէն երեկոյ մայրիկս ծածուկ մօտենում է քնած Սիրանուշին եւ կատուն դուրս տանում: Կատո՞ւ. ո՞չ. կատուներին ես չեմ սիրում: Մի չուն, մի մեծ չուն ինչպէս Գալոյենց գամփուր, ա՞հ, ինչ լաւն է:

Եղբայրներիս եւ քրոջս հետ Սիրունիկին դաշտերը զրոսանքի եմ տանում: Այնտեղ մենք հանդիպում ենք գիւղի երեխաներին, նոյնպէս այնպիսիներին, որոնց հետ Տէրտէրանց Սիմիկի կարծիքով մենք չը պէտք է խաղանք, որովհետեւ նրանք աղքատ են եւ կեղտոտ: Սիմիկը խաղում է միայն տանուտէրի, վարժապետի, տիրացուի եւ ջրաղացպանի երեխաների հետ: Նա հպարտ է եւ չի կարողանում հասկանալ, որ ես այնքան սիրում եմ փոքրիկ Արեգին: Սիմիկը Արեգին նոյն իսկ ծեծեց անցեալ օրը, երբ ես նրա հետ խաղում էի առւի մօտ: «Արեգը գիւղի միւս ծայրից է, թող էնտեղ զնայ» ասում է նա: Ճիշտ է, Արեգը ապրում է գիւղի միւս ծայրում, ես նրան հանդիպեցի Արփաչյայում լողանալիս: Նա այնքան սիրուն աչքեր ունի եւ ինձ ամէն ինչում հնազանդում է: Ես րուն ինդրեցի ինձ մօտ գալ եւ այն օրից նա միշտ ինձ հետ է: Որ նա բորբիկ է եւ նրա գլխի չիթը Սիմիկի չմթի նման նոր եւ գեղեցիկ չէ, չի խանդարում ինձ: Եթէ միայն ծնողներս թոյլ տան, ես էլ Արեգի նման բորբիկ ման կը դամ»:

«Բորիկ չի կարելի ման դալ, ամօթ է» ասում է մայրիկս : Կ'ուղէի իմանալ թէ ինչո՞ւ Արեգի համար ամօթ չէ այդ, իսկ ինձ համար ամօթ է : Ես յաճախ նստում եմ Արեգի, Սուրենի եւ Երւանդի հետ կանանչերի մէջ եւ պատմում նրանց ինչ որ ես գիտեմ : Իսկ ես շա՛տ բան դիտեմ : Բոլորն էլ ասում են այդ : Ես այնքան բան դիտեմ, որ նոյն իսկ ճառեր կարող եմ արտասանել ինչպէս հայրիկս . եւ ամենքը լսում են ինձ : Դա շատ հաճելի է : Մենք խօսում ենք յաճախ «քաղաքական» նիւթերի վերայ : Բայց իմ բոլոր ունկնդիրները «դաշնակցականներ» են : Ոչ, մենք ուրիշ կուսակցութիւններ չենք հանդուրժում : Մենք բոլորս միացած ենք : «Եթէ թաթարները դան, ասում է մէկը, կը պահւեմ դուն յետեւը եւ այնքան ճարպկօրէն կը կրակեմ, մինչեւ բոլորը սպանւեն» :

«Ես նրանց սրտերը լուսամուտի ծակից ակիշով կը ծակեմ» աւելացնում է մի ուրիշը : Մի քանիսը ուզում են քարերով կռւել, միւսները դամակներով :

Բայց փոքրիկ Անահիտը, որը մի նիհար, թոյլ եւ գունաս երեխայ էր, միշտ լուս ու հեղ եւ երբեք չէր ուզում մասնակցել մեր պատերազմական խաղերին, յանկարծ հոգոց է քաշում եւ ասում . . . «Ես ն ը ա ն ց չեմ սպանի . Ես հաւատում եմ, որ Եթէ ես կանգնեմ Թուրքերի առաջ, նրանց աղ ու հաց առաջարկեմ եւ ասեմ, նստեցէք եղբայրներ, անուշ արէք, նրանք ինձ երբեք չեն սպաննի» : Մենք ապշած ենք : Դա բոլորովին ն ո ր բան էր : Էղ մենք երբեք չենք լսել : Արդեօք Անահիտը ինքը հաւատո՞ւմ է իր ասածին : «Անահիտ, նրանք թուրք եր են, անհաւատներ, հայի արիւնին ծառաւ, ինչ էլ որ անես, նրանք քեզ կը սպաննեն» : «Ո՛չ, ո՛չ, նրանք կ'ամաչէն . ինձ նման մի փոքրիկ աղջկաց, որը նրանց հաց եւ աղ է տալիս, սպաննել» : «Ես

ինքն էլ չի հաւատում իր ասածներին, բղաւում են բոլորը, յիմար, ապուշ . նա միայն ուրիշ տեսակ է ուզում քան մենք» : Եւ մի քանիսը յարձակում են Անահիտի վերայ : Նա անշարժ կանգնած է մնում : Եւ ոչ ոք չի ծեծում նրան :

Ես մտածում եմ : Ի՞նչ լաւ կը լինէր, եթէ Անահիտի ասածը ճիշտ լինէր :

«Տատիկ, հարցնում եմ ես երեկոյեան, տատիկ՝, հնարաւո՞ր բան է այդ» . Եւ ես պատմում եմ տատիկ ցերեկուայրաւո՞ր բան է այդ» . Եւ ես պատմում է ժպտերես եւ ասում է տխուր . «Ա՛խ, դէպքը : Նա ինձ լսում է ժպտերես եւ ասում է տխուր . «Ա՛խ, դալիկ, ցաւը հենց նրանումն է, որ ն ը ա ն ք Անահիտին չեն լսի . ո՞րքան անմեղների են արդէն սպաննել թուրքերը, առանց լսի . ո՞րքան անմեղների են արդէն սպաննել թուրքերը, առանց լսի . Տես, մարդիկ միմ եանց չեն նայում, երբ որ եւ է վատ բան են կատաչեն նայում, երբ որ եւ է վատ բան են կատաչեն նայում : Մանաւանդ անմեղների մէջ նայել դիտենային, այն ժամանակ պէտք է իրար աչքերի մէջ նայել դիտենային, այն ժամանակ կ'ամաչէին եւ ամօթը գուցէ անդամալոյծ անէր նրանց հարւածող ձեռքերը : Ուրիշ կերպ ի՞նչպէս կարելի է մարդ սպաննել» :

Ուրեմն ա՞յդպէս, ուրեմն ա՞յդպէս : Ն ը ա ն ք ոլ է ո ք է միայն միայն մեր աչքերի մէջ նայեն : Դա այնքան պարզ է : Եւ ինչ ո՞ւ է դա ան կարելի :

XX.

Տանջալի՛ց դիշերներ : Անսահման երկա՛ր դիշերներ, երբ դեռ փոքր ես, վախենում ես եւ միշտ տիրութիւն ու հոգս ես տեսնում չորս կողմդ : Նորից պառկած էի ես մօրս մօրս, լայն բաց արած աչքերով, երբ յանկարծ լուսամուտը կամացուկ բաց արած աչքերով, երբ յանկարծ լուսամուտը կամացուկ լսիեցին : Առանց ճրագը վառելու մայրս հարցրեց . «Ո՞վ է» :

«Քոյրի՛կ, աչքը լո՛յս. վարժապետը եկել է, նա առողջ է, բայց դժբախտութիւն է պատահել, նա ուզում է քեզ տեսնել»: Մօրս չը տեսայ, բայց զգացի նրա դողոցը: Նա շտապ շտապ հազնւեց եւ դուրս եկաւ: Մայրս այնքան յուզւած էր, որ ինձ չէր նկատում, չէր լսում, ինչպէս ես ոտարորիկ եւ միայն մի շապիկով թեթեւ քայլերով գնում էի նրա յետեւից: Մարսափեց լուռ էի: Դուրսը կանգնած էր թեմանը: Մայրս ոչինչ չը հարցրեց, թեմանը ցած ձայնով ինչ որ պատմում էր նրան: Փոխանակ դէպի գիւղը գնալու, նրանք իսկոյն դէպի գերեզմանոց շտապեցին: Ես մրսում էի, ոտքերս քարերին էին դիպչում եւ ցաւում էին: Այն գիշեր ես չէի հսմարձակւում մօրս ճեռքից բռնել: Մենք եկանք գերեզմանատում: Մի քանի ստուերներ, ցած, զալած ձայներ: Լուսին չը կար, շատ մութ էր եւ չէի կարողանում տեսնել թէ ո՞վ էին ստուերները: Մայրս բարեւեց եւ կանգ առաւ: Ստուերներից, մէկը մօտեցաւ մեզ. «Լաւ է, որ եկար լուսիկ ջան. սկզբում չէի ուզում քեզ արթնացնել, բայց չը համբերեցի, այնքան կարօտել եմ քեզ. ի՞նչպէս էս»:

«Հայրիկ ջան, սիրելի հայրիկ», կտրեցի ես նրա խօսքերը եւ փաթաթւեցի նրա ոտքերին:

«Բալի՛կ ջան, դու ա՞յստեղ. ի՞նչ անզգուշութիւն» ու նա գրկեց ինձ դուրգուրանքով, փաթաթեց վերարկուի մէջ: Ես այնքան երջանիկ էի եւ ամէն ինչ ինձ երազ էր թւում: «Ասիրելի հայրիկ, ես քո դէմքը չեմ տեսնում, սպիտա՞կ ես թէ սեւ»: Բոլորը ծիծաղեցին:

«Ճերմակ, ճերմակ, ճիշտ բամբակի քուլա, յիմարիկ, էդ ո՞րտեղից եկար» հարցրեց մայրիկս բաղդաւոր: Այդ բոլէին ուրիշ ստուերներ էլ մօտեցան: «Բարեւ, տէրտէր ջան, լաւ է որ եկար, ասեց կամացուկ հայրս, եկ, թաղիր էս խեղճ ընկեր-

ներին: Նրանք աղնիւ եւ քաջ տղաներ էին. իրենց շինած դինամիտը անզգուշութեան հետեւանքով տրաքւել է եւ սպաննել երկուսին էլ. հազիւ կարողացանք այրւած մարմինները փրկել: Տէրտէրը ոչինչ չը պատասխանեց: Գերեզմանը փորւած էր: Մարդիկ վերցրին երկու արկղ գետնի վրայից եւ իջեցրին փոսի մէջ ու հողով ծածկեցին: Մէկը հեկեկաց. «Ա՛խ, Ակօջան, է՞սպէս պէտք է մեռնէիր»: Տէրտէրը թաղման արարողութիւնը վերջացրեց: Հայրս դարձաւ նրան. «Տէրտէր ջան, այս հինգ հոգիները, որ գտնուում են այս տեղ, կուսակցութեան մարդիկ են, մեր աղերքից են, նրանք եւ հետներս եկած կառապանները մեռելի նման կը լրեն այս անցքի մասին: Կուսակցութեան աչքերը բաց բաց են, նրա ականջները սուր, վայ' նրան, ով դաւաճանէ մեզ. թեմանին ես հաւատում եմ ինչպէս ինձ, լաւ է որ գիւղի մօտերքը նրա՞ն պատահեցի եւ ոչ ուրիշի. չը նայած քահանայ ես, բայց ժամանակները վատ են, եկ երդւիր ճեռքիդ խաչի վրայ, որ այս գաղտնիքը քեզնից ոչ ոք չը պէտք է իմանայ»: «Է՛ղ ինչե՛ր ես ասում վարժապետ ջան, ես քահանայ եմ եւ իմ պարտականութիւնն է լրել»: «Թող այդպէս լինի, տէրտէր ջան, բայց դու երդւիր»: «Իսկ այդ աղջի՞կը. երեխան գաղտնիք կը պահի»: «Կը պահէ, տէրտէր ջան, նա իմ աղջիկն է, իսկ եթէ չը պահեց, լեզուն կը կտրեմ: Լսիր ուրեմն, տղերքը այս գիշեր այս գերեզմանի վրայ մի մեծ քար կը գցեն, եւ ոչ ոքի մտքով չի անցնի, թէ նրա տակ նոր մեռելներ են թաղւած: Գերեզմանը նման կը լինի շատերի գերեզմաններին, ոչ տապանագիր եւ ոչ խաչ կ'ունենայ նա: Մեր գիւղացիք էլ խօս միայն մեռելոցին են գալիս այստեղ, իսկ այդ ժամանակը դեռ հեռու է: Մենք պէտք է այս գործը այնքան ժամանակ գաղտնի պահենք, մինչեւ ոստիկանութիւնը մոռանայ ամէն ինչ. ուրեմն երդւիր»: Տէրտէրը երդւեց խաչի վրայ

Եւ վիրաւորւած, սառնօրէն «բարի գիշեր» մաղթեց ու տուն դնաց :

«Տղերք ջան, ասեց հայրս միւսներին, ի հարկէ մենք չենք կարող երկար ժամանակ գաղտնի պահել այս գերեզմանը : Ես ուզեցի միայն տէրտէրին եւ նրա բարեկամներին, որոնք կուսակցութեան դէմ են, գգուշացնել : Թող գիտնան թէ ո՞ւմ հետ գործ ունեն : Գիւղը մեղ չի մատնի : Տղերք ջան, շատ կ'ուզէի պատւել ձեզ, բայց պէտք է զգոյշ լինենք, քարը գերեզմանի վրայ գցելուց յետոյ, նստէք կառքերը եւ հեռացէք, թեմանը ամէն ինչում կ'օգնի ձեզ» : Եւ հայրս ծնրադրեց գերեզմանի վրայ, համբուրեց թարմ հողը, յետոյ վեր կացաւ ասելով . «Բարի գիշեր, տղերք ջան, բարի ճանապարհ» : Նա բոնեց մօրս ձեռքը եւ ինձ ամուր կրծքին սեղմած ծանր քայլերով վերադարձանք տում : Կէս քուն, կէս արթուն ես մնացի հօրս թեւերի մէջ : Ես չէի ուզում հեռանալ նրանից եւ մի ականջով լսում էի այն, ինչ որ հացի ժամանակ նա շշուկով պատմում էր մօրս :

«Կուսակցութւնը ինձ շատ աշխատանք էր տւել, դրա համար այսքան ուշացայ : Երեք օր յառաջ եկայ մեր քաղաքը, յաջողութեամբ զէնքերը եւ թղթերը բիւրոյին յանձնեցի ու ուզում էի կառք նստել եւ տուն գալ : Երբ անցնում էի Միքայէլեան փողոցով, յանկարծ պայթիւն լսեցի . ամբողջ փողոցը դղղաց, մարդիկ սարսափահար տներից եւ խանութներից գուրս փախչեցին, շատերը վազեցին դէպի այն կողմը, որտեղից պայթիւնի ճայն էր եկել : Ես էլ վազեցի, ճանապարհին պատահեցի մի ընկերոջ . «Անպայման մեր դինամիտի արհեստանոցն է պայթել» ասեց նա : Երբ մօտեցանք պայթիւնի տեղը բանը բանից անցել էր . երկու տուն բոցերի մէջ էին, ոռումքերը դեռ շարունակում էին պայթել, կանանց եւ երեխաների

լացն ու կոծը աշխարհ էր բռնել : Մնում էր միջոցներ ձեռք առնել, որ նախ քան ոստիկանութեան գալը, ինչ որ դեռ կարելի էր ազատել՝ ազատէինք : Մեր տղաներից մի քանիսը, մահը աչքերին առած, չը նայած բոցերին եւ պայթումներին՝ մտան տների մէջ եւ դուրս բերեցին մեր ընկերների դիակները : Միւսները անցան փողոցի երկու ծայրերը, որպէս զի ոստիկանների գալուն՝ նրանց այնքան զբաղեցնեն, մինչեւ տղերքը ամէն ինչ պահեն, պարտկեն : Ես էլ կանգնեցի փողոցի ծայրում : Քիչ անցած եկաւ ոստիկանապեաը շրջապատւած մի խումբ ոստիկաններով : Բայց դու գիտես, թէ ո՞րքան վախսկու են այդ մարդիկ այս օրերին : Մեր քաջ ահարեկիչների գնդակները այնքան են աղդել նրանց վրայ, որ նրանք նոյն իսկ վախենում են խուզարկութիւն կատարել : Անորոշ կանգնեցին անկիւնը, առանց համարձակւելու մօտենալ այրւող տներին : Ես բարեւեցի ոստիկանապետին եւ իրը թէ բանից տեղեկութիւն չունեմ էպօլէտաներս շտկելով, մանրամասնութիւններ հարցեցի պատահածի մասին : «Ես ինքս էլ չը գիտեմ գործի եղելութիւնը, ասեց նա ուսերը թափահարելով, էդ անպիտան հայ սրիկանների գործերը կը լինեն, գնդակահարել է պէտք նրանց» : Միամիտ դէմքով, հանեցի գրավանից ծխատուփս եւ առաջարկեցի նրան ծխել : Մինչ այս, մինչ այն, նրան շարունակ նոր հարցերով զբաղեցրի, իսկ մեր տղերքը դիակները դրել էին արկղների մէջ եւ չը գիտէին ի՞նչ անել : Փողոցը երկու կողմից շրջապատւած էր, ոչ կառք կարող էր անցնել, ոչ էլ մարդ : Յանկարծ մի կին մօտենում է նրանց եւ ասում . թող դիակները բերեն դիմացի տունը եւ կարպետի դազգեահի տակը պահեն . եւ իրապէս դիմացի դռան մէջ մի պառաւ է կանգնած լինում եւ արտասունքը աչքերին ձեռքով է անում : Տղերքը իսկոյն պառկեցնում են արկղները դազգեահի տակ,

թելի կծիկներով ծածկում, ծածկոց քաշում վրան: Պառաւը նստում է կարպետի դիմաց, ոտքերը զնում արկղների վրայ եւ կարպետ գործում: Դիտմամբ դուռը եւ լուսամուտները բաց են թողնում, որ դրսից անցնողը տեսնի ներսում կատարւածը: Ոստիկանները եկան, ամէն տեղ խուզարկեցին, սրա նրա վերայ կառկածեցին, երկու, երեք անմեղ մարդկանց ձերբակալեցին, բայց ոչինչ չը գտան. ամէն ինչ ծածկւած, պահւած էր, միայն տուններն էին շարունակում այրւել: Նրանք պտոյտ արին ամբողջ փողոցը, մտան եւ պառաւի տունը, որը հանգիստ նստած իր գործն էր շարունակում, նրա տունն էլ տակն ու վրայ արեցին, բայց դազգեահի տակը, ուր դիակներն էին պահւած, չը նայեցին: Երեք օր նրանք փողոցը շրջապատւած պահեցին եւ երեք օր խեղճ պառաւը վախից եւ վշտից դողալով, ոտքերը միշտ դիակների վերայ պահած գործեց ու գործեց: Ոստիկանութիւնը նրա վերայ ոչ մի կասկած չը տարաւ. Է՞նքան պառաւ եւ ջահէլ կանայք կան Հայաստանում, որոնք կարպետ են գործում: Այսօր նրանք յոյսը կտրած հեռացան: Իսկ բիւրոյում արդէն վճռել էին որ մեռածներին ես վերցնեմ եւ քաղաքից հեռու, մեր գիւղում թաղեմ: Երբ ամէն ինչ հանգստացաւ, այս գիշեր հինգ հաւատարիմ ընկերներով մտանք պառաւի տունը, վերցրեցինք դիակները եւ եկանք»:

«Աստուած հայ յեղափոխականների հետ է, ասեց մայրիկս, իսկ խեղճ պառամւը»:

«Պառաւը, Լուսիկ, էն խեղճ պառաւը... հօրս ձայնը դողաց, պառաւը Լուսիկ ջան, ա՛խ, այն պառաւը մեռնողներից մէկի մայրն էր»:

«Մայրը, Միհրան»:

«Այո, մայրը. իր միակ որդին էր...»:

Երբ աչքերս բացեցի, առաւօտ էր: Ես պառկած էի իմ ան-

կողնում: Սենեակում ոչ ոք չը կար: «Մայրիկ, մայրիկ», կանչեցի ես:

«Ի՞նչ է բալիկս»: Հայրս էր կռացաւ, համբուրեց աչքերս:

«Բալիկ ջան, այս դիշերից դու ոչինչ չը գիտես, լսեցի՞ր. ոչինչ չես տեսել, ոչինչ լսել. բոլորը երազ էր գու իմ անուշ բալիկն ես, չէ՞»:

«Հայրիկ ջան, ոչինչ չեմ տեսել, ոչինչ լսել. ամէնը մի վատ երազ էր»:

«Երդւիր»:

«Քո արեւը ինձ վկայ, Հայրիկ ջան»:

Հայրս ասեց. «Ա՛խ, բալիկ ջան, ինչո՞ւ դու աղջիկ ծնւեցիր: Եթէ դու տղայ լինէի՞ր»: ...

XXI.

«Ինչո՞ւ դու աղջիկ ծնւեցիր. Եթէ դու տղայ լինէի՞ր»: Այս խօսքերով հայրս բացեց սրտումս մի հին վէրք, որը դեռ միշտ մխում էր: Հին երազներս նորից արթնացան: Ամբողջ հոգով ըմբռստացայ իմ աղջիկ լինելուս դէմ: Մայրս շատ անգամ ասել էր ինձ, որ աղջիկներն էլ քաջ են, շատ քաջ, բայց երբեք չեն կարող տղաների նման լինել: «Աստուած նրանց թոյլ է ասեղծել, բայց տղաներն էլ չեն կարող անել այն ինչ որ աղջիկներն են անում, կը մեծանաս, կը հասկանաս», ասում է նա: Ես ասում եմ այդ նախաղասութիւնը: Ի՞նչ կարիք կայ մեծանալու, երբ ես հիմայ էլ ամէն ինչ գիտեմ: Միթէ չե՞մ տեսնում այն տարբերութիւնը որ անում է տղամարդի եւ կնոջ մէջ: «Աղջիկը օտարի ճրագ է, իր ընտանիքին նա չի լուսաւորում», «մարդը գլուխն է, կինը ոտքերը», ասում է մեր գիւղացին: Որքան դժբախտ է մարդը, երբ նրա կինը աղջիկ եւ ոչ տղայ է ծնում: «Օջախս մարում է, ցեղս փճա-

նում, Աստուած ինձ իմ մեղքերի համար միայն աղջիկ է տալիս» ասում է նա: Երբ մէկին մի տղայ է ծնուռմ, իսկոյն գալիս են բոլոր բարեկամները եւ ազգականները հօր մօտ եւ չնորհաւորում են նրան. «աչքդ լոյս, հիմայ ժառանգ ունիս»: Աղջիայ համար ոչ ոք չի չնորհաւորում ծնողներին: Ուեղձ վարդին, մի սիրելի կին, արհամարտած է բոլորից, որովհետեւ նա իր մարդուն միայն աղջիկներ է ծնում: Երբ նրան վերջին աղջիկը ծնւեց, նա այնքան դժբախտ էր, որ ամբողջ ժամանակ լաց էր լինում եւ չէր ուզում երեխային տեսնել: «Եւ միայն մայրական գութը, որը աշխարհում ամէն բանից բարձր է, ստիպեց Վարդիին սիրել երեխային» ասում է տատիկս: Իսկ մեր տանը: Միթէ Արիկը եւ Վահրամը չէ՞ն հօրուժառնորդները, միա՞ն նրանք: Ես գիտեմ, որ հայրս, մայրս եւ տատիկս սիրում են ինձ: Մեր տան հիւրերը եւ հօրս բարեկամները ինձ «Միհրանի փոքրիկ զինուոր» են անւանում, մայրս, երբ նա մենակ է մնում, ինձ է իր անկողնում քնացնում, չէ՞որ ես նրա մեծ երեխան եմ: Բիձան մեր տանը գալիս, ինձ էր գնում ծնկներին, խաղում ինձ հետ, Անդրանիկի մասին պատմում, բայց եւ այնպէս եղբայրներիս ամէն ինչում ջոկում են մեզնից: Նրանց երբեք «չոռ ու գրող» չեն ասում. անցեալ օրը, երբ ես Արիկին «գրող չափեցի», տասու վշտացաւ եւ յանդիմանեց ինձ. իսկ քանի անդամ է Արիկը նոյնը ասել իմ վերաբերեալ եւ ոչ ոք չի տժդուռում նրանից. «Աղջիկը դարի է, տղան ցորեն» ասում են գիւղացիք: Իսկ գարի հացը լաւ չէ, ոչ ոք չի ուզում նրան ուտել: Ես զգում եմ որ իմ շրջապատում մի մեծ անարդարութիւն է իշխում: Ախր, ես տղաներից ինչո՞վ եմ պակաս. աղեղ գցելիս իմ քարն էլ վզզալով հեռու տեղ է ընկնում. մենամարտելու ժամանակ ես իմ հասակակից տղաներից յետ չեմ մնում եւ շատ անդամ յաղթում եմ նրանց:

Միթէ անցեալ օրը չէ՞ր, որ Երւանդին դետին զլորեցի եւ նրան այնքան ամուր սեղմած պահեցի, մինչեւ ողորմութիւն խնդրեց: Էլ ինչո՞ւ է հայրս ափսոսում իմ աղջիկ լինելը: Ինչո՞ւ գիւղի կանայք եւ աղջիկները անամօթութիւն են համարում, երբ ես վազվզում եմ տղաների հետ դաշտերում, ծառեր եմ բարձրանում եւ «Հրացանովս» կրակում: Եւ ինչո՞ւ հէքեաթների եւ իրական կեանքի հերոսները միայն տղամարդիկ են: Միթէ կանայք տմա՞րդ են, վախկոտ: Իսկ մայրեկս, իմ քաջ, լաւ մայրեկս: «Կանայք թոյլ են» ասում է մայրս: «Դո՞ւ էլ, մայրեկ»: «Այս, ես էլ»: Ինչո՞ւ: Եւ ես ասում եմ այդ թուլութիւնը, ասում եմ իմ աղջիկ լինելը:

Ամէն երեկոյ աղօթում եմ Աստուած. «Բարի Աստուած, ինձ տղայ դարձու, զու լաւ ես, զու կարող ես անել այդ»: Բայց Աստուած չի լսում իմ խնդիրը:

Մեր գիւղում մի մարդուկ կար, «քոռ» Մոսօ էին պսում նրան, որովհետեւ մի աչքը կոյր էր: Նրա ոտքերը երեխայ ժամանակ ծալել էին մի ծանր հիւանդութիւնից յետոյ եւ նա հաղիւ էր կարողանում երկու փայտերի յենած, սողալ գետնի վրայով: Մոսօն «կախարդ» էր, գիւղի նետ բացողը, գարի զցողը, եկեղեցու զանազան իրերի մաքրողը: Ես երեմն Արեգի, Սուրենի եւ Երւանդի հետ գնում էի նրա մօտ, երբ նա եկեղեցու բակում նստած մաքրում էր ծանր մոմակաները. նա շատ լաւ պատմութիւններ գիտէր սուրբերի կեանքից եւ ուշադրութիւն դարձած մենք ժամերով լսում էինք նրան: Ահա նրա մօտ գնացի ես մի օր, երբ տեսայ թէ տղայ դառնալու համար արած բոլոր աղօթքներս անօդուտ անցան: «Մոսօ, կանգնեցի ես նրա առաջ, Մոսօ, ինձ համար էլ նետ րաց, ես ուզում եմ ուխտի գնալ»: «Ինչո՞ւ, ի՞նչ մուրազ ունիս», հարցրեց նա կէս զւարձացած, կէս զարմացած: «Եթէ զու ինձ

Խոստանաս, ոչ ոքի չասել, կը պատմեմ քեզ»: «Ամենափրկիչը ինձ վկայ, ոչ ոքի չեմ ասի»: Մօտեցայ ականջին եւ շնչացի խորհրդաւոր. «Ես այլեւս չեմ ուզում աղջիկ լինել. ես ուզում եմ տղայ դառնալ. բարի Աստևածը ինձ չի օգնում: Գուցէ մի Սուրբ օգնէ ինձ, երբ ոտարորիկ ու ծոմ պահելով նրա մօտ գնամ»: Մոսօն սրտանց ծիծաղեց: «Ինչո՞ւ ես ծիծաղում, Մոսօ», ու աչքերս լեցւեցին արտասունքներով: «Ի՞նչպէս չը ծիծաղեմ. այսպէս բան ես կեանքումս դեռ չեմ լսել: Աղջի, դու ինչո՞ւ ես ուզում տղայ դառնալ» եւ Մոսօն շարունակում էր ծիծաղել: «Մի ծիծաղիր, յիմար Մոսօ, դու չես հասկանում, ես քեզ չեմ ասի, թէ ինչո՞ւ եմ ես ուզում տղայ դառնալ: Միայն ասա, ո՞ր Սուրբը կարող է օգնել ինձ: Կամ մի թլում գրիր, մի բան արա: Եթէ տղայ չը դառնամ, կը մեռնեմ»:

«Աղջիկ, ոչ մի սուրբ չի կարող օգնել քեզ: Ես քեզ խրատ կը տամ, թէ դու ի՞նչ միջոցով տղայ կը դառնաս, միայն վարձատրութիւն եմ պահանջում»:

«Ես քեզ ամէն ինչ կը տամ Մոսօ, ամէնը, ինչ որ կարող եմ: Ես քո մոմակալները կը մաքրեմ ամէն օր, քո չորերը կը լւամ, քեզ ուտելու լաւ բաներ կը բերեմ: Ամէն ինչ կը տամ քեզ, միայն ասա, Մոսօ, մի ծածկիր»:

«Լաւ. ես այդ բոլորը չեմ ուզում քեզնից. ես ուզում եմ միայն քո կարմիր, միքը թշերը համ բուրել, շատ անգամ հա՞»:

Ես տատանւեցի. Մոսօն ծուռ բերան ունէր, փթած ատամներ, ջրոտ շրթունքներ: Եւ նա անտանելի հոտում էր: Բայց ոչ մի տատանում: Միթէ տղայ դառնալու համար ես պատրաստ չե՞մ ամէն ինչ անել: «Լաւ, Մոսօ, ասեցի ես, համբուրիր ինձ, միայն ցոյց տուր տղայ դառնալու միջոցը»: Մոսօն ժպտաց խորամանկօրէն. «Դրանից էլ հե՞շտ բան. հենց որ

Աստծու գօտին (ծիածանը) դուրս գայ, վազիր եւ անցիր տակիցը, անմիջապէս տղայ կը դառնաս»:

«Ճի՞շտ է, Մոսօ»: «Ի հարկէ ճիշտ է. հարցրու ում որ ուզես, միթէ այդ մասին դեռ չե՞ս լսել: Արեւս վկայ, այդպէս է»: Եւ Մոսօն բռնում է դլուխս ու իր փթած բերանով համբուրում է դէմքս, երկա՞ր, երկա՞ր: Գարշում եմ, բայց խելօք կանգնած եմ: «Անխելքը էսպէս սիրուն երես ունի եւ տղայ է ուզում դառնալ. յիմա՞ր է, ի՞նչ է»: Մոսօն զգւելի է: Ես ատում եմ նրան: Դուրս եմ սրկուում նրանից եւ փախչում սրտատրոփ, երեսս անընդհատ սրբելով: Սիրոս խառնուում է: Բայց ես հիմայ տղայ դառնալու միջոցը գիտեմ: Եւ երբ ես տղայ դառնամ, ոչ ոք չի կարող ինձ արգելել, որ հրեղէն ծիուս նստած, հրեղէն սուրս ձեռքիս մութ աշխարհ ըլոյս աշխարհ հի վերածեմ: Լոյս աշխարհ հի, չայկի աշխարհ հի, չայասպանի:

Եւ նա երեւաց մի արեւոտ օր յորդառատ անձրեւից յետոյ: Իր եօթը գոյներով նա կամար կապեց Արագածի սպիտակ գաղթին: Աշխարհը պայծառացաւ: Նա ծիծաղում էր: Ոչ ոքի մի խօսք չասեցի: Կամաց դաշտ դուրս եկայ եւ շնչակտուր վազեցի ծիածանի ուղղութեամբ, դէպի ճերմակ Արագածը: Վազում էի ու վազում. եւ ինչ տարօրինակութիւն, քանի վազում էի, ծիածանը այնքան հեռանում էր ինձանից: Շունչ առայ, դանդաղեցրի վազքս, բայց շարունակեցի ճամբաս: Ծիածանը այլեւս չը կար: Նա երեւի Արագածի յետեւնէ, մտածեցի ես. պէտք է սարը բարձրանամ, պէտք է գտնեմ նրան: Ես կը գտնեմ նրան, եթէ նա նոյն իսկ աշխարհի միւս ծայրում լինի: Արեւը անխնայօթէն այրում էր. յոգնածութիւնից ոտքերս չէին ուզում հնաղանդւել ինձ, քաղցը եւ ծարաւը տան-

ջում էին ինձ , բայց ես գնում էի ու գնում . ոչ փոսի էի նայում ,
ոչ քարի , ոչ էլ ձորի :

Յանկարծ մթնեց : Հայաստանում մութը մէկէն է պատում : Սարսափեցի : Չորս կողմս ցորենի դաշտեր , հեռուում սարերի սիլուեթները : Ոչ մարդ , ոչ կենդանի : Արեւի վերջին լոյսը մարեց հեռուում եւ Արագածի վարդադոյն դլուխը կապտեց , սեւացաւ : Տարօրինակ ձայներ չե՞ն , որ լսում են չորս կողմս : Գիշերը կամաց մօտենում էր : Եւ Արագածը ա՛յնքան հեռու էր : Մէկը ծաղրում էր ինձ մթութեան մէջ . «Խելառ աղջիկ , աշխարհը այսպէս եկել է , այսպէս էլ կը գնայ : Աղջիկը աղջիկ կը մնայ , իսկ տղան տղայ : Աշխարհը ծեր է , շատ ծեր : Մոռացիր փափագդ , տուն վերադարձիր» : Բնկայ գետնի վերայ , սեղմեցի երեսս հողին : Ես գիշերից չէի վախենում . մէնակութիւնը չէր ճնշում ինձ : Ես կասկածում էի ու դժբախտ էի : Մի խորը , անտանելի կարօտ սեղմում էր սիրտս : Երբ առաւոտը գայ , ես կը շարունակեմ ճամբաս : Ես չը պէտք է զիջեմ : Ես պէտք է բարձրանամ Արագածը , պէտք է գտնեմ Աստծու գօտին , Մոսօն իր արեւով երդւեց : Եւ տատիկս , երբ ես նրան հարցրի , թէ Ասածու գօտու տակից անցնող աղջիկը կարո՞ղ է տղայ դառնալ , հասուատեց այդ :

Քունս տանում էր : Դանդաղ փակւեցին կոպերս : Ամառայ գիշերը փաղաքում էր ինձ , աստղերը ինձ հէքեաթ էին պատմում : Քնեցի :

Արեւը արթնացրեց ինձ : Չորս կողմս Հայոց սիրուն լեռների կարաւանն էր , որ Կովկասից գալով համում է աշխարհի էն ծայրը : Հայոց սարե՞րը հէքեաթներով եւ առասպելներով լցուն : Ու ես փոքրիկ Հայը , լուսաւորւած արշալոյսով , առաւոտայ ցողը դէմքիս եւ մազերիս , քայլեցի դէպի Արագածը , դէպի Հայոց լեռները , ուր ցեղիս հոգին է ապրում հի՞ն , շատ

հի՞ն դարերից : Քայլեցի դէպի լեռները հրաշք ապրելու համար : Մի հրաշք պէտք է կատարւէր : Նա կը կատարւի : Անծանօթ , աշխատող մարդիկ եկան դաշտ զարմացան , հարց ու փորձ արեցին : Ես նրանց խօմ չեմ պատմելու ճամբիս նպատակը : Եւ լուր ուզում եմ հեռանալ , միշտ դէպի առաջ դէպի սարերը երբ յանկարծ . մի ձիաւոր երեւաց : Ձեռքը աչքին դրած , որ արեւի լոյսը իրան չը կուրացնի , հայրս կանչում էր . «Աղբարտի՞ք , մի փոքրիկ աղջիկ ձեր ճանապարհին չը տեսա՞ք , մի փոքրիկ աղջիկ , երկա՞ր հիւսերով» : Ես փորձում եմ պահւել : «Զատէք , բղաւում եմ ես մարդկանց , ձիաւորը հայրիկս է» : Անծանօթները ծիծաղում են , ձեռքով են անում հօրս . «Ուզածդ աղջիկը այստեղ է» : Հայրս մտրակում է ձին . եւ ահա կանգնեց իմ առաջ : «Հա՞յ , բալիկ ջան» : «Հա՞յրիկ» : Նա ինձ ձիւն բարձրացրեց , ինձ իր առաջը թամքին նստեցրեց , ամուր կուրծքին սեղմեց , շնորհակալութիւն յայտնեց մարդկանց եւ ձին յետեւ սլացաւ . «Հայրիկ , դէպի Արագած , դէպի սարերը , հայրիկ» բղաւեցի ես յուսահատ եւ փորձեցի նրա գրկից ազատւելու : Անուժութիւնից բարձրաձայն լաց եղայ : Զգում էի , որ նրա ուժեղ , ինձ սեղմող ձեռքերը , նրա ձիու արագ ոտքերը տրորում , մեղքնում էին երազս : «Ի՞նչ է պատահել , բալիկս , պատմիր , ո՞ւր էիր գնում , միթէ կարելի՞ է այդպիսի բաներ անել : Ամբողջ օրը եւ ամբողջ գիշերը փնտուեցինք քեզ : Տատղ եւ մայրդ յուսահատւած են : Մենք կարծում էինք թաթարներն են քեզ տարել , կամ աղքատները կամ ո՞վ գիտէ ի՞նչ է պատահել» , խօսեց հայրս բարկացկոտ : «Ես ոչինչ չեմ պատմի» : «Դու կը պատմես» , հրամայեց եւ համոզեց հայրս : «Ես չեմ կարող պատմել» : Ինչպէս մի սիրահար իր սիրուհուն կորցնելուց յետոյ , չի խօսում նրա մասին , ես էլ չէի ուղում խօսել իմ նուիրական , հիմայ մեռնող երազից :

Բայց հայրս սպառնում էր, ստիպում, իսկ ես սիրում էի հօրս։ Արտասովնքից խեղդելով, պատմեցի նրան Մոսոյից, իմ երազից, իմ հաւատից։ «Ի՞նչ աւանակն է քո Մոսօն։ Դա մեր ժողովրդի սնապաշտութիւնն է, լսո՞ւմ ես Հայ, աղջիկը միայն հէքեաթիւների մէջ է տղայ դառնում»։ ու հայրս երկար ինչ որ բացատրում էր ինձ, որը ես բոլորովին չէի ուզում լսել։ Յետոյ հարցրեց։ «Ինչո՞ւ ես ուզում տղայ դառնալ»։ «Որ զինւոր լինիմ, ի սկական գինւոր լինել։ ո՞վ է խանգարում քեզ զինւոր իսպալ»։ Եւ յանկարծ ես ամէն ինչ հասկացայ. «Ոչ թէ իսպալ, հայրիկ, կուել եմ ուզում»։ Ու ես անմիխթար հեկեկացի։

«Տես, բալիկ, լրջացաւ հայրս, մօրդ օրինակ վերցրու։ Նա էլ քեզ նման խելա՛ռ, փոքրիկ աղջիկ էր։ իսկ հիմա՞յ։ Տես ինչե՞ր է կատարում նա. առաջինը — նա ձեզ բոլորիդ ընծայեց ինձ եւ լաւ մայր է։ Երկրորդ — նա իմ աջ ձեռքն է, ի՞նչ եմ ես առանց նրան։ Ամէն բանում օգնում է նա ինձ։ Եւ նա քաջ է, աւելի քաջ քան շատ տղամարդիկ։ Ի միջի այլոց դու ճանաչում ես «իտալացու օրիորդի» նկարը եւ երգում ես «Մեր հայրենիքը»։ Միթէ նա քեզ դուր չի՞ գալիս»։ «Նա, լաւ աղջիկ է, բայց նա միայն դրօշակ գործեց ու իր եղբօրը կոիւ ուղարկեց։ Ինքը տանը նստեց։ Ինչո՞ւ նա չը զոհ էւ եց իր հայրենիքին»։ «Ա՞յլպէս։ Դու ուզում ես ի՞նք քո զոհ էւ ել։ Ժամանակները փոխում են։ Սպասիր, ես կը պատմեմ քեզ մի հայ աղջկանից, Մարոյից։ Դու դեռ փոքր ես, շատ բան չես հասկանայ, բայց միտքը պահիր, երբ մեծանաս, կ'ըմբռնես»։

Եւ հայրս պատմեց ինձ Մարոյի պատմութիւնը։ «Մարօն այնքան խորն էր սիրում իր հայրենիքը, որ թողեց ծնողներին,

աղդականներին, բարեկամներին, փափուկ կեանքը ու դէպի ժողովուրդ, դէպի «երկիր» գնաց։ Գնաց «երկիր», ուր մարդիկ թուրքի լծի տակ դեռ միշտ տառապում են, ուր միայն արցունք եւ ցաւ կայ, ուր Անդրանիկը եւ իր քաջերը տարիներով կուեցին Սուլթանի դէմ։ Այդ աղջիկը իր ճամբին մի սիրուն տղայի պատահեց, Արէս անունով մի քաջ տղայի, որը նոյնպէս տուն ու տեղ թողած, սար ու ձոր էր անցել, որ իր աղդին օգնութեան հասնի։ Մարօն եւ Արէսը սիրեցին միմեանց եւ նշանւեցին։ Բայց մի օր Արէսը պէտք է կոիւ գնար, Խանասորի կոիւը։ Մարօն չէր կարող նրա հետ զնալ, նա աղջիկ էր, նա «իտալացու» օրիորդի նման մի դրօշակ գործեց, վրեն դրեց «Մահ կամ ապատութիւն» եւ ընծայեց Արէսին ու իր ընկերներին։ Բայց աղջիկը տեսաւ, որ Արէսը շատ է մտածում իր մասին։ Մարօն վախեցաւ, որ իր սիրած տղեն լաւ չի կուտի, միւս քաջերից յետ կը մնայ, իրեն կը խնայի սիրածի պատճառով։ Եւ գիտե՞ս, ի՞նչ արեց Մարօն։ Նա որոշեց մեռնել։ «Երբ ես մեռնիմ, մտածեց նա, Արէսը այլեւս չի մտածի իմ մասին, նա ուրախ եւ քաջաբար կը կուե»։ Վերջին գիշերը, բաժառնումից առաջ, երբ Արէսը քնած էր, Մարօն նստած հարեւան ունեակում հետեւեալ նամակը գրեց։ «Ես մեռնում եմ սիրելիս, որովհետեւ ուզում եմ, որ դու իմ մասին չը մտածես, յոյսդ ինձանից կտրես, որպէս զի աւելի լաւ աշխատես մեր անբախտ երկրի համար։ վախենում եմ կուտի ժամանակ քեզ խնայես իմ պատճառով, դրա համար մեռնում եմ, որ դու առանց ափսոսանքի եւ վախի զոհւիս քո աղդին»։ Եւ Մարօն իր ատրճանակով սպաննեց իրեն։

Արէսը կոիւ ղնաց, Խանասորի կոիւը, եւ կուեց յուսահատ։ Շատ երգերում փառաբանւում է այդ։ Գիշեր էր։ Քիւրտերը քնած էին իրենց վրաններում։ Քնած էր նոյնպէս

նրանց արիւնարբու բէկը, որը տանիջել, կողոպտել եւ սպաննել էր անթիւ հայերի : Արէսի հրամանատարութեամբ զինւորները զգուշութեամբ սողալով մօտեցան վրաններին եւ կոխը սկսեց : Հրացանները որոտացին . լաց, աղմուկ, շիւան : Կանայք դուրս փախան երեխաններին գրկած : «Ամէն գնով խնայեցէք կանանց եւ երեխաններին» բղաւեց Արէսը :

Դու գիտես երգից՝

«Աման Աստւած Փիտան եկաւ, ո՞ւր փախչիմ,
Ասաց որդուն կրծքին սեղմած լեղապատառ քրդուհին,
Մի վախենար, հանգիստ եղիր բաջի ջան,
Կանանց երբեք ձեռք տալու չէ վրիժառու քաջ Փիտան» :

Ամբողջ գիշերը մերոնք կուեցին քուրդերի դէմ : Առաւուայ աղջամուղին Արէսը ընկաւ երեսի վրայ : Թշնամու դնդակը ծակել էր նրա սիրտը» :

«Ես չեմ ուզում Մարոյի նման լինել, կանչեցի ես . Արէսի նման պէտք է կուեմ եւ մեռնիմ : Մարօն մեռաւ առանց կուելու : Ես ուզում եմ մեր երկրի վիշտապներին սպաննել, ես ուզում եմ որ Հայկի երկիրը լոյս աշխարհ դառնայ» :

«Լաւ . ես քեզ մի ուրիշ աղջկանից պատմեմ : Դու պէտք է միայն սպասես, մինչեւ մեծանաս : Փոքրիկ տղաները նոյն-պէս զինւոր չեն գնում : Օրլեանի կոյսը տասնեց տարեկան էր : Դու ուրեմն դեռ շատ ժամանակ ունես : Լսիր» : Եւ հայրս պատմեց ինձ նրա պատմութիւնը :

«Հայրիկ, բղաւեցի ես սքանչացած, ես Յովհաննայի նման կը լինեմ, ես կը փրկեմ Հայաստանը» : «Լսիր, բայիկ : Դու չը լսեցիր մինչեւ վերջը : Յովհաննան մեռաւ կրակի բոցերի

մէջ . լսիր» : Ու հայրս պատմեց ինձ նրա մահը : Ես տան-ջւում էի : Ինչո՞ւ է աշխարհը այսքան ստոր : Մի լուսաւոր աղջիկ այրում են որպէս կախարդի : Մի այնքան սիրելի աղջիկ :

Բայց միթէ դա կը վախեցնի՞ ինձ : «Երբ ես Հայաստանը փրկեմ, թող ստոր, զզւելի աշխարհը ինձ էլ այրի» կանչում եմ ես սրտանց :

Մի պահ լուսում ենք : Ապա հայրս ստում է կամաց, բայց հաստատ . «Լաւ . խոստացիր, որ մինչ այն դու իմ լաւ աչիկս կը մնաս : Երբեք չը փորձես տանից փախչելու» :

«Երբեք . ես խոստանում եմ այդ» :

Մենք տուն եկանք : Ուրախութիւն, զարմանք, յանդիմա-նութիւն : Հայրս լոեց փախուստիս պատճառի մասին : «Գնում էր Արագածը տեսնելու», ասեց նա յոդնած եւ նայեց ինձ :

Հայրիկ : Դու եւ ես :

Այն օրւանից Օրլեանի հրաշալի աղջիկը, մի օտար եւ հե-ռու ժողովրդի հերոսուհին, իմ իղեալը դառաւ : Աշխարհը լիքն է ստւերներով եւ լոյսով : Բայց լոյսը կը յաղթի : Ես խո-սպէս հաւատում եմ դըան :

Երբ մեծանամ, երբ մեծանամ, Հայոց եր-կրի վիշտապներ, դուք ինձանից չէք աղա-տւի . . . :

XXII.

Հետեւեալ երեկոյ, երբ ամբողջ բնտանիքը ինքնաեռի շուրջն էր բոլորւած, հայրս դառնալով տատիկիս ասեց . «Մայ-րիկ ջան, առաւօտը Հային դպրոց տար . Երեխան մեծացել է եւ պէտք է մի բան սովորի, ի՞նչ է դեռ ու դեն քարչ գալիս ամբողջ օրը» : Տատիկս զարմացած հօրս նայեց . «Որդի, Երե-

խան մատի չափ է, վարժապետն էլ քո թշնամին, ի՞նչպէս
ես քէ օր պիտ նրա մօտ ուղարկում»:

«Ոչինչ մայրիկ, երեխան քո կարծածի չափ փոքր չէ. ինչ
մնում է վարժապետին, յոյս ունիմ որ ինձ կ'աջողվի գիւղի մի
քանի հաստագլուխներին համոզել եւ դպրոցը կարգի բերել:
Բացի դրանից Ռուսաց կառավարութիւնը տեղի է տալիս, մենք
նորից Հայոց դպրոցներ ենք ունենալու: Ո՞վ կարող է մեղ
այնուհետեւ խանգարել մեր ջահէլ ճեմարանցիներին վարժա-
պետ նշանակել, որոնք ամբողջապէս նոր կեանքի հետ են:
Կը տեսնէք»: Տասո դեռ երկար եւ յուղւած խօսեց հօրս հետ:
Մայրս այս անդամ էլ լուռ էր, ինչպէս եւ միշտ, երբ հայրս եւ
տատիկս վիճում էին միմեանց հետ:

Ամբողջ գիշերը չը կարողացայ քնել: Սիրտս տրոփում էր:
Դպրոց: Ծեր, կուացած վարժապետը իր սպիտակ մօրուքով եւ
փոքրիկ, ծակող աչքերով ինձ դուր չէր դալիս: Գիւղացիք
նրան «Փարմասօն» էին անւանում եւ վախենում էին նրանից:
Նա տարին միայն մի անդամ էր եկեղեցի գնում, երեսին խաչ
չէր հանում եւ միշտ կարդում էր հաստ, հին գրքեր: Եետոյ,
ոչ մի աղջիկ մեր գիւղում դպրոց չէր գնում: Զօրաքոյրներս
պատմում էին, որ նրանք գրելլ եւ կարդալը սովորել էին
գիւղի տիրացու Գարոյի մօտ. նրանք Գարոյի առաջին եւ վեր-
ջին աշակերտուհիներն էին եղել: Ուրեմն ես առաջին դպրոց
դնացող աղջիկն էի լինելու մեր գիւղի բոլոր սերունդների
մէջ: Իսկական դպրոց: Եւ տղաների հետ: Հպարտ էի ներ-
քուստ, բայց քաշւում էի, վախենում: Առաւոտը մայրիկս մա-
զերս սանրեց, հիւսեց, նոր հագուստ հագցրեց:

«Հայ, դու հիմայ միակ աղջիկն ես լինելու այնքան տղա-
ների մէջ. քեզ այնպէս պահիր, որ ամօթով չը լինես: Քաջ
եղիր, լաւ սովորիր» եւ հայրիկս ուրախ ժպտաց: Տատիկս լուռ

բոնեց ձեռքիցս, ինձ հետը քաշեց: Առանց դպրոցի դուռը
թակելու տատս ներս մտաւ եւ անցաւ այն սենեակը, որտեղից
ձայներ էին լսում: Յովհաննէս վարժապետը նստած էր վա-
ռարանի մօտ. նա զարմացած նայեց մեղ եւ վեր բարձրանալով
մօտեցաւ տատիս: «Հը՝, Նունի քոյրիկ, ի՞նչ է, խե՞ր է»:
«Խեր է, Յովհաննէս, խեր. սրանից քսան ու վեց տարի յառաջ
տղայիս բերեցի քեզ մօտ ուսման: ին ժամանակ դու եւ ես
ճերմակ մազեր չունէինք գլխներիս վրայ: Հէ՛յ գիտի աշ-
խարհ, ո՞րքան ջրեր են անցել էն օրից. շնորհակալ եմ քեզա-
նից, որբիս լաւ սովորացրիր, ուղիղ ճամբու դրեցիր: Հիմայ
քեզ թոռիս եմ բերում: Տղիս գոմի օդայում, խսիրների վրայ
դաս տւեցիր, սրան էլ էս լուսաւոր սենեակում գրել կարդալ
սովորեցրու: Թող ուսումնական դառնայ, որ աշխարհը լաւ
հասկանայ, եւ մեզ պէս կոյր հաւի նման չը մնայ»: «Բարով,
հաղար բարի նունի քոյրիկ, թոռդ գլխիս վրայ տեղ ունի:
Երեսուն տարի է վարժապետ եմ, փոքրիկը իմ առաջին աշա-
կերտուհին է»: Եւ ուսուցիչը դիտեց ինձ մի պահ: «Անունդ
ի՞նչ է»: «Հայ»: «Հայ՞. ի՞նչ տարօրինակ բան. մենք բոլորս էլ
հայ ենք. ես քո անունն եմ Հարցնում» ասեց նա: «Հայկուհի է
անունը, Յովհաննէս ջան, բայց Հայ ենք կանչում, ինքն էլ
այդպէս է ուզում» բացատրեց տատս: «Ուրեմն Հայկուհի,
խելօք եղիր որ տղաները քեզնից օրինակ վերցնեն», եւ դառ-
նալով աշակերտներին նա ասեց, տղաներ, դուք բոլորդ
փոքրիկից մեծ էք: Եւ դուք ուժեղ էք: Պաշտպանէք նրան,
լաւ վարւէք նրա հետ, որ նա դպրոցը սիրի: Նա մեր գիւղի
փոքրիկ ծիծեռնակն է, նա նոր ժամանակներ է բերում իր
հետ»: Տատիկիս աչքերում արտասունքներ էին փայլում.
«Հա՛, վարժապետ ջան, էդ մէկը լաւ ասեցիր, առաջին ծիծեռն
է. աչքիդ լոյսի նման պահիր նրան. եւ թող Աստւած ձեզ բո-

լորի հետ լինի»։ Ու տասոս ուզում էր դուրս գնալ, երբ յանկարծ դիմացի պատին նայեց եւ սառած կանգ առաւ։ «Քո տունը շինւի վարժապետ ջան, էղ ի՞նչ է», գաւազանը բարձրացրած նա ցոյց տևց թագաւորի մեծ պատկերը, «Էղ շան նկարը ո՞ր օրւանից է կախւած այստեղ»։ — «Սուս, սուս, նունի քոյրիկ, մենք նրա հնազանդ ծառաներն ենք, պատերն էլ ականջ ունին»։ «Թող ունենան, վարժապետ, ամբողջ աշխարհը գիտէ, որ նա չից էլ վատ է. վայրենի գաղաններն էլ կ'ամաչեն նրա անունը լսելիս, ա՛յնքան արդար, անմեղ արիւն կայ նրա սեւ հոգու վրայ. չէ՛, չէ՛, քանի որ էղ անօրէնի նկարը դպրոցումն է, չեմ թողնի որ թոռս այստեղ գայ. թող ինձ հետ անեն, ինչ որ ուզում են, վերեւը Աստւած կայ։ Ափսո՞ս էս խեղճ հայ քրիստոնեայ երեխաներին, թո՛ւ, Նալաթ Սատանին» եւ ձեռքիցս քաշելով տատս թքեց նկարի ուղղութեամբ։ «Լաւ չես անում նունիկ, լաւ չես անում, ի՞նչ անխելքութիւն», ասեց վարժապետը։ «Իմ անխելքութիւնը քո խելքից լաւ է, հողը գլուխտ, ձեզպէսները մեր տունը քանդեցին. գնանք բալիկ ջան, քանի ես կենդանի եմ, քո ոտքը այստեղ չի մտնի», եւ բարկացած տատս դուրս եկաւ դասարանից, դուրս ուժգին խիելով։ Ճամբին ոչ մի խօսք չասեց. ձեռքս ամուր բունած, նա քայլեց ուղիղ, հպարտ եւ համարձակ։

Հայրս սաստիկ վրդովւեց։ Ես նրան երբեք տատիս հետ այդպէս խօսելիս չէի տեսել. «Դու ինձ ուզում ես Սիրի՞ր քչել տաս, որ ոտքով գլխով կորչեմ. ո՞ւմ առաջ ես այդպէս խօսում, իմ թշնամու առաջ, որը իմ տակը փորում է, այդ դու ինքդ լաւ գիտես։ Երկիրը վիստում է դաւաճաններով եւ մատնիչներով. չէ, մայրիկ, դու խելքդ կորցրած՝ տանը մեզ հանգիստ չես տալիս այդ նկարի համար, հիմայ էլ դպրոցո՞ւմ ես սկսում»։ Տատս ընկճած էր, շփոթւած։ «Լեզուս պա-

պանձւէր, բալա ջան, բայց երբ ես էն մարդի պատկերը Հայոց դպրոցում տեսայ, արիւնը գլուխս խիեց. էլ ուրիշ բանի մասին չը մտածեցի։ Ալրո, էնքան արիւն թափեց, է՛հ. որ արդար լինէր, ո՞վ նրան չէր սիրի»։ «Լաւ, լաւ, ժպտաց հայրս, նրա շփոթութիւնը տեսնելով, դու իմ տաքարիւն մայրիկն ես։ Առաւոտը ես Հային ինքս կը տանիմ վարժապետի մօտ, կը բացատրեմ։ Մի տիրիկ, մայրիկ»։

Եւ հայրս ինձ դպրոց տարաւ։ Թէ ինչ խօսեց նա վարժապետի հետ չը գիտեմ, բայց իրար հակասող զգացմունքներ տիրապետեցին ինձ։ Ես հօրս բոլորից շատ էի սիրում աշխարհի մէջ, բայց սիրում էի եւ տատիկիս եւ մի ինչ որ բան ասում էր ինձ, որ տատս իրաւունք ունի։ Նստել այն դասարանում, ուր թագաւորի նկարն էր եւ որը իմ կարծիքով թուրքի Սուլթանի հետ մեր երկրի վիշապն էր, տանջում էր ինձ։ Ուստի ես որոշեցի մտքումս երբեք չը նայել դիմացի պատին եւ աչքերս կէս փակ, գլուխս կախ, լսել վարժապետի ասածները։ Մի որոշում, որը ինձ գժւարութիւններ էր պատճառում, բայց որին ես կամակորութեամբ հետեւում էի։ Ուսուցիչը կարծում էր թէ ես համեստ եւ ամաչկուտ եմ եւ ոչ մի փորձ չէր անում գլուխս բարձրացնել։ Եթէ նա գիտնար ու տեսներ, թէ ինչպէս տուն գալիս ես մտնում էի դահլիճը, ծամածում դէմքս թագաւորի պատկերի առաջ, նրան բոռունցքս ցոյց տալիս, լեզուս դուրս հանում, որպէս վրէժ դպրոցում անցկացրածս ժամերի։

Մի ուրիշ բան էլ տանջում էր ինձ դպրոցում. ես զանազանում էի միւսներից իմ հագուստներով եւ դպրոցական իրերով։ Ոչ ոք կաշւից պաշուսակ ունէր եւ այն էլ թիկունքից կախելու, գրչակալ, բետին եւ մի շարք մեծ ու փոքր բաներ, որ միայն քաղաքի երեխաներն ունին։ Ես շատ էի ամաչում

«ուրիշ», «հարուստ» լինելուց · իմ մաքուր լաւ հադուստները, կրկնակօշիկներս, որոնք մեր գիւղը առաջին անգամ էր տեսնում, այդ բոլորը ինձ աւելի էին ճնշում, քան է՛նքան մեծ տղաների մէջ մի փոքրիկ աղջիկ լինելս:

Դպրոցը ինձ չէր հետաքրքրում: Վարժապետը ծեր էր, դասերը միապաղաղ, ձանձրալի: Բայց ես լաւ էի սովորում եւ չուտով դասարանում առաջինը դարձայ: Դա էլ մի կատարեալ դժբախտութիւն էր: Այսօր էլ ամօթով եմ յիշում էն օրերը: Ուրախ իմ առաջադիմութեան վրայ, վարժապետը միւսներին «թասիբի» դցելու համար, դիմեց մի միջոցի, «ըս իր գոեհ-կութեամք Խաֆֆու Տէր Թողիկի դպրոցը չուքի մէջ էր զնելու: Մեր դասարանում աչքի էր ընկնում Գէորգ անունով մի տղայ, բարձրահասարկ, լայն թիկունքով, երկար ոտքերով, մեծ դլսով, կախ ականջներով: Նա արդէն նորածիլ պեխեր ունէր: Նրա հայրը, մի սարի գիւղացի, ուսումնասէր եւ Յով-հաննէս վարժապետի գիտութիւնը յարգող, Գէորգին այդ տարեքին մեր գիւղն էր բերել, իր ազգականների մօտ գիշերօթիկ տեղ, որ տղեն «մարդ դառնայ»: Գէորգը ամբողջ դասարանի ամենավատ աշակերտն էր: Վարժապետը նրան շարունակ պատժում էր, փայտով նրա գլսին ուժեղ հարւածում բղաւելով՝ «գլուխդ դարման է, էշ, սարի արջ ես, հա»: Բայց ոչինչ չէր օգնում: Գէորգի գլուխը կարծես իրապէս յարդով լիքն էր, նա ոչինչ չէր ըմբռնում: Եւ ահա վարժապետը դիմեց հետեւեալ միջոցին. նա ուզեց Գէորգին «թասիբի» դցել եւ ես պէտք է օդնէի նրան այդ գործում: Հենց որ Գէորգը ոչինչ չէր պատասխանում, իր երկար հասակով, գլուխը քարշ դցած, մի ոտքից միւսի վրայ էր կանգնում, վարժապետը դառնալով ինձ ասում էր ժպտերես. «ի՛հ, իսանում ջան, դու ասա»: Ես խսկոյն պատասխանում էի, եւ հպարտ էի որ այն մեծ տղան

ոչինչ չը գիտէր, իսկ ես գիտէի: «Տեսա՞ր, թէ դասը ինչպէս են պատրաստում . ամօթ քեզ որ փոքրիկ աղջիկը քեզանից լաւ գիտէ . Հայկուհի, գնա նրա մազերը քաշիր»: Ամաչելով, բայց դւարձացած ես առաջ էի անցնում եւ Գէորգի մազերը ձեռքս առած քաշում: «Լաւ քաշիր, չը ինայես, հա՛» ասում էր վարժապետը: Մեծ տղան չէր շարժում տեղից . լուռ եւ գլսիկոր, նա կունում էր աւելի եւս որ ձեռքս մազերին հասնի: Վարժապետը տաքանում էր եւ հրամայում ինձ Գէորգի ականջներն էլ քաշել: Բայց ամէն անգամ երբ յաղթական ես նստում էի տեղս, ամօթի մի զգացմունք ներս էր սողում սիրտս եւ ձնչում ինձ: Ես չէի համարձակում նայելու Գէորգի երեսին: Մի օր էլ վարժապետը հրամայեց, որ ես Գէորգի շարակը նստեմ եւ նա ձեռքերի վրայ քայլելով պտտեցնի ինձ դասարանի մէջ: Բարի տղան առանց ծպտուն հանելու, ընկաւ ձեռքերի վերայ, ես բարձրացայ նրա մէջքին եւ սկսեցի խփել ականջներին: Եւ Գէորգը որպէս մի չորքոտանի պտտեցրեց ինձ դասարանում: Աշակերտները հռհռում էին, վարժապետն էլ զւարթ էր: Գէորգի երեսը նրա բաց կարմիր կտաւէ լայն գտտիրց էլ կարմիր էր: Երբ դպրոցում դասերը վերջացան եւ ես դաշտերով տուն էի վազում, Գէորգը յանկարծ կարծես զետնից բուսնելով, բռնեց երկու ձեռքերիցս, սեղմեց նրանց այնպէս, որ ես ցաւից ճչացի, յետոյ ինձ թեւերի վերայ բարձրացնելով, նայեց ուղիղ աշքերիս մէջ եւ ասեց համոզիչ. «Ես քեզ մի մատով կը ճղեմ, փոքրիկ, եթէ ուզեմ. այսքան փո՞քը եւ այսքան չար. ամօթ չէ»: Ես հնազանդում եմ վարժապետին, որովհետեւ նա ծեր է, իսկ մեզ ասւած է, որ ծերերին յարգենք. բայց դու այնքան չար ես, որ քեզ հաճոյք է պատճառում ինձ տանջելը: Եթէ ես ուզեմ, ես էլ կարող եմ լաւ սովորել: Բայց ես հաւաս չունիմ, ես ուզում եմ վերադառնալ իմ սա-

բերը . թքել եմ ուսումի վերայ : Այսօրւանից դու կը հրաժարւիս ինձ տանջելուց , հա՞» : — «Բայց եթէ վարժապետը հրամայէ» : «Քեզ համար դժւար չէ մերժել , դու հօրդ աղջիկն ես , դու կարող ես համարձակւել , արա ուրեմն . հա՞» : «Հա» ասեցի ես ցած : «Լաւ . իսկ հիմայ ինձնից էլ մի վախենայ , աչքերդ այդպէս մեծ մի բանա , դու , փոքրիկ աշխիկ» : Եւ բոլորովին անսպասելի նա համբուրեց ինձ : «Ես կարօտ ունեմ . իմ սարերն եմ ուղում գնալ» . ու Գէորգը շտապով հեռացաւ :

Ես առն եկայ . պայուսակս դցեցի յատակին եւ սկսեցի սաքերով արորել նրան , կատաղած բղաւեցի . «Ես չեմ ուղում դպրոց գնալ . ես առում եմ նրան , ատում եմ վարժապետին , բոլորին» : Մայրս եւ տասո չէին կարողանում ինձ հանգստացնել : Ես կատաղած էի , ես զգւած էի ամենից , ես ինքս էլ չը դիտէի թէ ինչն էր ինձ տանջում : Հայրս եկաւ , ինձ իր մօտ տարաւ : Ես նրան ամէն ինչ խոստովանեցի . պատմեցի նոյնաէս թէ անցեալ օրը տէրտէրը կրօնի դասին ինչպէս բռունցքներով այնքան տւեց Ագայենց Աշոտի երեսին եւ զլիսին , որ նրա քիթը եւ բերանը արիւնեց եւ արիւնը լճացաւ նստարանի տակ : Հայրս յուղած էր : Լուռ էր : Տեսայ միայն , թէ ինչպէս նրա դէմքը եւ վիզը կարմրեցին , ինչպէս նա բարձրացրեց բռունցքները եւ սպառնաց մի անայտնի ուղղութեամբ : Յետոյ ասեց շփոթւած . «Գիտե՞ս , ի՞նչ են միջին դարերը , եւ այն էլ Ասիայում : Ոչ , դու չը գիտես այդ . բայց ես գիտեմ . ու ես վերջ կը տամ միջնադարեան կարգերին . նրանք պէտք է մեռնեն : Երբ ես երեխայ էի , աւելի վատ բաներ ապրեցի դպրոցում քան դու : Բայց ես չեմ ուղում , որ իմ երեխաները նոյն հոգեմաշ պայմաններում մէծանան : Հանգստացիր Հայ .

դու աւելի երջանիկ դարում ես ծնւած : Խաղայ եւ թոշկոտիր . դու այլեւս չես գնայ այդ դպրոցը» :

Ու ես առնը մնացի :

XXIII.

Դառնադին մի կոիւ ստեղծւեց հօրս եւ Յովհաննէս վարժապետի մէջ : Գիւղը բաժանւեց երկու «թայֆայի» : Յովհաննէսի կողմնակիցները ուղում էին թէ նրան եւ թէ դպրոցը պահել : Հօրս մարդիկ պահանջում էին Հայոց ծխական դպրոց բանալ եւ ծերացած ուսուցչի տեղ մի երիտասարդի նշանակել ներսէսեանի կամ Ճեմարանի շրջանաւարտներից : Ծխական դպրոցներում բոլոր առարկաները Հայոց լեզուվ էին աւանդւելու , ուսւերէն լեզուն երկրորդական տեղ էր բռնելու , իսկ պետական դպրոցներում դրա հակառակն էր : Այստեղ Հայոց լեզուն արհամարւած էր , մեր գիւղում նա դրւած էր տէրտէրի ձեռքը , որը հաղիւ տարրական կրթութիւն ստացած մի մարդ էր :

«Թող տէրտէրը միայն կրօնի դասեր տայ , եթէ այդ էլ կարող է , իսկ վարժապետը թող վերջապէս հանգստանայ . մեզ հարկաւոր են կրթւած եւ մեր ժողովուրդը սիրող ուսուցիչներ , որոնք տիրապետում են թէ մեր լեզուին եւ թէ մեր պատմութեանը . հին դարերը անցել են , երբ մեղքնաբար աւետարանը կարգալ էինք սովորում , առանց բառերը հասկանալու : Ուսւաց լեզուն պարտաւոր ենք գիտենալ , որպէս պետական լեզու , բայց ոչ ի հաշիւ մեր սեփականին» քարոզում էր Հայրս ու անխնայ հարւածում Յովհաննէս վարժապետի ուսուսախրութիւնը , նրան մեղագրում էր , որ իր շահի համար վնասում է ազգին , թէ ծեր լինելով պէտք է մի կողմ քաշւի եւ նոր դարի մարդկանց գործելու հնարաւորութիւն տայ : Յովհաննէս վարժապետը մի ժամանակ հօրս ուսուցիչն էր եղել : Նրա խոր-

Հուրդով եւ պահանջով էր, որ տատս հօրս բարձր ուսումի էր տւել: Բայց 1887 թվի Հայոց գպրոցների փակումը Ռուսաց կառավարութեան ձեռքով, երբ հայրս դեռ աշակերտ էր, եւ հալածանքների հետեւանքով զարգացող հայկական շարժումը բաժանել էին ուսուցչին եւ աշակերտին: Յովհաննէսը Ռուսաց լեզվի ուսուցչի «ցենզի» քննութիւն էր տւել եւ կառավարութիւնից պաշտօն ստացել մեր գիւղի պետական դպրոցում, որը բացւել էր Հայոցը փակւելուց յետոյ: Հայրս, ինքն էլ յետազյում, հայատեաց Գոլիցինի քաղաքականութեան հետեւանքով, ստիպած պաշտօնավարելու պետական դպրոցներում, նետւել էր յեղափոխական շարժման մէջ իր երիտասարդ ամբողջ ոգեւորութեամբ եւ հաւատով: Յովհաննէսը հաւատարիմ Յարին եւ «սոխերին» շարունակ հալածում էր հօրս, ատում հայ յեղափոխութիւնը եւ որտեղ կարող էր վարկաբեկում նրան: Նախկին ուսուցչի եւ իր աշակերտի մէջ տարւած կոիւը այնպիսի սուր եւ անհեղեղ կերպարանք ստացաւ, որ մի երեկոյ երբ հայրս քաղաքից տուն էր գալիս, Յովհաննէսի տղան Աւետիսը մթութեան մէջ դարան մտած, յարձակում է հօրս վրայ եւ ուզում դաշոյնը նրա մէջքը խրել, բայց չի աջողում, դաշոյնը մտնում է ձիռւ կողը եւ խեղճ կենդանին ցաւից գալարելով հօրս հետ դետին է գլուրում: Երբ հայրս հանում է ատրճանակը, տմարդը փախչում է. վրայ հասնող մարդիկ խանգարում են հօրս հետապնդել թշնամուն: Նոյն գիշերը Թեմանը իր ընկերներով յարձակում է վարժապետի տան վրայ, կոտրում դռները եւ լուսամուտները ու ներս մտնելով այնքան է ծեծում Աւետիսին, որ սա մի քանի օր հիւանդ պառկած մնաց: Մեծը ազդեց շատերը անցան հօրս կողմը: Մի քանիսն էլ միացան նրան, զզւած Աւետիսի տմարդ պարքից: Գիւղը պարտաւորւեց վճարել ծխական դպրոցի

ծախքերի կէս մասը, միւս մասը պէտք է վճարէր Հայոց եկեղեցին: Եւ մի օր վերաբացւեց կառավարութեան ձեռքով փակւած Հայոց դպրոցը: Ճեմարանցի Սարդիսը, մի քսան եւ հինգ տարեկան երիտասարդ, կարմիր փողպատով, ժամացոյցի հաստ շղթայով, միշտ խճճւած, երկար մազերով, ակնոցաւոր, լայն եղբերով գլխարկը ճակատին քաշած, գիւղ եկաւ: Բայց Յովհաննէսը վարժապետը չը ընկճւեց. Նա տէրտէրի գոմի օդայում մի մասնաւոր դպրոց բացեց եւ սկսեց ուսուցանել իր աղքականների երեխաններին: Երբ նրա սաները երգում էին աղաւաղիւած ոռւսերէնով «Եօյե զար քրանա»ն, դպրոցում երիտասարդ ուսուցչի չը մազերը թափահարելով, թնդացնել էր տալիս «Մեր հայրենիքը» կամ «Բամբ որոտանը»:

Նոյն աշունը ես նորից դպրոց մտայ: Հայրս համոզեց գիւղի հարուստներին, որ իրենց աղջիկներին էլ ուսումի տան եւ բացի ինձնից դպրոց եկան մի շարք աղջիկներ: Գիւղացիները այլեւս չէին վախենում, թէ իրենց երեխաններին դպրոցը կը ոռւսացնէ, դրա համար աշակերտների թիւը բազմացաւ: Սուրենը եւ երւանդն էլ եկան: Կամաց կամաց Յովհաննէս վարժապետի աղքականներն էլ դաւաճանեցին նրան: Ճեմարանցին հմայել էր բոլորին, չը նայած որ շատերը, մանաւանդ կանայք ծածուկ ծաղրում էին նրա երկար մազերը: Յովհաննէսը ամօթահար նահանջեց. տէրտէրը նոյնպէս:

Օդը մաքրւեց: Մարդկանց գէմքերը պայծառացան, ուրախութեան ժամաներ սահեցին նրանց վրայից: Ճեմարանցին թագաւորի պատկերը պատից ցած բերեց: Զիմայ ես կարող էի գլուխս բարձր պահել եւ ուղիղ իմ առաջը նայել:

* * *

Ճեմարանցին ապրում էր դասարանում: Մի պարզ երկաթեայ անկողին դրւած վառարանի մօտ, մեր նստարաններին

կից, մի փոքրիկ սեղան, մի հին պահարան, որի գոյնը չէր կարելի որոշել, այնքան աւերումներ էր գործել ժամանակը նրա վրայ — դրանք էին մեր ուսուցչի «սենեակի» կարասիքը: Նրա հագուստներն էլ հին էին, մաշտած. լայն կարմիր փողպատը չէր կարողանում ծածկելնրա շապիկի քրքրւած մասերը, ինչպէս երկար, միշտ կախ ընկած անդրավարտիքը բաց էր թողնում կօշիկների ծակերը, որոնց միջից դուրս էին նայում նրա բթամատերը: Ոչ ոք չը գիտէր թէ ինչով է կերակրւում նա: «Քո» Մոսօն էր նրան հաց եւ պանիր գնում գիւղից, բայց թէ ցերեկին կամ երեկոյեան նա որ եւ է ուրիշ բան ուտում էր, զաղտնիք էր մեզ համար: Մի օր, երբ ըստ սովորութեան գիւղի երիխանների, մի քանիսը հետաքրքիր կախուում են դասարանի լուսամուտներից, տեսնում են թէ ինչպէս նա նստարանների տակից հաւաքում է աշակերտների նախաճաշի աւելորդ մնացորդները եւ ուտում: Խեղճ մնացորդներ — հացի չոր փշրանքներ, մի քիչ լոռ կամ տկի կանանչ պանիր: Լուրը տարածւեց ամքողջ գիւղը. «Վարժապետը քաղցած է, ստացած թոշակը նրան չի բաւում»: Շատ ուրախացայ, երբ մայրս ձուաձեղ եւ մի կտոր տապակած հաւից տւեց ինձ ասելով. «Դու չ'ուտես այդ, մոռացիր նստարանիդ մէջ»: Հետեւեալ օրը նստարանս դատարկ էր: Եւ ահա շատերի մօտ սովորութիւն դարձաւ վարժապետին այդ ձեռով ծածուկ կերակրելը: Ոմանք բաց կերպով նրան ընծայ էին բերում: Սկզբում ձեմարանցին բողոքում էր երկար մազերը թափահարելով, չէր ուզում վերցնել, բայց յետոյ վարժւեց եւ մենք հաճոյքով տեսանք, թէ ինչպէս նրա ոսկրոտ, ներս ընկած այտերը լեցւեցին, գոմաւորւեցին, եւ մարած աչքերը ակնոցների տակից փայլեցին: Բանը նրանումն է, որ մենք բոլորս սիրում էինք նրան: Առաջինը — նա ոչ ոքի չէր ծեծում, երբեմն

քանոնով ձեռքերիս էր տալիս, բայց դա մեզ մօտ ծեծ չէր համարում: Երկրորդ՝ նա երիտասարդ էր, աշխոյժ, դասերը թարմ, հետաքրքիր: Նա յաճախ խաղում էր մեզ հետ եւ երդում: Ու ա՛յքան բան գիտէր: Երբ նա Հայոց լեզուն եւ ողատմութիւնն էր աւանդում մեղանից մեծ աշակերտներին, մենք էլ ականջ կտրած լսում էինք նրան. այդ դասերը ամբողջ դպրոցի համար տօնական ժամեր էին: Լաւ արտասանող էր. Թումանեանի եւ Աղայեանի սքանչելի եւ պարզ ոտանաւորները երաժշուութեան նման թափանցում էին հոգիներիս մէջ, Աղայեանի շա՞տ կտորներ երգում էինք մեր ուսուցչի հետ, տարածում այդ երգերը գիւղի մէջ: Հայոց պատմութիւնը աւանդելիս, ձեմարանցին ապրում էր նրան: Նրա կախարդիչ հմայքի գաղտնիքը հենց դրանումն էր. — նա ապրում էր իր ասածները: Մեր պապերի անցեալը կենդանանում էր նրա բերանում, մենք մասնակցում էինք այդ անցեալին, մեր հոգիները յափշտակւում էին նրանով:

Հայո՞ց պատմութիւն: Երեխայ էի դեռ եւ սովորում էի նրան զրոյցի, հէքեաթի նման, բայց ո՛րքան տխուր էր այդ հէքեաթը, ո՛րքան յուղիչ: Մօրս պատմածքներից ծանօթ էր նա ինձ, բայց հիմայ, երբ հոգուս խորքում, ես բոլորից ծածուկ կրում էի իմ նւիրական երազը — Հայոց աշխարհի վիշապներին սպաննել եւ մեր երկիրը լոյս աշխարհի վերածել, այդ պատմութիւնը սարսուռ էր ազդում ինձ: Ա՛յնքան քիչ լուսեղէն կէտեր ունի Հայոց պատմութիւնը իր մէջ: Միտքս տենդօրէն աշխատում էր: Այն օրից որ Հայկը սպաննեց Բելին եւ հաստատւեց Հայոց լեռներում, նրա երկիրը կոփւներից եւ աւելներից դադար չունեցաւ: Բարելոն, Ասորեստան, Պարթեւք, Պարսկք, Հռովմայեցիք, Բիւզանդացիք, Արարենք, Մոնղոլներ եւ Թուրքեր բոլորը դարերի ընթացքում, կարծես

իրար խօսք տուած բզկտում, աւերում են մի երկիր, ուր մի փոքրիկ ժողովուրդ լեռներին կառչած իր կեանքն է ապրում: Յուսահատ նա պայքարում է գիշատիչների դէմ իր սովորութիւնները, իր լեզուն, իր կեանքը եւ ինչքը պաշտպանելու համար: Դա ի՞նչ օրէնք է: Ո՞վ է հնարել այդ օր էնքը, որ ի՞ ոյժով մեծելը կոխ կրտում են փոքրերին, նրանց ապրելու իրաւունքից զրկում: Ո՞վ է այդ անարդար օրէնսդիրը: Եւ ի՞նչպէս կարող է բարի Աստուածը, որը լիքն է գութով ու կարեկցութեամբ, հանդուրժել այդ: «Պէտք է ուժեղլինելեւ կուել» ասում են հայրս եւ ձեմարանցին:

Ուժեղ: Իսկ եթէ քեզնից ուժեղը կայ. ուրեմն այդ ուժեղը պէտք է քո տունը աւերի, երեխաններիդ գերի տանի, քեզ սպաննի, որովհետեւ նա ուզում է քո երկիրը ունենալ, ագահ է, չի բաւարար ունեմ իր ունեցածով: Մի վիշապի, նոյն իսկ երկուսի, երեքի կարելի է սպաննել, բայց եթէ շա՛տ, շա՛տ վիշապներ են գալիս քո վրայ: Ճեմարանցին պատմում է, թէ ինչպէս մոնղոլների իշխան Ալփարսլանը հարիւր հազարաւոր զօրքերով մորեխի նման փուեց Հայաստանի վրայ եւ չը նայած Անեցիների քաջ դիմադրութեան՝ յաղթեց: Այդ պատերազմին նոյն իսկ աղջիկներ էին կուռմ — այդպէս փոքրիկ Այծեմիկը որը պարսպի վրայ կանգնած զէնքը ճեռքից ցած չը գցեց, մինչեւ եօթը տեղից վերաւրւած վայր ընկաւ: Անին: Պատոնց երկիրը: Քանդեցին, քանդ ու քարափ արեցին հին աժդահան երի շինած պալատները եւ հոյակապ վանքերը, էն գիտումն վարպետների կառուցւածքները. հողի հաւասարեցրին գիւղերը եւ քաղաքները, գերի տարան հազար-հազարներին որով հետեւ շատ էին, ոչ երեք անգամ, ոչ եօթը անգամ, այլ հարիւր

անգամ չատ: Իսկ ես ուզում եմ ուժեղ լինել: Ուժեղ զլինեմ, որ ուրիշների, աւելի թոյլերի զլինին վիշապ դառնամ: Այդպէս...

XXIV.

Մի անձրեւոտ մութ գիշեր, մեր դուռը ուժեղ, ուժեղ թակեցին: Ներս մտան սստիկանները էն զգելի սպայի հետ եւ առանց ժամանակ տալու, որ հայրս հագնւի, հրացանը նրա մէջքին ուղղած դուրս տարան: Տատա ընկաւ ուշաթափ, մայրս վազեց հօրս յետեւից: «Հանգիստ, Լուսիկ ջան, չը վախենաս, քաջ եղիր. միշտ տանս սիրտը մնա՛, պաշտպանիր մօրս եւ երեխաններին»:

«Հա՛յրիկ, հա՛յրիկ ջան...»

Դոները աղմուկով փակւեցին: Դրսում լսւեց հեռացող կառքի ձայնը: Մայրս անշարժ կանգնած մնաց, աչքը մթին յառած: Արտասուք չը տեսաց նրա մեռելի գոյն ստացած դէմքին: Վիշապ ըազ յաղթեց...

Մենք անմիխթար լաց էինք լինում: Գիշեր էր, մութ եւ մենք մենակ էինք:

* * *

«Գիտենք, որ զու միշտ տանջւում ես
հաղար ու մի ցաւերով.
Հայրենիքիդ խոր խոցերը դու համրում
ես գարերով.
Չես լըւանայ այդ խոցերը արտասուրի
ծովերով
Առ չունդուրըդ, ցաւոտ աշուղ, մեզ բան
ասա վեշտալի»:

Յովհաննէսեան:

Մեր տունը դատարկ է, մեր տունը տխուր, անտանելի:
Օրերը երկար, միատեսակ: Յեղափոխութիւնը ճնշւած է, ժո-
ղովուրդը նորից շղթաների մէջ, յուսահատած եւ յուետես:
Վհատութիւն ամէն տեղ: Ոչ ոք չի գալիս մեղ մօտ: Երէկը մի
հեռու անցեալ է թւում: Բանտերը լեցւում են. Ճեմարանցուն
էլ տարան: Դպրոցների փոխարէն ցարը տաժանակիր աշխա-
տանքի տներ է շինում: Անխղծօրէն պատմում են մեծերը սոս-
կալի անցքերի, ահարեկումների, պատժական արշաւանքների,
կախաղանների մասին: Ամբողջ երկիրը մահացու վասի մէջ է:
«Յարը չի խնայում իր սեփական ժողովրդին, ինչո՞ւ պէտք է
մեղ խնայի. նրա կողակների համար ուռուը, հայը, թուրքը,
վրացին միեւնոյնն են» ասում են մեր գիւղում: Տասս շարժուում
է տան մէջ շուքի նման, չի խօսում, աղօթում է, լալիս: Հէ-
քեաթը սառել է նրա շրթունքներին: Եւ զրոյցները մէկը միւսի
յիշեւից մեռնում են նրա մօտ: Շատ լաց լինելուց նրա աչքերը
վատ են տեսնում: Կէս կոյր կոացել է տասս եւ էլ չի ժպտում:
Նորից դիւզով կոյր աշուղներ են անցնում, նրանք գալիս են
մեր տունը եւ երգում հին ու նոր երդեր.

«Զախորդ օրերը ձմռայ նման
կու գան ու կ'երթան,
Վհատուելու չէ, վերջ կ'ունենան
կու գան ու կ'երթան,
Դառն ցաւերը մարդու վերայ
չեն մնայ երկար,
Որպէս կարաւան շարուէ շարան
կու գան ու կ'երթան»:

Տատիկիս դէմքը թաց է արտասունքից, նա հոգոց է հա-
նում եւ ասում. «Ալս, աշուղներ, ես էլ ձեզ նման մի կոյր, կա-
րսուր սրտումս, ջութակ առնեմ եւ սար ու ձոր ընկնեմ, լամ ու
երգեմ, լամ ու երգեմ, գուցէ գտնեմ կորցրածս»: Եւ կոյր ա-
շուղի նման ձեռքի փայտին յենւած, նա դուրս է գալիս տա-
նից, զնում պարտէզ, անցնում դաշտերը, կանդնում մեծ ճա-
նապարհին եւ անշարժ աչքերը նոյն կէտին ուղղած, անսահման
կարօտը անուշ դէմքին, կանդնած է մնում եւ սպասում, սպա-
սում:

Ու երբ երեկոն իջնում է, երբ Արագածի պայծառ գագաթը
քողերով է ծածկւում, երբ ամէն ինչ լուս է գիւղում, տա-
տիկս միշտ նոյն խնդրանքը ունի մօրիցս — իրեն Աւօ Իսահա-
կեանի «Որսկան աղբերը» երգել.

«Որսկան աղբեր, սարէն կու գաս
Սարի մարալ կը փնտուս,
Ասա, եարաբ դու չը տեսա՞ր
իմ ջիւանը, իմ բալես»:

Տատիկս նստած է թաղթին եւ քաշում է դանդաղ թաղթէի
հատերը: Բաց լուսամուտներից եւ դոնից ներս է մտնում գի-
տականը.

Հերայ զովը : Հեռում լուսում է գորտերի կոկոսը : Մի տեսակ ցաւալի երազանքի մէջ եմ : Մայրս երգում է դողացող ձայնով :

«Տեսայ քոյրիկ նախշուն բալիդ
Քարն էր դրել բարձի տեղ .
Սիրած եարի համբոյրի տեղ
Կուրծքին դնդակ էր սեղմել» :

Երգը գեղեցիկ է : Իմ երեւակայութեան մէջ տեսնում եմ մի բարձր , կանանչ սար : Երեկոյ է : Լուսինը շրջում է ամպերի միջով , նա էլ է մէկին փնտում : Որսորդը կանգնած է մի մեռի մօտ : Մեռելը երգի մարալն է , լացող մօր զաւակը :

Մի մեռած վայրի որս : Ոչ մայրն է նրա մօտ , ոչ նշանածը : Միայն սեւ ազուաւերն են հաւաքում նրա դլսին : Նրանք կոռում են եւ սրում կտուցները դիսակը պատառ պատառ անելու համար : Ես վախենում եմ : Ինչո՞ւ է մայրիկս էս ախուր երգը երգում : Նա չը պէտք է այդ երգի , նա չը պէտք է այդ երգի :

Եւ մայրս ինձ իր մօտ է տանում . ևս հիմայ միշտ նրա մօտ եմ : Իրար փաթաթւած , պառկած ենք : Զեռք ձեռքի : Գիշերը յաճախ զարթնում եմ նրա անուշ ձայնից . նա օրօր է ասում նոր ծնւած փոքրիկ քրոջս , որը չի ուզում քնել եւ լաց է լինում :

Մթութեան մէջ , աչքերս լայն բաց արած լսում եմ մօրս երգերը եւ մտածում : Ես մտածում եմ հօրս մասին , որը չը կայ ու չը կայ : Չեմ համբերում . ցաւագին շնչում եմ .

«Մայրիկ» :

«Ի՞նչ է բալիկ» :

«Տիուր երգեր մի երգիր» . . .

«Չեմ երգի , բալիկ» :

«Մայրիկ , դու դիշերը ծածուկ լաց ես լինում . մի լա» :
«Չեմ լայ» :

«Մայրիկ , հայրիկս կը վերադառնա՞յ» :

«Այո , նա կը վերադառնայ , ի հարկ է նա կը վերադառնայ» :

«Մայրիկ , աշխարհը ինչո՞ւ է այսքան չար» :

«Քնիր , մի խօսիր» :

«Մայրիկ ջան , աշխարհը չար է , Վիշապը հօրս տարաւ , ևս վախենում եմ աշխարհից» :

«Քնիր , քնիր» :

Եւ մօրս փոքրիկ ձեռքը փայփայում է դլուխս :

«Մայրիկ , մենք այնպէս մենակ ենք» :

«Ոչ , փոքրիկս , մենք մենակ չենք . ամէն տեղ ա՛յնքան բարի մարդիկ . լոիր , մի արթնացնի տատիկիդ եւ երեխաներին» :

Ցերեկը ամէն տեղ հօրս եմ փնտում : Եւ կարօտել եմ նրա ձայնին , նրա դէմքին :

Գարուն է . դաշտերը կանանչել են , օդի մէջ զնդում է թուզունների երգը : Ո՛րքան սիրուն է աշխարհը եւ ո՛րքան անմիխթար . ես այլ եւս չեմ խաղում : Դժւարանում եմ նոյն իսկ խօսել : Սաէպ ստէպ մի այլանդակ , հեզնող , չէչոտ դէմք է ցցուում իմ առաջ . «Հը՞հ , հօրդ բանտ տարայ , տեսա՞ր , դու նրան էլ չես տեսնի» :

Ես նրան այլ եւս չեմ տեսնի , ես նրան չեմ տեսնի :

Եւ սիրոս կոտրուում է անսահման վշտից : Կուկունեանի մասին եմ մտածում , Հայոց երկրի առաջին Փիտայիկ մասին : Նրան էլ ոռու թագաւորը , Վիշապը , հեռու , հեռու Սիրիր աքսորեց : Այստեղ կանանչ չը կայ , միշտ ձմեռ է այնտեղ , միայն սպիտակ արջերն են զբօսնում ձեան վերայ : Ծանր

շղթաներով կապւած, աքսորեալը չէր կարող փախչել: Ամէն կողմը սառած ծով: Ես դառնօրէն լաց եմ լինում, երբ մտածում եմ, որ հայրս նոյն տեղն է տարւած, ուր աքսորւած էր Կոռկոնեանը: Որքան տիսուր է լինելու նա, որքան է մրսելու: Ոչ, ես չեմ կարող խաղալ: Ինձ միայն մի բան է մնում. և օրս բախտը նրա հետ բաժանել, նրա հետ տանջւել: Անխղճօրէն կապում եմ ձեռքերս եւ ոտքերս, մօտեցնում եմ երկու աթոռ միմեանց, սողում նրանց մէջ եւ երեւակայում, թէ ես էլ բանտում եմ, Սիրիում: Ժամերով նստած եմ այդպէս լուռ եւ տիսուր: Ամէն անգամ երբ տաստ տեսնում է ինձ այդ վիճակում, բարկացած ազատում է ինձ կապանքներից եւ բղաւում. «Հողը գլխիս, էդ ի՞նչ՝ ուրա, ես բանեցնում, ագուա՞ւ ես թէ բու: Ուղո՞ւմ ես որ աւելի եւս դժբախտանանք»: Նա ինձ սենեակից դուրս է վոնտում, երեսին խաչհանելով եւ ասելով. «Տէ՛ս, դու չարը խափանես, բարին կատիցս առանց ինձ տեսնելու: Ես նստած էի անկիւնում, դադարում է ինձ խանգարելուց: Մի սեւ քող ծածկում է վերջնականակէս նրա սիրելի աչքերը: Տատիկս կոյր էր: Շոշափելով նա ման էր գալիս տան մէջ, տիսուր դէմքով անցնում էր մօտիցս առանց ինձ տեսնելու: Ես նստած էի անկիւնում, դադարում էի չնչելուց եւ հետեւում էի նրա անհաստատ, դանդաղ շարժումներին: Երբ մի օր ես այդպէս նստած էի, մայրս մօտեցաւ ինձ ցաւագին ժպտալով. «Թող քո յիմարութիւնները, այդպիսով չես օգնում հօրդ. խաղաղ՝ քոյրերիդ եւ եղբայրներիդ հետ, ուրախ եղիր եւ քաջ, որ հայրդ վերադառնայ: Օ՛հ, ես հաւատում եմ՝ նա կը դայ»:

Լեցւեցի յոյսով: Մայրս է ասում, իսկ նա միշտ ճշմարտութիւնն է խօսում: Ես հաւատում եմ նրան: Հայրիկս կը դայ: Ու ես վերադարձայ մանկութեանս գիրկը:

XXVI.

«Ա՛խ, բոլոր կողմերում է թախիծ, Ամէն տեղ է փռւած տրամութիւն, եւ արդեօք որտեղից, որտեղից Սպասեմ աւետիք ու խնդում»:

Տէրեան:

Աշունը եկաւ. դաշտերը մերկացան, արեւածաղիկները վաղուց անհետացել են բոստաններից, վերջին գետնախնձորն էլ տուն տարւեց: Գետը սառն է. լողանալ չի լինում այլեւս: Նախիրը կէս օրին է դաշտ գնում առաւօտայ ցրտերի պատառով: Հոտաղների կրակների ծուխը երկինք է բարձրանում, մի մոխրագոյն, գորշ երկինք: Երկար կարաւաններով, շարա՞ն անցան կոռոնկները, նրանք հեռացան մեղնից տաք երկիրների արեւի կարօտը սրտներում: Ծիծեռնակն էլ զնաց, նրա հետ առագիլը: Օրերը կարձացան, մթնեցին: Արագածի պայծառ գլուխը ծածկւած է ամպերով: Անձեւը մազում է, հա մազում:

Հարուստ գիւղացին բարձած սոյլերով քաղաք է գնում աւելորդ ցորենը, ալիւրը եւ գետնախնձորը ծախելու, որ այնտեղից ձմեռուայ հագուստներ եւ ուրիշ պաշար բերի: Աղքատը ընկնում է չոլից չոլ, որպէս զի որ եւ է աշխատանք գտնի, փող վաստակի, ընտանիքը ձմեռուայ ցրտերին քաղցած չը մնայ:

Մեր գպլոցը վերաբացւեց: Նորից մի ձեմարանցի եկաւ զիւղը, այս անգամ առանց կարմիր փողպատի եւ երկար մազուղը, զերի: Նա մեղ հետ յեղափոխական երգեր չէր երգում այլեւս, բայց կարգում էր սիրտ մաշող պատմութիւններ Ահարոնեանից, որը հիմայ մեր բոլորի ուղեղներին միակ տիրապետողն էր:

Սուրբ խաչի շաբաթ օրը մի սգաւոր պառաւ եկաւ մեր զիւղը իր ազգականների եւ քաղաքի վարպետողների հետ: Նա

Երկար լաց եղաւ դինամիտի զոհերի գերեզմանի վրայ . յետոյ տէրտէրը հոգեհանգիստ կատարեց եւ վարպետները մի գմբեթաձեւ գերեզմանաքար կանգնեցրին շիրիմի վերայ : Մի անչուք գերեզման սեւ քարերով եւ սեւ պարզ խաչով : Երբ աշխատանքները վերջացան, մեր նոր ուսուցիչը կանգնեց մօտի գերեզմանին եւ ոգեւորած ու ճեռքերը թափահարելով կարդաց Ահարոնեանի «Ուխտագնացութիւնը» : Հանդիսականները յուշած էին : Մի պահ լուութիւնից յետոյ մեր ուսուցիչը ասեց . «Այո, երբ որ կը սրբենք լացող աչքերը մեր ժողովրդի, երբ որ կը սփոփենք այրւած սրտերը, այն ժամանակ մեր նահատակները, բոլոր նրանք որոնք ընկան աղատութեան ճանապարհին կը ներեն մեզ, եւ կ'ասեն Ահարոնեանի խօսքերով . հազար երանի՛ ձեզ» :

Սրբելարտասունքները, սփոփել այրւած սրտերը : Այդպէս!

Ձմեռը եկաւ : Աշուղների երգերը լուցին : Եւ երբ քամին կատաղաբար ոռնում էր Հայոց սարերում, գիւղացիները նորից իրենց մխացող օջախների մօտ նստած հէքեաթ էին ասում եւ երգում ուրախ ու տխուր երգեր :

Տատիկս հէքեաթ չէր պատմում այլեւս : Մեր տանը սեւ գիշեր էր պատել կարծես, շուք էր իջել բոլորի երեսներին : Մեծերը շատ քիչ էին խօսում . նրանք խուսափում էին հօրս անունը տալուց :

Ծնունդը եկաւ . եկեղեցու զանգակները աւետեցին Բեթղեհէմի մանկան ծնունդը, աշակերտների խումբը տանից տուն անցնելով երգեց ցնծութեամբ .

«Այսօր տօնէ՛ ծննդեան, պւետիս» .

ոչ ոք մեզանից չը ձայնակցեց նրանց, ոչ ոք չէր մտածում տօնի մասին :

Նոյն իսկ Տեառնընդառաջին, երդիքների եւ տների առաջ վառովլ խարոյկները, որոնք ամէն տարի ոգեւորում էին մեզ, հիմայ, մեր տնեցիներին անտարբեր թողեցին : Մայրս անշարժ լուսամուտի մօտ կանգնած դիտում էր, թէ ինչպէս հարս ու աղջիկ վառած մոմերը ձեռքերին պտոյտ էին գալիս կրակների շուրջը, թռչում նրանց վրայից, քրքջում եւ չամիչի հետ խառնած «աղանձ» ուտում : Սիրտս նրանց հետ էր, կրակի վրայից թռչող երիտասարդների եւ երեխաների հետ, բայց կաշկանդւած մեր տան տիրութիւնից, Հայոց գարնան աւետարեր բոցերի մօտ չը գնացի էն տարին :

XXVII.

И снится чудный сон Татьяне
Пушкин.

Եւ Տատիկսն զարմանալի երազ է
տեսնում . . .
Պուշկին :

Սուրբ Սարգսի տօնին, երբ Աշխէնը պատրաստում էր գիշերը իր ապագայ նշանածին երազում տեսնել, տատիկս ժպտաց անուշ, թափահարեց գլուխը եւ թազբեհի հատերը քաշելով, պատմեց մեզ իր անցած օրերից :

«Յիմար եւ անփորձ էի ես չը նայած իմ տասներկու տարիքին, սկսեց նա . իմ ժամանակ տասներկու տարեկան աղջիկը արդէն հասած կատարած, ամուսնութեան պատրաստ էր . բայց ես աւելի սիրում էի իմ հորթերի եւ զառների յետեւից բլուրների եւ մարգագետինների վրայ թափառել, ամէն թռչումի յետեւից ցատկուել, ատաղերը համարել, ծաղկներ քաղել եւ գոյնզգոյն սլակներով մազերս զարդարել : Մայրս նեղանում

էր, դժգոհում ինձանից, եւ երբ ես 12 տարին լրացրի, նա հրամայեց ինձ տանը նստել, դոյնզդոյն գուլպաներ եւ ջեղիմ գործել. պէտք էր 25 դոյդ կարմիր եւ կանանչ եւ այդքան էլ սպիտակ թելից երկար գուլպաներ գործէի, էլ չեմ խօսում երեխաների գուլպաների եւ հագուստեղէնի մասին: Այն ժամանակ եւ հիմայ էլ նամուսով մարդկանց մօտ սովորութիւն էր, որ հարսը ամէն հարսնաւորին եւ ամէն մէկին, որ իրեն երեսնուկ էր տալիս փեսայի ընտանիքից, մի ջուխտ գուլպայ ընծայի: Ուրեմն կարող էք երեւակայել, թէ իմ խեղճ մատները ո՞րքան պէտք է աշխատէին: Գիշեր եւ ցերեկ դործում էի ես եւ աշխատանքս վերջ չունէր: Ոչ մի արտասունք չէր օգնում: Մայրս չէր խղճում ինձ, որովհետեւ շատերը իմ ընկերուհիներից նշանած կամ ամուսնացած էին, իսկ մնացածներն էլ վաղուց վերջացրել էին իրենց օժիտը: Ես մօրս միակ աղջիկն էի, նրա աչքի լոյսը, դրա համար էլ նա ինձ թոյլ էր տւել այդքան ուշ սկսելու: Բարեբախտաբար ես ճարպիկ էի եւ մի տարում վերջացրի բոլոր գուլպաներս եւ ջեղիմը: Հիմայ մնացել էր կարմիր ղանաւուզից շապիկ եւ վարտիք ասեղով բանել, հագուստներ կարել: Մայրս օգնում էր ինձ, բայց ես յաճախ կարօտից ծածուկ լաց էի լինում, իմ գառների, ծաղիկների եւ աստղերի մասին մտածում: Սուրբ Սարգսի տօնին, մեռնիմ իրա զօրութեանը, մայրս թոյլատրեց ինձ մի շաբաթ ծոմ եւ պաս պահել, որ Սուրբ Սարգսի օրը ես էլ իմ ապագայ նշանածիս տեսնեմ երազում: Դուք գիտէ՞ք Սուրբ Սարգսի պատմութիւնը: Մի աղքատ եւ արդար մօր մէկ ու ճար զաւակ, սպիտակ ձիուն նստած նա երբեմն անցնելիս է եղել մի սիրուն յոյն աղջկայ լուսամուտի տակից: Աղջիկը այնքան խորոտիկ է լինում, որ խեղճ տղեն սէր է գցում վրեն, վառում, մաշւում է, բայց աղջկայ հայրը չի ուզում հայ փե-

սայ ունենալ եւ վրնառում է տղին: Ճարահատւած Սարգիսը մի մութ գիշերով փախցնում է սիրականին, բայց աղջկայ հայրը իր բարեկամների հետ հասնում է նրա յետեւից, յարձակում նրանց վերայ եւ երկուսին էլ նահատակում: Բարի Աստածը տեսնում է վերեւից այդ տմարդի գործը, բարկանում է ոճրագործների վերայ, բուք ու բորան ուղարկում սարերը, յոյները կորցնում են ճանապարհը եւ բոլորը խեղջուում: Իսկ Սարգիսը իր անմեղութեան պատճառով, դասւում է նահատակ սուրբերի շարքը, Աստած նրան զօրութիւն է տալիս եւ հրամայում, աշխարհի բոլոր ջահէլ ջիւանների սէրին պաշտպան կանգնել. էն օրից սպիտակ ձիուն նստած նա շրջում է Հայոց լեռները, արդարների մուրազը կատարում, բայց իր նահատակւած օրը, բուք ու բորան է ուղարկում սարերը, որ բոլոր ճամբորդ Յոյները խեղջուեն. գրա համար այդ սուրբ օրը Յոյները դուրս չեն գալիս տներից, վախենում են: Ահա այդ Սուրբ Սարգսի պատն էր, որ ես ճշդութեամբ պահեցի, օրական մի անգամ ցամաք հաց ուտելով եւ պարզ ջուր խմելով: Երբ պասի հինգ օրերն անցան, ուրբաթ երեկոյ մայրս ինձ աղի գաթա տւեց, որը միմիայն ալիւրից եւ աղից է շինուած եւ հրամայեց ուտել առանց մի կաթիլ ջուր խմելու: Ես կատարեցի այդ ինչպէս միւս բոլոր աղջիկները: Սիրոս բարախում էր յուզմունքից: Ես երկար չէի կարողանում քնել այն գիշեր. ծարաւը ինձ տանջում էր, բայց երազիս իմ ապագայ նշանածից ջուր ստանալու ցանկութիւնը այնքան մեծ էր իմ մէջ, որ ես ինձ զապեցի եւ վերջապէս քնեցի. եւ տես, երազիս բացւում է իմ առաջ մի սիրուն գաշտ. ես գնում եմ այդ գաշտի միջից եւ հաղար գոյներով ծաղիկներ եմ քաղում ու սոխակ դարձան երգում եմ բարձր եւ ուրախ ճայնով իմ սիրած երգերը. երգում եմ ես բարակ այրում ծաղիկների միջից, բայց արեւը այրում է ինձ, ծարա-

...

Եմու ջրի կարօտ։ Աղբիւր եմ փնտռում եւ յանկարծ ինձնից ոչ հեռու տեսնում եմ սառը վճիտ ջուրը գետնի տակից դուրս խփելիս։ Յարձակում եմ ջրի վերայ, ուզում եմ կոանալոր խմեմ եւ չեմ կարողանում։ Մարմինս կարծես քար է կտրել, չի շարժում։ Արդէն աչքերս լեցում են արտասունքներով, մոլորած չորս կողմս եմ նայում։ Այդ բոլէին մօտենում է ինձ մի սիրուն, ջահէլ տղայ, սեւ չուխան հաղին, ոսկէ քամարը մէջքին։ որտեղից եկաւ, չը գիտեմ, բայց նա ժպտում է ինձ, ծիծաղում է երեսիս եւ մի ոսկի թասով աղբիւրից ջուր վերցնում, ինձ է տալիս։ Դողալով, ամօթից մեռնելով, պարզում եմ ձեռքս, վերցնում եմ թասը։ բայց հազիւ երկու երեք պուտ խմեցի, թասը ձեռքից ընկաւ եւ ջուրը թափւեց գետին։ Մարսակից զարհուրած զարթնեցի եւ մինչեւ լոյս չը կարողացայ քնել։ Առատօտը մայրս ուրախ բարեւեց ինձ, դուրս տարաւ եւ ցոյց տւեց Սուրբ Սարգսի ձիու սմբակների հետքերը ձեան եւ դուն մօտ դրած փոխինդի վրայ։ ուրեմն բարի սուրբը մեզ մօտ էլ էր անցել։ Ես պատմեցի մօրս իմ երազը։ Նա տիրեց եւ ասեց։ «Խեղճ աղջիկս, լաւ աղօթիր ամենակարող Աստծուն, որ երազդ չը կատարւի։ մենք պէտք է մի գառ Սուրբ Սարգսին մատաղ անենք։ երազդ լաւ երազ չէ։ թասի գետին ընկնելը, ջուրի թափւելը նշանակում են, որ դու չուտ որբեւայրի կը դառնաս։ Աստւած քեզ այդ դժբախսութիւնից ազատի»։ Եւ մայրս լաց եղաւ։ Շուտով մեր տունը հիւրեր եկան ինձ ուզելու, բայց հայրս ինձ չը տւեց։ այդպէս մի քանի անդամ նա ուզողներին ճամբու դրեց եւ նոյն իսկ թոյլ չը տւեց երեսս տեսնելու։ Բայց մի օր, երբ ես կար էի անում, ներս մտաւ մայրս եւ պատիրեց որ լաւ չորերս հազնեմ, մազերս շտկեմ եւ մի գաւաթ ջուր տանեմ հիւրերին։ Սիրտս թռաւ, ուրեմն այս անդամ հայրս ինձ մարդու կը տայ, քանի որ նա

ինձ ցոյց է տալիս, մտածեցի ես։ Երբ ջուրը վերցրած, չփոթւած ներս մտայ՝ ամօթից ոչ ոքի երեսին չէի կարողանում նայել, ջուրը տւի մեծին, բոլորի ձեռքերը համբուրեցի եւ զլուխս քաշ դցած, բարեւ բանեցի, կանգնած մնացի դռան մօտ։ Հեշտ չէր ինձ համար այնտեղ կանգնել եւ տղամարդկանց կողմից դիտել, բայց օրէնք է, ի՞նչ անես. դրա համար շատ ուրախացայ երբ հայրս ինձ հրամայեց դուրս գնալ։

Մի ժամից յետոյ երբ հիւրերը հօրս հետ «բաշուղի» դժւար հարցը վերջացրին, մայրս ինձ նորից ներս տարաւ. ողորմածիկ կեսրարս վեր կացաւ տեղից, մօտեցաւ ինձ, մի մատանի դրեց մատս, համբուրեց ճակատս եւ ասեց. «Խս մատանին բաղդաւոր կրես աղջիկս։ օրհնած զաւակ լինիս ու մեր օջախի ճրագը հարազատօրէն եւ հաւատարիմ վառ պահես»։ Ես հասկացայ, որ նշանած եմ, գլխով չնորհակալութիւն յայտնեցի։ Հիմայ ես հարս էի եւ լեզուս լուռ պէտք է մնար։ համբուրեցի մի անդամ եւս հիւրերի ձեռքը եւ դուրս եկայ։ Այսպէս իմ հայրս 100 բուրլի բաշլուղի ինձ ձեր պապին տւեց, բայց այդ փողով նա ինձ մի լաւ օժիտ արեց։ մի մեծ մակարեա զութիկ տւեց ինձ, լաւ խաս երեսներով երկու վերմակ, անկողին, զանազան հագուստներ, սպիտակեղէն։ հարսնիքի դեյրէս Հնդկաստանի Ղանաւուղից էր, գլխիս փուշի շալը Քիրմանից։ Երեք օր երեք գիշեր հարսնիք արեցինք. բայց քոյի յետեւից եւ շատ արտասևելուց ես ի հարկէ չէի կարող նշանածիս տեսնել. միայն հարսնիքից յետոյ, երբ քաշհանան կարմիր կանանչ նարօտը մեր վզերից արձակեց եւ մենք մարդ ու կին դարձանք, նշանածիս քնած ժամանակ, արեւը դուրս դալուց առաջ ես զարթնեցի, նստեցի անկողնուս մէջ եւ մի լաւ նայեցի մարդիս երեսին. ուրախութեանս չափ չը կար. ես բարձր ճշացի, ծափ տւեցի եւ նա արթնացաւ. ամօթից երեսս

ծածկեցի վերմակով, որ պապդ ինձ չը տեսնի. եւ պատմեցի նրան սուրբ Սարգսի գիշերայ երազս, որ ինձ ջուր տևող տղեն ինքն էր: Պապդ էլ շատ ուրախացաւ: Մենք շատ սիրով ապրեցինք մի քանի տարի. ես վեց երեխայ ծնեցի, երկուաը մեռան. երբ իմ փոքրիկս, ձեր հայրը մի տարեկան դարձաւ, ձեր մեծ պապը յանկարծ հիւանդացաւ եւ երեք օրում մեռաւ. ու ես հողը արեւիս, ջահիլ ջիւան, սեւ լաշակը գլխիս քաշեցի, լացայ մորմոքեցի, բայց ի՞նչ կ'անես, Աստծու կամքն էր. ի մճակատին է դ էր գրած: Ի՞նչ օրեր ասես չը տեսայ. մենակ, անփորձ ես պէտք է չորս որբ կերակրէի. էլ իլիկը ձեռքիցս չընկաւ. օր ու գիշեր արտասունքը աչքիս՝ աշխատեցի մինչեւ ձեր հայրը մեծացաւ, ուսումով մարդ դարձաւ: Աչքերս կուրանայ, նա էլ լաւ օր չը տեսաւ. թէ ուրիշ երեխաները խաղում էին, ձեր հայրը իր վարժապետներին ծառայութիւն էր անում, որ ձրի մի բան սովորի: Քանի քանի անգամ հացը շալակս առած ձմեռ թէ դարում, բուքին թէ անձրեւին, արեխները հագիս, անցնում էի մեր գիւղից քաղաք, որ տղես քաղցած չը մնայ, աչքը ուրիշին կարօտ չը լինի: Իսկ հիմա՞յ: Արդար եւ բարի, միայն նրա համար, որ իր երկիրը ամենքից շատ է սիրում, տանս ճրագը հանգցրին անաստւածները, աչքերիս լոյսը մարեցին... Փա՛ռք քեզ Աստւած, մենք քո ճանապարհները չենք հասկանում»: Այստեղ լոեց տատիկս:

XXVIII.

Փետրւարի «պառաւանց» ցրտերի ժամանակ, հէքեաթների եւ բուք բորանի ամսում օրերի միապաղաղութիւնը կտրւեց տատիս հիւանդութեամբ. նա, որ երբեք չէր տնքում, չէր դանդատում, յանկարծ լցրեց տունը հեծեծանքներով եւ հառաչանքներով: Մայրս ուղեց բժիշկ բերել, բայց տատս թոյլ

չը տւեց. նա ատում էր բժիշկներին եւ չէր հաւատում նրանց: «Լուսիկ ջան, իմ ապրելը միտք չունի այլեւս. չորացած ծառ եմ, արմատս կտրեցին տարան. թող մեռնեմ, պրծնեմ»: Մայրս ինամում էր նրան, որպէս մի սիրելի թոյլ երեխայի: Եկաւ մեծ պասը եւ հին օրերի սովորութեամբ տատս ուղեց մօրս եւ մեղ հետ պաս պահել: Մայրս խնդրեց, աղաչեց, որ այդ չանի, ոչինչ չօգնեց: Քառասում եւ ինն օր միայն կնճիթի խղով պատրաստւած կերակուրներ ուտել, առանց մսի, ձուի, կարագի, կաթի, մածունի, թանի եւ պանրի հեշտ բան չէ առողջի համար, ուր մնաց հիւանդի: Հայաստանեաց եկեղեցին արգելում է նոյն իսկ ձուկ ուտելը: Ինչպէս միշտ տատս պասի առաջին օրից Ակ լատի դ շինեց մեղ համար: Մի սոխի վրայ հաւի եօթը փետուրներ շարեց. երկուսը ճերմակ, երկուսը խառն, իսկ երեքը սեւ: Ճերմակները մեծ պասի առաջին երկու շարաթւայ նշաններն էին, ուր գեռ ձիւն կայ եւ երկիրը սպիտակ է. խառն փետուրները պասի միջին շաբաթներն էին, որ «միջինք» են կոչում եւ ուր ձիւնը սկսում է կամաց կամաց հալւել եւ տեղ երեւում է սեւ գետինը նրա տակից: Իսկ երեք սեւ փետուրները լուսաւորչի, Ծաղկազարդի եւ Զարչարանքի շաբաթներն են, ուր դաշտ ու հովիտ, սար ու ձոր ձիւնից աղատւած սեւ են կտրում: Ամէն տարի տատս ինքն էր կախում «Ակլատիզը» տան առաստաղից, բայց այս անգամ ոյժ չունէր տեղից բարձրանալու, տւեց նրան մօրս եւ ասեց. «Ճար կախէ, հարս, եւ մի մոռանա ամէն շաբաթւայ վերջին մի փետուր դուրս հանել. վա՛յ նրան, դարձաւ նա մեղ, ով իր պասը եւ ծոմը ճշտութեամբ չի պահում. Ակլատիզը կ'ընկնի նրա գլխին եւ նա բոլորի առաջ որպէս բկլատ եւ մեղաւոր խայտառակ կը լինի»: Միայն առաջւայ նման տատիս սիրելի ճեռքը չը բարձրացաւ մեղ սպառնալու համար: Այս անգամ էլ նրա

խօսքերը աղդեցին իմ վրայ : Պասի առաջին երկու շաբաթները աննկատելիօրէն անցան . բարեկենդանի իւղի եւ մսի հոտը դեռ քթերում էր : Բայց երրորդ շաբաթը սկսեց մեղ երկար թւալ , չեմ խօսում նրան հետեւող օրերի մատին : Մայրս դիմեց քահանային եւ խնդրեց , որ տատիս համոզի պասը ուտել . նա բոլորովին թուլացել էր : Տատո երկար առարկեց , ընդիմացաւ , բայց երբ տէրտէրը նրան հաղորդեց , տատո համաձայնեց : Մայրս ամէն օր նրա սիրած կերակուրներն էր եփում եւ բռնութեամբ ուտացնում : Բայց հիւանդի ոյժերը քանի գնում թուլանում էին . նա պառկած էր անձայն , առանց բողոքի , միայն երբեմն ծանր հոգոց էր քաշում եւ կոյր աչքերը դռանը յառած , մ է կ ի ն սպասում : Մի օր մայրս նրան մի հաւ տապակեց : Երեխաներիս առաջուց կերակրելով դուրս ուղարկեց , որ «նաւսերս» մէջը չը մնայ եւ տատիս չը խանգարենք : Օրը ցուրտ էր , անձրեւախառն ձին էր գալիս եւ մենք մի քիչ դես , դեն վազվելուց յետոյ ներս եկանք : Տատո վերջացրել էր իր ճաշը եւ քնած էր : Խոհանոցից տապակած մսի հոտ էր գալիս . չը գիտեմ ինչո՞ւ . բայց անցայ այստեղ եւ տեսայ , որ հաւը համարեա ձեռք չը տւած ափսէի վրայ էր : Նայեցի Ակլատիզին , դեռ երեք փետուրներ կային նրա վրայ , երեք երկար շաբաթներ : Յանկարծ ձեռքս երկարացրի եւ հաւի մի բութը վերցնելով սկսեցի արագ-արագ ուտել : Երբ տատիս հէքեաթների մէջ քաջ թագաւորազնը աշխարհի հրաշալի գեղեցկուհու պարտէզից անմահական ջուր կամ խնձոր է գողանում՝ սարեր , ձորեր , քարեր , գետեր եւ առուներ մի բերան դառած բղաւում են . «Տարա՞ն , հա՞ տարա՞ն» , որպէս զի գեղեցկուհին , որը քարասուն օր քուն է մտած , զարթնի եւ գողին բռնի : Ինձ էլ թւաց ուտելիս , որ պատերը եւ խոհանոցի բոլոր առարկաները լեզու առած կանչում են . «Ամօթ քեզ , պասակեր , բլլա՞տ ,

ի՞նչ մեղք , ի՞նչ մեղք» : Սարսափած նայեցի Ակլատիզին , նա կարծես շարժում էր , բութը գետին նետեցի եւ դուրս թռայ : Շւաքում պատահեցի մօրս եւ արտասունքս զսպելով ամէն ինչ խոսսովանեցի նրան : «Մի լա , յիմարիկ , ասեց մայրս , պասը չուտով կը վերջանայ . գողութիւնը տգեղ բան է , համբերիր ինչպէս մենք բոլորս . չե՞ս ամաչում» : Ես դժբախտ էի եւ արհամարում էի ինձ : Մտածում էի այն Աստծու մասին , որը մեր մեղքերի համար խաչ բարձրացաւ , իսկ ես նրա համար եօթը շաբաթ չը կարողացյա պաս պահել : Վախենում էի որ տատս լսի եւ տիրի , ամաչում էի նրանից եւ դրա համար էլ նրա անկողնու մօտը չի գնում : Ինձ թւում էր , որ նրա կոյր աչքերը տեսնում են ամէն ինչ եւ նա գիտէ իմ բոլոր արարքները : Խոհանոցից խուսափում էի . Ակլատիզը կարող էր զլիս ընկնել : Եւ այն ժամանակ ի՞նչ ամօթ :

Տատո չէր լաւանում . նա աչքերը այլեւս չէր հեռացնում դոնից : «Լուսիկ ջան , կարօտը սրտիս եմ մեռնելու : Ո՞ր մեղքերիս համար է Աստած ինձ այսպէս պատժում : Ա՛խ , աղիզ բալա ջան , արդեօք կենդանի՞ ես , արդեօք մօրդ կոյր աչքերը քեզ տեսնելո՞ւ են» : Մայրս այլեւս չէր զսպում արտասունքները , որոնք խոշոր կաթիլներով թափիւում էին նրա գունատ այտերից : Իսկ ես , մի ոճրագործուհի , ես չէի կարող տատիկիս մօտ գնալ : Ես չէի կարող համբուրել նրա սիրելի խորշումած ձեռքերը : Վճռական ես խոհանոց մտայ : Թող Ակլատիզը գլմիս ընկնի , թող բոլորը տեսնեն , թէ որքան թոյլ եւ վատն եմ ես , որքան մեղաւոր : Ես այլեւս չեմ կարող այսպէս մնալ : Թող բոլորը տեսնեն : Ես պէտք է պատժեմ . եւ երբ ես քաւեմ մեղքս , այն ժամանակ ամէն ինչ նորից լաւ կը լինի : Ես կարող եմ տատիկիս մօտ գնալ : Մտայ խոհանոց : Կանգնեցի Ակլատիզի տակը եւ սպասեցի սրտատրովի : Եւ նա չընկաւ գլխիս :

Հէքեա՞թ էր պատմել տատիկս : Իսկ մայրս նրա՞ն պահպանել : Գուցէ ոչ մի մեղք չը կայ պաս չը պահելու մէջ . գուցէ ամէն ինչ հնարաւոր է : Միտքս փորում , փորփրում էր : Ակլատիզը անշարժ էր : Նորը սարսափեցնում էր ինձ . և ին ես այլեւս չէի կարող հաւատալ : Այս բոլորը շինծո՞ւ բաներ են : Եթէ տատիկս առողջ լինէր , ես նրան կը հարցնէի :

Իր մահից երեք օր առաջ , տատս կանչել տւեց Դաւոյենց Զանանին , որը մեռել լացող պառաւներից մէկն էր մեր գիւղում եւ խնդրեց նրան իր մարմինը մաքրել եւ իւղել . նա չէր ուզում տղեղ մարմնով գերեզման մտնել : «Նոյն իսկ գերեզմանում պէտք է կինը գեղեցիկ լինի , Զանան ջան , ասեց տատս , ձեռքերս այլեւս լաւ չեն կարողանում աշխատել , իսկ աչքերս էլ չեն տեսնում : Հարսս ջահէլ է , ափսոս է , չեմ ուզում մաշւած մարմինս նրան ցոյց տալ : Դու կեանքումդ շա՞տ բաներ ես տեսել , չես քաշի , ինձ գեղեցկացնելու» :

Զանանը մի քանի ժամ մնաց տատիս մօտ : Միրուս լեցւած դուրս փախայ . տատիկս մեռնո՞ւմ է , իմ լա՛ւ տատիկը : Յիշեցի որ Օսկօ հօրաքոյրս մեզ պապիս մահի մասին խօսելիս միշտ պատմում էր , թէ ինքը ինչպէս խոտ է վառել իրենց տան պատի վերայ մտածելով՝ «Եթէ քամին կրակս տանի ուրեմն հայրս կը մեռնի» : Քամին թողրել էր խոտը եւ նոյն երեկոյ մեծ պապս մեռել էր : Ես էլ էլ ուզում իմանալ թէ տատս կը մեռնի՞ : Խոտ վառեցի մեր պարտէզի պատի վրայ . խոտս այրւեց հանդարտ եւ ես ուրախ թռչկոտելով տուն եկայ : Քամին խոտս չը տարաւ . տատս չի մեռնի : Երբ տուն եկայ , լսեցի Զանանի մօրս ուղղած խօսքերը . «Հէյ գիտի նունիկ , ջէյրանի նման կնիկ էր , հիմայ «իլաջ» չի մնացել վրէն : Նա կը մեռնի եեղճ ջրատարը , բայց հոդին տղի կարօտից դուրս չի գալիս : Մեղք է . վարժապետի հագուստներից գցիր վրան , մայրը կը

ճանաչի իր տղի հոտը , հենց որ քթին դիաչի , կարօտը կ'առնի , կը մեռնի : Հիմայ օգնիր ինձ նրա երեսը աղօթարան դարձնել» : Իսկ խո՞տը : Ոչ ոք չը լսեց ինձ : Մայրս եւ Զանանը տատիս անկողինը դէպի արեւելք դարձրին . մայրս բերեց հօրս վերարկուն եւ գցեց նրա կուրծքին . «Մայրիկ ջան , Միհրանդ շուտով կը դայ , լուր կայ նրանից , ասեց մայրս , ահա նրա վերարկուն» : Կոյր , խոշոր աչքերը լեցւեցին արտասումքով . «Բերանդ օրհնւի , լուսիկ ջան» , եւ տատս թոյլ , դեղին ձեռքերով շօշափեց չորս կողմը , գտաւ շորը , քաշեց քթին , բերանին , աչքերին , տարաւ դէպի սիրտը . «Ախ , բալա ջան , հոտիդ մատաղ» ու նա հոտոտեց , հա , հոտոտեց վերարկուն , խորը հոգոց հանեց , երջանկօրէն ժպտաց : «Նունիկ քոյրիկ , օրհնիր հարսիդ եւ երեխաներին» ասեց Զանանը եւ մեզ հրեց դէպի տատս : Երբ տատիկիս բարի , սիրելի ձեռքերը շօշափելով գտան գլուխս , չը կարողացայ տանել եւ բարձր հեկեկացի . «Ճատիկ , Ակլատիզը , ես . . .» :

«Հայ , փոքրիկս , եկ , խօսիր բալիկ ջան , քոնը իսկ Միհրանիս ձայնն է . Աստւած օրհնէ քեզ : Ցոլոր մուրագներդ կատարւին : Լուսիկ , սիրելիս , մօտս եկ , ձեռքդ տուր» , եւ տատիկս սեղմեց մօրս կրծքին եւ ամէն բառ շեշտելով ասեց . «Ներիր ինձ , եթէ վատ եմ եղել , քեզ վշտացրել . չարամտութեամբ չէր այդ : Ես ծեր մարդ եմ , դուք երիտասարդ : Օրհնած լինիս եւ Միհրանիս հետ մի բարձին ծերանաս» : Եւ յանկարծ տատս ցնցւեց , գլուխը բարձրացրեց , դէմքը ամբողջապէս մի սպասմունք , մի անդուսպ կարօտ . «Ինչո՞ւ չես դալիս Միհրան . միթէ բոլորը ի զո՞ւր էր . սխալմո՞ւնք . ու է՞նքան զոհեր» : Գլուխը յուսահատ նորէն բարձին ընկաւ : Մի անգամ էլ տատս քաշեց իր երեսին իր տղի վերարկուն , մի անգամ էլ հոտոտեց , ժպտաց թոյլ եւ յոգնած փակեց աչքերը :

Երբ տէրտէրը եկաւ, տատիկս մեռած էր: «Խեղճ ջրատարի հոգին ազատւեց» ու տէրտէրը մի կտոր նշխարք դրեց տատիս լեզւին: Մենք միմեանց կտած, ձնշւած, կանգնած էինք մնացել, առանց համարձակւելու շարժւել. վախենում էինք, թէ տատիկս հոգին կարող է յետ դալ: «Երեխաներ, դուրս գնացէք. Դարբիչև հրեշտակը դեռ ունեակումն է, նա կարող է ձեղ խփել իր սրով» ասեց Զանանը: Մենք դուրս գնացինք:

Մայրս անդադար հեկեկում էր: Հիմայ նա բոլորովին մենակ էր:

XXIX.

«Ո՞վ թուր ունի, առաջ ի՞մ գլխիս խիմ, ի՞մ սիրոս խրի, ապա թէ ո՞չ քանի բերնումս լեզու կայ, փորումս սիրտ, ես լեզապատառ ձէն կտամ. ՚իդ ո՞ւմ վրայ էք թուր հանել, Հայոց մեծ աղջին չէ՞ք ճանաչում»:

Խ. Արովեան:

Խաւար... ցաւ... յուսահատութիւն... մենակութիւն եւ անզուսպ կարօտ: Մահացնող գիտակցութիւն, որ այլեւս ոչինչ չի կարելի փոխել: Ճւա, կանչիր, բողոքիր, լաց եղիր, ընկիր ժամերով տատիկիդ գերեզմանի վրայ եւ սպասիր, սպասիր որ մի անգամ էլ նրա անուշ ձայնը լսես. ի զո՞ւր: Սնհամբոյր լուռթիւն եւ այնպիսի՛ անտարբերութիւն դրսի աշխարհում: Արեւը նոյն ձեւով լուսաւորում է երկիրը, ջինջ ու պայծառ է երկինքը եւ տաքացած հողից առատօրէն գոլորչի է բարձրանում: Նա ծոցը լայն բաց արած սպասում է կարօտով հատիկին որ առաջին ծիլերը կապի: Հալած ձիւնը մեծ մեծ առուներ

է կաղմել փողոցներում եւ երեխաների խմբեր աղմուկով ու քրքջալով խալում են ջրերի հետ:

Ես անցնում եմ նրանց մօտով առանց մէկին նայելու: Բայց ինչո՞ւ պնջներս ինձնից անկախ բացւում են լայնօրէն եւ ազահութեամբ ծծում գարնան օդը: Ինչո՞ւ են ըրթներս համբուրում մեղմ հովի հետ որը Հայոց սարերից է դալիս:

Եւ ինչո՞ւ է թւում ինձ, որ մէկը քնքոյց, աներեւոյթ ձեռքերով վաղաքում է խոցուտած սիրտու:

Հէ՛յ, գարուն է, գարուն, Հայոց երկրի պայծառ գարունը... Նրա առատ, անբիծ լոյսն է որ կամացուկ ցրում է հոգուս խաւարը:

Ես զնում եմ գերեզմանոց իմ ամենօրեայ այցելութիւնը տալու տատիկիս. նստում եմ նրա քարի կողքին: Բայց գերեզմանոցն էլ է լոյսով չողողւած, քարերը վայլում են արեւից: Ողբի տեղ չի մնում այլեւս: Հոդիս լիքն է. զգում եմ, որ մէքիչ էլ՝ եւ ես կը սկսեմ երդել մեր աշխարհ վերադարձող ծիծեռների հետ...:

Մէ՞ղք եմ գործում:

Ին ի՞նչպէս պատահեց ամէնը: Ի՞նչպէս եղաւ, որ մենք մենակ մնացինք. տատիկս մեռած, Հայրիկս բանտում, մայրիկս միշտ լաց լինելիս:

Ցա՞րը... այս, նա փակեց Հայոց դպրոցները, հալածեց նրանց եկեղեցին, հաւատը. ուղեց որ նրանք ուռւներ գառնան. իսկ Հայերը ընդդիմացան: Հայրիկս էլ նրանց հետ:

Ուլթա՞նը... նա կոտորեց Հայերին, ամէն ինչում ձնշեց նրանց: Նրա երկրում հայերը քիւրտ բեկերի եսիրներն են, ոչ ազատ ապրել են կարող, ոչ էլ կեանքի ապահովութիւն ունին: Պատահող քիւրտը եւ թուրքը կարող է նրանց սպաննել:

Հայերը չուղեցին այլեւս տանել այդ, ըմբռստացան : Հայդուկները կռւեցին Սուլթանի դէմ . ա՛յդպէս Աղքիւր Սերոբը, ա՛յդպէս Խանը, ա՛յդպէս Ախղբանիկը, մեծ Անդրանիկը : Ու հայրս օդնեց նրանց :

Բայց Սուլթանը եւ Ցարը իրար հետ միացան, իրար պաշտպանեցին : Հայերը մնացին երկու կրակի մէջ եւ յաղթեցին :

Ու Ցարի ժամանակները եկան մի գիշեր եւ հայրիկիս բանտ տարան : Ինչպէս շա՞տ շատերին :

Սուլթանը եւ Ցարը բռնապետներ են : Ճի՞շտ տատիկիս Հէքեաթների միջի վիշապները :

Են ի՞նչպէս էր, տատիկ ջան, քո «Վիշապի եւ բարի թագաւորազնի» Հէքեաթը :

Թագաւորազնը փոխանակ սպիտակ դօչին նստելու, որ լոյս աշխարհ դուրս դայ, սեւ դօչին նստեց եւ ընկաւ մութ աշխարհ :

Հայերը սեւ դօչին են նստել, տատիկ ջան, եւ մութ աշխարհում մնացել են երկու հսկայ վիշապների մէջտեղը :

Բայց Հէքեաթը... Հէքեաթումդ, տատիկ ջան, թագաւորազնը յաղթեց վիշապներին եւ դուրս եկաւ լոյս աշխարհ :

Ուրիշ կերպ չէր կարող լինել :
Լոյսը յաղթում է մթին, չէ՞ :
Ինչո՞ւ պէտք է նա չը յաղթէ եւ մեր երկում :

Էս արդար արեւի երկրում : Զքնաղ Արագածի ստորոտում :

Նա կը յաղթի :

Հարկաւոր է միայն էն դուռը գտնել, որը տանում է մութ աշխարհից լոյս աշխարհ :

Ես կը փնտռեմ, ես կը շօշափեմ այն դուռը :

Եւ ես նրան կը գտնեմ : Հայոց արդար արեւը ինձ վկայ, ես կը գտնեմ նրան :

Ես ուխտում եմ այդ :

Տիերինդէն 1928

Վիեննա 1932




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

b9

I.	Մեր գիւղը	1
II.	Մեր տունը	9
III.	Դարուեր զիւղում	16
IV.	Ոգիների աշխարհում	21
V.	Ղօշավանքը	28
VI.	Բողոքի ցոյց	39
VII.	Յեղափոխականի սենեակում	46
VIII.	Կենեֆի նախապարհին	54
IX.	Կարօն դատում է	64
X.	Անդրանիկը կուռում է	69
XI.	Խուզարքութիւն	76
XII.	Ռուս-նաբռնական պատերազմը	80
XIII.	Դարձեալ խուզարքութիւն	85
XIV.	Արհաւիրքներ	91
XV.	Գրքացը	100
XVI.	Սարդիք պապս	104
XVII.	Գիւղը զինում է	109
XXIII.	Վայ', կարմիր զիւղեն եկաւ	117
XIX.	Նրանի պէտք է անմեղների աչքին նայեն	123
XX.	Դիմամիտի զոհերը	127
XXI.	Ծիածանը	133
XXII.	Դպրոցը	143
XXIII.	Հին եւ նոր դպրոցների պայքարը	151
XXIV.	Զերբարկում	157
XXV.	Ցուզմունեֆ	158
XXVI.	Վշտի եւ յուսահատութեան օրեր	163
XXVII.	Ս. Սարգսի տօնին	165
XXVIII.	Մահ	170
XXIX.	Իմ ուխտը	176





ՀՀ Ազգային գրադարան



NL0330397

25388

891.99
9 - 45